Գիրքը լուսապատճենահանվել է

"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ`

**www.freebooks.do.am**

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:




ԳՐԵՔ ՄԵԶ` freebooks@rambler.ru

# ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

Ժողովեց, կազմեց և ծանոթագրեց
ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1991

ԳՄԴ 84.Հ
Ն 833

*Խմբագիր՝ բանաս. գիտ. թեկն.* Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

Նշխարներ Արցախի բանահյուսության /*Կազմող Լ. Հ. Հարությունյան*/ *Երևանի պետ. համալս.—Եր.: Երևանի համալս. հրատ., 1991.—400 էջ:*
Ն 833

Ժողովածուն արցախահայոց հարուստ ու բազմաժանր բանահյուսության մի փունջ է: Նրանում ներկայացված են հեքիաթների, ավանդությունների, զրույցների նմուշներ, առած-ասացվածքների, դարձվածքների, անեծք-օրհնանքների, բարեմաղթությունների շարքեր: Առանձին բաժին են կազմում ազգագրական նյութերը, որոնք վերաբերում են արցախահայերի սովորություններին, ծիսական երգերին, ժողովրդական խաղերին ու պարերին:

Ն $\frac{4702080105}{704\ (02)-91}$ 53—90 ԳՄԴ 84.Հ

ISBN 5—8084—0118—6

ОБРАЗЦЫ ФОЛЬКЛОРА АРЦАХА
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1991

© Կազմելը, առաջաբանը և ծանոթագրությունների համար, 1991

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ժողովածուն չի սահմանափակվում բանահյուսական-ազգագրական նշանակությամբ, այն ներկայացնում է երկրամասում ապրող բնիկ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակը անհիշելի ժամանակներից առ այսօր, նրա խոհերը, զգացումները, ազգային միասնության երազանքը, խաղաղ և ազատ ապրելու ձգտումները: Ընթերցողն այստեղ կծանոթանա իր մաքրամաքուր ակունքներին, իր նախնիների անցած դարձդարձիկ ճանապարհին, ավանդական գեղեցիկ, հիացմունքի արժանի սովորությունների ու ավանդույթների նախօրինակներին: Պատմական դժնդակ բախտի բերումով հայոց Միջնաշխարհից, ողջ Աղվանից աշխարհից, դաշտային Ղարաբաղի տարբեր մասերից մազապուրծ փրկված հայ բեկորները միահյուսվեցին Լեռնային Ղարաբաղի բնիկներին, բնականաբար, իրենց սովորությունների, կենցաղի, բառ ու բանի՝ մեզ համար սրբազնագույն նշխարներ գումարելով տեղաբնիկ հարուստ բանահյուսությանը: Ժողովածուի արժեքը նաև այս խտացումով է պայմանավորված:

Ժողովրդական հին բանահյուսությունը ոսկեթև հավքերի մի արագաթռիչ երամի է նման, որ գալիս է մարդկային կյանքի խորին խորքերից և անողորմ ժամանակ-քամու բերանին գնում է անդարձ: Դաժան ու կենսաքաղ որսկաններից հալածական քտնի կախարդական ոսկեփետուր է կորցրել նա, քանի անգամ դարձել թևակոտոր՝ իր հողմածեծ ճանապարհի արյունոտ թընչուկներում: Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փետուրիկ, չնչին թվացող մի աղվամազ, լինելու է միակ ու թանկագին, մեր ազգ ու տակի հիշատակի պես սիրելի:

Այս ժողովածուն նման մտայնության արգասիք է:

Ղարաբաղյան ավանդությունները ու զրույցները խտացված իմաստություններ են, արհավիրքների բովով անցած կենսափորձ, իրական հող ունեցող մարգարեություններ, պատմության բոլոր շերտերն ամփոփող, մեր ժողովրդի բազմաձայն մտածողության հավաստի փաստարկներ, որ դարեր շարունակ ուղեկցել են մեզ, մնացել հարազատ, որպես համազգային ավանդների դրսևորումներ՝ արցախյան ինքնության կնիքով: Կասկած չի կարող լինել, որ դրանք ուսանելի են ներկա ու գալիք սերունդների համար:

Հայոց մեծերն են մեր բանահյուսության գլխավոր հերոսները, իրական և առասպելական անուններ՝ վաղուց հիշատակ դարձած ապրելավայրերով և զգայուն, ժամանակի զարկերակը իր չափ ու կշռույթի մեջ առած փիլիսոփա անհատը: Ո՞վ գիտե. մարդկային պատմության քանի հազարամյակի ծածկույթով է քարուրված բանահյուսական այս կտորը.

Արաքանե, Արաքանե,
Օծ տո քալաո թևեր անե,
Վեսկե հինի մազին տնի,
Խաչքուռ շինի ռաշին տնի,
Արև տեռնա, արև անե,
Արաքանե, Արաքանե:

Սա պաամտկան խոր արմատներ ունեցող մի ժողովրդի հին ավանդույթի պատկառելի նմուշ է: Ո՞վ է Արաքանեն և ի՞նչ կապ ունի փոքրիկ աղջկա մազերի զարդ-հորինվածքի, խաչքուռի և արևի հետ: Բանահյուսական ոսկե հինվածքների որքան պատառիկներ, խորախորհուրդ ու անվերծանելի նշխարներ կան նախնիներից մեզ հասած սաք ու բանքի, խոսք ու զրույցի մեջ:

Մարդկային հոգսը իր հոգուն ծանրացնող ժողովուրդը միայն կարող է այսպիսի տողեր հորինել և ի պահ թողնել սերունդներին.

Շնորհակալ ըմ քզանա, աստուծ,
Մարթ ըս ըստեղծալ,
Շնորհակալ ըմ քզունա, աստուծ,
Վարթ ըս ըստեղծալ:
Բըլի թըները չի ըլըլ,
Մեխք չըմ անում քզարա՝
Փոշ ու դըրդ ըս ըստեղծալ:

Պա հո՞ւնց շնորհակալ
Ընիմ քզանա, վեր
Ճանչ ըս բստեղծալ:

Բնության ո՞ր օրենքով և ի՞նչ իրավունքով մարդ ու ճանճ իրար կողքի են դրվել: Եվ ղարաբաղցին ուզում է սրբագրել աստծու սխալը: «Հի՞նչ կընի, աստուծ, վեր ըշխարքես ճանճերը կլո-լիս մին օղար չինիս»:

Ժամանակի հոլովումով աշխարհի չարն ու վատը չի պակասում: Չարը բազմանում, «պծզնում» է ճանճի պես, սև թխպի նման «օնում» (կալնում) աշխարհը, և իր բարձունքին արժանի մարդը մնում է ապշահար ստեղծված անել վիճակի համար.

Առաչ ըս քյընում՝ քթեղ ըն թխում,
Դբետ ըս քյընում՝ դբանեղ ըն թխում,
Հու վեր հինչքան օժ օնե՝ հախռում ա:

Անողոք է աշխարհը ու կաշկանդիչ՝ նրա օրենքները· Ոչինչ, որ «Քրիստոսա խաչը հային ա պտժին ընգալ»: Պիտի կրի այդ խաչը սրբավայել արժանապատվությամբ, ապավինելով իր արդար կռվին, հողին ու աշխատանքին, չկորցնելով իր նախնական անաղարտությունը:

Մարթն էն ա, վեր խեղճը կենքան պահում ա:
Մարթն էն ա, վեր աշխարքս ավաղ պահում ա:
Մարթն էն ա, վեր քամակ եշում ա, պայց քամակ
չի ըղնում:

Ղարաբաղցին իր պապենական հողի վրա (և որտեղ էլ եղել է) ապրել է բազմաբովանդակ, խելոք ու լայնաշունչ կյանքով: Նրա ապրելակերպը զարմանալի և ուսանելի է եղել իր հարևանների և տերերի համար, անգամ իր ճանապարհներով անցնող օտարականն էլ զարմանալու, հիանալու և սովորելու բան է ունեցել: Նա թողել է հարուստ ու բարի ավանդույթներ, սերունդներին է կտակել իր հոգու լույսը՝ աշխարհից ոչինչ չակնկալելով: Բայց ի դժբախտություն սերունդների, առավել շատ գե-րեզմանադաշտեր է թողել իր ծաղկառատ հողի վրա: Եղել է ճյուղակոտոր, բզկտված, «սերտը կես տեռած» մնացել է բազում տանջալից դարեր, չկորցնելով իր հունը, հավատարիմ մնալով նախնիների ավանդույթներին, առաջնորդվելով այս աշխարհաշեն սկզբունքով.

Ժառանգ թողե,
Կամար կապե,

Մին կյիր կյրի,
Մին ծառ տնգե,
Հավատդ էլ դայիմ փռնե:

Այս հավատամքով էլ նա գոյատևել է ջրհեղեղից առայսօր:

Ղարաբաղյան ամբողջ բանահյուսության միջով անցնում է որդան կարմրի մի երակ, դա հայ ժողովրդի ազատասիրությունն է, իր ազգային իրավունքների, արժանապատվության, ազատ գոյության համար մաքառումը, որը իր գոյավիճակի թելադրանքով ամենուր ընդունել է ազգային կեցվածք ու բնավորություն:

«Մարթ ըշխարքես լուսը տանը պտրհանավն ա տեսնում»:

Ինչպիսի՜ նեղվածություն նրա ազատաբաղձ հոգու համար: Ո՞ւր է ազատությունը: Նա շղթայված է նահնոտ ձորում և տըմարդի տիրոջ հարկադրանքով ինքն է ամրացնում իր շղթաները: Բայց նրա հայացքը բարձր սարին է: Եվ ի սկզբանե ծառ ու ծաղկին, ոսկեկտուց և ոսկեփետուր հավքին ընկերացած ադամորդին չի կարողանում տանել այն իրողությունը, երբ աստվածաստեղծ մարդը «Կյուլին ննետ օտում ա, աեռնը ննետ կյոռում»:

Անհնարին է ծուռ աշխարհում շիտակ ապրելը: «Կարել չըս դուզ քյըրնիս, վեր հղեն ծըրմոռ ա»: Եվ, չնայած, «դյուզը դյուզումն ա մնամ», բայց ղարաբաղցին հանգիստ խղճով չի նստել անարդարության հետ դեմդեմի: «Հարյուր տարեկան էլ ընիմ, ծոռ փաղը չալիգ չըմ շինիլ»:

Ինչպիսի ծանր դրություններում էլ լինի, բեկուզ հարյուր տարեկան ծեր, չի հենվի ծուռ գավազանին:

Ամեն անհաջողություն, ձախորդություն, պատուհաս ու պատիժ կարելի է տանել (մարդ հենց դրա համար էլ ստեղծվել է), միայն թե երկնային լինի, ո՛չ երկրային: Միայն թե խորթությունը մորից գա, ո՛չ աշխարհից: Ավազակաբարո մարդիկ ոչ միայն ինչքն են խլում, գրպանդ հատում, կինդ գողանում, ...այլև շահարկում են քո ողբերգության վրա, ամենօրյա հացիդ լեղի են կաթեցնում: Ղարաբաղցին տեսածից ապշահար, երեխայական միամտությամբ ասում է. «Պա կյուղանողը փախչիլ չի՞»: «Պա ուրիշին սուփռան օտողը քուշտանալ չի՞»: «Պա ուրիշին կնեգը կյուղանողը հմանչիլ չի՞...»:

Երանի նրան, ով տանջվում է աշխատանքի մեջ, սակայն իր խաղաղ կյանքի հետ է: «Ներակ նրա, հու վեր ինքն ա քռանըն–

քում, քրտնեցնում չըն», «Ներակ նրա, հնուու քրտնքեն աղու չըն խառնում, քեզ խմըցնում»:

Հողը սրբություն է, սուրբ մասունք, պատվական նախնիներից ավանդված նշխար: «Վեղը չըշարե»,— սա է ավանդվում սերունդներին: Այս լեռնաշխարհում ապրող մարդը երբեք չի հաշտվել հողի կորստյան հետ և այն վիճակին, երբ իր հովիտները, իր Միլն ու Մուղանն է կորցրել ու ապավինել միայն լեռներին:

Առանց չոլ սարն ի՞նչ կանի,
Պա առանց սար չոլն ի՞նչ կանի,
Առանց վերթի հո՛րն ի՞նչ կանի...

Ժողովրդական ազերգի հանգ ու չափով ստեղծված այս տաղը արտահայտում է հայրենական սրբությունները կորցրած բընակչության ողբերգությունը:

Զարմանալի չէ, որ իր բազում իշխողներից ղարաբաղցին առանձնացնում է մեկին և հիմնականում նրա հետ է կապում իր բոլոր կորուստները: Մի տաղի մեջ ակնարկելով իր պատմական մեծ առաքելությունը և մարդկությանը նվիրաբերած իր բարի ծառայությունը, ասում է.

Նախշալ ըմ սարեր,
Նախշալ ըմ չոլեր,
Մին ծերքես ալաթ,
Մնումը՝ հորեն..

Սակայն իր երկրի տերը չի սարկանում և ոչ մի բռնակալի, միասնական բռունցքի կոչ է անում համազգայիններին: Աշխարհում ոչ մի ուժ չկա, որ կարողանա հայից խլել իր ոգին՝ սրտին հավիտենապես դաջված հայկականությունը: Դժբախտության մեջ էլ մենք հայ ենք մնում, հավատարիմ մեր ճակատագրին:

Հայ ընք,
Վայ ընք,
Ըստծու թայ ընք:

Ճիշտ է, սևավոր ենք, բայց հայավոր ենք, մենք մորից թևավոր ենք ծնվել: Եվ բանահյուսության հերոսը կոչ է անում չըմեռնել մինչև մեռնելը և հավաքական ուժով ելնել թշնամու դեմ՝ առանց հապաղելու:

Դարդոտ Հանես, բախտեդ աչքը քոռ ըրա,
Եսանաս ուչ, հինչ վեր անիս՝ սոր ըրա,
Զոռդ շատ ա, հավաք ըրա, տոն ըրա...

Հայրենական հողի վրա է վերընձյուղում ազգը, ծաղկում նրա

հանճարը: Նրան տիրելը բոլոր իշխողների անհագ ցանկությունն է եղել: Կորցնել այն, նշանակում է կորցնել արյամբ ձեռք բերված ինքնությունը, դարերում իր լռումն առացած լուսնային դեմքը, կորցնել տաղը, խաղը, երգն ու պարը, բանքն ու լեզուն: Ժողովրդի խոսքը իր դարավոր փորձ ու տառապանքից է ծնվում: Հողի կորուստը, վերջապես, ստրկության մատնվել է նշանակում: Տարբերություն չկա, թե ո՞վ է ստրկացնողը, ի՞նչ հավատի ու գույնի· «Ծանր է լո̈ւծը,— ասվում է զրույցի մեջ,— օգում ա պեխե ընի, օգում ա՝ կաղնե, օգում ա՝ տկողնե: Թխե, մարթ աստծո, հիշտեղ վեր լո̈ւծն ա, ընդեղ էլ՝ նպատը»:

Էշը դիմում է աստվածներին՝ մեկին երկրպագելու խնդրանքով: Նրանք մերժում են, չեն ուզում սատար լինել մեկին, որի արհեստը աշխարհի բեռը թեթևացնելն է: Կայծակ-աստվածն է մընում, որին հարկադրաբար դիմում է նա: Կայծակը զարկում է, կտրում էշի ագին և նրան զրկում միակ գեղեցկությունից:

Չար ու անկարեկից է աշխարհը: Ուժեղը ոչ միայն զրկում, այլև ծանակում է տկարին, խեղդում անզորներն:

Բայց հայը հավատավոր է: Միևնույն է, բնության մեջ կան բարի ուժեր, կա առավոտ, արև, կան աստղեր ու ծաղիկներ... Հավատից էլ ծնվում է հույսը: Հայի համար հույսը իրական է, գրեթե շոշափելի: Նա հույսը գավազան դարձրած գնում է իր փշոտ ու անվերջանալի ճանապարհը: Ընդվզում է, արհամարհում չար ուժերին, նրանց պարզելով իր արարչական հանճարը: Հաճախ իր բախտն է սգում իր արյան ու ավերակների մեջ, տանջվելով, տառապելով, փեռեկտված հոգով... Բայց միշտ էլ իր էության խորքում փայփայելով «հարության հույսը»:

«Հային հըրցըրեն.— Հի՞նչավ ըս ապրում: Ասից՝— Հույսավ»:

«Հույսը հավատավուրեն խափիլ չի»:

Այսպես՝ դարեդար. Եվ հույսը նրա հոգում երազներ է ծնել, բարի, գեղեցիկ, արդար երազներ: Խաղաղություն է երազել հայը:

«Հարթնն ու հասկը կուռնըփոնո՜ւկ...»:

Թող հերանց գնան, հարսը՝ մանկան, հասկը՝ հատիկի սրբազան ծանրությամբ: «Նաղաշը բիժին եր կալած» սրածի արևի պայծառ բարության մեջ՝ խաղաղ, ապահով, անվտանգ: Խաղաղություն նախնյաց հողի վրա·

Խաղաղ կյանքի կարճատև պահերին հայ իր ստեղծածը համարել է աստծու ստեղծածին և ծկատել, որ ստեղծելու զոր-

ծում նրանք հավասար են: Ինքն էլ գեղեցկություն, բարիք ու ժպիտ է արարում մարդկանց, աշխարհի համար: Ղարաբաղցին պաշտում է աստծուն որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Նա երբեք աստծուն անհրական չի համարել: Բը-նության մեջ ամեն զորություն առավել զորությամբ է նման մարդուն: Աստված էլ տառապանքով է անցնում իր ուղին, ինչ-պես մարդը: Մի օր մռայլ է, մի օր՝ ուրախ, մի օր էլ՝ ցավի մի-ջից ժպտում է անցավ: Նրա համար էլ երազային է մանկությու-նը: «Աստծուն ըսեցեն.—Խե՞ ուրախ ըս: Ասից.—Խխոթունս մեննս ընզավ»: «Աստծուն ըսեցեն.— Խե՞ տխուր ըս: Ասից.— Խխո-թունս մեննս ընզավ»:

Նա հասարակ ու պարզ է, ինչպես ինքը, նրա հետ կարելի է հանաք անել, խաղալ, խռովել, պատժել... «Աստուծ, մեզ լավ պահե, թա կարում չըս, վեր եկ մեր կոշտը, մունք քեզ եղպորու մաշու նման պահինք»:

Նա միշտ մարդկանց կողքին է, առօրյա հոգսերի ընկերը: Պատահական չէ այս զրույցը: Մարդը խնդրում է աստծուն իր պատկերն ուղարկել, և նա ուղարկում է խաղողի վազը՝ «պըլխե-լունք, մշտակա ու մշտագոյ»:

«Հանց վախտ ա ընում, մարթ ասում ա. — Օժս եխնիս բը-ղար, եր հնցնի աստծու նկատան պշի, մին խալաթ տի, կյի:

Հանց վախտ էլ ընում ա, ասում ըս. — Եր հնցընիմ աստծու անգունը հլո՞րիմ կյամ»:

Բայց աստված ոչ միայն «պըլխելունք ա», այլև՝ սոսկալի ա-նարդարության ունակ, չար ու դաժան, չարի խորհրդանիշ: Այդ է պատճառը, որ նա երկյուղել է աստծուց: Ղարաբաղի մեծ երգի-ծաբանը «աստվածավարի» բառի տակ հասկացել է բնության ա-մենաչար ուժերի անարդարացի խաղը: Ղարաբաղցին իր գոյ-րույթի ժամին ծառացել է աստծո դեմ, հրկիզել նրա «տունն ու տեղը»: Չի վարանել նախախնամության և մարդու կողմից սահ-մանված անարդար օրենքներն ու արարքները բացահայտելու և դնելու կշեռքի նժարին՝ ի տես ամենքի, ի հակակշիռ բարեխոս-տում գաղափարախոսությունների:

Բայց միևնույն է, հայ աշխատավորը աստծո անվան հետ էր կապում մարդկային բարօրության հույսը և պատեհ առիթով ա-ղաչում էր, որ մեղքանա ու սատար լինի նրանց, ովքեր նեղ օ-րում են: Նա աստծո գաղափարի մեջ է դրել նաև ղեկավարի, ա-

ռաջնորդի, զորավորի հանդեպ ունեցած իր իդեալը: Նրա չգոյության մեջ էլ նա տեսել է իր դարավոր երազանքների, հավատի փլուզումը: «Աստուծ հիշքան կենքան ա բլա՛լ, մունք մոնեխս չընք բլա՛լ, էս մին ըշխարքաս սաղ-սալամաթ քյնիխս ընք բլալ էնՙ մին աշխարքը: Մեռնելը մինենգ ա: Մինչև մեռնելը սարարնես ճաքում ա»:

Ղարաբաղցին միայն սատծո հետ չէր «ընկերական», այլև բնության հզոր և իրական բոլոր ուժերի՝ արևի, լուսնի, գիշերվա, ծովի...

Հնձվորը սառը ջրով լի կուլան առավոտյան դրել էր ծառի ստվերում, ինքը անցել գործի: Դեպի կիզակետ է բարձրանում արևը, և կուլան ընկնում է պլպլան արևի տակ: Ջուրը տաքանում է: Հնձվորը փորձում ու չի խմում, հայացքը դարձնում է դեպի արևը. «Իմ տեղ վեր առւ ընիս, կլակի՞ս...»:

Լուսինը չարաճճի աղջնակ է եղել, չարչարել է մորը, երբ նա խմոր էր հունցում: Համբերությունը հատած մայրը խմորոտ ձեռքով ապտակում է աղջկան: Նա խռովում ու թռչում է երկինք: Հիմա էլ խմորոտ ու այրոտ է նրա դեմքը և կարող եք նայել ու տեսնել, թե ինչպես է ամպի տակից կարոտով նայում իր մորը:

Վիճում են հնձվորն ու արևը. ո՞վ ավելի շուտ կզարթնի: Երբ զարթնում է արևը քնից, տեսնում է մարդը «մին փանջաք հընձած, շուքումը կոնած»:

Ղարաբաղյան հեքիաթների մեջ հետաքրքիր կերպավորում ունի նաև վիշապը: Մի անգամ չար ու չարակամ, այլ դեպքում՝ բարի ու անհիշաչար: Այս երկվությունը հարկավ, կապվում է տարբեր ժամանակաշրջաններում վիշապի նկատմամբ ունեցած պաշտամունքային մոտայնության հետ: Առասպելական վիշապի մեջ էլ հասարակ մահկանացուի սիրտ է բաբախում: Նա ոչ թե մացածին չէ, այլ խիստ իրական է և լողը (ընքերցողը) խղճում է նրան: Որոշ հեքիաթներում էլ երկնքից ընկած երեք խնձորներից մեկը տրվում է թշվառ ու ողորմելի օշափին: Առհասարակ ղարաբաղյան հրաշապատում հեքիաթների չարը մարմնավորող հերոսները «մաքուր» չար ու կենսակույ չեն. նրանց էլ են կիզում մարդկային հոգսերը: Սա հեքիաթը սահեղծող ժողովրդի անքաքույց մարդասիրության արտահայտությունն է:

Մերժելով գայլի և մյուս գազանների գիշատչային հատկանիշները, բանահյուսության հեղինակը ընդունում է իր և նրանց՝

բնության համաստաղոր ծնունդներ լինելը և հրավիրում է նաշի.

— Ա՛րջ ախպեր, կյո՛ւղ ախպեր, եկ միհատեղ հաց ուտինք:

Այս հայեցակետից մարդը և գայլը բնության նկատմամբ վերուստ նախասահմանված նույն իրավունքով են ծնվել, ինչպես երկվորյակ քույրեր:

Դժբախտությունն այն է, որ մարդը իր նմանների մեջ է ցանկանում գայլավարի ապրել:

Դժվար է որոշել հայ (մասնավորապես պատմական Հայաստանի Արևելյան Կողմանց) երաժշտության, երգի և պարի, հնագեցունց սգո երգերի ոգեղեն ընդգրկվածության և նրանց թողած լայնածավալ ազդեցության սահմանները: Համոզված եմ, որ համաշխարհային երաժշտության պատմությունը այդ կապակցությամբ դեռ իր լիահնչյուն խոսքը կասի: Նրանք կխեցին իրենց սաեղծող ժողովրդին բաժին ընկած վիշտն ու դառնությունը, սփովեցին ամենից առաջ հարևան ժողովուրդների մեջ և... ապրեցին: Ինչպիսի անուններով թաքցված լինեն նրանք, թեկուզ օտար երաժշտաշղարշով յոթկեղևված, խոսում են մեր սրտի ու արյան հետ, մրմնջում են ուրիշներին անհաղորդ՝ հայկական ցավ ու կարոտով:

Տարեց բանասացները պատմում են, թե ինչպես են «Յալի» պարել «Նահատակ» կոչվող վանքի ընդարձակ սաիարակում: Վանքը գտնվում է Ղզղալա գյուղի մոտ, նույնանուն սարի բարձրադիր հարթության վրա:

Արևագալից առաջ մորթվում են նախօրոք զոհելու բերված կենդանիները: Երբ սկսում է հոսել զոհերի արյունը, ծայր է առնում մասսայական պարը: Նրան ծնունդ են տալիս սարեց մարդիկ՝ շարժումներով ու հայացքներով դեպի արևելք: Նրանց շարունակում են երկսեռ երիտասարդները՝ առանձին շարքերով: Տղաները բաժանվում են զույգ խմբերի, պարում զուգահեռ, հանախ խառնվելով իրար: Պարելու ժամանակ պարող աղաների հակառակ խմբերն իրարից գոտի ու կապա են հանում, սափպում էին «նշանածների անունները տալ»: Խառնվում են աղջիկ ու տղա, արևագալի հետ պարը սաքանում է, իր մեջ ընդգրկելով բոլորին («Յալի փռնել»): Հասակավոր աղամարդիկ ու կանայք դուրս են գալիս շուրջառից և զբաղվում առնական սուփրայի պատրաստությամբ: Աղջիկները շարունակում են իրենց նազա-

նի պարերը, ալիքվում են, ալեկոծվում, վելեւում ու կաքավում՝ փոքրիկվող աղաների խմբերի առաջ:

Ճաշից հետո ծայր են առնում մարզական մրցությունները, կոխը, «խաղկապուկները» և այս ամենից անպակաս «հինչեխը» (հոնք):

Այս արարողությունը կոչվել է «ուրթան յալի» (ուրթան—առավոտյան, առավոտան): Հետագայում, «Յալին» սկզբնապես ծիսական (արևապաշտական) պարերից վերածվել է առօրյա աշխարհիկ պարերի և ստացել բազմաթիվ տարբերակիչ անուններ: Ճիշտ կլինի ասել, որ հայ ժողովրդական համարյա բոլոր պարերերը ունեցել են մի մայր, և դա եղել է «Յալին»: Հայանի է, որ Արցախ աշխարհում և Գողթնում «Յալին» ունեցել է մի քանի տասնյակի հասնող տարատեսակներ: Այս տեսանկյունից «Յալին» հայ ազգային պարերի համահավաք անունն է (հայկական է նաև բառը. յալի—ալի-ալիք): Ղարաբաղի բարբառում այն գործածության բազմաքանակ ոլորաներ ունի): Պարող ժողովուրդը արևազալն ընդունում էր գոռում-գոչյունով և մարտականորեն՝ պատրաստ հալածելու չար ուժերին, որոնք կարող էին արգելակել արևածնունդը: Այս պահին պարն ընդունել է նոր տեմպ և կոչվել է «Քոչարի»: «Յալի» արարողությանը նախորդել է «Կանչ» (գանչ) նվագը («Սահարի»): Պարն ուղեկցվում էր զուռնա-դհոլի նվագակցությամբ: Զուռնայի նվագը չարը խափանում է, բարին է բերում: Արևի ծնունդը արգելակող սատանաները և՛ զուռնայի զիլ ձայնից էին վախենում, և՛ արևի սաեղներից: Ասում էին բանասացները:

Դեռևս շատ վաղուց, գուցե ավելի վաղ, քան մենք ենք պատկերացնում, կապերտը (կարպետ) ամրապես մտել էր հայ կենցաղի մեջ: Սկզբից էլ կապերտը հարուստ էր գույներով ու նախշերով: Ոչ նոր ժամանակյա մի հանելուկի մեջ գարունը համեմատվում է հայկական գորգի (կապերտի) հետ շեշտվում նրա գեղագիտական մեծ նշանակությունը մարդու համար:

> Վաղինակը տափը հինից,
> Կնչկյարմուր գյաբա շինից,
> Աշկեղ դյուրման, սրտեղ դյուրման:

Կապերտով զարդարում էին տան հատակն ու պատերը, պատըշգամբն ու մղակը, փռում էին ներքնակի տակ, ծածկում անկողինը: Բայց կապերտի ծառայությունը դրանով չէր սահմանափակվում: Նրա նուրբ գործվածքներից պատրաստում էին ար-

տանազգեստներ, կենցաղային անհրաժեշտության այլ առարկաներ: Նախապես որոշակի սահման չկար կապերտի և գորգի միջև վերջերս, Կիրովաբադից, Նուխուց, Ադրբեջանի գորգագործներ տեսք ու որակ ստանալու և գործածության ոլորտների ընդլայնման հետ: Ղարաբաղում այն ստացել է կապա անունը: Բարբառի օրինաչափությամբ՝ խուլ հնչյունները ձայնեղանալով ընդունել են ներկայիս ԳՅԱԲԱ ձևը: Հենց սկզբից կապան (կապերտի հետ միասին) դարձել է աղջկական օժիտի անփակտելի մասը. հայ գեղջկուհին նրա մեջ է դրել իր երազանքներն ու մտքի թռիչքները, երևակայության սլացքը, պաշտամունքն ու հավատը, քնքշությունն ու անսպառ սերը մարդու և բնության նկատմամբ: Կենցաղային ծաղկանկար գորգատեսակներից մեկը կոչվեց «Վրթավուր»: Այս նախշազեղ գորգատեսակը խորհրդանըշում էր անմեղություն ու կենսալիրություն և հայ աղջիկները իրենց օժիտի հետ այն տանում էին ամուսնական տուն: Ավելի ուշ, հարսանեկան գորգերը կոնկրետանալով, ժամանակի պահանջով ստացան նոր բովանդակություն և կոչվեցին «Տնավուր» Այս տեսակի մեջ ընդգծվում էր ամուսնացող զույգերի հավատարմությունը հայ ընտանեկան ավանդույթներին:

Գորգադաշտը հիմնականում տրամադրվում էր վազքի պատրաստ երբեք գեղազարդ մատաղ ձիերին ու երբեք հավատարիմ ձեռնասուն շներին: Ձիերից երկուսը խորհրդանշում են հարս ու փեսային, երրորդը (իր գույնով ու հանդերձանքով տարբեր), որ երկուսի միջնօղակն է կազմում, իմաստավորում է խաչեղբորը: Խաչեղբայրը այն կենտրոնական օղակն է, որ ամրակայում է ամուսնացած զույգի սերը և նրանց կապում ավանդական կենսաձևին:

Շներն, նորաստեղծ ընտանիքի համար այնքան կարևոր, հավատարմության խորհրդանիշներ են:

Վիշապագորգը Ղարաբաղում ուներ պահպանիչ նշանակություն: Նա կոչված էր չարից ու պատուհասից հեռու պահելու ընտանիքին և ունեցվածքը:

Հայկական գորգանախշերը իրական, պատմական, ծիսական պատկերներ ու խորհրդանշաններ էին: Դարեր շարունակ ընդօրինակվելիս նրանցից շատերը խեղվել-ձևափոխվել, կորցրել են իրենց նախկին պատկերը և վերածվել սոսկ զարդանախշի: Ավանդական սովորությամբ գորգերի «բրենակները» (օրինակները) հոգատարությամբ պահվում էին որդոց-որդի: Նրանք չէին

վաճառվում: Սակայն տարբեր ժամանակներում անհագուրդ և չար թշնամիների կողմից տվարի ենթարկվեցին նաև գորգերը: Իսկ Հայրենական պատերազմի շրջանում և նրանից հետո մինչև վերջերս Կիրովաբադից, Նուխուց, Ադրբեջանի գորգագործական այլ շրջաններից, պարբերաբար, շահագործված մարդիկ, խմբերով շրջում էին հայ գյուղերը և յուրաքանչյուր հին քրքրված գորգի կամ գորգակտորի փոխարեն ամբողջական թանկարժեք գորգեր էին տալիս և դրանով շահագործում հին ու արժեքավոր գորգերի վաճառքը: Այսպես չքացան Ղարաբաղում տոռատորեն սփռված, գրեթե ամեն հայ ընտանիքում գոյություն ունեցող հին «բրենակները»:

Ղարաբաղցին բոլոր գյուղերում, գյուղերի բոլոր թաղերում աղբյուր է կառուցել (այն էլ ի՜նչ աղբյուր): Եթե բնական պատահարով կորել, խորտակվել, կտրվել, չորացել է աղբյուրը և այլևս հնարավորություն չի ունեցել վերականգնելու, գյուղն է տեղափոխվել: Կյանքը ջրի հետևից գնացել է, ներդաշնակվել ջրին: Աշխարհաշեն հայ գյուղացին ամեն հանդում, այգիների, վարելահողերի, արոտավայրերի տեսանելի կողմերում, մեծ ու փոքր ճանապարհների կողերին աղբյուր է կառուցել, աղբյուրի մոտ հավերժակենաց ծառ է տնկել՝ թթենի, տնջրի, կաղնի, ընկուզենի, թքեռնի, սղուզի... շինել է «հրապարակ», «քեֆի սեղան» և «հաց է կերել», խնջույքի նստել այդ ծառերի տակ: Եկող-գնացողին, ծանոթ-անծանոթին նստեցրել է «վերին թարեքին» ու նրա պատվին գինու նոր կարաս է բացել:

Աստծու պարգև ջրին արժանավայել հագուստ է հագցրել, քանդակել է, գրել, վիմագարդել, որ առինքնող լինի և ակնահաճո: Աղբյուրին հուն է փորել, հոր է բացել, որ հավերժ լինի նրա կարկաչը: Ակ է շինել, քարակերտ գեղաշեն ու գլգլան ակ, որ մարդիկ անապական ու թարմ ջուր խմեն: Հղկել է մարմարն ու որձաքարը ու վրան գրել.—

Պարզիր, աղբյուր իմ սառնորակ,
Անցորդներին զով արա...

Մեծ ակի կողքին փոքրն է դրել, ավելի գեղանահարը, որ երեխան ու ուլը, գառն ու դողդոջ ծերունին կարողանան վայելել առանց «նեղության»:

Ակի առաջ հովտ (գուռ) ու նավ է շինել, հաճախ հինգ-տասը մետր երկարություն ունեցող նավ, որ անասունները, թռչունները ջուր խմելիս իրար չհրմշտեն: Նավից ոչ հեռու ծառեր է

անկել, որ միջօրեին, ջրվելուց հետո անասունները նրանց տակ նստեն ու հանգստանան՝ մինչև «արևի կոտրվելը»: Տեղական դեղնակարմիր կավից թունգի է պատրաստել, ջուր անցկացրել, որ ջրասակավ, առջոր հողերը ջրարբի դառնան, այնտեղով անցնողը պապակ չմնա...

Չնայած համատարած ավերման տարիներին հին աղբյուրներից շատ քիչ բան է մնացել, այժմ էլ Ղարաբաղի բոլոր գյուղերում հնավանդ ու գեղաշեն աղբյուրներ կան: Մինչև վերջերս տարեց մարդիկ հիացմունքով էին խոսում Պարտավ քաղաքի քառասնակնյա աղբյուրի մասին և այն մասին, որ յուրաքանչյուր ակ իր բարեշեն նավն ուներ: Ժողովրդի հիշողության մեջ թարմ է նաև Նուխի քաղաքից ոչ հեռու Թազաքյանդ գյուղի մի հանդում գանվող յոթակնյա աղբյուրը՝ կողքին բարձրացված ինը մետրանի հղկված որձաքարե սյունով, որ կոչվում էր «Վարդանի քար»: Ասում են հայոց Մեծն Սպարապետին հղված ասղեր կան այան փոշեծածկ ճակատին:

Ղարաբաղյան բանահյուսության մեջ մարդու, հացի և ջրի դաշնության մասին բազում վկայություններ կան: Իսկ որքան անուններ կան ցանուցիր, հնախոս ու քաղցրախոս աղբրանուններ, դաջված սարերին, ձորերին, հանդերին...

Բավականին մեծ է Ղարաբաղի բարբառի տարածքը: Այն ընդգրկել էր պատմական Հայաստանի մի հսկայածավալ մասը՝ օջախ ունենալով Աղվանից թագավորական աշխարհը: Մայր լեզվի հետ լինելով մշտական շփման պայմաններում և վերընձյուղվելով ու զորանալով նրանից, միաժամանակ իր մեջ ներառել է ժողովրդական տարբեր խոսվածքների ընդհանուր բառապաշարը: Խոսվածքներ, որ իրար էին խաչվում երկրամասի աշխարհագրական արդյունավետ դիրքի ընձեռած բազմակողմանի հնարավորություններով ու նպաստավորությամբ: Ղարաբաղի բարբառի արմատը ծագումնաբանորեն այնքան է հին, որքան իրեն ծնող մայրը՝ հին հայերենը: Նրա բառ ու բանի ակունքը խոր է, հեռավոր, ինչպես մարդկային առաջին թոթովանքները՝ պարզ, բնաձայնային: Ղարաբաղի բարբառը ծովածավալ հարստություն ունի: Չնայած նա տեղատվություն է ապրել, կորցրել տերիտորիալ թանկագին միասնությունը, բայց մնացել է դեռևս իր մաքուր ակունքի մոտ, մնացել միակ անկողոպտելին՝ իր լեզվական առեղծվածներով, հնդեվրոպական նախալեզվի բառազանձերով:

Ղարաբաղի բարբառը պետք է դիտել ոչ թե որպես բարբառ,

այլ ընդհանուր լեզվի համաժողովրդական մի տարբերակ՝ իրեն բնորոշ լեզվամտածողությամբ ու հարուստ բառապաշարով: Նախամեսրոպյան լեզվի շատ բառեր, դուրս մնալով դասական մատենագրությունից և չունենալով գործածության ոլորտ՝ մոռացվել են և մի զգալի մասով ակունքային անաղարտությամբ պահպանվել Ղարաբաղի բարբառում:

Ժողովածուի նպատակն է նաև բանասիրական ասպարեզ հանել Ղարաբաղի բարբառի հազվագյուտ բառեր, արտահայտություններ, որոնք արժանի են համահայկական ճանաչման ու հետաքրքիր են իրենց ոճական, կառուցվածքային վաղեմության առումներով:

Աղունաղաց
այլաշուն
առք
ատոմ անել
արօղի (արանօղի)
բանդի
բեռն
բողոմն
բսուկ
բրբթո
գեառ
գիդի
գորտնուկ
դեռի
դեռիկ
դոդի
եխնել
եղկ
ետե խելք
Երգի (Հարգա)
զարդա
զարուր
զոզակ
զռավար անել
էյն
թերմա
թիմարել
թոր (սաղմ)
թորել-թափել, կաթեցնել
թրթոր-փափուկ

թևան-թևավոր
իմացք
լյուսիլ
լպստան
լպրտան
լպրտոկ
խալդի
խարակ
խեղդելահազ
խինդեղն
խոսքասեր
խռնակ
խցկան
ծակուկ
ծառաշարժ-վաղ գարնանային քամի
ծծախռով
ծծուկ
ծոմախեղդ
կսթուկ
կակուշ
կապա-գորգ
կապան-գորգագործ
կեռան
կճեխաշ
կիցք
կնկասեր
կողկից
կոտորակ
կրմզուկ
համն

հասան - հասնող, չափահաս
հատրա
հարսուկեսուր անել
հեր (տեսանելի)
հերաթաթ
հի
հոծի
հև
հևթ
ձուկան
ղոոթն
ճեպուռ
ճմոռ - ճմռթված
ճոճղ
ճտամայր
մաղ ընիլ - պարել
մաշկաձու
մեծուքանուկ
միլ - տարածուն
միջի
միջավար
մլմլո
մղակ
մռավ
մորաքոր
մոխրաթառ
մուղան
յալ
«Յալի»
յոթը պորտ

շեղուն
շեշաքար
շրախոտ
շուշակ
ոտաշոր
պատակ
պարանել
պզտաթան
պտտան
ջեջա
ջեջողի
ջուվար
ջուրնիկ
ոոք
սիրան - սիրավոր
սլոկն
սոյն
սորան
սվսվենի
սուլուլ
վայիս
վեկնել (պարսավել)
վժժոկ
վիճավ
տոխ
տոնդ
ցավքուն
ուխարել
ուսակ
փխեխ
փշփշիկ (փշիկ)
փոկ (կաշվաթել)
քաղավ կյալ
քից (օղի)
քոլասայր
քրշա (սանճակ)
քոռ (չարաճճի)
քոնթավ կյալ
օնջ և այլն:

Ղարաբաղցին սիրում է իր բարբառը: Ամբողջ կյանքում նրանով խոսում, նրանով խորհում է: Եվ եթե բարբառում է այլ լեզուներով, ապա՝ իր լեզվի բույրն ու համը նրանց խառնելով: Զոր ու անկենդան են թվում մյուս լեզուները և նեղլիկ՝ նրանց հնարավորության սահմանները: «Մեր լüզուն շողոլ կաղնե ա. օգüմ ըս համնը շինի, օգüմ ըս՝ մա́տան: Մեր պառը երգինքան ա կաթալ»: Նա այսպիսի կարծիք ունի իր լեզվի մասին:

Ղարաբաղցին հնուց ի վեր աչքի էր ընկնում ամուր հիմք ունեցող բարոյականությամբ ու կայուն սովորություններով: Կանոնարկված էին հասարակական կյանքի բոլոր բնագավառները: Փորձենք ուրվագծել այն մի քանի բնորոշ կողմերով: Ղարաբաղյան բարոյականության հիմքում միշտ էլ եղել են հայ ընտանեկան հարաբերությունները՝ իրենց սովորույթային անխախտելի նորմերով: «ԱՇԿԸ ՏԵՍԱԾՆ Ա ՍԻՐՈՒՄ»:

Մի՞թե սա չէ այն անկյունաքարերից մեկը, որ երկար դարեր պահպանել է հայ ընտանիքի կայունությունը: Սերն ինքն իրեն կգա: Կգա մանկան ճիչերով, հարսի ամոթխածությամբ, բարեկամությամբ, ամուսնական մահճի նկատմամբ պարտականության չգրված օրենքով:

«Վեչ փիս ախճիգ տեսե, վեչ՝ լա́վ կնեգ»:

«Վեչ անվա́լ ախճիգ տեսե, վեչ՝ ղաշանգ հարթնը»:

Սխա՞լ է այս փիլիսոփայությունը... Բայց բարոյական է և նրա օգտին են վկայությունները: Մի տան մեջ ամուսնությամբ օղակված ջահել աղջիկն ու տղան ինչո՞ւ իրար չպետք է սիրեն, երբ կա երդում, որ մահվան չափ ծանր է այն դրժելը, կամ համատեղ կենակցությունը երաշխավորող արարողություններ...

«Ծառին կեռՓանը տակեն ա ընում»: — Սերը կծկարծակի տևական կենակցության ջերմոցում: Սերը չի ուշանա, երբ նրանից չձերբազատվի պարկեշտությունը: «Թեկուզ մարթ ու կին, էլի մարթը կնգանան բդի հիմանչի, կնեգը՝ մարթան»: «Մեր Օսաննեն նհետ էնՓան օր ու Փշեր ըմ ըրալ, Փուր-ախպեր ընՓ տեռալ»:

Որքա՞ն հարազատություն, երկնային ջերմություն կա ընտանեկան հարաբերություններում: Բայց դարաբաղցին չի Փարոզում սիրո մեջ հաշավողականության անպարկեշտ գաղափարը: Սիրո «միակ աստվածն» «աստվածներին» է նովանավորում, ընտրյալներին: Դա սոսկ ցանկություն է, իսկ իրականում...

Իրականում մեկին սիրում են, մի ուրիշին առնում: Բայց իդեալական, հավերժական սիրո գաղափարը և նրան ուղղված ձգտումը կենդանի է մարդկանց մեջ:

«Տարեն մե հեա մին հավՓ ա կյամ, մին ծառու վեր կյամ, ասում.

— Լավը՝ փիսին, փիսը՝ լավեն: Լավը փիսին, փիսը՝ լավեն:

Տասը տարանը մին էլ էդ նույն հավՓը կյամ ա ծառեն վեր կյամ, ասում.

— Լավը՝ լավեն, փիսը՝ փիսին: Լավը՝ լավեն, փիսը՝ փիսին»:

Քչերին է հաջողվում գանել իրենց երազի արպարին՝ ոսկեգանգուր պատանուն կամ ոսկեծամիկ աղջկան, բայց ամուսնանում են բոլորը: Այդպես է աշխարհի կարգը: Այնուամենայնիվ, սիրածի հետ միայն պետՓ է ամուսնանալ: Շրջապատում ամենագեղեցիկը մարդու կինը պետՓ է լինի: «Վաշանգներեն մաչին ամենաղաշանգը, սերուններեն մաչին ամենասերունը կնեգը բդի ընի: Նա, վեր ամեն օր ըռաչիդ շոռ ա կյամ, Փզնհետ օր ու Փշեր անում»:

Դեռևս հազարամյակների հեռվից, մարդու մեջ զանազանվել է երկու գեղեցկություն՝ ներՓին (հոգեկան) և արտաՓին (պատկերային): Երկրորդը փայլ է, խաբուսիկ: Երբ չկա առաջինը, նա արագ անէանում է և հակառակ զգացողությունը պատճառում մարդուն: «Վշնգոըթունը սարու ծյուն ա, սարը բդի դաշանգ: Համ էլ՝ դաշանգն ասում ա՝ ինձ հռնանցե եշի»:

Ամուսնական հարցի լուծումը ամենադժվարն է կյանՓում, որին պետՓ է մոտենալ ամենայն լրջությամբ և հասուն տարիՓում: Երբ ամուսնացող կնոջ հասակը ամուսնության գործում վճռական չի եղել (նրան կարող են ամուսնացնել նաև մատաղ

տարիքում), ապա աղամարդը բոլորած պետք է լինի իր քսանհինգ տարին: «Կնեգ բրա, քնենք բրա»:

Այս լուրջ, ճակատագրական դաշինքի մեջ չպետք է սողոսկեն պատահականությունները: «Մուկունը տորոնեն (թռչուն է) տեսնում ա, յրան սիրահարվում: Քյընում ա կոխքը կտրում, թա՝ եկ ես ու առ ö՛ւր՛ö՛ւր ճիճեռ պսակվինք: Տորոնն ասում ա՝ լա՛վ կընի: Մուկունը լոք ա տամ, տորոնեն նեսաա պաչում, փախչում: Տորոնը կյըմրում ա, փեսացվեն հետան թռչում: Մուկունն էլ վազ ա տամ, նի մննում իրան պö՛ւնը: Խեղճ տորոնը անս ա եշում, տեն ա եշում, հարö՛ւր ծակ-ծուկ կա, ինքը վերա՞վը նի մննե: Ճարը կտրած պö՛ւնին կշաեն նստում ա, ծերքերը խաչ անում, սպասում: Էնքան ա եշում, մինչև ումեղը կարում ա: Ասում ա՝ իմ դանգլա խելքս, ամեն պաչու կհավատա՞ն, վեր ես հիվըսացե»:

Այս փիլիսոփայությունն է այն ամուր հենասյուներից մեկը, որի վրա կանգնում է մնացել հայ ընտանեկան բարոյականությունը: Հայկական սովորությունները չէին արգելում պատանիների և աղջիկների համատեղ խաղերը, տոնախմբությունները, մրցումները և այլն: Սրանք տալիս էին մոտիկից շփվելու և իրար ճանաչելու ռեալ հնարավորություն, որ մեծ դեր էր խաղում ամուսնական ընտրության մեջ:

Մի զրույցի մեջ կինը մեղադրվում է այն բանի համար, որ երազում տղամարդուն ներկայացել է թեթևաբարո կողմերով: «Վեր իմ բրազումս տի ըս, քու բրազումդ հո՞ւց կընիս»,—ասում է ամուսինը:

Համեստությունը, առաքինությունը այն թևերն են, որ կնոջը պետք է պահեն ավանդական բարձրության վրա:

«ԸՆԴԵՂ ՄՏՔԱՎ ՔՅԸՆԻԼՆ ԷԼ Ա ՀԱՄՈԹ»: «Էդ խոսքը մըտքումը անելն էլ ա համոթ»: Սա մարդկային բարոյականության ամենավսեմ դրսևորումներից է: Ամուսնական սուրբ մահիճը պղծողները պատժվել են չարաչար: Մարդկային կենդանի խիղճը անզոր է գտնվել ժողովրդական վճռի առաջ՝ այդ պարագայում: Կնոջ ամեն թերություն կարելի է տանել, չի կարելի ներել նրա անհավատարմությունը:

Ամուսնական գործում ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ հաշվառումը մարդկային գոյին վերաբերող՝ դարաբաղյան հոգևոր ժառանգության ամենահետաքրքիր կողմերից է: ՕԽՏԸ ՊՈՐՏԸ: Գնում էին հետ՝ մինչև յոթերորդ սերունդ, քրքրում էին առհմածառը,

ուրից հետո միայն հանգում ամուսնական ընտրության: «ԱՍԼԸ ՀՈ».— Ցեղի (ազգի, գերդաստանի) ժառանգական հատկանիշները չեն կորչում, այլ հարատևում են սերունդների մեջ: Սա է ենից մեզ հասած այս արտահայտության իմաստը:

Ղարաբաղցի տղամարդու բարոյական նկարագրից դուրս է եղել խմել–հարբելը, վախկոտությունը, ստախոսությունը, խուքադրժությունը, ծուլությունը, անհյուրընկալությունը, նամարդությունը (նամարդություն են համարվել հրացանով մարդ սպանելը, դավերը. «Թվանգը նամարդոթուն քցից մարթկանց մաչը»), անգթությունը, խեղճին, անզորին, անօգնականին չպաշտպանելը, որբին հենարան չկանգնելը, մարդկանց ներկայությամբ հայհոյելը, ուրիշների ներկայությամբ կնոջը գուրգուրելը, սխալը երկրորդ անգամ կրկնելը, ստորաքարշությունն ու քծնանքը, խորամանկությունը...

«Ղարաբաղցուն ըսեցեն. ամենատժերը հի՞նչն ա, վեր կարում չըս տանիս, ասից. ինձ ըշտեղ տնիլը: Սրտես նստե՝ մըռքըս քանդի, շիրեփայվ աշկես եղը քաշի, բայց ինձ ըշտեղ մի տընի, հազար տարե էշ ըմ պահալ»:

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.— «Չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և ճավի միս, մեծ քանակությամբ ցորենի և գարու հացի հետ»: Այսպես է գրել հայերի հյուրասիրության մասին Քսենոֆոնը մեր թվարկությունից առաջ չորրորդ դարում: Նկարագրված շռայլ հյուրասիրության սովորույթը երկրամասում պահպանվել է առայսօր: Եվ, սակայն, պետք է նշել, որ ղարաբաղյան հյուրասիրությունը հեռու էր սոսկական կերուխումից, առավել՝ հաշվենկատությունից, այն ամենից առաջ արարողություն էր, որից անպակաս էին երգն ու պարը, սամունքն ու նվագը, «հանգեր անելը» հնարամտությունն ու զվարճախոսությունը... Հյուրասիրությունն ուներ իր մշակված կարգը, դեպի հյուրը հարգանքի ու մեծարանքի հակումով: Հյուրասիրության առողջ ու մարդասիրությամբ առլեցուն սովորությունը իր վեհությամբ ետ չէր մնում ինքնատիպ ու ինքնահնար հայ ճարտարապետությունից, միջնադարյան մանրանկարչությունից ու խաչարվեստից:

«ՀՈՒՐ ԸՄ ՄԻՆ ԹԻՔԱ ՀԱՑ ՏՎԱԼ»: Հյուրասիրությունը ըստ ղարաբաղցու «աստվածահաճո և մարդահաճո» է, և մարդկային համակեցության անբաժանելի տարրերից մեկն է: Եթե մարդ ինչ-որ պատահարից ու պատուհասից ազատվել է ժամանակին

ու հաջողությամբ, ապա դա վերագրվել է հյուրասիրությանը, օտարին, կարիքավորին «մի կտոր հաց տալուն»:

Մարդը տխրության, ուրախության պահերին, խաղաղ ու անհանգիստ ժամանակներին, պետք է իր ժողովրդի հետ լինի: Այդ կապի սերտացման արդյունք է «ժողովուրդին հաց տալը»: «Մին թիքա մինակ կեր, մինը՝ ժողովուրդին նինա»:

Տարբեր առիթներով հասարակ ժողովրդի համար տոնախմբություններ, հացկերույթներ սարքելը «սերան ու անոնք պեց» ղարաբաղցու նկարագրի ամենահատկանշանական գծերից է: Նման պահերին մարդիկ աչքի էին ընկնում շռայլությամբ, հոսում էր հին գինին, թանկագին ուտեստներով լցվում սեղանները: «Աստված հաց տվողին հացը բոլբոլ ա անում»: «Հու վեր ժողովուրթան հաց խնայից, նրա խուփան էլ աստուծ կխնայի»:

Բացի ծիսական, կենցաղային սովորություններից (տխրության և ուրախության հետ կապված սովորությունները, որոնք ուղեկցվում էին հացկերույթներով), հայերը տարբեր առիթներ էին որոնում «ժողովրթին հաց տալու համար»:

Երկրամասի հայերի շռայլ մարդասիրության մասին է հավաստում երկու եղբոր զրույցը: Երկու եղբայր են եղել, մեկն աշխատել է առավոտից իրիկուն, երկնել է, ստեղծել, ամբարել ամենայն բերք ու բարիք, իսկ մյուսը գրել է աշխարհով մեկ, եղբոր կուտակած բարիքը բաշխելով մարդկանց: Երկու եղբայրները ղարաբաղցու հպարտ էության երկու կողմերն են:

Խորհրդային խոշորագույն ֆիզիոլոգ Բոգոմոլցն ասել է, որ պետք է ուտեստի սեղանից հեռանալ քաղցի թեթևակի զգացումով: Ղարաբաղում, ո՞վ գիտե, որ հազարամյակից, առաջնորդվում էին այս իմաստնություններով: «Վեր մարթին աչքը հացեն յրան ընի, հիվանդանալ չի», «Հանց բրա, վեր ուտեխս պենիդ համը պրանումդ կորչի վուչ», «Վեր մին պենան շատ կերեր, կնհամե», «Ամեն հաց ուտեխս՝ փորումդ թափուր տեղ պահե», «Մարթին փորը փեյնանվարան չի, հունչու ածիս՝ տանե» և այլն, և այլն: Ամեն բարիքի և առանձնապես հացի նկատմամբ պաշտամունք ունեցող աշխատավորը ունեցել է քաղցրությամբ վայելելու իր սկզբունքներն ու կանոնները: Այնպես ուտել, որ «իրեսը պրծնան հիմանչի ոչ»:

Բանահյուսական-ազգագրական վկայությունների մեջ ուրվագծվում է ստեղծող ժողովրդի հավաքական կերպարը: Եվ մենք տեսնում ենք նրան, մեր ժողովրդին՝ իմաստուն, նուրբ զգացո-

դությամբ, հումորով, աշխատանքի նկատմամբ պաշտամունքի հասնող սիրով: Ղարաբաղցու հմայքը առաջին հերթին նրա ազնըվության, սկզբունքայնության, երեխայական պարզամտության և դյուրամատչելիության մեջ է: Նրա համար անհաղթահարելի դժվարություն չկա: Նա սիրում է օրենքը, կարգն ու սովորությունը և ենթարկվում է նրանց դարձյալ երեխայի պարզամըտությամբ: Յուրաքանչյուր տոհմիկ ղարաբաղցի աստվածային կայծ ունի իր մեջ, բանաստեղծական փխրուն հոգի: Նա սիրում է իր երկիրը և համառ է իր սիրո մեջ, ինչպես սպարտացին հին Հունաստանում և կատալոնացին Իսպանիայում:

Եթե ես նկարիչ լինեի, ապա որպես ղարաբաղյան պարզ հոգու արտահայտություն, մի լեռան ծաղիկ կնկարեի: Մի բուրավետ ու երկչոտ ծաղիկ՝ պատմության մշուշից եկող հայ մարդու աչքերով: Ղարաբաղցին իր երեքհազարամյա կյանքում ունեցել է վսեմ մի իղձ՝ ապրել արևի հայացքի տակ ազատ, տիեզերական ներդաշնակության մեջ՝ ազգերի և բնության, հոգու և աշխարհի: Ապրել մայր ժողովրդի հետ գիրկընդխառն, ժողովրդի և դեկավար մարմնի փոխըմբռնման ու հարգանքի պայմաններում: «Պուղուն հարցրեն, թա,— էղքան պէներր հո՞ւնց ըս հնարալ, ասից.—Իմ դլվումըս Մելիք Շահնազարեն նման տղամարդ ա ըլըլ»:

Քրտինքը մարգարիտ կդառնա, եթե չի ոտնահարվում մարդկային խիղճն ու արդարությունը: Սարկավագ իմաստունն ասում է՝ մի հանգցրու մարդու հոգու աստվածային կայծերը: Ինչ մնում է ազգային ու մարդկային արժանապատվությանը, ապա դա իր էությունն է, հոգու գերտարրը: Նա լի է մարդկության առաջընթացի մեջ իր՝ ղարաբաղյան ավանդը ներդնելու ազնիվ ցանկությամբ: Նրա հոգին ամենածայրահեղ մտորումներում անզամ անկեղծ է: Եթե հնարավորություն ունենար, աշխարհի մեծ ու փոքր հոգսերը իր ուսերին կառներ, իր տառապած, բայց դեռևս չճկած ուսերին:

Ահա նրա մի հավատամքը: «Ես սիրում եմ քեզ, իմ այլազգի բարեկամ: Դու բարձր ես, դու աստված ես, պատիվ արա վայելիր իմ սեղանից, ամենից փափուկ տեղն է քեզ վայել, ամենից կարմիր խնձորն է քոնը, եթե կտրեմ քո խոսքը, ապա միայն մեղրով ու շաքարով: Իսկ ես՝ քո ստրուկը, քո սպասավորը... Եվ եթե ես ինձ քո ստրուկն եմ համարում, ապա դու, հարգելի բարեկամ, չհամարձակվես ինձ ստրուկի տեղ դնել: Իմ գեղեցիկ

մատաղ քույրը պատրաստ է սպասավորելու քեզ, բայց հանկարծ դու նրան հարճ չհամարես, թե չէ... Երկինքը վկա...»:

Բարձր պատիվ տալը իր ընկեր մարդուն (ոչ տիրակալին) բարձրապատիվ մարդուն է վայել:

Ամենամաներախնդիր գործում էլ ղարաբաղցին մնում է իր մարդկային կոչման բարձրության վրա և ամեն ինչ անում է ՏՂԱՄԱՐԴԱՎԱՐԻ: «Մարթին անա մրթավետ բդի կյա» և «Խընդեղնեն տակոեն էլ թթենու պատվաստը չի ընդունի»:

Նա իր պաշտելի ազգային հերոսի նման ապրել է իր հողի սիրով, հաճախ կրակն ու ոսկին շփոթելով իրար հետ: Երբեմն էլ, երբ դաժան է վարվել թշնամին, իր հոյակապ աղբրից խմել ու թքել է ակին, կորցրել է չափը, չափը շպրտել է ու...

Այսպես՝ մեր այսօրվան է հասել ղարաբաղցին, հույսը նեցուկ ունենալով, անխաթար հավատով, արևային խաղաղ բարությունն ու պայծառությունը չկորցրած տղամարդու հավատով դեռ սպասում է իր ազգային ձգտումների իրականացմանը:

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՐՋԱԿ

## ՀԵՔԻԱԹՆԵՐ

### 1. ԾԻԼԿԱՆԸ

Ընում ա, չընում, իրեք ախպեր ըն ընում, ախպորցը մինը ասըլ, էրկուսը բղասըլ: Ուրան հնարին եշած էս ասըլ ախպորը անումը տնում ըն Ծիլկան: Ծիլկանը խելունք ա ընում, լոք տը-վող փռնող, սաղանու փափուն կյեցած, համ էլ սրտու փոշ տուս օնող:

Մին օր իրեք ախպերը խուսկրնեն մին ըն անում, վեր քյնին ուշափեն հանդան խոտ հարին, պիրին: Դրյըզնեն յոր ըն օնում նի մննում տափը: Հոնանցե օշափը տեսնում ա, սկսում ճղճղա-լը. «Արա, հե՛յ, ա շան տղեք, տուք քանե կլխանե յըք, վեր կյամ ըք էտ արտը հարում, հալա հավքը ուրան թևավը, օխծը ուրան պորտավը ըստըղեքավ անց չի կացալ»:

Օրավ առաչ Ծիլկանը ախպորցը կտըրցըրած ա ընում, վեր վեչ մինը ուշաիեն պատասխանը տա վուչ ուրան անայը կըման:

Օշափը վեր սահանց տեսնում ա, ուրխանում ա. «Սահանք լհա վեննուք-ծեռռուք եկալ ըն ընգալ խտետս, ըրգընվա ճաշս կա ու կա: Սհանցա մնին րուգյու կօտիմ, էրկունեն էլ՝ քշերս»:

Հըրցընում ա, թա.—Հո՞ւ ա ծզանա անկըրթևուր, վեր կյրիլ-կարթիլը գյուղում չի:

Ծիլկանն ասում ա.—Ես ըմ: Յա ես, յա մասաղ տավարը, համ վեննան տեպեգ, համ կըլխան:

Օշափն ասում ա. — Դե վեր տի յա, կա մին թախար տամ, տար էսինչ-էսինչ աեղը, քաշի առնավը նի մուտ տափեն տա-կը, մեր տոնը ընդեղ ա, ատ իմ մոր, եկ:

Ծիլկանը հղեննի պեց ա անում կարթում. «Վեր էս տղան կյա, փոնե մորթե, իփի, հանցու վեր կյամ, օտիմ»:

Ծիլկանը թոխտը ճրղոտում ա, օրիշ թխտու յրա ճորը կյրում. «Ա մար, Ալա եզնը մորթե, իփի, հնգերունքս յար ըմ օնում կյամ, հանցու օտինք»:

Ուշափեն մարը Ալա եզնը կմորթե, իփի, հզըրե, տղեն եշի:

Օշափը էրկու ախպորցը ճնետ կյամ ա տոն, տեսնում Ծիլկանը առոք-փառոք ճստած, ղզղանեն դամ ա տամ: Օշափը մաննը կծում ա, մորը յրա կզնըվում.—Պա քեզ տի յըմ ասա՞լ, վեր տի յըռ ըրալ:

— Այան մատաղ, հունչու կյրալ ըս, ընդի յըմ ըրալ: Հունչու ըլալ ա, ըլալ ա, ռուս անինք, տեսանք հինչ ա տեռնում:

Օշափը մորն ասում ա, վեր ուրուգյունը ճահանց կլխըտակերը ուրուր կոխկե տընի, կլխըներեն էլ մին կարպետ քցի, քշերը եր ա կննական կտորե, հանցու շիլ չըղնե:

Լոխ քոն ըն ընում, Ծիլկանը քոն չընում, ուշափեն ըսածնեն սկանում ա, եշում, վեր քննիլու մարթ չի մնամ, ծիլ ա տամ եր կենում, ուշափեն օխտը քուր ա ընում, կարպետը քցում ա ճահանց կլխրներավը, ախպորցը եր կցընում, փախնում ըն:

Օշափը եր ա կենում, կրպետեն տակե կլխընեեն կըտորում, կարպետը քաշում, տեսնում ուրան քվերքը:

Հղեննի էրկու ախպերքը քնենք ըն անում, թա հունց անին, վեր ուրանց խելունք ախպորը կյեղած պահին ուչ, թաքավերեն իմաց տան, վեր ըշխարքես ամենախելունքը ուրանց պիծի ախպերն ա: Տղատ եր ըն կենում, քյընում թուշին թաքավերեն կոշտը: Մեծ ախպերն ասում ա.—Թաքավերն ապրած կենա, էն ա օշափը մին վեսկե թաս օնե, վեր հալա ըշխարքումս տի պեն ըլըված, տի պեն տեսած չի: Էտ ամանը քու տանա ա սզական, ուշափեն եխտուտ տանը սզական չի:

Թաքավերն ասում ա՝ պա հու կպիրի, հու չի պիրիլ, սահանք ասում ըն՝ վեչ մինը կարել չի, մինակ մեր Ծիլկան ախպերը կըպիրի.

Ծիլկանը քյնում ա, շորերը փոխում, մին չաթու էլ յոր օնում, մին կապ ճոթ-կտոր էլ, մին մկըրատ էլ, շլակում տանում ուշափեն տռանը վեր օնում: Տեսնում՝ մարը տռանը ճստած: Ասում ա. — Ա մար, ես շուրըկարե յըմ, օշափ ախպերը ղարկալ ա, վեր երկանքդ ու լենքդ չափիմ, հանցու քզ էտե մին լավ շոր կարիմ, էո ա զետեզ ա կյամ: Վախիս ուչ, պեն չըմ իհք ունենա-

կան, էն տըռնուն օշափ ախպերը մին ճվարան զկեռ ա տվալ, տարալ ըմ խոխեքս կյրունքհան ըրալ:

Էս վեր սկանում ա, պառավն ուրխանում ա, ըշխարքավս մին տեռնում, հիքանց տեսնա նոր շոր չի կյեցալ, խըլըղեն ծնգըլերն էն ա կախ: Ճոթ կտորն էլ վեր տեսնում ա, ծլոլը հղե յա ընում:

— Դարզի ախպեր, մին քեթկալ էլ կշինիս, պռավալ ըմ: Դարզի ախպեր, մին յալլեխ էլ կկարիս, ծլոլս քյընում ա: Դարզի ախպեր, մին կյոտե էլ կկարիս, փորս թուլացալ ա...

Միլկանն ասում ա, յոխ կարքեն-սարքեն կրըլական ա, հալա մին ծերք էլ էյսվա հետե:

Միլկանը չաթուն յոր ա օնում, բոյր չփշըփորում, կնգանն ասում.

— Այա, ծառնըյեր վեննը կաց, մաշկադ դուզվի, կյոտոդ չափսը օնիմ:

Պառավը ծառնըյեր վենն ա կենում, Միլկանը մին քանե հետ չաթուն փորավը ծառեն ննետ պատ ա տամ, քմակեն կապում, նի մննում տոնը, վեսկե թասը յոր օնում, կնգանն էլ ասում՝ տի կաց, տանիմ շորդ կարիմ պիրիմ:

Վեսկե ամանը պուրում ա տամ թաքավերեն:

Ախպերքը նորն ըն քյընում, թա. — Թաքավերն ապրած կենա, էնա ուշափեն մին վեսկե պնալի օնե, վեր համ ամեն սանդող պենում ա, համ էլ ընդի սերուն պեն վեչ աշկավ ա տեսած, վեչ ընգուճավ սկացած:

Թաքավերն ասում ա՝ պա հու կպիրի, հու չի պիրիլ, ախպերքն ասում ըն՝ մեր Միլկան ախպերը կպիրի:

Էլհա Միլկանենն ղարկում ըն:

Մեր ազնավուրը քյնում ա տեսնում ուշափեն մարը պռաված, փոփ տեռած մին կնեգ, ըշկերեն յուսը թուլացած, ընգուճնեն ծանըր, մին փադ եր կալած տափերն ա թակում, ննետն էլ հայ-հայ անում: Աշկեն մինն էլ ըսկի տըսնայիս չընում: Էն քոռ աշկեն կոխքավը քյընում ա, նի մըննում տոնը, պնալին յոր օնում, տուս կյամ, նի մննում կյումը, ընդըղեն թրեքը տուս տամ, ածում ղզղանեն մաշը, տուս կյամ կորկեռ փախնում:

Օշափը նի յա մննում, թա. — Ա մար, ըստըղեքաս մրթավետ ա կյամ:

Մարն ասում ա. — Խեղճ ընիմ ես, էս ա մին փութ սաղունձ յրանումս, էս ընգյունավն ըմ լմլամում, էն ընգյունավն ըմ լըմ-

լամում, հանցու քոնս տանե վուչ, քշեր-ցիրեկ էլ փաղավը տափերը վեր թկեյիս, հու վա կյամ բատեղ:

Օշափը գյուղում ա թա մարը ճաշ ա իփալ, ղզղանը յոր ա օճում, տնում բռաշին օտում, համ էլ ասում՝ իմ մար պռավալ ա, մհենգ ճաշը անհամ ա իփում:

Ծիլկանը վեսկե պնալին տանում ա տամ թաքավերեն:

Էրկու ախպերը էլ հա քյընում ըն թաքավերեն կոշտը, թա՝ պա ասել չըս օշափը մին հիրեղան ծի օնե, օտխ-խմխս թմաշա անիս, ինքն էլ հանց ա սև թուխպա տուս եկած կծըկրակ ընի:

Պա հո՞ւ կպիրի, հո՞ւ չի պիրիլ:

Մեր Ծիլկան ախպերը կպիրի:

Ծիլկան ասե սարեն ծաղեգ, մին քեշա յոր կօնե, քյընի նի մննե ուշափեն կյումը: Ծիլկանեն բախտան կյումումը շատ քաքոտ թուփ ըրած ա ընում, վեր ծին խրխնշամ ա, նի յա մննում ֆֆոտեն մաշը: Օշափը խրխնշոցեն յրա հսնում ա, տես ու տեն շոռ կյամ, մարդ չի քթնում, ֆֆոտվետումն էլ մրթավետը կարում չի ճոկե, ետ ա տեռնում քյընում: Ծիլկանը կապը ետ ա անում, քեշան կպոտում ծիյին կնըղըկներեն տական, հանցու ծեն շանե, կյուման տուս ա օնում, եր ընում, հայդա: Օշափը տեսնում ա հետան ծեն տամ. — Ա շան տղա, Ալա եզնանս կլոխը կերեր, վեսկե թասս տարեր, մծըսերուն պնալիս տարեր, ինձ թրեք ուտուցըրեր, մհենգ էլ ծիս ըս տանո՞ւմ:

Ծիլկանն ասում ա. — Տու վըս մնացալ, մե հետ էլ քեզ ըմ տննական:

Ծին տանում ա տամ թաքավերեն և խոսկ տամ, վեր ուշափեն էլ ա պըրլական:

Մին օր Ծիլկանը ճրղոտած շորեր ա կյենում, պառավ մարթու բեղ-մրոք շինում, կացենը կոխում կյոտեն, քյընում ուշափեն ծմակը: Օշափը հընանցե տեսնում ա ծեն տամ. — Տու հո՞ւ վըս, ա շան ալա, քանե կլոխ օնիս, վեր եկալ ըս ծմակս կտրում ըս. հալա հավքը ուրան թևավը, օխծը ուրան պորտավը էս սմթերքավը անց չի կացալ:

Ծիլկանը լուզուն փոխած ասում ա. — Օշափ ախպեր, վեր գյիդաս, տու էլ կկյաս, խեր պենու հետե յա:

Օշափը մոտանում ա, Ծիլկանն ասում ա. — Պա ասել չըս, էն շան տղա Ծիլկանը մեռալ ա, ղարկալ ըն վեր մին ղութի շինիմ:

Վեր սկանում ա, օշափը մին կացեն ա յոր օնում, կործ ա-

նում: Վեր կործը պրծընում ըն, Ծիլկանն ասում ա. — Օշափ ախպեր, առե յա տու, յա Ծիլկանը, մին բոյու վըք, նի մուտ մաշը, բալի յա էրկան ա, յա կարճ, հանցու ժամանակեն յա ըրկընցընինք, յա կրճըցընինք:

Օշափը նի մննելն ըքաթ, Ծիլկանը յշիգին ռեխը մեխում ա, շլակում: Հղեննի էս խեղճ օշափը հիշքան խնթրում ա, Ծիլկանը պեց չի թողում, տանում ա թաքավերեն տանն բռաշին վեր անում:

Թաքավերը կյամ ա թա. — Ծիլկան, վերթի, առու համ հնարավ ըս, համ խելունք, համ էլ թամահ չօնիս, ամեն խըթա էլ ծիլ ըս տամ պրծընում: Ես էլ պռավալ ըմ, եկ իմ նախշուն ախճիգս քեզ տամ, տեռ էս երգիրիս թաքավեր: Օշափ ախպերն էլ ընի քու ախպորցան մինը, իրեքան մինատեղ քեզ ծառային, թախտդ հասատդ պահին:

Հանց բեդար խելունք խոսկը խելունք կործ տեռնար, ըսածու կյիրավը դաստի կդարվար, խելունքը միշա թաքավեր տեռնար: Օխտը օր, օխտը քշեր հըրսանեք ըն անում, քեփ անում, ուրխանում: Ծիլկան հըսնում ա ուրան մուրազին, տուք էլ հըսնիք ծեր մուրազին: Յըրգինքեան էլ իրեք խնձոր ա վեր ըղնում, մինը էս քաթը ըսողեն, մինը սկընողեն, մինն էլ ամեն հինչը կուրցրած խեղճ օշափ ըխպորեն:

## 2. ՊԻՃ ԱՊԵՐԸ

Ընում ա չընում մին մարթ, սա էլ ընում ա մին կնեգ: Սահանք էն ըն ընում մին կտոր տան ըպրեխս, նեղութունու մաչի, քյսըբոթունը նսարըներան ծլծքայիս: Մարթը համ ծուլ ա ընում, համ անպեն, համ էլ վխըլկոտ: Էնքան ա ընում վխըլկոտ, վեր ռուզունը առանց կնեգը կարում չի թա տռնը տուս կյա, թա մին քթոլ կյուզի:

Մին ըտխալուս ռուզուն մարթ ու կնեգ տուս ըն կյամ, մարթն ասում ա. — Ա կնեգ, էս հինչ լավ քարվան կարելի քըշեր ա, սեռտս օզում ա վեր քյընիմ Մեծ հըղըցեն քարվաննեն լոխ կտըրիմ պիրիմ տռնը լցնիմ, բոլ ա, հերիք ա, հիշքան հըղըցես ցաքյ ըս քցալ:

— Քարվան կտրող կոնդդ մոշավ անիմ, էդ քաչալ կոնդդ,

լուզվում փարգյար ըս, մին ղուզու վա, էա էլ վեր ընի վուչ, քաշ-քշեղակ յրա կաա, քեզ տանե: Ճելլ ըրա, ճելլ ըրա կործդ պրծեր, քյընի տեղդ վեր ընգեր, քզանա քարվան կարող չընիլ, հիբը օղտը թոշի երգինքն ընի, էշը եր ընի փալաքյանը, ընդի էլ առւ քարվան կկարրիս:

Նի յըն մննում առնը քոն նո̄ւմ: Քշերը քախծր բրըզնե յա կյամ էս մտրթիս: Հունցու վեր մին զըրկլոխ մարթ եր կցընե, ասե. «Կօզի անումդ Պիծի, էս ըշխարքումս քզանա պիճ մարթ չկա, խե՞ կնգանդ անգուճ ըս օնում: Հինչ անինք, վեր համ անպեն ըս, համ վխլըկոտ, վխլըկոտու տարե յա, լոխ քզ նըման վխլըկոա ըն, քու պճոթունդ էլ նհանցա իվիլ: Եր կաց քյընի, ուրտեղ խաթիրը կոտրում' էր: Հինչ հղըցավ քյընիս, կնընչկյարմուր ա կըպլական, հունչու ծերքդ մեկնիս, քունն ա ըննական: Քյնողը տերտակ կյամ չի»:

Պիծին տեղան լոք ա տամ եր կենում, տանան առւս կյամ, իսկի կնգանն էլ ասում չի: Շատ ա քյընում, թա խրեզ, տա ինքը կգիդա, տեսնում ա հղեցը մին ծիու հաքյի վեր ընգած, ասում ա՝ էս լհա լավ ա, վեր ընգածը յոր կօնին, արազս հանցա պարին կդըրեխս: Մին պատառ էլ վեր քյընում ա, մին կոռու ճոտ ա վեննավն ըղնում, էդ էլ ա յոր օնում, անում փեշկումը: Ծմակավը քյընիյիս մին ըրծեվու ծու էլ ա տեսնում, էդ էլ ա քըցում փեշկը: Օրը մթնում ա, ինքը քյնիյիս, մտքումն ասում ա. «Սօր իրեք ռուզի եկու, պա քոն քնիլի անդս խե՞ կյամ չի»:

Եշում ա տեսնում՝ ծմակումը մին ծոխ ա եր ընում, ասում ա՝ կօզի շատ ընիմ նղացած, լաղ անիմ ըղնիմ ծուխեն կոշտը: Հսնում ա տեսնում՝ օխտը աժդահա օշափ կրակեն ղրաղեն մես ըն խրավում: Էլ յան տալի յոն չկա: Վեր ուշուփներեն տեսնում ա, վննըծերքը սկսում ա տղտողելը, մին հերմ ա կյամ ըղնում էս մարթին ջանը: Մտքումն ասում ա՝ Պիծի, բախադ քզնհետ ա, վախում' էր, քյընի:

Էս ուշուփնեն էլ ծերքավ ըն անում, թա՝ ա պիծի մարթ, եկ, հմընչիլան-քշվիլան հնցալ ա:

Սահանք հրցըփորձ ըն անում, թա հունց ա պաահալ, վեր պիծի մարթը ընգալ ա քստեղ:

Պիծին չանան առղտուղցընելավ մին կերպ զինքը հվաքում ա, թա. — Լհա ընդի, եկալ ըմ տեսնամ հունց ըք, հինչ ըք, հունց ըք նստում, հունց ըք եր կենում:

Մեծ օշափն ասում ա. — Լավ ըս ըրալ, օխտը շընինք, օթն ընինք, մին տեղ կապրինք:

Շատ ըն կենում, թա խրեգ, մին օր էլ ուշուփնեն մալըհոթ ըն անում, վեր «պիծի մարթին» վերշը տան: Տեղերը վեր ըն քցում, քոն նում. օխծը կծածեն քոն ա կյամ, վեր Պինուն ըշկերեն քոն չի կյամ: Հաըրնեն պահում ա, վեր լոխ քոն ըն ընում, հանդարդ եր ա կենում տոնան մին մեծ քյեթուկ պուրում անում ուրան տեղումը, յորղանը քցում յրան, ինքը նի մննում պոնախը:

Քշերվա կեսին մեծ օշափը զուրթնանում ա, դույուղ անում մնըցածներեն, թա՝ օնը պերեք էս պիծի մարթին կարքը քըցինք: Սա վեր սկանում ա, էն պնուխտակումը յղեն նաքում ա: Ուշուփնեն թո՛մփ հա թո՛մփ, վեր ըն թակում էս մարթին տեղեն: Վեր շատ վեր թկեցեն, տեղումը էլ հալ չմնաց, մեծ օշափն ասից՝ բոլ ա, սա ուրան փայը եր ա կալալ, նի մտեք տղրնետ, քոն ըլիք:

Պիծին եշից մինչև սահանք քունավ հնցեն, հանդարդ եր կացավ, յորղանը ետ քաշից, տեսավ քեթուկը տեղեն մաշին այլեր տեռած: Արփից տեն ածից, նի մտավ տեղը: Հիշտեղ ըք տեսալ, վեր փորը վախավ լիգը մարթը քոն նի: Տի էլ Պինին. քշերն ըսպընեյավ մին կերպ լո՛ւսըցըրավ: Ուշուփնեն զուրթնացեն, Պինին էլ յուրղանեն տական կլոխը տուս կալավ: Ուշուփնեն տեղնուտեղը ցըմըքվեցեն, ուրուր ըրեսե յշեցեն, մնացեն մաթ մնացած: Կունի մարթն ասից. — Էս քշեր շատ ծանդր քշեր ար, էս անդար լվենը թուղեցեն ուշ թա մին ջյավ քոն նիմ:

Էս վեր սկացեն, ուշուփնեն մնացեն ըռըխնեն պեց: Մեծ օշափը Պինուն անա թաքուն ասից.—Էս շան տղան վեր մեր օնեն լու վա ասում, սանում հնար շատ կա:

— Դե, լավ ա, կունի ապեր, եր կաց հաց ուտինք:

Ամեն մին հաց ուշուփնեն մին թքյա յըն շունում: Կունի ապերը մին հացեն ծերքեն տանչվում ա. ծղծղամ ա, ծղծղամ ա, պրծնում չի, մնացալ ա ծերքեն պտըհաս ընգած:

Հացա ետ մեծ օշափն ասից. — Ոտելիդ-ըմ եշո՞ւմ, մին զադ չըս, ամընալիդ ըմ եշո՞ւմ՝ մնամ ում ըրմացած: Եկեք ըստեղ մին քանե փորցեր անինք, տեսնանք մեր պիծի ապերը հունց ա:

Ասելն ըբաթ լոխ ուշուփնեն եր կացեն, մեծ օշափն ասից՝ քար ընք հոփ տլական, նուր կթըցընինք:

Ամեզը մին քար եր կալին, հոփ տվեն, նüւր կթրցրեն: Էս վեր տեսավ, կուծի ապորը ղեն նուր կտրից. մտածից, մտածից, մին անգյուն քաշվից, ծուցան ղուզղունեն ծուն տուս կալավ, տրավ մին քարու նհետ, հոփ տվավ, ծվեն մաշը մնըրղըթերավը նլըպըզտ ըրավ: Ուշուփնեն գյդացեն թա մնըրղըթերեն նüւրը քարան ա սուս կյամ, ուրուր ըրեսե յշեցեն, մեծ օշափին ասից. — Ապրիս, արժանքեղ եշած շատ լավ հոփ տվեր: Վեր տի յա, օրիշ պեն ընք ընդական, ամեզը մին մազ ընք պուք տլական մզանա, տեսնանք հուր մազ ա ճաստ:

Լոխ տուս ըն օնում, էս մարթը մտածում ա, հինչ անե, հունց անե, բուրդան մենն ա ըղնում ծյին հաքյին, փեշկան տուս ա օնում, ուշափեն քթեն տեմ օնում: Սահանք մնամ ըն էշ կարած Մեծ օշափին ասում ա՝ վեր տի յա տեռալ, եկեք կուռուտկըրներաս ամեզը մին վիշիլ տուս օնինք, տեսնանք հուրն ա մեծ: Կուծի ապոր մենն ա ըղնում հղըցեն քթած կորուն նոտը, լհա սուս կալավ տրավ ուշափեն ըռաշին, ուշուփնեն լոխ դըետ կալեն:

— Կունի մարթը ամեն հինչում մեզ եխնում ա:

Մեծ օշափը մաշումը կզնըվում ա, լոք տամ էն ընգյունին վենըր կենում թա. — Մհենք էլ քար ընք թող ընդական բդի երգինքը, տեսնանք հուրն ա եռե վեր ըղնում:

Ասից ինքը թող ըրավ, մնացած ուշուփնեն էլ՝ հետան:

Կունի ապերը քարը թող ընեխս աեսավ, վեր ընգեխս տեսավ ուշ: Տժեր տեղու տեմ ընգավ, մտածից, մտածից, դաստի հընարը քթավ:

— Մեծ ախպեր,— ասից,— մհետե էլ ա ըլալ ափ մին պեն, մին քար ըմ եր կալալ յրան ըրալ, քեցալ ա երգինքը տրքտրըքոտալ, ղողըռացալ ա, կծըկածի ըրալ, ըրիքնակը տեղան շիլ ա ընգալ, պատառ ա մնացալ, թա յրգինքին տոնը պարան կյա, մին թահրավ բսաղան-ընդըղան ուրուր ըմ քցալ, կպկպորալ, պարան չի եկալ:

Էս վեր սկանում ա, մեծ օշափը ղաշանք ա անում. — Քու հար ապրե, տի պեն չանիս, երգինքը մեր կլխեն պարան տոս, մեզ թողիս տակեն:

Պատառ վեր անց ա կենում, ուշուփներեն մինն ասում ա՝ քշերս իրիլի փադ չօնինք. մեծն էլ ասից՝ շաթվեքը եր կալիք, քեցեք ծմական փադ ըրեք, պերեք: Պիծի ապորն էլ ասից՝ տու քյընում'էր:

Ապերն ասից՝ չէ, քյինիլ բդիմ:

Անց ըն կենում քյընում:

Ծմակումը ուշուփնեն ամեզը մին ծառ պուք տվեն, վեր շլակին պիրին, ապերն էլ քյընից չարթվեն կյեփը քցից մին ծառու նեղնը, պատ տվավ, մին նոնդն էլ մին օրիշ ծառա կապից, թա՝ էս սաղ ծմակը շլտկել բդիմ, տանիմ քերծումը վեր քցիմ, ամեն անգամ կծը-միծի, կծը-միծի, տի փադ տունել չընիլ:

Ասից պրծավ, ծմակեն տակեն շոքից, վեր շլակե: Ուշուփնեն յրա տեռեն.

— Քու հար լուս տեռնա, քզ ըրա ծլլա, ծերք քաշի մզանա, ըլած-չըլած մին ծմակ օնինք, էն էլ պուք ըս տամ, տանիս ընդեղ վեր քցի՞ս. ախպեր, քու փադդ հարկավեր չի, հղեն թնգեր մզ նըհետ քյընինք, յա օզում ըս շլըկներես նստե:

Ապերը եր ա ընում մին ուշափու օսեն նստում, շվշվցընելավ կյամ տոն: Ծմակումը հունչու ըլալ ա, ուշուփնեն սասն էլ յրան ըն տնում, մեծ ուշափեն պատմում: Մեծ օշափն էլ ասում ա՝ մունք հիշքան ընք ըլալ բախտավեր, վեր թուղեցալ չըք, թա չէ՝ կմընինք առանց կյուզարան:

Ճարը կտրած մեծ օշափն ասում ա. — Կունի ապեր, պա իսկի քու խոխեքդ մեննդ չըն ըղնո՞ւմ, բալի ծեր տանը կնեգը սերո՞ւն չի...

— Մեզ նհետ ապրելը լա՞վ ա, պա ծեզ թողիմ քյընի՞մ, էս ա փսպըրլական ըմ, տանավ-տեղավ կյան ըստեղ, ծեր մաշին կործս աչ ա քյընում:

Ուշուփներեն միննն էլ ասից. — Պիծի ապեր, քու խոխե՞քդ էլ ըն քեզ նման:

Ապերն ասից. — Ես հինչ ըմ նահանց քշտեն... Էն առաջի վախտը պիծի տղաս կզնըվալ ա, շորերը հանալ, թող ըրալ ի-րիքնական տվալ էրալ, մնացալ տկլոր, չդըրհադի, պողան էլ վեր ա տեռալ կլոխս էրալ, մնացալ ըմ քաշալ:

Մեծ օշափը թա. — Պա նամարդ ընինք մունք, խոխեքդ տկլոր, մունք ըստեղ օտում ընք խմում, քեփ անում: Պեր մին կարաս վեսկե, մին ուշափու շելակ տամ, առ էլ յրան նստե, քյնի խոնցդ կոշտը, լուսը ծլլա քա հոր յրա, էլ վեչ տու ըդի մեզ օշդ հլորե, վեչ էլ խոխեքդ: Մունք էլ թող էս ծմակեն մաշին մզ էտե ապրինք, հո՞ւր ընք հինչ անում, յա մին վնաս տամ:

Տի էլ անում ըն: Հղեննի քյնիյիս օշափն ասում ա. — Պին ապեր, էդքան հնըրնե օնիս, համա թիթևս է, թափ չօնիս:

— Թափ շատ օնիմ, պայց քզ երա չըմ քցում:

— Դե մին թափդ ընձ երա քցի, տեսնամ հիշքան ըս ծանըր:

Պին ապերը ծուցան բիզը տա՛ա ա օնում, կոխում ուշտիեն խզաատկը:

— Պա՛ պա՛ պա՛, Կունի ապեր, թափդ եր կալ, խզատտկս կոտրից:

Ապերը բիզը առա ա օնում, եռ տնում ծուցումը:

Հղեննի, ուշափեն հրրթաթեն նստած, Պիծի ապերը մտածում ա. «Պա վեր էս օշափը կյա մեր տոնը, ասե՝ տուզ նըմ, հաց ոտե, պա նանա եոր մունք հինչ կօտինք, մին հնար բդիմ քթենալ:

Վեր հսնում ըն տանը բանդը, պերած վեսկեն ու տես-տեները վեր օնում, Պիծի ապերը ծեն ա տամ. «Ա կնեզ, ա կնեզ, եկալ ըմ, մին նեյլի ուշուփկոտեն պեր ըսաեղ, էս օշափը կոտիմ պեց թողիմ»:

Օշափ ասե՝ սարեն ծաղեզ, կոտելին անումը վեր սկանում ա, օշը հլորում ա, լոք-լոք ընելավ փախնում բդի ծմակը: Վազ տալավ քյնիյիս, շենին դերը պտահում ա. — էդ թո՞րն ըս փախնում, օշափ ախպեր, խալխն էլ քզանա յըն փախնում:

— Պա ասել չըս, Պիծի ապերը ուշուփկոտեն տոա կալավ թա ինձ կոաե, թուղեցե փախե:

Դերը ծծաղում ա ասում. — Ա խեղճ, եռ տեռ, գյուղում ըմ վեր պեն ըս պերալ, եա տեռ վարձդ ինք կալ, Պիծի ապերը օշափ կոտող ա՞: էդ պինը քեզ խափալ ա, մին ծառու մշանք արժանք չօնե, համ վխլըկոտ ա, համ սուտասի:

Օշափն ասում ա. — Դե ինձ քզանա կապե, հանցու վեր թոդիս ուչ փախնիմ:

Դերը ուշափեն ռւրան անա կապում ա, կյոտուն քշկըռում, ըրկոքան մինտեղ քյըննում ըն Ապորը առնը:

Ապերը վեր ուշափեն տեսնում ա, ծեն ա տամ. — Ախնի, ա կնեզ, պա ըսեցե վուչ թա՝ ուշուփկոաեն տո Մարդուն, պիրի, էս ուշափեն կոտինք, պեց թողինք:

Օշափն ըսկանալն ըրաթ, լոխ մննան քցում ա, սկսում հիշքան օժ օնե փախնիլը, դերն էլ կյոտան կապած դնզըլ-դնզըլ ընելավ, էս քարեն թխելավ, էն ծառեն թխելավ քաշ ա ընում: էս օշափը վազ տալավ քյնում ա, մեծ ուշափեն պատմում, հարռւրն էլ յրա ըվըլցըրած, Պիծի ապերն էլ ռւրան կնզանն ա պատմում.



3—777

— Ա կնեգ տեսե՞ր, վեր քեցե քüրվանը կտրեցե պերե, օրաս ետ անպենին հվատա, պնըվուրեն հվատաս ուչ: Պնոթունը վեր կա, ամեն հինչ ա, ետե-նեյլի աշխարքս ուննական ա:

## 3. ԼՎՈԹՈՒՆԸ ԿՈՐՉԻԼ ՉԻ

Ըլալ ա, չըլալ, էրևի ըլüլ ա, վեր ասում ըն, վեր ըլած չը-նի՝ կասի՞ն, մին հայ առուտուրական ա ընում, ուրան մաղար-գյուղար տղեն նհետ մինտեղ բպրեխս: Էդ մարթը օրեն յրտ պը-ռավում ա, քանե քյընում ա, օծը պկասում ա, վենները թուլա-նում, ծույները ծալվում, չեբեթը օխտը օր ա, տասնօխտը հետ էլ հվընդանում: Մին օր տղեն ծեն ա տամ կոչտը, տասը մանեթ տամ, ասում, վեր քյընի բազար ընդըղան ուրան սրտըզուլիքը ինք օնե:

Էս տղան հղեն ա ըղնում, բզարեն հղեն էլ հնգիստարանեն տակավն ա անց կենում: Ըշում ա տեսնում հնգիստին էրկու մարթ ամեզը մին փաղ եր կալած, մին պենու վեր ըն թակում: Մտքումն ասում ա՝ մուտանամ, քուցե քյումազու պեն կա: Մու-տանում ա, տեսնում՝ մին մեյդու վըն թակում: Հրցընում ա, թա՝ խե յըն տի անում: Էս մարթիքը բաղասխանում ըն, թա՝ պա ա-սել չըս, էս մարթը մինչև մեռնելը հենգ մանեթ մնին ա ըլալ պրտական, հենգը՝ մնին: «Մեռալ ա, մեր պարտքն էլ մնացալ ա, տա հետե ամեն օր կյալ բդինք թակինք, վեր տրանավ ընի, մեր սրտրնեն հվանա»:

Էս տղեն յավ չի թվամ. պա մեռածեն կթակի՞ն, մտածում ա, գուցե հանց մեռալ ա, պարտքը կրեցալ չի տա, մահը հո՞ւր տնա յա հրցընում: Լավ ա, ծերքեն տասը մանեթ կա, հենգը մնին տա, հենգն էլ՝ մնին, մեյդին պարտքա ըզադե, հանցու էլ չրչարին ուչ, մեխք ա:

Տի էլ անում ա, ծերքերը թող-թող ընելավ կյամ տոն: Հարը տեսնում ա, հրցընում, թա՝ խե՞ տերտակ ըս եկալ: Տղան պատ-մում ա կյրզմնուցեն պտահածը: Հարն ասում ա. — Լավ ըս ը-րտլ, կա տասը մանեթ էլ տամ, նորմնան քյընի, սրտեղ օզածը ինք կալ, քուցե վեր քու ումեդտ ըղնե, ուզլական չըս, թա փո-ղան խարջիս:

Քյընում ա ինք օնում, կյամ: Վեր կյամ ա, հարը ծեն ա տամ

կոշտը, ծերքան փոնում, ասում. — Ես մեռնում ըմ, քա հոր ուշաղեն ծոխը եր կանիս, օխտը խուխավ հացու նստիս:

Տանում ա նհաշ տամ ծախու ապրանքը վերն ա, հինչ կյինավ բդի ծախե:

— Ընձանա եաը մին ծառա կփռնիս, հանց կանիս, քզանա վեչ սերուն ընի, վեչ էլ՝ բոյավ: Մն էլ բազար քյնիյիս, ծոռ հղեն կթողիս, կարն հղըցավը քյնիս:

Հոր մռնելանը եաը տղան տանում ա ապրանք ծախե, համ էլ ծառա փռնե: Տեսնում ա, մին բոյավ-բուսաթավ շիմշատ տղա յա կյամ և խնթրում ա, վեր ռւրան ծառա յոր օնե: Տղան հեռե յա շոռ տամ, քռնե վեր հոր խոսկերը մննան ընզած չընում: Թարսու մնան հուրու ասում ա, վզավ շօնում, էս տղան էլ շուխկու մնան հետան շոռ ա տամ: Տեսնում ա էլ օրիշ նար չկա, անց ա կենում մին անգյուն, մին պատու տակե վեննը կենում, ասում. «Ներող ընիս, ա հո՛ր, ասածդ կարում չըմ անիմ»:

Էս բոյավ տղեն յոր օնում, ինք կալած ապրանքը պեռնում ծիերեն, հղե ըղնում: Ըստեղ ծառան տեռնը ասում ա. — Հինչ կընի, վեր էս ծոռ հղըցավը քյընինք:

Հորը խոսկը մեռն ա ըղնում, ասում ա. — Զէ, խե դուզը հինչ ա՞:

Ծառան խոսկը պրանում ա. — Վախել մ'էր, խոսկես անվոսն կալ, կօզի ես ծառա, տու տար, հունչու ընի, ինձ ընի:

Էս մարթն օզում չի նոր հնգերեն սրտեն նի կյա, կողմ ա Ռաշվում, ասում. «Ա հար, ներող ընիս, վեր քասծադ յան ըմ տամ»:

Հղե յըն ընում, խուտուր հղըցավը քյընում: Քյընում ըն, քյընում, շատն ու խերզը ասատուծ կգյիդա, մն էլ հղե քյընողը, վեր հղեն կես ա տեռնում, ծառան ասում ա. — Հի՞նչ կընի, վեր համ պատար հաց ուտինք, համ էլ վաստակ ընք, զինքրնես հվաքինք:

Հաց ուտելանը եաը ծառան ասում ա. — Հերթավ քոն ընինք:

Ըստեղ տեռնը սերտը քեն ա ըղնում, ըղնում ա քնըքու տակ. «Զընի թա էս տղես մեաքը ծոռ ա»: Հինչ էլ ընի, քոն բդի ընի:

Նհա վեր կլոխը անում ա պերցին՝ դաստի ըղնում ա քունեն աշխարը: Ծառան պցըրանում ա մին ծառ, պահակոթուն անում: Մն էլ ա տեսնում՝ մին պեն բդի տարը կյամ ա: Տու մի ասիլ հի՞նչ, օխտը կլխանե օշափի ա, կլխըննեն խուտերեն մաշավը, տեռնը անավ պտըպատ ըն անում: Նոք ա տամ ծառան վեր

կյամ, թխում օխտը կլոխն էլ կտրում, տեռնը ֆշտեն վեր ածում:
Տարը ֆնուտեղա եր ա կեննում, տեսնում շատ ամբրված ա:
Ծառան ասում ա. — Մին շորֆկուսիդ եշի:
Տարը աշկ ածում, ուշափեն կլխնեն տեսնում, ֆենը սրտան ձռանում ա, էն մեսոֆը կյամ, վեր փռնած ծառան շատ հավադա֊րիմ մարթ ա:
Հղե յրն ընում, հղեն ֆյընողենն ա, համ էլ՝ էրկան հղրցան փորցանֆը պակաս չընիլ: Եշում ըն տեսնում՝ մին փալաֆյան ա ֆյընում տափեն տակը: Ծառան ասում ա. — Հինչ կրնի, վեր տուֆ պատառ բստեղ նստիֆ, ես նի մննիմ էս տռնը, կյամ: Շատ չըմ յանննական:
Տու ասել մե՝ էս տռնը ուշափեն տռնն ա: Նի յա մննում թա չէ, ուշափեն մարը եր ա կեննում, թա. — էս տո՞ւ վըս իմ խոցս կտորալ, եշում ըմ, եշում, կյամ չըն, տու ֆանե կլխանե յըս...
Հալա խոսկը պրծընելու, աղան դաման հլորում ա, մորն էլ սպանում: Դաստի մին տոռն ա պեննում, մին լուսընռաֆ, լուսըվեննը ախնիգ ա տուս կյամ, շռավանֆը տամ ընդըրդեֆավ: Տղան իսկույն չանթում ա ըխնըրկանը, յոր օնում տուս կյամ: Տարը վեր ըխնըրկանը տեսնում ա, օզում ա թա խելֆը կլխան ընի, կոխը շոռ ա տամ, վեննանը յրա կարում չի վեննը կենա:
Ծառան տեսնում ա, տեռնը ննետ հինչ ա կդարվում, ասում ա. — էս նախշուն բստխըշռավանֆ ախնիգը ես ծեր տանը հարթն ըմ պերալ, ծռեն փեշակն էլ էն ա, վեր ուրան պրուննեն լավ ծռայի:
Էրկուսը իրեֆ ըն տեռնում, հղե ընում տոն: Շատ ըն ֆյը֊նում, խրեզ ըն ֆյընում, հղեն կրնանում ա, տռնը մտտանում, մն էլ տեսեր, ընի՛, էս ըն տանը:
Տարն ասում ա. — Դե մհենզ խոսֆը ինձ ա հսնում: Նըս֊տինֆ հաց օտինֆ, հովանանֆ, համ էլ պատմե տեսնամ՝ տու հու վըս֊հինչ ըս, վեր համ մահա ըզըդեցեր, համ էլ ընձետե սերուն ախնիգ ֆթիր:
Տղան ասում ա. — Հալա մին պեն կա անիմ, եռնան: Մին ժեմավ ախնիգն ինձ տո, ննետը կործ օնիմ:
Պարունն աշկերը շռում ա: Պա նշտնածը մին ժեմավ հունց տա էս սերուն աղեն: Տի պեն ը ված ա՞:
Ծառան ասում ա. — Սերտդ հանգիստ պահե, հունցու յոր օնիմ, ընդի էլ ֆեզ ըմ տլական:
Ճարը կտրած, համ էլ ըրմընալան՝ տարը համաձայնում ա:

Ծառան նի յա մննում ըխնրկանը տոնը, տեսնում մին օխծ խեղճ ըխնկանը փոռավը պատ եկած, կլոխն էլ տրած սրտեն: Ղաման տուս օնելն ու օխծին կլոխը կտրելը մին ա տեռնում: Ախնիգն ասում ա. — Տանավ պրծնում չըս, էն ա սպանած օխծին ճոտերը փոռումս:

Տղան վններան փռնում ա, ըխնըկանը կլխըվեր օնում, ճոտերը պռանտվը վեր ըն տեռնում: Ճուտերեն էլ ա սպանում: Ախնիգը ավելի յա սիրունանում. շափաղը ըղնում ա տոնը, առատուրականեն չոռք անգյունն օնում, փլըստրատե տամ ըշկերեն: Էս հի՞նչ պեն ա, աստուծ: Տարը դաստի տոռնը պեց անում, մննում ըխնկանը տոնը, մնամ իրեսնըյեր հյըլ–մայիլ կտըրած, կտորած օխծերն էլ ըխնկանը վններեն քշտեն վեր տեռած: Օշը հլոռում ա, վեր տղեն շնորհակալութուն անե, տեսնում ա մարթ պեն չկա, հիշքան ծեն ա տամ, հեյ անող չկա, հիշքան շոռ ա կյամ, վեչ մին տեղ ըռվամ չի: Էս հի՞նչ հնարք ա, աստուծ:

Ըստեղ գիտկան պառավը ղաթն ա ըղնում, մին պեն հրցընում. — Հո՞ւվար էն շենքավ-շնորքավ մարթը, վեր էտքան լվոթունը ըռավ, համ էլ անկո տեռավ կորավ:

Քաթս վեր լավ ընիք անգուն կալած, կգյիդաք, վեր էդ մարթը էն համին մեյդն ա ըլալ, եկալ ա լվոթունը տեղ տա: Մարթին ըրած մին վաղութունը, մին լվոթունը աշխարքումս կորչում չի: Լավ ըն ասալ՝ լվոթունն ըռա քցի ծովը, ծուկունը վեր գյիդա վուչ, աստուծ կգյիդա:

## 4. ՍՈՒՄԲԱԹՆ ՈՒ ԹԱՓԵՂԸ

Ժուկավ ժամանակավ Արմավիր քաղաքումը մին թաքավեր ար կենում: Էս թաքավերեն ժառանգ չընում. Ուրեռան մին օր թաքավերեն խլունքնեն հվաքվում ըն, զռուցի նստում:

— Թաքավերն ապրած կենա, ժառանգ չօնիս, վեր քզանա ետը մեր երգիրին տրոթուն անե, եր կենանք տուս կյանք Ըռասխեն փեշկը, ղաչանք անինք, փեշկան պաշինք, քուցե մեր հոգսը քաշի:

Քյընում ըն տեսնում Ըռախսեն յրա կննչկյարմուր կապած, կոխկե շամբան էլ մին խխու սաս ա կյամ: Մուտանում ըն տես-

նում մին պրզակնը ախպöւր, ըխպրին կոխկեն մին ծառ, ծառեն տակեն մին պերուր:

— Աստուծ էս պերուրը մզ էտե յա ղարկալ:

Թաքավերը ակնեն նրան խուխեն ըրեսավն ա տամ, յոր օնում պուրöւմ պալատը: Թաքուհին շատ ա ուրխանում, ըշխարքավս մին ա տեռնում:

Մին օր վեր կենում ա, խոխան թափ ա տամ, թաքուհին եշում ա տեսնում ուրեկանը տրեկեն տեռած: Յոր ըն օնում տանում եխծե, կնքում: Դերը տեսնում ա, վեր օրեն եշած շատ թափավ ա, խուխեն անումը տնöւմ ա Թափեղ:

Խալխեն խոխեքը վեր տարավ ըն մծանում, Թափեղը օրավ ա մծանում:

Մին օր թաքուհին քյընում ա Ըրասխեն փեշկը պաչում, պըորղնոտում.

— Աստուծ, քու տված խուխեդ ախպեր ղարկե, վեր ըշխարքումս öւրöւր ղալու անին, մինակ չմնան:

Քշերը արազ ա ըրվամ թաքուհուն աշկեն. Մինն ասում ա՝ վեր Թփեղեն ախպեր ղարկիմ, քու ըրնեդ յրա յըմ ղրկլական: Թաքուհին ասում ա՝ հնչ ա ըննակյան, իմ արևս բախշում ըմ իմ խոցս:

Իննը ամեսը վեր պլöրվում ա, թաքուհին ըզադվում ա, մին ղաշանգ տղա յա պուրում, անումը տնում ըն Սումբատ: Համին օրը թաքուհին մեռնում ա:

Էրկու ախպերը մինտեղ մծանում ըն, öւրöւր կոխկե էրկու չ՛արու նման բոյ քաշում: Մին օր էլ հա մծըխլունքնեն հվաքվում ըն. — Թաքավերն ապրած կենա, առանց թաքուհի ամալ չի կյալ, մտածե, տես հինչ ըս անում:

Կալմաշ ըն անում, վեր փսակվե:

Թաքավերը անգուն ա օնում, մին ջահիլ խելունք ըխնկան ննետ փսակվում ա: Մինչև փսակվելը խոցը ղարկում ա ղրիբոթուն, վեր թաքուհին տեսնա վուչ:

Օր ա անց կենում, տարե յա անց կենում, թաքավերը ավիլի յա հիրվերում:

Մին օր էլ թաքուհին նի յա մննում թաքավերեն կոշտը, թա տու իմ մարթս ընիլավ ընձանա պենս կյեղում, էն ա քեզ էրկու տղա օնիս, փսպարե կյան տեսնամ, համ էլ մինտեղ կենանք:

Տղեք հինչ տղեք, ամեն մինը մին թափավ տնչըրե: Կյամ ըն կռանում թաքուհուն ծեռքը պաչում, հացու նստում: Հացա ետ

թագուհին Սմբաթին ասում ա. — Տու թագավորին ննեա քյրնի խաս-բաղը շոռ եկ, ես Թափեղին ննեա կործ օնիմ:
Թագուհին մինակ ա մնամ Թափեղին ննեա, յշիլավ քուշտա-նում չի: Ասում ա.
— Թափեղ, ես քզ էտե յըմ եկալ, վեշ թա թագավորին:
— Այ թագուհի, անասեյին ասում' էր, չէ վե՞ր տու ըմ ծը-նողն ըս:
— Չէ, ես ու տու բդի փսակվինք, ես ընիմ թագուհի, տու էլ՝ թագավոր:
Թափեղը տոռնը յրան ա կյամ, պալատան տուս կյամ, քյը-նում քաղաքեն զարզյարին կոշտը: Թող Թափեղը քյրնի, մունք խաբար տանք թագուհուց:
Նա մազերը պոկ ա տամ, շորերը ճղղոտում, սկըսում ճղճը-ղալը:
Թագավորը կյամ ա. — էդ նի՞նչ պեն ա, թագուհի:
Թագուհին լաց ընիլավ ասում ա. — Տու էլ շընիս, քու ար-ղեքդ էլ: Թափեղն օզալ ա կյոխն ինձ նեա մին անե, ես օզալ չըմ, նասե ինձ էս օրն ա քցալ, տուս եկալ:
Թագավորը ծեն ա տամ դահիճներին, հրաման տամ՝ նիշտեղ վերե Թափեղին քթենան, կլոխը կտրին: Թող թագավորը բտի մտածե, մունք խաբար տանք Թափեղին անա:
Թափեղը զրզյարին հրաման ա տամ, ուրան հետե մին հանց գյուզ շինին, վեր իրեք կյումաշու քաշավ ընի: Զարզյարն ա-սում ա. — Թափեղ, էդքան արկաթը ինձ նշտղա՞ յա:
Թափեղը արկաթ ա քթենում, պուռում զրզյարին տամ, զարզ-յարն էլ շունում ա: Թափեղը գյուրզը յոր ա օնում, քյընում ա-խուռը, մին նախշուն քյոնլան ծի տուս օնում, ղաքան փոխ-նում․
Հղեն ուրան աննանանչ, ինքը՝ նղըցեն, նու վա գյուղում, թա նիշքան ա քյընում, մն էլ տեսնում ա առաշը ծով ա, քշտեն էլ մին նավ վեննը կացած: Մոտանում ա խնթըրում. — Հի՞նչ տամ, վեր ինձ ու իմ ծիյիս անց կցընիս ծովեն էն անգյունը:
Նավավարն ասում ա. — Էրկու վեսկե յըս տլական:
Թափեղը տուս ա օնում իրեք վեսկե տամ: Նստում ըն նավը, հնցընում էն ափը: Թափեղը վեր պատառ քյընում ա, առաշն ա կյամ իրեք նղե. մինը աշ ա քյընում, մինը՝ ծեխ, մինն էլ՝ դուզ: Թափեղը պտանած մարթան հրցընում ա, թա՝ իրեքան վե՞րավը քյընի:

Մարքն ասում ա. — Աշավը փորցանքը շատ ա, ծեխը էր-կան ա, անփորցանք, մաշի ճղըցավը քյըննողը էլ ետ չի կյամ:

Թափեղը մաշաեղավն ա քյընում:

Էրկու օր ա քյընում, ճենգ օր ա քյընում, էդ աստած կզյի-դա, մին օր էլ ճսնում ա մին փլփլայիս ըխպըրու: Տիյան վեր ա կյամ, ծին պեց թողում՝ ըրածե, ինքը յափունչին քցում կլխեն, քոն նում: Թող Թափեղը ըստեղ քոն նի, մունք խաբար տանք, թա էս ննղերեն աարը ճու վա: Պեննան տուս ա կյամ, վեր տա քառասուն ավազակներեննն ա ընում: Ավազակապետը ննճանցե տեսնում ա, վեր նրին մին ղըլթու վա ըրվամ: Ասում ա. — Քե-ցեք, ճու վեր ընի, վննըծերքը կպուտեցեք, պերեք: Էդ քանե՞ կլխանե յա, վեր ներխատրեց գործ ա փոնալ, եկալ ա, ըխպրին քշտեն քոն ըլալ, քանե վեր օխծն ուրան պորտավը, ղուշն ուրան ըևավը ըստեղ վեննը չըն տրալ.

Ավազակներան էրկունը մուտանում ըն, տեսնում՝ մին ան-տես-աննմանանչ ջանիլ յափնչուն մաշին մուշ-մուշ քոն ըլած: Ե-շում ըն տեսնում, կոխկեն մին գյուրզ, էրկու ճոգավ կարում չըն պցրցնին, ետ ըն տեռնում, կյամ ուրանց օթևանը:

— Մեր կլխավերն ապրած կենա, պարանցածը մին ազղուն երիտասարթ ա, կոխկեն էլ մին գյուրզ, վեր էրկու ճոգավ կրե-ցենք ուշ պցրցնինք:

Ավազակապետը վեր սկանում ա ինքն էլ ա երգյուղ անում, ասում ա. — Քեցեք կոխկեն նստեցեք մինչև զուրթնանա: Զըննի թա քոնը խնգարիք, նա՜... Վեր զուրթնացավ, ղոնաղ պերեք ըս-տեղ·

Եշում ըն մինչև զուրթնանում ա:

— Հի՞նչ ա պտանալ, չինի կռև ըք եկալ:

— Չէ, ավազակապետը քեզ ծեն ա տվալ ուրան կոշտը:

Տին թամքում ըն, տամ Թափեղեն: Թափեղը գյուրզը յոր ա օնում, նստում ծին, քյըննում մծավուրեն կոշտը:

— Հո՞ւ վըս, ճշտ՞ղա յըս կյամ, ճունչո՞ւ ճետե յըս եկալ:

Թափեղը կլխավը ճնցածը պատմում ա:

Ավազակապետն ասում ա. — Վեր տի յա, տու կնիս մեր մը-ծավուրը, մունք էլ քեզ անզուն օնող:

Թափեղը ճրցընում ա. — Տուք ըստեղ ճինչտ՞վ ըք ապրում:

— Եկող-քյըննողու թլանում ընք, ապրում:

Թափեղն ասում ա. — Ես ծզ նըճեա էն վախտը կննգրա-

նամ, վեր պեն վուր մարթկանց ծերf չուաf: Սկանամ, թա մարթ ըf սպանալ, կլիրնեղ կկտրիմ:

Ավազակնեն համաձայնում րն: Էղ օրվանից քաfավերեն տըղա Թափեղը տեռնում ա ավազակապետ: Թող Թափեղը ըստեղ ավազակ տեռնա, մունf խաբար տանf Սմբաթեն անա:

Ամես, տարե յա անց կենում, Սմբաթը տեսնում ա վեր Թափեղը կա վուչ, մուտանում ա թաfավերեն. — Թաfավերն ապրած կենա, ես կարել չըմ պալատումը հանգիստ մնամ, fանե իմ ախպեր Թափեղը կա վուչ:

Թաfավերը կարում չի համոզե, վեր Սմբաթը մնա: Թաfավերն ասում ա. — Դե լավ, վեր կարում չըս կենաս, fյընի, համա վեսկե շատ եր կալ, հարկավեր ա կյլական: Քյընի, աստուծ fզ նըհետ:

Սմբաթը հինչfան հարկավեր ա վեսկե յա յոր օնում, նի մննում կյումը, մին ղաշանգ էլ ծի տուս օնում, fյընում էն հըղըցավը, վերավը Թափեղը fյեցալա: Էրկու օր ա fյընում, իրեfն ա fյընում, զուր տեղան ըրկընգընինf ուչ, վերչը հանում ա էն հոմին ծովեն, վերին Թափեղն ա հսալ: Վենն ա կենում fննենf ասում. «Աստուծ, հիշfան ըմ fյամբախտ, սերած ախպերս կուրցըրե, պալատան տուս եկե, մհենգ էլ մին թռչոր չկա, թա անց կենամ ծովեն էն անգյունը»:

Էս խոսկեն յրա տեսնում ա էն ընգյունան մին նավ ա կյամ: Սմբաթը ուրխանում ա: Էնfան նման ըն ընում ուրուր Թափեղն ու Սմբաթը, վեր նավավարը զյուղում ա, թա սա էլհա Թափեղն ա, մուտանում ա ասում. — Ես fեզ տարե ծովեն էն անգյունը, մն էլ հո՞ւցն եկեր ըստեղ:

Սմբաթը դժստի կլոխ ա ըղնում, վեր Թափեղեն ուրան նըհետ չիլ ա fցում, մտfումն ասում ա. «Ուրեմս հղեն չիլ չըմ fյընում, լավ ա ինձ էլ տընիմ Թափեղեն տեղը»: Նավավարեն ասում ա. — Հի՞նչ տամ, անց կցընիս էն անգյունը:

Նավավարն ասում ա. — Պա նոր չի fյեցե՛ր, խե՞ տի նեյլի մննաղ fցալ ըս, էն անfամ իրեf վեսկե չըս տվա՞լ:

Սմբաթը տուս ա օնում չորս վեսկե տամ, անց կենում ծովեն էն անգյունը: Տեսնում ա իրեf հղե. մինը՝ աչ, մինը՝ ծեխ, մինն էլ մաշտեղավն ա fյընում: Պտահած մարթին ասում ա. — Ախպեր, ես էն վխտեն վե՞ր հըղըցավ ըմ fյեցալ:

— Շատ ըս մննաղ fցող: Մաշակ հըղըցավն ըս fյեցալ:

Սմբաթը նի յա մննում հղեն: Շատ ա fյընում, խրեզյ ա fյը-

նում, աստուծ կգյիդա, ուրերան մին օր էլ հանում ա մին ըխպը-րու:էդ էն ախպուրն ա, հիշտեղ Թափեղը հուր ա խմալ, հու-նավ հնցալ: Սմբաթն ասում ա. «Իմ ախպեր էս ըխպրան հուր խմած կընի, թող ես էլ խմիմ, իմ ախպոր կարոտը էս հրան առնիմ»:

Ծիյան վեր ա կյամ, ծին օրիգ տամ, ըխպրան մին լավ կուշ-տըպնդի հուր խմում, յափնչին կլխեն քցում, ըխպրին փեշկեն քոն նում:

Էդ համին վախտը Թափեղը երեսունհօթ ավազակու նհետ էն ա ընում վերս ընեխս, եշում ըն տեսնում՝ ըխպրին քշտեն, յա-մըրնչու մաշի մին շահիլ քոն ըլած: Սահանք մտածում ըն վեր ապանին, թաքավրական շորերն էլ յոր օնին, վեսկեն էկ: Թափե-ղը հինչ կգյիդա, թա մունք մարթ ընք ապանալ: Էս մտկեն՝ Թա-փեղը էրկու ավազակու նհետ ծմական տուս ա կյամ, Սմբաթեն տեսնալն ու ճնանչիլը մին ա ընում: Ասում ա. — Սրան տարեք մեր կարանը, էս ա կյամ ըմ:

Կրանումը Սմբաթեն հրցընում ա. — Ա շահիլ, հո՞ւ վըս, հիշտե՞ղ ըս քյընում:

Սմբաթը լո՛խ պատմում ա:

Թափեղն ասում ա. — Վեր քու ախպեր ըստեղ ընի, կճնան-չի՞ս:

— Պա հի՞նչ կանիմ:

Ավազակներեն վըրդուրդ անում, կարում չի ճնանչի: Թափե-ղը ավազակեն շորերը հանում ա, Սմբաթը դա՛ստի ախպորը կոլուքն ա ըղնում:

Էրկու ախպերքը մոլհաթ ըն անում, ավազակներեն վերշը տան, քյընին մին օտար երգիր, մինտեղ ապրին: Տի էլ անում ըն: Քառասուն ավազակներեն ապանում ըն, նահանց ըլած-շլա-ծը քյասիբ-քյուսուրքու պժենում, ուրանք էլ հղե ըղնում: Տես-նանք էդ հղեն ուրանց հիշտեղ ա տանում:

Մին օր ըն քյընում, իրեք օր ըն քյընում, մին օր էլ տուս ըն կյամ մին անծանոթ քաղաք: Մին քյուչավ անց կնային, մին տան ակուշկավ ընգած Սմբաթը մին կյեղեցկուհի ախճիգ ա տեսնում, ուշքհան ընում, ծիյան կախ ընում: Սմբաթը ետ ա ե-շում տեսնում՝ ախպերը ծերքա ընգած: Պցրցընում ա, եշում տեսնում—մին շըլսված-շտեսնված ախճիգ պտրհանավն ընգած:

— Ախպերը լհա ըստի օրվա հետե յա, մտածում՝ էր, հունց ճզում ա ընի, նա քզ էտե պրլական ըմ:

Մինեն քշում ըն ղաղաքա տուս կյամ։ Թափեղը մին ղաշլիկ տան բռաշի վենն ա կենում, ծեն տամ, մին պառավ կնեգ ա տուս կյամ։

— Նանե, ճամփորթ մարթիկ ընք, տանդ տեղ տո, մին քշեր կենանք։

— Վերթի, ղոնաղը բստծուն ա, համա վեշ քոն նիլի տեղ օնիմ, վեշ ուտելի պեն։

Թափեղը մին հափուռ վեսկե յա տուս օնում, տամ պռավեն։

— Նի մաեք, պա խե՞ վենն ըք կացալ, էն ա համ տեղ օնիմ, համ ուտելի պեն։

Հաց ուտելանը եար Թափեղն ասում ա. — Նանե, ծեր ղաղաքեն մաշտեղե մեծ տոնը հի՞ւրն ա։

Պառավն ասում ա, վեր ուրանց թաքավերենն ա։

— Թաքավերը հի՞նչ խոխեք օնե։

— Մին խլքըճան ընիլի ախճիգ օնե, էն էլ նշանած։ Ձոնեղ թաքավերեն տղեն հրթնացուն ա։

— Նանե, կկարիս ինձ տանիս էդ ըխճըկանը կոշտը։

Պառավն ասում ա, վեր ինքը կարել չի հըղոտած շուրերավ քյընի թաքավերեն ըխճըկանը կոշտը։

Թափեղը էրկու հափուռ վեսկե յա տամ, վեր լավ շորեր ինք օնե, կյենա–ղշընգյանա, եռնան քյընի։

Պառավը նոր շորերը կյենում ա, մազերը սանդրում, իրեսը կարթնավ լվանում, տեռնում լպզտած դանա։ Մին հանց վննամ ա կյենում, հունցու ըլքաստակը վեննանը տական փախնի։ Զուքված–զարթարված, առոք–փառոք նի յա մննում պալատը, քյընում թուշին թաքավերեն ախճիգ Շուշանիգին կոշտը։

— Շուշանիգ, աստուծ հոաքյի քեզ, իմ ջանս քեզ մատաղ, սաղ ղաղաքեն ըխճկորանցը շնորք ըս ավրցրալ, մենեզ հերթը իմ մղարես ա եկալ, հո՞ւնց անիք հինչ նշանվալ ըս, հի՞նչ կնի, վեր մին էրկու պեն էլ իմ գյուղարիս ավրցնիս, բստծու էլ լա՛վ կթվա, ակնողու էլ։

Շուշանիգը բղուրմավ ախճիգ ա ընում, ուրան էլ տ լավ թըվամ պռավեն շենքնուշնորքը, ղախծը լուզուն, ասում ա. — Հինչ կնի, առ քյընի ախճիգդ պեր։

Պառավը կյամ ա տոն, Թափեղեն ղաշանգ շորեր կյեց տամ, ըրեսեն քող քցում, տանում Շուշանիգին կոշտը։

Շուշանիգը հունցու ասում ա, Թափեղը դասսի կրդտրում ա, Շուշանիգը հունցու ավրցնում ա, Թափեղը դասսի շանըում ա։

Դե ախրը, թաքավերու տղա, թաքավերու պալատում մծացած, խելունք, շնորքավ: Վեր մթնում ա, քոն նիլի վախտը կյամ ա, Շուշանիզն ասում ա.

— Պռավեն ախճիզ, տեղ շինի քոն նինք:

Թափեղը էրկու տեղ ա քցում: Շուշանիզն ասում ա.

— Տու լավ ախճիզ ըս, ես քզանա հա̈նզ ըմ անում, մինտեղ ընք քոն ընակած, էդ խե՞ էրկու տեղ ըս վեր քցալ:

— Թաքավերեն ախճիզն ապրած կենա, ես մին անճար պըռավու ախճիզ, ինձ սազիլ չի քզ նըհետ քոն նիմ:

— Տու հանց ըս հմնչիյիս: Հալա առաջի քշերն ա, կհըմանչիս, քոն չըս ընիլ: Սոր քեզ ներում ըմ, մինչև էքուծ կսրտըվանվիս, մինտեղ քոն կնինք:

Էքսի օրը Շուշանիզը ստիպում ա, վեր մինտեղ քոն նին: Թափեղը հինչքան չեմուշում ա անում, տեռնում չի. պա հի՞նչ անե, հո՞ւնց անե, վերշը որոշում ա հունցու վեր կա, ընդի էլ պատմե: «Պա բատի, բատի. էն օրեն քեզ տեսնող օշը տանող իմ ախպեր Սմբաթն ա ըլալ, ուրան հետե էլ ախճիզ ա տեռալ, եկալ ըստեղ»:

Շուշանիզը վեր էսքանը սկանում ա, ծույնանը թխում ա.

— Վեզդ կոտրե, հելլի ըսիր, ինձ տկլոր տանիր ուշ:

— Վեչինչ, Շուշանիզ, տու մեր հարսն ըս, հմնչիլի էլ տեղ չոնիս, մհենզ ասե տեսնամ՝ հի՞նչ անինք, հո՞ւնց անինք:

— Թափեղ ախպեր, քու հնարդ ու շնորքդ ինձ ստիպում ա, վեր իմ սրտենս առանց կյեղելի քեզ պատմիմ: Ես Զորեղ թաքավերեն տղեն հըրթնացուն ըմ: Դո՛ւզն ասած ես մեծ սեր չոնիմ ըդի իմ նշանածս, իմ հար վխեյան ա տամ: Վեչ մին թաքավեր կարել չի նա եխնե: Վեր կարե էլ, մհենզ արուն թփելի զյրավա չի: Տղան էն ա, վեր առանց արուն կարե եխնե: Ես մինակ մին հնար ըմ գյուղում, քեզ ասիմ, իմ գյդըցածեն յրա մինն էլ տու կվլցընիս: Զորեղ թաքավերը տղեն հետե օխտը օր օխտը քշեր հըսանեք ա ըննական: Էքսի օրը թաքավերեն անա խնթըլական ըմ, վեր թո՛ւլ տա, քյընիմ իմոր կյըրզմանեն տեսութուն, տու վել հանգիստարանումը ինձ կեշիս: Իմ շորերս կկյենաս, հունցու թա̈զա̈ հըրթնը-Շուշանիզ, կքյընիս Զորեղ թաքավերեն երզիրը, ես էլ քու շուրերավդ Սմբաթեն նհետ կքյընիմ պռավեն տոնը: Քառասուն օր սպսլական ըմ քեզ. թա եկեր՝ եկեր, թա եկեր ուշ, Սըմբաթեն նհետ քյըննական ըմ, ճիշտեղ ինքը քյընի: Գյուղում ըմ,

թա քու տղոթունը, իմ օրհնանք ըս, մն էլ ըստծու աչը մին պեն կանին:

Տի էլ անում ըն:

էրկու օրանը եար հրսանեքը սկսում ա: Հարթնը փսեն անա հրցընում ա, վեր քյընի մորը կյրեզմանը տեսնա, բալի էլ կարում չի, դարիբորուն ա քյընում: Փեսան հմաձայնում ա: Թաքավերեն ախճիգ Աղավնուն էլ տնում ըն հարթնանը նհետ: Հարթն ու տալ քյընում ըն կյրզմանոցը, վեր մուտանում ըն, Շուշանիգն ասում ա. — Աղավնի, տու ըստեղ սպասե, օզում ըմ իմոր նհետ մինակ ըհիմ: Վենման յրա եա ըմ տեռնում:

Շուշանիգը քյընում ա, Թափեղեն նհեա չորերը փոխում, ինքը Սմբաթեն նհետ անց կենում քյընում պռավեն տոնը: Թափեղն էլ կնռչկյարմուր չուրերում, Աղավնուն նհետ կյամ ա Ջոռեղ թաքավերեն երգիրը:

Հալա հրթննքեն առաչին օրը, վեր թաքավերեն անա հրցընում ըն, թա՝ մինչև հրսանեքը պրծնելը հո՞ւ բդի քոն նի հարթընանը նհետ, թաքավերն ասում ա՝ Աղավնին:

Վեր Աղավնին ու Շուշանիգը մինակ ըն մնամ, Աղավնին ասում ա.

— Շուշանիգ, իմ ախպեր էնքան կյըշըկյրող, տու էդքան սերուն, էդ հո՞ւնց տեռավ, վեր եկեր իմ ախպոր: Հանց բեդար, մզանա մինը տղա ընար, մինն ախճիգ, ճոխտս էլ սերուն, ուրուր ուրինք, ուրուր նհետ պսկվինք:

— Դե հինչ անինք, վեր ճոխտս էլ ախճիգ ընք· Աղավնի, բուրղան մետկս մին պեն եկու. եկ չոքինք, ըստծու խնըրինք, ղաչանք-պղատանք անինք, քուցե աստուծ մեզ ա[illegible]անա, մինննումնիս տղա չինի:

Շամը վառում ըն, չոքում աղոթք անում:

— Վայ, Աղավնի, ես հանց ըմ պծի-պիծի փուխվեիս: Աղավնի, ուրխաց, տղա յըմ տեռնում:

Սկսում ըն ճոխտը մինտեղ խնթրիլ, վեր Շուշանիգը աղա տեռնա:

Շուշանիգ-Թափեղն ասում ա. — Աղավնի, աստուծ մեր սըրտենը կղարալ ա: Մեզ հարկավեր ա ըստղաս փախճիլ: Ես ծեր ծիանուցեն տեղը գյուդում չըմ, եր կաց, էրկու ծի տուս կալ, զենքուզրան պեր, հղե ըհինք քյըհինք, մեզ ընդեղ սպասող կա:

Տի էլ անում ըն:

Վեր պալատան մին խիլլա հռանում ըն, ծիեճուցան վեր ըն

կյամ, նստում մին ըխպրու կոխկե, նո̈ւր խմում, Թափեղը կլոխը անում ա Աղավնուն ծոյնանը քոն ընո̈ւմ, մինչև լուսը ծաքյիլը: Աղավնին ասում ա.

— Շուշանիգ, վեր թաքավերը գյիդա մեր փախնիլը, մարթիք ա ղրկլական, կյլական ըն մեզ քթենան, ինձ տանին պալատը, քեզ էլ սպանին:

Շուշանիգն ասում ա. — Քեզ վեչ մին վխատեղ չօնիս, Աղավնի, աղա տեռած ախնըրկանը վեչ մինը կարել չի եխնե: Հինչքան էլ մարթ կյա, ես լուխնին բաղասխանը տլական ըմ: Ես փախնում չըմ, վեր ասին ուչ թա՝ կյըղըկյող եկալ ա, կյըղըկյող քյեցալ:

Թափեղը նորն ա քոն ընում: Աղավնին եչում ա, տեսնում հոնանցե մարթիք ըն կյամ, թոզը երգիրն ու երգինքը ո̈ւրո̈ւր խառնած: Օզում չի Շուշանիգին եր կցընե: Մտածում ա. «Թող առաչ ինձ սպանին, ես Շուշանիգին սպանվելը տեսնամ ուչ»:

Օշը երգինք ա օնում, աղոթում, վեր ասած ո̈ւրան սրտոզածը կդարե:

Սկսում ա լաց ընիլը: Ըրտասունքան մին կաթ ըղնում ա Թափեղեն ըրեսեն: Սա դաստինա զուրթնանում ա:

— Հի՞նչ ա ըլա՞լ, աղունիկս:

— Հանե մարթասպաններեն կյամ ըն, քեզ սպննական ըն, ինձ էլ տանին:

Թափեղը ղաման տուս ա օնում. — Իմ ծերքաս մրթսպան չի պրծընել:

Տահանք տասը հոգի ըն ընում: Թափեղը մե հետ թխելումը օթեն կլոխը կարում ա, էրկուսեն էլ կոքնեն տուս տամ, հկրաներեն շարում, ասում.

— Քեցեք ծեզ ղրկողեն ըշկըլուսանք, համ էլ ըսեցեք՝ մարթին քախծր ապրելն ա վայիլ:

Թող սահանք քյըննին պալատ, թաքավերեն խաբար տանին, մունք տեսնանք, Թափեղը հինչ ա անում: Թափեղը Աղավնուն յոր ա օնում հղեն ըղնում, քշերվա կեսին էլ հսնում պռավեն առնը, Սմբաթեն ու Շուշանիգին կոշար: Հի՞նչ սեր, հի՞նչ ուրախութուն: Ուռթանա Սմբաթը հելլի զուրթնանում ա, տուս կյամ՝ հինչ տեսնում: Տեսնում ա սաղ սարերը, հանդերը լոխ սպտակած, հիշտեղ եշում ա սիպտակ, հունցու հզեր կնեզ պմբակու քուլենե անին, վեր անին: Կյամ ա Թափեղեն եր կցնում.

— Ախպեր, էս ինչ՞ երգիր ա, տարուն ես շախս ծյուն ա եկալ, լոխ ծածկալ։

Թափեղը դաստի կլոխ ա բղնում.

— Ախպեր, էդ ծյուն չի, էդ Զորեղ թաfավերեն զորfն ա, ուրենե վեր թողած։ Էս սհաթս էդ ծյունը ճլըցննական ըմ։

Թափեղը գյուրզը յոր ա օնում, ծին եր ընում, թափիգ տամ, ճնում Շուշանիգին ճորը պալատը, կլոխ տամ, ասում. — Թաfավերն ապրած կենա, fու ախճիգդ իմ ախպոր նշանածն ա, Զորեղ թաfավերեն ախճիգն էլ՝ իմ։

Թափեղը ըստեղ լոխ պատմում ա, ճունչու վեր կլխավը անց ա կացալ։

— Վա՜յ իմ երգիր, վա՜յ իմ կլոխ,— թաfավերը բաղրյար ա տեռնում,— Զորեղ թաfավերը կյլական ա մեր վերչը տա։

Թաfավերեն ռանգը տեռնում ա պատու ծեփ։

— Թաfավերն ապրած կենա, Զորեղ թաfավերեն բաղասխանը ես ըմ տլական։

Թափեղեն էս խոսկեն յրա Զորեղ թաfավերեն սուրհանդակնեն նի յըն մննում.

— Թաfավերն ապրած կենա, fու ախճիգդ ճարթնը մնալին տեղ, Զորեղ թաfավերեն ախճիգ Աղավնուն էլ ննետը եր ա կալալ պերալ fու երգիրդ։ Զորեղ թաfավերը ճրաման ա տվալ, վեր Շուշանիգին ու Աղավնոյն յա ետ տանիս ընդեղ, յա թա չէ՝ սաղ fաղաfը կրակ ա տլական։

Թափեղը տեղան լոf ա տամ, մնին բեղը պուf տամ, մնին էլ անզուճը, ճամ էլ ասում. — Քեցեf ծեր թաfավերեն ըսեցեf, վեր զորեղան զորեղ էլ կա, զորեղան զորեղը Թափեղն ա։ Ըսեցեf նիշfան օժ օնե նվաfե, էս ա կյամ ըմ։

Թափեղը գյուրզը յոր ա օնում, ծին նստում, ընգում ուրոցը ղաթը։ Սկսում ա կտորելը։ Մին էլ էն ընգյունան մին պառավ մարթ ա մոտանում։

— Կուռնանդ օժեն մատաղ, տի միշտ չանիլ մնաս, տի միշտ թափավ կենաս։ Աստված օժդ մզ էտե յա տվալ, խե մեզ կտորում ըս։ Էս խեղն ժղովուրթը fեզ նի՞նչ ա ըրալ, թշնամիդ թաfավերն ա, զոր օնիս՝ fյընի նրա ննետ կոխ կաց։

Թափեղը ներողութուն ա խնթրում, ճրցընում թաfավերեն տեղը։

— Հանե, էն սիպտակ պերուրը

Թափեղը ծին fշում ա բդի ընդեղ։ Ուրեն բռաշին վենն ա կենում ծեն տամ.

— Թաքավէրն ապրած կէնա, եկալ ըմ, ուբտն տուս էկ, կու կօզիս, կու կանիմ, լուզվակոխ կօզիս, լուզվակոխ կանիմ:

Թաքավէրը տուս ա կյամ, տեսնում հի՞նչ, աղամարթ մէ ա-սէլ, մին քէրծ ասէ: Մոթին* քէրծը քեզ օրինակ: Գյուրզը ծէրքէն լհա մին ծեա: Թաքավէրն ու ո̈ւրան աղան չորս վէննը մին տէղ ըն անո̈ւմ, սկըսում աղաողէլը:

Թափեղն ասում ա. — Թաքավէրն ապրած կէնա: Քու հրթնա-ցուդ մէնէնգ իմ հարթնըս ա, քու ախնիգդ էլ ըսածու կամքավը իմ նշանածս ա: Սանա եար գյուղում ըմ թա կովապէն չկա: Իսկ թա կու օզիս, տու վէլ, քու աղադ էլ օգուտ չըք անէլ:

Թաքավէրն ասում ա. — Ա ջանիլ, հարթնս էլ քեզ, ախնիգս էլ, մինումինակ մէր կլխընէն մէզ բախշիս:

Թափեղը Ձորէղ թաքավէրէն մն էլ ո̈ւրան աղէն պո̈ւրո̈ւմ ա Շուշանիգին հորը պալատը, լուխնին ո̈ւրո̈ւր ննէտ նշարցնում, օխտը օր, օխտը քշէր հրսանէք անում, պնդըցնում, վէր մինչև ո̈ւրանց գյանքէն վէրշը էրկու թաքավէրնէն ո̈ւրո̈ւր ննէա կու չա-նին:

Շուշանիգին հարն ասում ա. — Ես արթէն պռավալ ըմ, տը-ղա էլ չօնիմ: Եկ տու տէռ համ փեսա, համ աղա, իմ էրգիրս էլ կառավարէ:

— Թաքավէրն ապրած կէնա, մունք էլ ընք մին թաքավէրու ժառանգ, քյընիլ բդինք տէսնանք մէր թաքավէրը հինչ հալի յա:

Թաքավէրէն սրաավն ու խոսկավը Թափեղն ու Սմբաթը, Շուշանիգն ու Աղավնին ծիէնը նստում ըն, հղէ ընում բդի ո̈ւ-րանց էրգիրը: Տաա ըն քյընում թա խրէգ, վէրշը տէղ ըն հըս-նում: Պալատ հսած ուչ, սահանք ծիյան վէր ըն կյամ, Թափեղն ասում ա. — Սմբաթ ախպէր, ըստէղ մէր դազյան վէր թողինք, հրցըփորց անինք տէսնանք հինչ կա, հինչ չկա, մունք էլ թա-քավէրու ժառանգ ընք, մէր առաչը մարթ տուս կկյա, մունք էլ կքյընինք:

Ասածը ըրած ա տէռնում:

Թափեղն ասում ա. — Ախպէր, տաք մնացէք ըստէղ, էս քաղաքէն նի կյամ, էա տէռնամ:

Թափեղը քյընում ա քաղաքը, նի մննում մին հաշարան, ըն-դէղ, հիշտէղ միշտ ինքը հաց ուտէխս ա ըլալ: Նստում ա թա հաց ուտէ, տէսնում ա մին օզող նի մտավ: Էս հաշարանէն տարը մին

* Մոթ — հանդավայր Աշանի մերձակայքում (ծ. խ.):

վեսկե յա անում հափռումը, օզողը յոր ա օնում, լաց ընում, տուս կյամ ֆյընում: Թափեղը մտածում ա. «էս հինչ ակահ մարթ ա, վեսկեն յոր ա օնում հերիֆ չի, հալա ըռտասունֆ էլ ա թափում»:

Ճաշարանեն տեռնը անա հրցընում ա. — Հո՞ւ վա էդ մար-թը:

— Կարել չըմ ասիմ: Վեր մեր թաֆավերը գյիդա վեր ասալ ըմ, ֆու կլոխդ էլ կկտրե, իմն էլ:

— Պատմե էդ մարթին մասին, թա վախ օնիս: Ես վեչ թա-ֆավերան ըմ վախում, վեչ էլ ուրիշան: Քու կլխեդ տեղն էլ գյու-դող չկա:

Մարթը վխեյլան ֆաթ ա անում:

— էս օզողս մեր երգիրին թաֆավերն ա: Էրկու տղա օնե, մը-նին անումը Թափեղ, մենին էլ՝ Սմբաթ: Թաֆուհին մհետե շա-ռավ ա տվալ Թափեղեն, էն էլ կլոխ ա եր կալալ, երգիրան տուս եկալ: Սմբաթն էլ հալալ ծծկեր ա ըռնում, տեսնում ա վեր ախպե-րը ետ չի կյամ, տուս ա կյամ, հետան ֆյընում: Տղոցը ֆմակեն թաֆուհին ու վեզիրը խուսկուրֆնեն մին ըրած, մեր պարի թա-ֆավերեն թախտան ֆցում ըն, փսակվում, վեզիրը տեռնում ա թաֆավեր: Մհենզ էս ախֆաղը մեր իսկական թաֆավերն ա, կյամ ա ըստեղ ըռտասունֆ վեր ածում ֆյընում:

Թափեղը էս զրուցը վեր սկանում ա, ետ ա տեռնում օբան, Սմբաթեն պատմում, էյսի ուռթանտն էլհա կյամ համին ճա-շարանը: Նստում ա, եշում մինչև թաֆավերը կյա: Վեր կյամ ա, Թափեղը ծեն ա տամ ո̈ւրան կոշտը, մինտեղ հաց ըն օտում: Պրծնելանը ետը Թափեղը հրցընում ա. — Պատմե տեսնամ տու հի՞նչ մարթ ըս, վեր համ փայ ըս հվաֆում, համ լաց ընում:

— Վերթի, աժեր ա պատմելը, մին· մուխրոխծ թաֆավեր օ-նինֆ, վեր սկանա, վեր իմ դա̈րդս ուրիշի պատմալ ըմ, ինձ էլ վայ, լողեն էլ վայ:

Տղան վեր շատ հոփ ա տամ, հարը վխեյլան պատմում ա:

— էս ճաշարանը մեծ հըրցու յրան ա, ֆյընող-կյըվող ըստեղ ա նի մննում, ես էլ ուզողու շուրերով ամեն օր նի յըմ մննում ըստեղ, վեր մին խաբար գյիդամ տղորանցս անա: Մեռնիմ ուչ աղորանցս տեսնամ, դա̈րդս պատմիմ, հուֆյիս փչիմ: Ես ու տը-ղեֆս մին խնձողտ յընֆ դտղվալ:

Թափեղը թաֆովերեն յոր ա օնում, տանում մին լով լըըց-նում, թազա̈ շորեր կյեց տամ, ո̈ւրան ճհետ տանում դազյան:

Սմբաթեն գյողը ա կցընում, ինքն էլ ավազակու շուրերավ ա ը-նում, թաքավերեն հրցընում ա, թա վեր տղեքը ըստեղ ընին կննանչի՞:

— Պա քու տոնդ աստված շինի, էդ էլ խոսկ ա, վեր ասում ըս, պա հի՞նչ կանիմ, վեր ննանչիլ չըմ:

Թափեղը Սմբաթեն պհուռում ա, թաքավերը դյուստի կոլավն ա ըղնում: Ասա էլ ինքն ա շորերը փոխում, թաքավերը էնմի-նան էսմնին կոլն ա կյամ, ուրխանում, լա՛ց ընում նորը ծծա-ղում, լնանում, ըշխարքավս մին տեռնում: Հարքներն էլ կյամ ըն թաքավերեն կոլուքն ըղնում, լոխ մինտեղ ուրխանում ըն, օ-քան տեռնում ա ճղպորու քսակ:

Թափեղը շորերը փոխում ա, զյուրզը յոր օնում, եր ընում ծին, նոր քյընում քաղաք: Նոր թաքավերեն իմաց ըն տամ, վեր Թափեղը օրիշ հվում ա կյամ պալատ: Թաքավերն ու թաքուհին չորք վեննը մինտեղ տրած տղտողում ըն, մին թահրավ հուրանց քցում չարդախը: Մինչև Թափեղը կպրցրանա, նահանք չրդախան հուրանց քցում ըն տակը:

Թաքավերը հրքներեն ու տղորանցը ննետ պցրանում ա պա-լատ, օխտը օր, օխտը քշեր հրսանեք ըն անում, ծփածենը հըս-նում ա երգինք: Թափեղն էլ էնքան պարի տղա յա ընում, վեր թաքավրոթունը տամ ա հուրան ախպորը:

Տահանք հսեն հուրանց մուրազին, տուք էլ հսնիք ծեր մուրա-զին:

Երգինքան էլ իրեք խնձոր վեր ընգավ. մինը քաթը ըստղեն, մինն ըսկնողեն, մինն էլ էն պարի Թափեղեն:

## 5. ԽՈՐԹԸ

Ընում ա չըննում, մին ջահիլ տղա. աշկը պեց անում խորթ մարը կլխանը երը: Նհա վեր լուսը ծաքյում ա, մարը յրան ա պրծընում, մին թքյա հաց տնում ծերքեն, ղարկում հտնդը մինչև ռուզյուն: Վեչ կած խորազ ա տեսնում, վեչ կած խոսկ, վեչ տաք չիզյար: Հարն էլ ղրիբոթուն ա քյընում, անչախ տարեն մե հետ, էրկու հետ ա կյամ: Խոխան մնամ ա էն կնզանը ծերքեն նատտի 'ոայիս Չար կնեզ-ամլիզ խոխա: Ճարը կտրած քյընում ա հան-

գին լաց ընում, մինչև հարը կյամ ա, աշկերք որփում ա, շաղենքը կոլ սամ, սսում.

— Ա հար, սոս կալ ինձ էս տանան, տար մին պենու, մին կյործու տիր, անիմ, ինձ պահիմ:

Հարը սանում ա մին դըմմուրշու կոշտ: Էս դըմմուրշին էլ տոս ա կյամ դըմմա շունող: Սա ծերքեն էլ չի մին օր տեսնում: Դըմմուրշին շատ պնըցընում ա, շաա կզնըվում, շատ թակում, խրեզ հաց սամ: Վեր խոխան ուֆ ա անում, դըմման տոս ա օնում, աշկեն բուաշին հլոր-հլոր անում:

Ճարը կտրած մին օր սոս ա կյամ աղաղ, ըղնում մեծ հղեն, մտքումն ասում. «Տոս կյամ հոտնամ, բըլի լավ մարթու կըպըսահիմ»:

Քյընում ա: Առաշն ա սոս կյամ մին խշըմելիֆ հղե Հղըցեն կոխկեն մին սիպտակ մրքավուր մարթ նստած:

— Պարի օր, պապե: Մին լավ հղե նհաշ տո, մին լավ հղըցավ քյընիմ, մին լավ մարթու ջհիմ, խեղն տամ, խեղն սոտանամ, սեր սամ, սեր սոտանամ, մին կտոր հացու տրանամ:

Մրքավուրն ասում ա. — Հղըցեն լավ ու փիս չկա, հունցու քյընիս՝ մին ա:

Էս խոխան չմտքը-չմետքը մին հղե յա յոր օնում քյընում: Հղըցեն դրաղան մին կերած-խմած մարթ ա տոս կյամ՝ բեղերը սղըլիլավ:

— Հիշտե՞ղ ըս քյընում, ա ջահիլ:

— Պարի օր, պապե, ինձ մին լավ հղե նհաշ տո,
Մին լավ հղըցավ քյընիմ,
Մին լավ մարթու ջհիմ,
Խեղն տամ, խեղն սաանամ,
Սեր սամ, սեր սաանամ,
Մին նոր հացու տրանամ:

— Էտ լավ մարթը լհա ես ըմ, հետաս ընզեր, եկ:

Տղան հետան ա ըղնում, քյընում: Մին տան բուաշի վենն ըն կենում: Էս մարթին տոնն ա: Հիշ տեղ եշում ըս, չորս անգյունը յոխ վսկոքնե յա: Էս խուխեն բախտեն էս մարթն էլ ղասար ա տոս կյամ:

Դըմմուրշուն անումը տո, ղսաբենը տա մ'էր, էս էլ նանա յա փիս տոս կյամ: Ամեն օր մորթ ա անում: Տղան բղի քյոմագ անե տավարը կպոտե, վեզը հլորե վեր քցի, նեստա մաշկե, մոշտարի ծեն տա, խեղն խուխեն սերտն էլ սմանում չի, ամեն

տվարու նհետ լաց ա ընում, ամենին նհետ ինքն էլ ա պռանչում: Էյզանենան անգուններումը բըրըղոց ա, խոխռոց: Ղսաբեն էլ վեչն բեր չի:

«Չէ, սա իմ մարթս չի, սանա էլ ջամբուր ընիմ»: Ասում ա, ուռթանա ժմըժենքեն ըտղադ հռանում, փռնում մին մեծ հղե: Մին մանգիլ անց կնալանը ետը, մին մարթ ա ջհում:

— Հո՞ւ վըս, հշտղացե՞ յըս, հիշտե՞ղ ըս քյընում:

— Պարլո̈ւս պապե, ինձ մին լավ հղե նհաշ տո,

Մին լավ հղըցավ քյընիմ,
Մին լավ մարթու ջհիմ,
Խեղճ տամ, խեղճ ստանամ,
Սեր տամ, սեր ստանամ,
Բոյ տամ մծանամ,
Մին ճոթ հացու տրանամ:

— Էտ մարթը ես ըմ, հետաս ընգեր, եկ:

Քյընում ըն, տեմ ըղնում մին սարու, քշանում մին ծո̈ր, մին պո̈կո̈ւր պո̈ւթնավ պատ տամ, մին քըրնեղքավ նի մննում տափեն տակը: Մին մեծ տփառոն, մաշը լիգյը շորեր, մուտնեք, վսկեղան, ըրծթեղան:

— Հասե իմ տոնս: Ցիրեկը ըստեղ կննական ընք, քշերը քյընինք կյրզմնոտան նուրաթաղ մեռալ տուս օնինք, շորերը հանինք, ցիրեկը տանինք ծախինք:

Սկանալն ու քըրնեղքավը տուս կյալ, ծլկելը մին ա տեռնում: Մեռալ տուս օնողան կլոխ եր կալած փախնում ա, զինքը քթենում մին խուտուր հղըցու յրա, հղըցեն նհետ շոռ տամ, ըղնում մին ծմակ: Եշում ա, տեսնում ըռաչին մին պառավ կնեգ:

— Նանե, այ իմ լավ նանե, հուր քշտե լաց ընիմ, վեր աշխարքս խորթ մոր ծերքե յա, յարաս հո̈ւր նհաշ տամ, վեր աշխարքս ղամա շնողու ծերքե յա, ինձ հո՞ւ մեխկը կկյա, վեր աշխարքս ղսաբու ծերքե յա, կլոխս հիշտեղ մահու տամ, վեր աշխարքս մեռալ տուս օնողու ծերքե յա:

Էս պառավ տատեն մհետանց կնչկյարմուր ա տեռնում, տեռնում մին ճռաքյած խնձորե:

Տափեն տական մին ծեն ա եր ընում, ասում ա՝ եկ իմ շուքումս ապրե:

Էս ըլված պեն ա: Մինն ասում ա՝ խոխան հալա շոռ ա կյամ: Մինն էլ ասում ա՝ էն ա ծմակեն խնձորուն տակեն: Թա հար ա խնձորենն ա, թա մար ա՝ խնձորենն ա:

## 6. ԱՀՄԱԴԸ

Մին հարուստ իրեք վերքի յա ընում: Ըռշինակը վեր ը-նում ա, անո՛ւմը տնո՛ւմ ըն Ահմադ, մաշնտկը վեր ծնվում ա, ա-նումը տնում ըն Ահմադ, պիծինն էլ ա աղա ընում, էլնա անումը տնո՛ւմ ըն Ահմադ:

Ըհմդննն մծանում ըն, ծորան ֆյընում ըն սարը, հարն էլ պռավում ա, սարան ֆշանում ա ծո՛րը: Հորը օրը վեր ժմըժեն-ֆում ա, ծեն ա տամ Ըհմդներեն, պարիկամներեն՝ ասում. «Հա-րըստոթունս տալ Ահմադին, տալ Ահմադին, մին Ահմադին տալ ուշ»: Ասում ա, հոֆին տամ:

Հորը տղվըրելանը եոր ժառանգնեն, պարիկամնեն հվաֆվում ըն, կարում շըն գյիդան, թա իրեք տղենան վեր անումը կտրվածն ա, վեր ժառանգորուն շօնե: Որոշ ըն անում, վեր խոխեֆը իրե-ֆան էլ ֆյընին Սարկյավաֆ իմաստունենն կոշտը, դիվանը կտրե:

Հղեննի մին հլևուր ա պտահում: Էս մարթը հնգրանում ա տահանց:

Հլևուրն ասում ա. — Մզանա առաջ էս հղըցավը մին օղտ ա անց կացալ: Վննահետը նհաշ ա տամ, վեր օղտը մին ըշկանե յա ըլալ, պեռնն էլ բահմազ ա ըլալ:

Մին հովուր հնցած՝ զարբ բրած մին մարթ ա կյամ, հալա խուսելու, հլևուրն ասում ա. — Հունց ըրվամ ա, օղտու վըս շոռ կյամ:

— Հա, հա, պա շանս ֆե մատաղ, բալի տեսա՞լ ըս:

— Օղտեն մին աշկը ֆո՞ռ ա:

— Էտա վեր կա, հիշտե՞ղ ըս տեսալ:

— Բաֆմա՞զ ա ըլալ պեռնած:

— Պա էտ ա ե, պա էտ ա ե:

— Քու օղտդ հղըցան տռւս ա եկալ, նի մտալ մին նեղլեգ կածան: Ծեխե անգյունավը հլորվե, կծանավը ֆյընի, ֆթննական ըս:

Ուղտատարը կլոլվում ա բդի կածանը:

Մեծ ախպեր Ահմադը էսֆանը վեր տեսնում ա, ուրխացած հլըվուրեն ասում ա. մունֆ լնա ֆեզ ընֆ շոռ կյամ: Սկսում ա ո՛ւրան դարդը թիլ-թիլ հլըվուրեն պատմում, հետան ըղնում:

Իմաստունը իրեք ախպորցը տանում ա ո՛ւրան տոնը, ամեն մնին մին օթաղ ա տամ, մին սպասավեր, ասում. — Թոֆտ-

վերու մնան ըպրեցեf, դվանը օխանչի օրը կտրլական ըմ, ղար-կիմ ծեր պկըսթունեն:

Իմաստունը նի յա մննում öւրան օթևանը, նստում fնենf ա-նում, ամա կարում չի fթենա, թա էս վեր Ահմադն ա, վեր հոր կողմիցը պատեժված ա, պադեվա ընգած: Օրն-օրեն սերար նղա-նում ա, նղըվերվում, անդոխտն ըղնում, օրը-օրեն մաշվում, հալվում:

Էս իմաստունեն մին մադար ախնիզ ա ընում՝ ըմասկավ, գիտկան, խելfով նռաfյած: Նի յա մննում հորը օթաղը, տես-նում, վեր հարը մին մեծ դüրդ օնե:

— Ա հար, դüրդդ պատմե, բալի ախնիզդ դüրման ընի:

Հüրը fաթ ա անում: Ախնիզն ասում ա.

— Թöւլ տո, էս դադառտանը ախնիզդ կտրե:

Վեր կյամ ա օխտեն ութանան, տխնիզը զուfվում-զրթար-վում ա, առանց էն էլ ղաշանգ ա ընöւմ, մեծ Ահմադին ծեն տամ öւրան կոշտը.

— Էս fշեր ինձ ննետ ըս fոն նöկան, իմ հüր գյդըլական չի:

— Ես fու վեննանդ թոզին ըմ արժտն, ըվիլին ես արժան չըմ: Ես fու հոր ղոնաղն ըմ, սերուն ախնիզ, fա հոր աղուհացը իմ աշկերս խե՞ օզում ըս վեր fուռըցըննե: Ծառա յըմ fեզ, ինձանա անհնարինը պահանջում էր:

Ախնիզը մեծ Ահմադին հղե յա տնöւմ, պծինին կտնչում և հöմին խնթիրը տնում նրա ըռաչին: Պիծինն ասում ա. — Տու ինձ մին պեժակ նուր ըս տվալ, նուր տվող ակնեն մաշին թfել չըն:

Ասում ա, սրտընեղված տանան տöւս կյամ:

Ախնիզը, մաշնակ, Ահմադին ա կանչում, էլհա նույն հտշեր տնöւմ ըռաչին:

Մաշնակը frfզամ ա, ծլոլը վեր ածում, վազ տամ բդի ախ-նիզը:

— Շնթռնե տեղդ, անհամոթ: Քու հüր fեզ սրի յիս չըլալ հենց տրա հետե: Քու հüր fեզ զրկալ ա հենց տրա հետե: Քու պնöւթունավդ տու fու ախպորց նման չըս, fու հüր ուրտն անա պտկըված չի fեզ հաշև ըրալ, պին ա հաշև ըրալ, և օզալ ա վեր տու տանան տöւս կյաս: Հöմին խորհուրթը ես էլ ըմ տամ: Քյը-նի հնգըրաց fեզ նմններեն ննետ, բալի խելfդ կյա…

Էրկու ախպերը օրախ-օրախ fյընում ըն öւրանց բունգյը,

ուրանց տանտռան յրա: Մաշնակ Անմադն էլ գիդում չըն, թա նիշ-տեղ ա ֆյընում:

## 7. ՄՐԹԸԿՆԵԳ՝ ՃՈԽՏՆ ԷԼ ՄԻՆ ԽԵԼՔՈԻ

Մին մարթ փողը պուռում ա տամ կնգանը, թա՝ դույբանդու-մը կապե, տիր սնդողեն մաշին, աշունքս կավ ըմ ինք ուննա-կան:

— Ա մարթ, հանց ֆու հար, ֆու մար ապրե, ես չալ կվան հազ ըմ անում, հանց ըրա՝ չալ կավ ինք օնիս:

Աշունքը կյամ ա, մարթն ասում ա՝ մին ֆյընիմ սորաղ ա-նիմ, տեսնամ կվեն կյինը յրգինֆումն ա, թա՝ տափեն յրա:

Բզարեն յխումը մին ըրկնատոր մարթ ա ջհում:

— Պարի օր:

— Պարի օր:

— Պա ըստի, ըստի, ինձ մին կավ ա հաշաք: Էն ա փողը սիպտակ դույբանդումը կապած տրած սնդողումը, կնեգս ա տը-րալ, համ էլ ասալ ա՝ ա հայ, ես չալ կվա ըշխարֆես մշանք հազ կանիմ, հանց ըրա խաթրավս ֆյընիս:

Սահանք ըստեղ սովդա ընեիս, մին մարթ սկանում ա, վազ տամ էս մարթին կնգանը կոշտը: Սահանք էլ պայման ըն տը-նում, վեր էյսը էս համին ժեմեն ծախողը կավը պիրի, մուշտա-րին էլ՝ փուլը:

Մարթը օրախ-օրախ, մին խաղ էլ եր կալած, ֆթեն տակեն մռմալավ կյամ ա տոն:

— Աղա, պա էդ հո՞ր ա չալ կավը, մին ծծեռան փռնիմ, փրշհափըշ ֆթիմ:

— Ա կնեգ, կավր հալա էֆուծ էս ժամեն ըն պրլական: Մին չալ կավ, պոզերը կեռ-կեռ, կործը չրմըխած, ծծերը վեր թողած:

— Պա էն մարթը մհենգ փուլը սարավ: Եկու ասից՝ մարթդ ասալ ա էն սիպտակ դույբանդումը ֆշկըռած փուլը սնդողան տուս օնե, հանցու տամ չալ կավը պիրիմ, առանց փուլ տարը տամ չի: Ես էլ ֆեզե տուս կայի, տվեր ուռան, սարավ:

— Ախնի… հի՞նչ մարթ:

— Պա տու չը՞ս ղարկալ: Նա հինչ գյիդաց, թա սիպտակ դուլբանդումը ֆշկռած ա:

— Կանոխ ֆյընի՞ց:

— Չէ, նոր քյրնից, վեր վազ տված ընի, անչափ հսած կնի Վսկախաչ:

— Խոր-խուրանա պել հանողը, ախճի, մին ծին կյուման տուս կալ, քյընիմ շոռ կյամ, անսնամ քեզ նման էլ կա պել կնեգ, թա մինակ տու վըս:

Ծին եր ա ընում քյընում, տեսնում հըրցավը մին մարթ ա քյընում:

— Պարի օր, ա հայ, պա ըստ-ըստի մարթ չըս տեսա՞լ, սիպ-տակ դուլբանդումը պատատած փողը ծերքեն:

— Տեսալ ըմ, նոր քյրնից: Վեր տի ծիավ քյնիլի ընիս, նա Առախսը անց կկենա, վեննավ շատ չիքլուր քյընում ար: Թա օզում ըս, ծիդ էս ծառան կապե, հետան վազ առ, բալի հսնիս:

Էս մարթը ծին ծառան կապում ա, կարճ կտրում մեծ հըրցեն յրա: Սա էլ ծին եր ա ընում, հայդա:

Էս մարթը շատ ա շո՞ռ կյամ, խրեգ ա շոռ կյամ, վեր նղանում ա, ետ ա տեռնում տոն: Հղեննի եշում ա տեսնում՝ վեչ ծին կա, վեչ էն մարթը: Խեղճը քոռուփեշման ետ ա կյամ, կնեգն էլ էն ա ընում հղեն պհեխս:

— Աղա, ա մարթ, ծի յըս տարալ, պա ծիդ հո՞ր ա:

— Աստուծ ծին դարկալ ա փուլեն կոշտը, ինձ էլ քու կոշտդ:

## 8. ՂԱՋԸ

Ընում ա չընում մին պառավ մարթ, մին կնեգ: Տահանց շատ հեյվան-տավար ա ընում, հավ-ճավ ա ընում՝ մին լիզյը կյում, մին լիզյը թառ:

Մե հետ մին ռուզյուն, ավըրվեննեն, թա մեր ըշխարքես վեր ընզյունան, աստուծ կզիդա, էրկու մարթ ըն կյամ սահանց տա-նը քշտեն վեննը կենում:

— Պարի ռուզյուն:

— Աստծու պարին:

— Ճանապարհ մարթիք ընք, կարե՞լ չըք մեզ ղոնաղ յոր օ-նիք, էս քշեր ծեր տանը ըսծու ուղուրմավ քոն նինք, էլնա ոտ-թանա եր կենանք, մեր պեննեն կենանք:

Աստծու կարքավ մարթն ասում ա. — Աշկես յրա տեղ օնիք, պարի մարթին պահելը պարի կործ ա, թա լա՞վ կարինք ուչ,

վաղ լիս կպահինք, թա գյադա պնանե չըք՝ համեցեք:

Նի յըն մննում տոնը:

— Ախնի, մին տանը ըլա̈ծան–չլա̈ծան պեր տիր սուփրեն, էրկու պերց էլ պեր տիր կուռնուտակերեն, հղե եկածը համ տո̈ւզնը կըննի, համ վեննե ըլա̈ծ:

Կնեգը քյընում ա էն լիգյը–լկլկայիս տանան մին սողան մաչան կես անում, մին կուտուր հացը էրկու նոթ անում, տնո̈ւմ տահանց բռաշին: Մարթը գյուդում ա, թա տանը ըլա̈ծ–չլա̈ծը տա յա վեր կա, սուս ա անում:

Ղնուղնեն ամեգյը էրկու պրընպատառ հղլըղորում ըն, կոլ տամ, «շեն կենաք» ասում, քյընում ո̈ւրանց հետե քցած տեղումը պարանց ըղնում: Ախեր սահանց քոնը տանում չի, կօզի ղոնաղ շան տղեն խոսք չի հսնում, սահանք օրիշ պեն ըն մտածում: Տհանցա մեծն ասում ա. — Ադաթ–օրենք ա, վեր էնքան հվերան մնին վեզը կտրին ուշ ո̈ւրանց ղունաղեն հարկին:

Էն մինն էլ ասում ա. — Հարաբեդ, իփած հավու վետ ա կյամ, հիշտեղ վերե էն ա էս ութաղումը իփած հավ կա:

Ասելն ու տոնը ատակ անելը մին ա տեռնում: Ըհը՛, մեծ տախտեն տակեն էս ա մին ղզղան կա, ռեխը ղփլած, բոխչաբն էլ կլխեն տրա̈ծ: Պեց ըն անում տեսնում՝ մաչին մին իփած ղազ: Ղազ, հի՞նչ ղազ, մին տրեկանը թմըմելու տո̈ւխ, ռանգն էլ խաշած Քրիստոսա ռանգը: Շորերնեն կյենում ըն, անց կենում տաշտան օխտը հաց տո̈ւս օնում, ղազը մաչին պտատում, տընո̈ւմ ո̈ւրանց խուրջինումը, ուրանց քյոհնա տրխըրնեն ղազեն տեղ տնո̈ւմ ղզղանումը, սուս–փուս տո̈ւս կյամ, հացեն մին կուտուրը տամ շանը սուսավ անում, հանդա̈րդ անց կենում քյընում:

Ուրթանա քշերավ կնեգյը եր ա կենում, քեփը Ծխծուն խութումը, ասում ա.

— Էս էրկու մարթին հղե տնիմ, կորշին, օշաղը նի կցընիմ, ղազը թըխծընիմ, մեռունց էլ եր կցընիմ, նստինք օտինք: Ղոնաղը հինչ ա գյուդում, թա մեր տանը իփած ղազ կա՞, թա ղազը նահանց աչի թաթուկն ա անց կացալ, թաղիմ ղնուղներեն կլոխը, ես իփած, ես կերած:

Նի յա մննում ղնուղներեն տոնը, վո՛ւյ նանե, ղոնաղ չկա, կռանում ա տախտեն տակը, ղզղանեն ռեխը պեց անում, վո՛ւյ նանե, ղազեն տեղ մին նոխտ փկուհան ըլած, փոլ եկած տրեխ ղզղանեն մաչին տորզած:

— Ա մարթ, ա մարթ, մին եկ ըստեղ: Քաշկու–հնարքու պեն

ա, պա էս աղաք-օրենք ա՞։ Անումը ինձ նի չի կյաս, լոխ քու բրարի յա։ Պահած, պաշտած ղնուղնեղ եր ըն կացալ, բնդե-տանս, իփած ղազը ղզղանան անա կալալ, աեղը տրխու լան-թեր տրալ, ընդետանս, ուրանք բռակվալ։

Մարթն ասում ա. — Էս քեզ խրեզ ա, իփած ղազը նո՞ր ըս կյեղում ղունաղան, նո՞ր էդ քյալազը կլոխդ կյա։ Քեզ խլունքու տեղ արած, ոււրոււշու էլ պել ըս գյուղում։ Մենենք իփած ղազը տու վըս է՛, էն տարածը չի։ Վեր ամեզը մին թքյա մունք ու-տինք, մինն էլ ղոնաղն օտար, փիս կընա՞ր, ղազեն մնան իփվի փիս կնեզյը։

## 9. ՀՈՒ ՎԵՐ ՄԻՆ ՏԱ՝ ՕԽՏԸ ԽՍՏԱՆԱ

Մին ախքաղ մարթ ա ըննում. կործը շատ, տոնը լիզյը քյուլ-փաթ, նամ էլ նազ չանում ժամ քյնիլա։ Մին նպարապ օր եր ա կենում քյնում եխծե, տեսնում՝ դերն ասում ա. «Տեր ողորմեա, տեր ողորմեա, նու վեր մեր դերին մին կտա, օխտը կստանա»։

Ախքաղը կյամ ա տոն, էյաը մն էլ ա քյնում, աեսնում էլ նա դերը նամինն ա ասում. «Հու վեր մեր դերին մին կտա, մնին օխտը կստանա»։

Ետ ա աեռնում կյամ տոն, կնզանը թա. — Ա կնեզ, էս ա էր-կու օր ա քյնում ըմ ժամը, դերը լավ զրուց ասում, ասում ա՝ նու վեր մին պեն տա դերին, նա տեղակ օխտը ստննական ա։ Հասե, էս սնաքս, մեր կավը ասնում ըմ տամ դերին, դերը ստո շասել, օխտը ինձ ա տլական։

Ասում ա, կավը քշում տանում, աեսնում դերը եխծուն տռա-նը վեննը։ Դերն ասում ա. — Ա խեղճ-ախքաղ, էդ կավը նո՞ր ըս պերալ։

— Մունք պղլոքս բստծու փառքին ծառա յընք։ Աստուծ մեզ նունչու ասում ա, քու պրծնավդ ա ասում։ Կարո՞ղ ա քու պերանդ ստո ասե։

— Չէ, ա վերթի, չէ։ Աստուծ ինձ ա ասում, ես էլ ծեզ ըմ ա-սում։

— Ասում ըս՝ նու վեր դերին մին տա, օխտն էլ ոււրան ըն տլական, ես էլ նվըրտեվուր նայ քրիստոնյա, պերալ ըմ իմ մինս քեզ տամ։

Դերը տեսնում ա վեր էս մարթին ծալը պակաս ա, նհաշ ա տամ հղեն, թա. — Տար իմ ավըրածես առաջն ըրա, աստուծ շնորհք տի միշտ շատ պահե:

Ախփաղը կավը տամ ա ավրածեն, ետ տեռնում կյամ տոն:

Կեսօրեն դերին ավըրնեն կետում ըն, հնջվըննեն պցըցըրած, վեշ սար ըն եշում, վեշ ծօռ: Ըռըշփաշին էլ ըխփաղեն կավն անում, դերին օխտը կվերեն յոր օնում պօւրօւմ օւրանց տոռնը: Ախփաղը տեսնում ա ուրխանում. «Պա ես աստծու դիվանենն մատաղ»: Խշըհանում ա իրեսը, ավրներեն ապուր տամ, նի անում կյումը: — Ա կնեզ, վեր դերը օրաս ետ էլ զորթ շասե, էս լհա բոլ ա, մինը եր ա կօլօլ, օխտը ղարկալ:

Տվարածը շոռ ա կյամ, շոռ, հարց ու փորց ընելավ կյամ ըխփաղեն տոռնը. — Դե, դերին կվերը տո:

Ախփաղն ասում ա. — Էդ դերին ավածն ա, դերը խոսք ա ավալ, աստուծ էլ ղարկալ ա:

Տվարածը քյնում ա, դերն ա կյամ: Ախփաղը պենդ վենն ա կենում, թա. — Չէ, վեր շէ: Տու ասալ ըս, աստուծ էլ ավալ ա: Աստծու ավածը դերը կարել չի ինք օնե, հիշտեղ օզում ըս՝ քյընի կյենզյատ ըրա, իմ իրեսս նա վեննանը տակը:

Դերը քյընում ա վարթաբեդին կյենզյատ անում, ախփաղն էլ հետան:

Վարթաբեդն ասում ա. — Քեցեք ծեր տները, ուռթանա ծզանա հու վեր նելլի կկյա եխծեն, կվերը նանն ա, կտամ օւրան կըտանե:

Ախփաղը մտքումն ասում ա. «Պա հո՛, ես հիշքան նելլի կյամ, կկարի՞մ դերին անա նելլի կյամ, եխծուն իրավունքը ծերքեն, աշառը ծերքեն: Լավ ա, քյինիմ վուշ տոն, քշերս մնամ եխծուն պատեն տակեն, վեր կլօւսանա, նի կմննիմ եխծուն բօնդը, ընդեղ եշիմ վարթաբեդին»:

Էդ վարումը մին կնեզ ա կյամ վարթաբեդին կոշտը, մին սերուն կնեզ:

Աղփաղը մտքումն ասում ա՝ պա հո՛, վարթաբեդը սա պեց թողողը չի:

Վարթաբեդը տոն քյնիյիս ա ընօւմ, կնզանն ասում ա.

— Հի՞նշ ա պտահալ, սերուն կնեզ:

Կնեզն ասում ա. — Դերը ախնիզս փակում չի, ասում ա՝ չհաս ա:

Վարթաբեդն ասում ա. — Մհեեզ դերն էն ա հալա եխծումը,

էդ կործը մինակն ա յոր օնում: Կկարի՞ս քշերավ, ուռթանա ծաքյր պտրռելին կյաս եխծեն, ընդեղ կործդ կկտրիմ:

Կնեգն էլ, վարթաբեդն էլ սերավ-սլիբիլավ կքյնին տոն, ախքադն էլ պատեն տակեն կկենա, մինչև վեր դերը տուս կկյա եխծան, նանա ետր լոք կտա պատեն լուսըծակավը նի մննե եխծեն, ընդեղ տապր անե, եշի վարթաբեդին կյալին: Քոնն էլ ըշկերան մուտանալ չի:

Ժմրժենքեն, հալա լուսն ու մթենը նուկվելու, վննածեն տ կյամ: Ըհը՛, վարթաբեդն ու կնեգը եկեն: Ախքադը քաշվում ա խորանը: Ըստեղ վարթաբեդն ու կնեգը ո̈ւրանց պարի կործը տեսնում ըն: Կնեգը վեր քյնում ա, աստ էլ դերն ա կյամ: Վարթաբեդն ասում ա. — Ըխքադեն հերն անիծած, կվերը քունն ըն, ավրածեն ղարկե կյա, ո̈ւրուն անե:

Էդ վարումը ախքադը խուրանան լոք ա տամ տուս կյամ, թա. — Վարթաբեդն ապրած կենա, ես դերին անա նելլի յըմ եկալ, էդ էն ժամեն ա ըլալ, վեր էն ըս ըլալ հասն ու ջհասր նուկեխս: Ուզեցալ չըմ խնգարիմ:

Վարթաբեդը օշը հյո́րում ա բդի ախքադը, ասում. — Դերին հերն անիծած, կվերը քունն ըն, լոխ ըստծու ծառա յընք, աստուծ տվալ ա, վեր տանիս խոխեքդ պահիս:

Ախքադը կյամ ա կնգանն ասում. — Ա կնեգ, վեր հետան քյընում ըս, դերին սոտ խոսքն էլ ա ղուրթում, կվերը մերն ըն, դե ապրե ապրինք:

## 10. ՓԱՀՄԱՎ ՎԱՐԹԱԲԵԴԸ

Ձորս հրևան կնանեք ըն ընում, ո̈ւրո̈ւր քյոմագ ընելավ, սերավ-սո̈ւհբաթավ թուրնեն հաց թխեխս: Տահանց մնին ջբումը մին վեսկե տսանուց ա ընո̈ւմ, տափը ծակում ա, նի մննում: Հու կրնի եր կալած, հու չրնիլ եր կալած, կնանուցը վեչ մինը վզավ չօնում: Կուրստատարն ասում ա. եղ չի թա հալի, երգինք չի հմբարցվալ, ծզանա մինը եր ա կալալ, հալալ-զուլալ իմ փողս ինձ տվեք, վեչ ես ծզանա նղանամ, վեչ էլ տուք անեծք յոր օնիք, ըստծու աշկեն փիս թվաք:

Հիշքան ղաչանք ա անում, վեչ մին պեն էլ տեռնում չի, վեչ մինը վզավ չօնում, հո՞ւ վզավ կօնե: Ճարը կտրած էս կնեգը

քյնում ա շենին վարթաբեդեն կոշտը, ասում ա. ըստի յա ըլալ, ըստի յա ըլալ: Վարթաբեդը փաճմալ ա ընում, ասում ա. «Ըրխըրյին քյնի ծեր տոնը, ես կյուղանողը քթնանկան ըմ, փողն ինք օնիմ, քեզ տամ: Մինակ մին պեն ըմ խնթրում քզանա: Էս ռուզյու մին մեռանա փոնե, էն կնանուցը նվաքե ծեր տոնը, նանա ետը քեզ կործ չօնիս»:

Էս կնեզը ուրխացած քյընում ա տոն, նրևան կնանուցը ծեն տամ. «Ախնի, եկեք մեր տոնը, մչի յա, պատառ պեմբակ օնիմ քծըծելի»:

Կնանեքը նվաքվում ըն: Վարթաբեդը մին աման մոք թանակ ա տնում չըումը, մին վերցակ էլ փռնում, նղե ընում: Վեր տեսնում ա լոխ նվաքվալ ըն, ասում ա. — Գյուղում ըք նի՞շ կա. Էս կնզանը փուլը կորալ ա, ես ծզանա վեչ մնին կարել չըմ ասիմ՝ տու վըս կյուղացալ, յա աշկանդ երը օնք կա: Համա պերած վերցակս իմաստուն ա, նունչու ես կարում չըմ, ինքը կարում ա անե:

Կնանեքը ուրուր ըրեսե եշում ըն, մնամ ըռմացած, ննենցա մինն էլ մտքումը ծծաղում ա: Մարթն ասում ա. — Անըմը ըրմանաք ուշ, ներթավ կյլական ըք ծըքըներ քսիք վըցակեն մաշկը: Հու վեր եր կալած ընի, ծերքը վըցակեն մաշկեն նի կյալն ըբաթ, վերցակը կնշլական ա, նանա ետը էլ ուռանալի տեղ չօնե: Ես լուսը նմզըցնում ում, տուք էլ ներթավ վեննը կացեք, մինչև քաներ նմըըրեցեք, նանա ետը մին-մին մտտացեք, ծըքըներ քսեզեք վըցակեն մաշկը·

Վեր լուսը հանգում ա, էս մարթը թանակը ճլըր-ճելլի քսում ա վըցակեն մաշկը լպատում:

Էն իրեքան էրկուսը կյամ ըն ծըքըներ քսում, անց կենում, փուլը եր կալած կնեգն ասում ա. «Ատա սա կլոխը թաղիմ, վեր ղորթ ընի, քյընիմ ծերքս նի տամ, էս անդարն էլ կանչի, նո՞ւնց կանիմ»:

Մտածում ա, կյամ անց կենում, ծեռքը քսում չի վըցակեն մաշկը:

Վեր ամեն ինչ պրծնում ա, էս մարթն ասում ա. — Պա նո, էս նի՞նչ ա պատահալ: Յա վերցակս դնզլացալ ա, յա էլ կյողը վըցակես ոշվաթ ա տվալ աշկերը քոտուցըալ: Մին լուսը նի կցրեք, տեսնամ նինչ ա ըլալ:

Վեր լուսը նի յըն կցընում, վարթաբեդն ասում ա. — Լոխ ը՞ք ծըքըներ քսալ վըցակեն մաշկը:

Իրեքան էլ կլխավ ըն անում:

— Դե մին լոխ ծրfրնետ ինձ նիաշ ավեf:

Եշում ա տեսնում էրկու կնգանը ծերfը թնակուտ ա, մնինը՝ չէ:

— Ախեր ասում ըմ, վեր իմ վերցակս նամարդորուն անել չի:

Մաfուր ծրfատեռնը փեշկան փռնում ա, ասում. — էս կընգանը փույը առ վըս եր կալալ, վխեցալ ըս ծերfդ վրցակեն մաշկավը տանիս, վերցակը կանչի, էլ յան տալի տեղ չօնիս, ըրուտեղ տար fյընի, եր կալած սասանուց վեսկեն պեր առ էս կնգանը:

## 11. ՀՓՈՒՌԿԵՍ

Մին մարթ ա ընում՝ օրումս, մին կնեգ ա ընում՝ օրումս: էս մարթին ու կնգանը մին ըղըարի խելf չընում: Մե նետ կնեգը մարթին ղարկում ա բազար, ղզղան ինf օնել: Մարթը բզարան ղզղանն ինf օնում, խաստում պուրում:

Կնեգը նրցընում ա, թա. — Ղզղանեն մաշը նիշfա՞ն աղ ընf ըծըլական խոռազ ըփիյիս:

Մարթն ասում ա. — Սև անիմ մեննս, ղզղան ծխողեն անա նրցըրալ ը՞մ, վեր fեզ ասիմ:

Կնեգն ասում ա. — Դե վեննանդ յրա ետ տեռ, նշտդա վերե էն մարթին fթիր, նեսաա նրցըրու:

Մարթը fյընում ա ոուրան բախտան ղզղան ծխողեն fթեռնում:

— Ա ղզղան ծախող ախպեր, — ասում ա, — պա ղզղանը տըվեր, ըսկի ըսեցեր ուչ թա ղզղանեն մաշը կնեգս նիշfա՞ն աղ fցի:

Ծախողը տեսնում ա, վեր էս մարթին կլխումը ծեթու կաթ չըկա, ասում ա. — Հփուռկես:

էս մարթին միննան ըղնող ա նում, տրա նետե էլ նփուռկես, նփուռկես ընելավ նղե յա ըղնում: Հղեննի պտահում ա մին վար ընողու: Վար ընողեն նամ կլոխ ա տամ, նամ էլ ասում՝ նփուռկես Սա էլ էն ա ըննմ սերմը fցիյիս, գիդում ա թա ասում ա՝ նիշfան վարիս, եր կալածդ նփուռկես ընի, փռնում ա նապկե նպատավ մին լավ թակում, նամ էլ խրատում. «Վեր fյըննին տի պենու պտահին, կասին՝ մ՛ննը նզեր աեռնա»:

էս մարթը նփուռկեսը միննան fցած, «մինը նզեր աեռնա» ը–

սելավ ճղեն ֆյնում ա, տեսնում ճղըցեն ղրաղեն մին չոբան նըստած ֆթև ա անում: Քշտավը անց ա կենում, ճամ ասում. — Մինը ճզեր տեռնա: Չոբանը եր ա կենում, ֆթևը թողած, սկսում նա թակելը. — Շան տղա, տու ինձ ճունչու տեղ ըս տնում, էն ըմ ես տաճանց ծերֆեն նեղու եկած, տու օրճնում ըս, վեր շտանա՞:

— Պա ճի՞նչ սաիմ, ա ես ֆե մատաղ,— աղերս անում մարթը:

Չոբանը տեսնում ա, վեր խեղճուկրակեն մինն ա, ասում ա.
— Վեր տի պենու պտաճին, կասին՝ սատված տրա դմըզլեղը կտրցընե:

Լոխ մննան ֆցած էս խեղճը վերշին խոսֆը անկյիր ըրած ֆյընում ա: Հղեննի եշում ա տեսնում մին մեռալ ըն պռուռում, մոտանում ա թա. — Աստված տրա դմըզլեղը կտրցընե:

Մեռած մարթին պարիկամ-ազգական յրան ըն տեռնում մին լավ դնզըսում, պռուրթը կյզում, ֆցում ճղեն: — Դե ֆյընի, ճամ էլ՝ վեր տի պենու պտաճիս, կասիս՝ էտ ընի, էլ վեչ ընի:

Էս ծեխ մարթը վերշին սածն էրկուվելավ ֆյընում ա: Տու մե սսել, ըռաշան մին ճըսանեֆ ա կյամ՝ պարավ-խերավ—ծափավ-ծծաղավ: Էս ճրթննֆատերնն էլ օխտը ախճիգ ա ընում, ճալնւ ըրշինակն ա ընում փսըկվեխս: Սա մոտանում ա կլոխտամ, ճամ էլ ասում՝ էտ ընի, էլ վեչ ընի:

Օխտը ըխնըկատարը ռւրան ուրխացած-խմած պարիկամնե-րավը յրան ըն տեռնում թակում-ծռւծռւն անում, ճամ էլ խրատում. «Վեր ֆյընին տի պենու պտաճին, պար կկյան, ուռռա կանին, կշվշվան, փափաղը երգինֆ կֆըցին, լոֆ-լոֆ կանին»:

Էս մարթը յոխ մննան ֆցած, ուռռա ընելավ, փափաղը երգինֆ ֆցիլավ, ճղեն ֆյընում ա: Ըռաշան չոռֆ ծիանե մին փուրքոն ա տռւս կյամ: Էս խեղճ Ասլեյա կյառնը ուռռա յա անում, փափաղը երգինֆ ֆցում, շվշվցընում, պար կյամ, ծիենը խրտընում ըն, ծառս ընում, փրքոնը լիգյը սախսի յա ընում, պարան տամ, լոխ կուտրատում: Փրքոնչին շլլեղեն ռեխն ա ֆցում, պուրթ տամ պեմըակ կյզում, ճամ էլ խրատում. «Վեր տի պենու պտաճին, մին ճափուռ խոտ կնեպոին, փշում-փշում ընելավ խոտը ծիյին, յա եզնանը ֆթեն տեմ օնին»:

Էս մարթը բախտը եր կալած ֆյընում ա, ճամ էլ փշում-փշում անում: Էս վարումը մին վերսկան ֆոլեն տակեն պարանց ընգած, վերսին գյրավան պինեյիս ա ընում, լճա էն ա օզռւմ ա

թա կոռկը քաշի, էս խեղճ-մարդիմազարը մոտանում ա փշում-փշում ընելավ, խոան էլ վրսկանեն քթեն աեմ օնում:

Վերսկանը վերսը թողած, կզնըված, փրփրած եր ա կենում վեր թակում կլխեն, համ էլ խրատում. «Վեր աի մին պենու պը-տահին, թաքուն, կորկեռ, սուս-փուս կհըռանան»:

Էս մարթը կորկեռ, սուս-փուս հղեն քյըճում ա, ըղնում մին վխճարու սöւրու: Վխճրատարը եշում ա տեսնում՝ մինը քշըքաշ, թաքուն վխճարեն մաշավը քյըճում ա:

«Պա-հա՞: Կա-չկա սա լհա իմ վխճարես կյողն ա»: Մհակը յոր օնում, ջանեն ըղնում: Էս կյիրը կորած մարթը մին կերպ շու-բանեն մհական պրծնում ա, öւրան քցում տոն: Նի յա մննում թա չէ, ըստեղ էլ կնեգն ա պոկն օնում. — Ա մարթ, ախրը, հիշ-քան աղ ընք քցըլական էս ղզղանեն մաշը:

— Ախճի, հարöւր պեն ըն ասալ, քանե մինը մննես պահիմ, էս ըմ տավար տեռած:

Ըստեղ էլ կնեգն ա օժը եխնածն անում: Մինչև մհենգ էլ մարթ ու կնեգ կարում չըն էն ղզղանումը խորագ իփին էն զհար աղեն դöւրդան, հունցու ինք ըն կալալ, ղզղանը էն ա ընդի կնա-յիս:

## 12. ՄԱՐԸ

Ընöւմ ա շընöւմ, պա հինչ անում, վեր ընում չի, մին մինակ կնեգ ա ընում: Սա ղարիբբթունում աղա յա ընում, եշում ա վեր կյա: Մին օր էլ էս կնեգը հիվանդանում ա:

Մին քշեր էլ մահն ա կյամ, թա. — Հազըր մինակ ըս, եկալ ըմ քեզ տանիմ:

Էս կնեգն ասում ա. — Տու մերն ըս, մունք՝ քունը, հիբը ընի öւրöւր ննեա ընք: Մին պեն ըմ քզանա խնթրում. պատառ ամաց, տղաս էն ա ղարիբբթունում, կյա տեսնամ, նանա եար հունչու օզիս կանիս:

Էս խոսքան մահը ետ ա տեռնում, ասում ա. — Լöվ, թող տղադ կյա, տես, եանան կկյամ: Բալի ղորթը տու վըս:

Մին խիլլա վախտ անց ա կենում, աղան կյամ ա, մարը տես-նում ա, պաչում ա քուշտանում:

Մահը կյամ ա, թա. — Դե վախտն ա, եկալ ըմ:

Մարն ասում ա. — Նամօրդրթուն մ'էր անել, թող աղաս փակիմ, ճարթնը տեսնամ, ետնան: Ցանի ինչ կնի:

Մանը էլնա մորը ննետ ուրուր ա ըղնում: Էս կնեգը աղան փակում ա, լավ հրասանեֆ անում:

Մանը եխան պեց չի թողում, հրթննֆանը ետը կյամ ա. — Էլ խուսելի տեղ չօնիս, եկալ ըմ, տերտակ ֆյննական չըմ:

Կնեգը տեսնում ա, վեր մանը հունչու օզալ ա տվալ ա, սերտ ա անում ասում. —Գյուղում ըս հի՞նչ կա, չատ ըս տմացալ, կաց թոռն էլ տեսնամ, ըստծու էլ լավ կթըվա: Հուր ըմ հինչ անում:

Մանը սուս ա անում, ետ տեռնում:

Մին օր մանը տանանց տռնավը անց կնայիս, տեսնում ա էդ կնեգը թոռնանը պար ա ածում, համ էլ ասում. «Հիր կնի նուր կպիրիս, ես խմիմ: Ես սիմ սատուծ էլ սկանա»:

Մանը սկացածը ունգուներ ա անում. — Հը, ա պառավ, մենեք հի՞նչ կասիս, թոռն էլ տեսեր: Եկ տանիմ ֆու հիմնական առնդ:

Պառավն ասում ա. — Ծատեն ամօցալ ըս խրեգին՝ ո՞ւչ: Հի՞նչ ա մնացալ, թող թոռնս նուր պիրի խմիմ՝ ետնան:

Մանը եչում ա, թոռնը մծանում ա, նոււր ա պուրում, պառավը խմում ա:

Մանը կզնըված կյամ ա, ասում. — Բոլ ա, հերիֆ ա հիչֆան ներվալ ըս, եկալ ըմ ֆեզ տանիմ, էլ խոսիս ուչ:

Պառավը համ հզըրվում ա, վեր մանեն ննետ ֆյընի, համ էլ բլբլամ.

— Մուրազս անգաղար մնաց, սրտենս մնաց սրտումս, հոգս կուտուր տեռած ըմ ֆյընում, սատուծ, լավ անգուն կալ:

## 13. ՊՈՋԸ

Մին մարթու օխտը աղա յա ընում: Ուխտեֆան էլ մծանում ըն, հորը տորֆավը անատար տեռնում, չենան հռանում, նուրանց հետե ապրում, սկի մնեըենեն չըղնում թա հօր օնին, թա օնին ուչ: Մարթիս կնեգն էլ մեռնում ա, ինֆը մնամ ա կոնին տակեն մինակ, ղուղու կնչիյիս: Հինչ անե, հինչ չանե, նար չի ֆթենում էտ ուրութունան տուս կյալի: Մոնըլական ա, թաղող չի ըննական,

անդար-ընդերու մռալին ասոած էլ չի տրորուն անում, շոն-կյուլ քաշ ա տլական: էս մարթը դարդը հրըվանեն պտամում ա: Հրեվանը խելունք ա ընում, ասում ա՝ սան քցի, վեր մին պոլիգ վեռկե օնիս, խոխեքդ կյլական ըն քզ ըրա ծեք տան: Սոտ խոսկը նեյլի յա երըմիշ ընում: Պուլիգին վեսկեն թեեր ա անում թըռշում, Յանդուն ճանչին մնան նի մննում, խոցը ընգուռնումը տըզզամ: Մին էրկու ամսանը ետը խոխեքը լոխ հվաքվում ըն: Շենումը սկըսում ըն խոսելը. պա ասել չըս էս մարթը խիլլա վեսկե օնե, դիմիշ չըրալ օտե, պահիալ ա խոցը հետե:

Խոխեքը ամեն մինը ուրան հետե հորը կյոք ա տամ, վեր քաշի ուրան անգյունը, տանե ուրան տոնը: Ժորնգնեն մտածում ըն, վեր սօր-էքուծ հարը մոնըլական ա, հու վեր կյեննթան վախտը կարից հորը խաթիրը քթենա, նա էլ կործը կտանե, վեսկեն նրա յա մննական: Հարը կլոխ ա ըղնում, պենը հինչումն ա, ասում ա. — Չէ, ա բլենե, ես իմ ուշաղաս տուս կյվողը չըմ, ես ըստեղ էլ մոնըլական ըմ, մեյդս թող մեր հանդին քշեղակն օտե:

Տղեքն ասում ըն. — Դորթ ա՞, վեր մին պոլիգ վեսկե օնիս:

Հարը մաննը կծում ա, ասում. — Հա, ընիլը օնիմ, համա ձեզ չըմ տլական: Վեր մեռնիմ, հրևանս տեղը ծեզ ըսըլական ա, մոնելանս ետը հունչու կանիք՝ կտնիք, տերը ծզ նըհետ:

Խոխեքը վեսկուն շիրան կոքըրներեն տակեն, էլ հռանում չըն, մնամ ըն հորը քշտեն:

Շատ չի քաշում, հարը մեռնում ա, խոխեքը ըստծու կարքավ հոր տանում ըն թաղում, օխնը-քռասունքն էլ անում, քյըննում հրըվանեն կոշտը, խնթիր տնում, վեր վեսկուն տեղն ասե, հանցու տարուն՝ հորը յրա քար քցին, մնացածն էլ, ադաթ ա, ուրանց մաշին փայ անին:

Հրևանն ասում ա՝ էն ա կյումեն պտրհանեն տակեն մին մեծ ռալքար կա, նրա տակեն:

Խոխեքը ըրըխ-օրախ, ամեզը մին թե, մին թոխուր ըն յոր օնում, քյըննում սալը պուք տամ, տեսնում աստվածանից տակեն պոլիգ: Խոցը սրտրնեն փուրըրներումը ծլընգ-ծլընգ թխում ա, վնըրնեն էլ տկըրներեն ճինչեխ ա ածում: Պոլիգը տուս ըն օնում, ռեխը պեց անում, տեսնում մտշին մին տվտրու պոզ, պոզին մաշին էլ մին թոխտ՝ յրան մեծ-մեծ տռերավ կյըրած. «Հու վեր տղու, հարթնու ումեղ ըղնե, էս պոզը նրա աշկը»:

## 14. ՎԵՂԸ ՇԱՏ ԶՐԶԱՐԵ

Ըրազումս մին պառավ ինձ զուրթնուցնում ա:

— Պարի մարթ, հի՞նչ տունկա յըս:

— Դյամա:

— Վե՞ր տանա:

— Աշանա:

— Անո՞ւմդ:

— Թավադ:

— Հինչա՞նց:

— Շինդունց:

— Քանե՞ տրեկան ըս:

— Ութասուն:

— Լավ ըս անց կացալ: Տեսնում ըմ ըշկապեց, ընգած-տո̈ւս եկած մարթ ըս, ամեն հինչին հասու: Քզանա մին պեն ըմ հրցըն-նական:

— Հրաման քեզ:

— Աշխարքես ամենաքախծրը հինչն ա՞:

— Հացն ա:

— Հացը հիշտըղա յա՞:

— Վեղան ա:

— Ծուրը հիշտըղա յա՞:

— Վեղան ա:

— Աղը հիշտըղա յա՞:

— Վեղան ա:

— Այ ղորմա քա հոր, ղորմա իմ հոր: Ուրեմս՝ քախծրը վեղն ա: Կասկածավե՞ր չըս հու: Շատ լո̈վ, շատ պարի: Էս լո̈ւս ըշխարքումս, տափեն տակեն, ըրեսեն, ծովումը, յրգինքումը հինչքան շունչ-հոգի կա՝ հինչա՞վ ըն կենդան:

— Վեղավը:

— Այ օրհնվիս տու: Տեսնում ըմ մեռուն մարթ ըս, ափսոս, քեզ էրկու մետր վեղ ըմ պրտական, հանցու ետ-ետ տնիս, նի մննիս մաշը: Համա մինչև էրկու մետրեն ըրեսեն վեղը տեն անելը, վեղեն չրշարե: Վեղեն հիշքան շատ չրշարիս, էնքան վեղը քխծրանում ա, վեղեն քախծրն էլ տամ ա պրանետ: Ըստի ասիմ տու էլ աշկդ ծակ չի պահիս, ըշտահետ էլ քացախ չանիս: Ծառ շատ տնգե, համա շիլ չըղնիս քրիստոսա տունգը պուք տաս, քամուն պերած սերմը տնգիս: Հո̈քյիդ վեղումդ խոր վեր

թողե, վեr տական-կլխան փշող fամեն կարե վուչ թա Ղյամա դիf տակոեն պուf տա: Մեննդ պահե, fու դո̈ւշմանդ fու աշկդ ա, վեղումդ թմահեն ծառը տնգիս ուչ: Չաշմիշ կրնիս, սադանան փո-rումդ ճոտեr կանե, հացդ պատան չի կենալ, սուփը մատադդ ընթունել չի, կաթնըդ կշաղե, գյիդալ շըս, թա Մեծ Նհրտական ա՞, թա Պիծի Նհրտական, ըստուծանա յա՞, թա ներfե բա̈ն-դա՞ն, խաչան ա՞, թա կյrին մաշա՞ն...

Ես էլ կյամ ում Վսկրխաշան,
Աստուծ խոսից սրտեղ-մաշան:
Ասից Թավադ Շինդիյանը:
Սոնգս՝ կյող Աշան, իմ հոr անումը Բալասան,
Աշկըս լո̈ւսի, լո̈ւզու ասուն,
Յաշս տասսավ պակաս, fանց իննասուն:

# ՋՐՈՒՅՑՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ, ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 15. ԱՌԱՋ ՎԵՆՆԱՆԴ ՏԱԿԵ ՏԱՓԸ ՃՆԱՆՉԻ

Մուշըհավը կտոց-կտոց երք ըսելավ էն ա ընում մոշեն քոլեն տակեն քթոթ ընեիս: Աղվեսն էլ մտքեն դոնն ընգած, ինքը ո̈ւրան անավ հյիլ-մայիլ կարած, մին կյիր էլ կռուտակեն, օշը բդի երգինքն բրած էն ա ընո̈ւմ քյընիյիս: Էլ ծառեն կոխկե վերը տեսնում չի, հանկարծ ըղնում ա մաշը:

Մկըծեռնը տեսնում ա, ծծաղում ուշըհան ընո̈ւմ:

— Վերումը հի՞նչ կործ օնիս, ա քամե նհեա ավող:

— Սարկյավաքյ իմաստունն ասալ ար. յրգինքին աստխերը հաշև ըրա, ես էլ հաշև ի անում: Մին կորած աստխ կար՝ ինձ շատ չրչարից, վեննանս տակեն էլ յշեցե վուչ: Ծառեն ախպեր, մունք մին ցեղա յընք, պարդավեր ընք ո̈ւրո̈ւր քյոմագ ընինք, ծերքդ առ պցըրանամ:

— Ես կարել չըմ քեզ նման հիմարեն լվոթուն անիմ: Ընձանա քեզ ամանաթ. առաչ վեննանդ տակե վեղը ննանչի, ետնան յրգինքին աստխերը հաշև ըրա:

## 16. ԸՍՏԵՂ ՇԵՆ ՉԻ ՏԵՌՆԱԼ

Մին վերցակ, մին շոն ըխպրանում ըն, մսլըհաթ անում, վեր քյընին ծմակը: Քյնում ըն: Մինչև հսնում ըն, մթնում ա: Շոնը քոլեն տակեն պրանվում ա, վերցակն էլ ծառեն թառ ա ընում: Վեր լո̈ւսը մուտանում ա, վերցակը կանչում ա: Աղվեսը քունա յոք ա տամ եր կենում.

— Ջան, ծենիդ մատաղ: Էս ա ընձ էտե մին լուս լուսացավ:

Սասին յրա վազ ա տամ կյամ, տեսնում վերցակը ծառեն յրա:

— Պարի լուս, վերցակ ախպեր, ճի՞նչ համե յա հեզ պերալ մեր ճաներըը:

— Ըստեղ մին չեն ընհ չննակաճ:

— Էդ ճինչ լավ պեն ըս մտածալ, վեր եկ, մսլըճաք անինհ:

— Հատե իմ դայի հոլեն տակեն դնչանում ա, մինչև ես վեր կկյամ, ուրան ննետ մսլըճաք ըրա:

Աղվեսը հոլեն յրան ա պրծընում, հոլը՝ ըղվեսին: Աղվեսը ճղղամ ա, մի կերպ առւս պրծըընում, փախնում:

— Աղվես, քո՞րն ըս փախնում, սպասե, վեր ըմ կյամ:

— Քեզ վեր տի դայի օնիս, ճարուր տարե ըստեղ չեն չի տեռնալ:

## 17. ՄԱՐԹՆ ՈՒ ՎԱԳՐԸ

Կատուն տերնը ճետան հյըընում ա ծմակը: Վագրը տուս ա կյամ, ասում. — Տու մեր ազգանս, խե՞ տի պիծի յըս մնացալ:

Կատուն մաննավ ննաչ ա տամ մարթին:

Մարթը էն ա ըննում փադ ճղեխս: Վագրը ճլո՞րվում ա բդի մարթը, ասում.

— Տու էդ ճի՞նչ ըս տրալ էն աժդաճա վագրեն կլխեն, վեր կատու վա տեռալ:

Մարթն ասում ա: — Ծեռհերդ տիր փադին ղաքումը, ասիմ:

Վագրը ծեռհերը տնում ա փադին ղաքումը, մարթը կացենը տուս ա օնում: Փադը վեր սկսում ա ժնններեն ճոփ տալը, մարթն էլ սկսում ա կացնավը թակելը:

Վագրը վայվրուդ ա անում, խղճացած բդի կատուն եչում.

— Տու ճալա փիլ ըս, վեր տի էլ տմացալ ըս:

## 18. ԱՄԵՆ ՊԱՉՈՒ ԿՀԸՎԱՏԱ՞Ն

Մե ճետ մուկունը տոռոնեն տեսնում ա, յրան սիրաճարվում Քյըննում ա կոխկը կոըրում, քա. — Եկ ես տու ուրուր ննեա փըսակվինհ:

Տոռոնեն ասում ա. — Լափ լավ կընի:

Մուկուճը լոխ ա տալիս, տոռոնենց տան մեջ նետ պաշում, փախ-նում:

Տոռոնը կյրմրում ա, փսրցուլենց նետան թոշում, մուկունն էլ վազ տալալ ֆյրնում ա նի մնում ուրան պուճը: Խեղն տոռոնը տես ա էշում, տեն ա էշում, նտրուր ծակ-ծուկ կա, ննտնցալ իշֆը նիմննող տ՞: Ճտրը կտրած պուճին ֆշտեն նստում ա, թեե-րը խաշ անում, սպասում: Էշում ա, էշում, մինչև ումեղը կտրում ա: Ասում ա. «Իմ դանգլա խելֆս, ամեն պաշու կնրվատա՞ն, վեր ես նվըրտացե»:

## 19. ՄԻՆ ՊԻՏԻ ՀԱՓՈԻՐ

Մարթը էն ա ընում գելաս ֆղեխս: Արշը կյամ ա, թտ. — Մարթ ախպեր, թուղ տո, գելաս օտիմ:

Մարթն ասում ա. — Իմ նափոավս մին կեր:

Արշը անգուն չի օնում, ուրան նափոավը մին ա օտում, սկը-սում գոելը:

Աղվեսը կյամ ա, թա տղալ անց կենա, մարթը նամեցեֆ ա անում. — Աղվես ախպեր, եկ գելաս կեր:

Աղվեսն ասում ա. — Վեր գելասը լավ ընի, արշը ծառեն տակեն նպարալ կենալ չի:

Ձուր չըն ասում. «Թոքը նփրոնափոտ կեր, գելասը՝ մին նա-փոտ»:

## 20. ԼՈԻԾԸ

Լուծը անում ըն մին դաշանգ ըշեռու վզի, նապկե նպատալ էլ մաշկեն թխում, վեր խամը վտրե: Աշեոը խամ ա ընում, օժն էլ՝ պակաս, շովռենա ըղնում:

— Հիշֆան ա ծանըր էս լուծը, մարթ արարած. էս նինչա՞ յա շինած:

— Կաղնա յա:

— Տու իմ խոսֆես անգուն կալ, վեր ասռուծ էլ ֆու խոսֆեղ անգուն օնե, կաղնե լուծը ծանըր ա, փոխե օրիշ լուծ տիր:

Մարթը անգուն ա օնում, կաղնեն փոխում ա, պեխե լուծ անում ըշեռեն վզին:

էլնա աշեռը չովռեն ա ըղնում, օժը պատում չի: Մն էլ ա խնթրում, վեր լո̈ւծը փոխե, պեխեն էլա կաղնու մնան ծանդր:

— Ասում ըն տկողնեն թիթև ա ընում, հիշ կընի յանի, լո̈ւծը տկողնե տնիս:

Մարթը էլի յա անգուն օնում, ակողնե լո̈ւծ ա տնո̈ւմ ըշեռեն վզին:

Աշեռը քրաննքում ա, ո̈ւրան անա առա կյամ, կարում չի ծը-րավը քյընի:

— Լո̈ւծը ծանդր ա, օզում ա պեխե ընի, օզում ա՝ կաղնե: Թխե, մարթ աստծո, հիշտեղ վեր լուծն ա, ընդեղ էլ նպատը:

## 21. ԽՋՆԸ

Խեղն Աղամա վերթին տես ա հլորվում, անն ա հլորվում, էս քարն ա յոր օնում, էն վեղն ա քանդում, աշ ա եշում, ծեխ ա եշում, ավեր ա եշում, աեր ա եշում, պոպառում ա ըստծու ըռաշին. ծերք մեկնող չընում: Ճարը կտրած ըստծու ծրեն վենն ա կենում, հավք ընի, կյեզան ընի, հու վեր կյամ ա, հրցընում ա.

— Վեննը կացեք, ա շունչ-շնչավորնե, հո՞ւ կկարե ինձ դալու ընի, հու կկարե ինձ դայաղ ընի, կործես կուփե սա, լուծհնգեր ընի:

Վեչ մինը անգուն չօնում, լոխ խեղն հլըվուրեն թողնում ըն քյընում:

Մինակ մինը կյամ ա մոտանում, ասում. — Ես, ես...

Հլեվուրը ո̈ւրան էս հնգերեն անումը տնում ա էզ:

Մարթը ուրխացած խատում ա էզնանը վէզը, ըշկերան պա-շում, կոխկեն վեննը կենում: Մին ըրկընանգուն սավար էլ ա մոտանում, խեղն-խեղն եշում ա մարթին ըշկերեն, ասում.

— էշ, էշ...

Այսինքը՝ ես, ես:

Մարթը հվատում չի էշին լո̈զվեն: էշը լա̈ց ա ընում, ծենը պեց թողում, զռում: Օզո̈ւմ ա սաե. խե՞ էզնանը հվատում ըս, ինձ հվատում չըս:

էդ օրվանից մարթը նոխաեն էրկու անգյուն եր կա̈լա̈ծ կոև ա սամ վեղեն, քարեն ննեա: Եզնանը յզնախպեր ա ասում, էշին էլ՝ էշ ախպեր:

## 22. ԿԱՔԱՎԸ

Կքավեն ասում ըն. — Խե երք ըս ասում, չէ՞ վեր տանավ դույուղ ըս անում վրսկններեն, մահլöւմ ըս անում քու քոլեղ տեղը:

Կաքավը ըստի յա բաղասխանում. — Ես երք ըմ ասում, սկընողեն հեղ սերտը լըցնիմ: Ես երքը հո՞ւնց չասիմ, վեր էն ա սրտումս երք կա: Մարթին մինը վերսկան կընի, հարուրը վերսկան չընի: Վեր օզում ըս գյիդաս, շատը վրոկններեն հետե յըմ ասում:

## 23. ԿԾԱՔԱՐԸ

Կածքարեն հըրցընում ըն. — Հո՞ր ա լöւսդ: Մաշդ կրակավ լիզյը, բաշիր չըս անում թա քշերնեն լուս տաս: Տեսնում չը՞ս ըղաքարը, սաղ օրը փլըստրատե յա տամ:

Կածքարն ասում ա. — Մեխկը ընձտնում չի: Մեխկը մարթին անում ա:

Մարթն ասից. — Հի՞նչ անիմ:

— Ինձ մինակ թողում էր, ինձ չրշարե, թողում էր կածը մաշիս հանգյի:

Սարկյավաք իմաստունն ասից. «Ըստծու կրակը մարթիս մաշին ա, տöւրöւր բդիս տալ, վեր հանգյի վուչ»:

## 24. ՎԵ՞Ր ԱՐՏԱՎԱԶ

Մարը կուրցընում ա մինունար բլեն: Ամեն օր քշերավ եր ա կենում քյընում մդարեն կյրըզմանեն կռանում, ըրտասունք թափում, ըստի մինչև րöւզյու:

Մին օր շատ-շատ ա լաց ըլնում, լոխ մննան ըղնում ա, öւրան էլ ա մննան քցում, վեր օշը հլöրնում ա, տեսնում ա՝ մթնըքըշեր:

Կնեգը վախում ա, մեռած վերթուն ա ծեն տամ: Մարը վեր նեղ օրում ընի, հö՞ւր ծեն կտա:

— Արտավազ, Արտավազ, Արտավազ...

Մնել ա տեսնում հանգիստարանեն խռռան սäսեր ա կյամ.

— Վե՞ր Արտավազ, բատեղ մունք շատ ընք, թաքավեր Արտավազան մինչև տվարած Արտավազը:

Մարը էլ վախում չի, խուխեն ննգերունքը լոխ էն ըն ուրան չորք ընգյունին: Շատունքեն մաշին վախել չըն:

## 25. ՀԻ՞ՆՉ ՀՎԱՏՈՒ ՎԸՍ

Սեյստղան մին դեր ա ընում, քյընում ա տեսնում՝ եխծուն խաշեն քաշը ծռտած: Մաքրում ա, մին կյեվաթ կյինի տնում խաշեն քշտեն: Քաշը կյամ ա խմում, նարփում, վեր ըղնում: Դերը քաշեն քշտեն էնքան կենում ա, վեր նարփած քաշը զինքը նվաքում ա. մաննավը կտուցեն թխում ա, սում.

— Թա նայ քրիստոնյա ըս, խե՞ խաշեն յրա ծռտում ըս, թա թորք ըս, խե՞ կյինի յըս խմում:

## 25. ՀՈՒ ՎԵՐ ԱՆԵ՝ ՏՈՒ ՕՏԻՍ

Էրկու մարթ ծմակավը քյընիյիս ըն ընում վերսի: Ծռավում ըն, շոռ ըն կյամ մին ախպյուր ա չնում, էրկու ախնից էլ էն ըն ընում ըխպրին ղրաղեն նստած, էրկու ըմանում ամեզը ուրանց նետե մուշըփրթուշ ուտեխս: Վռսկնենեն սում ըն.

— Սեռուն ըխնըկերք, նուր ավեք մեզ:

Ըխնըկուրանցան մինը կյեվաթը մուշըթաթախ, եխտուտ նըռավ լցնում ա, սամ ղարիբ աղըմրթունցան մնին: Էն մինն էլ թամուզ ամանը լվանում ա, նրավ լցնում, ողող տամ, նոռը լըցնում, տամ էն մարթին:

Ղարիբ մարթն սում ա. — Տու անիս, տու օտիս.—թամուզ յվընողեն:

Էն մնին էլ սում ա. — Հու վեր անե՝ տու օտիս:

## 27. ՄԱՐԹԻՆ ԱՇԿԸ ՄԻՆԱԿ ՎԵՂԸ ԿՔՈՒՇՏԸՑՆԵ

Ասում ըն մարթին աշկը վեշ մին պենա քուշտանալ չի:

Մե նետ մին մարթ մեռնում ա, աշկերը նիշքան տնում ըն, կարում չըն կապին:

Վեր տանում ըն վեղումը, ինքը-ինքը կապվում ըն: Մին օր տա յրա խոսք ա վեր կյամ, մին ընչատար մարթ ասում ա. — Հինչ աշկ օզում ըք ավեք, ես դյաստի կքուշտըցնիմ:

Պոըռում ըն մին մռալու աշք տոււ օնսամ, տամ էդ մարթին: Սա տանում ա կշռքեն մին ընգյունին էդ աշկը տնում, մին ընգյունին էլ ոռան սաղ նռստըրթունը, էլնա աշկը ծանդր ա ընում: Հունցու անում ա, աշկը տեղան եր չի կենում: Մին օրիշ մարթ ա կյամ, թա՝ վեսկավ-ըրծաթավ կարել չըս մարթին աշկը քուշտըցնիս: էս խելունք մարթը պոըռում ա մի նափուռ վեղ տնում կշռքեն էն ընգյունին, աշկը դյաստի պցըրանում ա:

Ժողովուրթը իմաստուն ա, ասում ա՝ մարթին աշկը մինակ վեղը կքուշտըցնե:

## 28. ՔՐԻՍՏՈՍԸ ԸՍՏԻ ԱՍԻՑ

Քրիստոսը փախավ եկավ Հայացտուն: Ըսեցեն՝ պա տու նըրեցե չը՞ս:

Ասից. — Հիշտեղ վարթաբեդ կա, էն իմ երգիրս ա, նու վեր ինձ անգուն օնե, էն էլ իմ վերթիս ա:

## 29. ԿԱՏՈՒՆ

Կատուն վեր տոուզն ա ընում, էշու քուտակու նման ըռաշիդ թավիլ ա տամ. վեր լիոլի յա ընոմ, շան նման պպզում ա, վեր նիվանդ ա ընոմ կյառնու նման մա յա անում, վեր կյղըթուն բրած ա ընոմ, ըղվեսու նման սիլի-բիլի յա անում, նաքյին նարուր նետ վեններդ ա քսում, վեր քեզ վնաս տալի յա ընոմ, վագրու նման ժնգռնում ա, վեր մուկուն փռնած-կերած ա ընոմ, նստում ա արքայավայել, առյուծու նման ըռաշի վեններըր ոռոր ա փթաթում, աշկերը նոփ օնում, յանի՝ ես ըմ վեր կամ:

## 30. ՄԱՐԹԸ՝ ԲԽՈՒԿԱԾ

Աստված մարթին տամ ա մին ընչոտած ժնչիլ: Ասում ա՝ նանց թմզցրու, վեր փստրատե տա: Եվ խեղճ մարթը ոռան ամ-

բողն գյանքումը էղ ընչոտած ժնչիլը թմզգընում ա: Լնա վեր թմզգնում ա պրծընում, աստված նրանավ վենները բխովում ա:

Սարկյավաք իմաստունն ասից՝ մարթը ո̈ւրան գյանքը տի յա անց կցընում:

## 31. ԱՍՏԾՈՒ ԿՈՐԾԸ

— Ա տվարած, քուցե գյիդաս, աստուծ կա՞:
— Հա, էն ռ կա:
— Պա խե՞ ըրվամ չի:
— Էն ա ծմակումը:
— Պա ծմակումը հի՞նչ ա անում:
— Մա̈րդըրվան ա չո̈ւնում, հանցու մինը եր ընի, մինը վեր կյա·

## 32. ՔՅՍԻԲԻՆ ԱՇԿԱՎԸ ԽՇԻ

Թաքավերը մին ուստա յա ծեն տամ, ասում. — Տանս ակուշկան փոխե, հանց հիլի քցի, վեր հիշտեղ եշիմ՝ կնճկյարմուր ըրվա, ըշխարքես ըռնգնեն յրա փլըստրատե տա:

Սարկյավաք իմաստունը ղաթն ընգավ ասից.— Թաքավերն ապրած կենա, տու ըշխարքես էղ ակուշկավը մ'էր եշիլ, տու ըշխարքես, հանե՞, էն մանը ծերքեն մարթին ըշկերավը եշի:

## 33. ՀՈ̈ՒՐՈ̈Ւ ԽՆՁՈՐ ԸՄ ՏՎԱԼ, ՀՈ՛ ԱՆԵ

Մանկտլը ո̈ւրան էրկու հոտաղներեն ո̈ւրո̈ւր անա թաքուն առանձին-առանձին խնձոր ա տվալ, ասալ՝ մինակ քեզ ըմ տամ, վախտեն հո կանիս:

Վարեն վախտը մանկալը հլլընելի ասալ ա. — Հո̈ւրո̈ւ խընձոր ըմ տվալ, հո՛ անե:

Ըրկոքան հո՛ վըն բրալ:

## 34. ԱՌԱՋ ԸՐԱ, ԽՏՆԱՆ ԱՍԽ

Կնեգն ասում ա. — Եr կենամ մին վելա մանիմ, մին fոլա թակիմ, Ջալաղըզը (կովի անուն) տանիմ կապիմ:

Կյողը սկանում ա, ասում. — Մինչև էս կնեգը մին վելա մանե, մին fոլա թակե, ես եr կենամ Ջալաղըզը սառավն անց կցընիմ:

Առակս ասում ա՝ կոrծը վախտեն բդի անիս, ճամ էլ անել բդիս, ետնան տախս:

## 35. ՓԻՍԸ՝ ԼԱՎԻՆ, ԼԱՎԸ՝ ՓԻՍԻՆ

Տաrեն մե ճետ մին ճավf ա կյամ, մին ծառու վեr կյամ, ասում. — Փիսը՝ լա̈վին, լա̈վը՝ փիսին, փիսը՝ լա̈վին, լա̈վը՝ փիսին:

Օխտը տարանը մին էդ ճա̈մին ճավfը կյամ ա ծառեն վեr կյամ, ասում. — Լա̈վը՝ լա̈վին, փիսը՝ փիսին, լա̈վը՝ լա̈վին, փիսը՝ փիսին:

## 36. ԲԱԴԱՐԱՔՈՒՄԸ

— Հո՞ւնց ըս:

— Էնfան լավ ընf, վեr մնենq մեռնողը մունf չընf:

## 37. ՎԵՐՋՆ ԸՆԻ ՊԱՐԻ

Մին մարթ էն ա ընում վար ընեխ: Մին մrfավուr մարթ կյամ ա մուտանում. — Ամեն մարթ յա էս կյխտեն ա ընում բախտավեr, յա՝ էն: Տու վե՞rն ըս օգում:

Վարվուrթն ասում ա. — Էն կյխան ճու մեռած, ճու՝ սաղ, թա աստուծ ըս, ճինչ տալի յըս՝ մենենq տռ:

Սա առռf-փառռf տպrում ա, ճrուստանում, վեչ ժռնգնեrեն ճոfսն ա fաշում, վեչ էյսի օrվա: Պառավ տարուն մնամ ա մինակ, վեչ մին fյոմագ չընում, վեչ մինը ճովեն ճսնում չի, չուռացած պռուշեն ճուr չի առնում:

Մարթը տենքամ ա. — Հայ-հարայ, սխալվալ ըմ, աստված, իմ իրեսս քու վենհանդ տակը, ջահիլ վախտը կերած-խմածս մհենգ քթըծկերավս վեր ըծեցե: Այ մարթիք, սկացեք, ջահիլ վախտը մարթ հունցու ընի, կապրե, էն կլխան բդիս բախտավեր, մարթին ախրը խեր ընի, վերչը՝ պարի:

## 38. ԱՄԵԳԸ ՈՒՐԱՆՑԻՆ ԸՆ ԾԻՔ ՏԱՄ

Ծոնը կօզի տեռնը օխտը տղա ընի, ամեն մինը մին թիքա հաց տա:

Հավը կօզի տեռնը տոնը վերան ընի, հանցու մաշին քթոթ անե:

Կատուն կօզի տանը լոխ հիվանդ ընին, հանցու փայը շատ ընի:

## 39. ԾՄԵՐՈՒԿԸ

Հարը վերթուն ասում ա. — Քյընի բազար, մին հանց պեն պեր, վեր համ մունք օտինք, համ հավերը, համ էշը:

Տղան քյընում ա ծմերուկ պո̈ւրո̈ւմ: Քշևը էշին, կոռեզը՝ հվերեն, մաշն էլ ո̈ւրանց:

## 40. ԼՈ̈ՒՍՆՆԳՅԱՆ

Լո̈ւսննգյան մին սերուն ախնիգ ա ընում, մարը խմոր հունցեիս, պլոթուն ա անում: Մարը եր ա կենում խմուրթաթախ ծեռքավը սիլլա տամ: Ղաշո̈ւնգը խռովկան կընի: Լո̈ւսննգյան խռավում ա, քյընում երգինքը: Փուշմանում ա: Փուշմանում ա, էլ կարում չի ետ տեռնա: Խռովկանը միշտ կփուշմանե:

Մինչև մհենգ էլ ո̈ւրան մորը մննան քցում չի, յրգինքան միշտ ծկըծո̈ւկի յա անում:

## 41. ՏՈՆԴ ՔԱՆԴՎԻ, ՊՐՏՔԱՏԱՐ

Մին ախքադ մարթ ա ընում, քյընում ա հրևան հրուստեն անա ցորեն պարտք անում, վեր պիրի վարե, ամեռնը հնձի, տռ-

նը պահեն: Վարում ա, ցանում, խեղճին արտը կարկուտը կյամ ա տանում: Պրոքատարն էլ կյամ ա, բզըռ անում, պարտքեն տեղակ տոնն ինք օնում, խոխեքը թողում դյուզումը: Մարթը դարդան թռչուն ա տեռնում, ամեն տեղ թռչում, ամեն տեղ խնթըրում, ղաչաղ անում, վեր մարթիք պարտք չանին: Երքն էլ քուտի յա ավարտում.

— Թա մա՞րթ ըս, խե՞ պարտք ըս: Տոնդ քանդվի, պրոքատար...

## 42. ԷՇԻՆ ԱՍՏՈՒԾ ՋՈՆԵ

Էշին հովատ չիլալ, վեր ըստծու կոշտ քյեցոլ ա, ընթունալ չի: Ճարը կտրած քյեցալ ա կծակեն կոշտը: Կածակն էլ թխալ ա հաքյին կտրալ:

## 43. ԼԾԵՆ

Սրունատես պուճուրիկ մի թռչուն, մինչև քուրը չուստ օզիլը, հալա տափերը ձյուն կոխած, տուս ա կյամ, երգ ասում՝ էս ծառեն յրա, էն ծառեն յրա:

— Լծե, լծե, լծե...

Պատմում ըն վեր մին օր Պուճուրիկը պատահում ա մին ջահիլ տղու:

— Էս պայծառ օրը խե՞ տի թախպած ըս, ա ջահիլ տղա:

— Մեծ ախպերս ինձ տանան տուս ա քցալ:

— Իսկի պեն չի տվա՞լ:

— Մին ճոխտ եզն ա տվալ, մնել չոլեն տոնը: Գյուղում չըմ, թա հունց անիմ: Վեչ սերմ ա տվալ, վեչ էլ վար-ցան ընելի վախտն ըմ գյուղում:

— Դարդ մե անել: Ես քու սրմացուղ կպիրիմ, իմ կտուցավս մին-մին կանիմ, չոլեն տանը ծեղեն տակեն թուփ կանիմ, վեր կյոնանե վրելի վախտը կկյա, ես կկյամ քեզ կասիմ:

Փեդրվարի վերջին, վեր կյրունքվարեն վախտը կյամ ա, Պուճուրիկը եր ա ընում ծառը ծեն տամ. — Լծե, լծե, լծե...

Տղան լծում ա, քյընում վար:

## 44. ԾԵՏ ՓՈՆԱԾԵՆ ՑԱՎԸ

Մին ամլիգ խոխա մին ծետ ա փոնում: Սաղանան տուս ա կյամ առաշը, ասում.

— Վեր պեց թողիս՝ քու մար ա մոնըլական, վեր պանիս՝ քու հար ա մոնըլական:

Խոխան լաց ա ընում, մնամ ա էրկու ցավեն ղաթումը, գիդում չի թա հինչ անե: Մնամ ա՝ ծետ փոնածեն ցավեն եկած:

## 45. ՄԱՐԸ

Մին կնեգ պողնոտում ա. — Իմ իրեսս քու վեննանդ տակը, աստուծ, ինձ էրկու խոխա բախշի, էրկու ծեծ օնիմ, օպին մծանան:

Աստուծ ասից. — Կտամ էն պտյմանավ, վեր խոխեքը էս աշխարքը կյան, տու էն աշխարքը քյընիս:

Կնեգն ասից. — Հինչ կընի: Համա, աստուծ, խոցս թողիս ոչ ծծըխոտված:

Մարը մեռնում ա: Տոնում ըն վեղեն թափշուր անում: Ժամտնակավ մորը ծծերան էրկու տոնգ ա տուս կյամ. մինը՝ թութեն, մինն էլ՝ թուզին: Մորը կաթնը թութ ու թուզ ա տեռնում, խոխեքը ուտում ըն մծանում:

## 46. ԱՎԴՈՒՌ

Մոռագետը ծառեխի հոծ անտառից դուրս է գալիս Ավդուռի դաշտակը, որ անվանվում է նաև Մուղակ: Սա Մուղան ընդարձակ դաշտավայրի հարյուրավոր մուղակներից մեկն է, որով դաշտը կապվում է անտառային Ղարաբաղին: Հնում բոլոր մուղակներով գետակներ էր հորդում, շենացնում նրանց ափերին կառուցված գյուղերը: Բոլոր մուղակները անուններ ունեին: Այս մուղակը կոչվում էր ԱՎԴՈՒՌ, որ նաև նույնանուն գետակի երկու ափերին սփռված մեծաշեն գյուղի անունն էր: Ասում են, այս գետակի ափերին, արևշատ ու հովասուն լայնասփյուռ դաշտակում էին լողանում անտառային ու դաշտային խայտաբղետ ու բյուրանուն թռչունները: Նրանց մեջ էր նաև այն ոսկեփետուր

բուշոնը, որի բմբուլները վերևեր էին բուժում, բացում փակված աչքերը:

Թռչնավայրը հուշեց իր անունը՝ ՀԱՎԴՈՒՌՆ:

## 47. ԱՆԹԱՌԱՄԵՆ ՁՐՈՒՑԸ

Ծաղկանց աշխարհ էլ ա չար: Անթառամեն բիզ-բիզ ըրեն, ճանդին տեղ չտվեն, ըսեցեն՝ վետդ փիս ա, տոնգդ էլ չառ ա: Քու ղարղադ մարթիկ կյամ ըն մեզ կոխ տամ: Կյենգատ ըրեն. կծուզեն ար, կածուկն ար, կաթնուկն ար...

Խեղճ անթառամը մին օր ճանդան տուս եկու, ասից՝ ա՛ բախտ, տու ուղուրմավ ընիս, իմ փայ աստուծ ըս տու ըս:

Մին անթառամ հեցավ եր եյավ Կամբուր ճարեն կտորը, ընդեղ վեռը վեր թողից, աժրհամբուր ապրուստ ըրավ. — Շոն տեսնամ, կյուլ տեսնամ, միճակ թա ծղզներեն մայան տեսնամ ոչ: Մնըցածեն ճամեն տարավ ցրև տվավ, համա կարից ոչ վեչ վետը կտրցնե, վեչ ռանգը փոխե: Էլհա անթառամը մնաց անթառամ: Պա բաս:

## 48. ՀԼԵՎՈՒՐԸ

— Քու հա՛ր տեղի անտեղի տանը գործերեն խառնվում ա, ինձ էլ խանգարում: Յա տանան տա՛ս ճգի, յա տար ճգի շիրտատոնը ինձ կզնվցնե ոչ,— բողոքում է կինը ամուսնուն:

Տղան ստիպված հորը տանում է կողքի շիրատտոնը և խիստ զգուշացնում, որ չխառնվի տան գործերին:

Օրը գալիս է մթնում, բայց դեռ էշը հանդից տուն չի եկել: Իսկ մարդ ու կին ամեն ինչ մոռացած ուրախոսում-ծիծաղում են: Ի՞նչ անի. տան գործերին խառնվել չի կարելի: Ծերը կտրած ալևորը սկսում է էշի պես զռալ: Տղան լսում, հասկանում է հոր զռռոցի իմաստը.

— Ախճի, էշը հանդան եկա՞լ ա:

— Չէ, եկալ չի:

— Դե ճյնի շոռ եկ ճթիր:

## 49. ՁԿԵՌ

Մարդ, կենդանի և թռչուն նաշտկում են անտառի բոլոր պըտուղները: Մնում է զկեռը ծառին: Տխրում, լաց է լինում: Ցուրտ է, քամի է փչում, բայց պտուղները դեռ իր շուլտկին են, նըստած են ծանր-ծանր, շուտով ձյունն էլ վրան կնստի և նյուղտկոտոր կլինի: Ի՞նչ անի: Անտառից պոկվում է մի կերպ, դուրս գալիս մացառուտ, որ տեսանենլի լինի մարդկանց ու կենդանիներին և որքան ուժ ունի կանչում է.

— Եկ ինձ կեր, ինձ կեր, ինձ կեր...

Այնքան է կանչում, որ նվաղում է ու նրա բերանում «ինձ»-ը դառնում է մի թշվառ զ.

— Զկեր, զկեր, զկեր, զկեր...

Անունը մնում է զկեռ:

## 50. ԱՐԵՎՔՈՒՐԻԿ

Մին պիծի ախճիգ նվնդանում ա, տուս կյամ ծերքավ անում.

— Արև, արև, նիվանդ րմ, եկ ինձ նետ խաղ րրա:

Արևն ասում ա. — Պիծի ախճիգ, ես շատ կործ ունիմ, կտրում չըմ կյամ, իմ պիծի ֆվեր ղարկում րմ, ննետը խաղ րրտ, լվընտկան րս:

Արևը մին ծաղեգ ա ղարկում՝ տեղեն, տղնածտմ:

Ախճիգը էլ թողում չի ֆյընի, ննետը խաղ ա անում, լվանում: Ծաղեգն էլ ուրանց նանդին փսնում ա, ախճիգն ու ծաղեգը ամեն օր ուրուր ննետ խաղ րն տնում, ուրուր սիրում:

Ծաղկեն անումը մնամ տ Արևքուրիկ:

## 51. ՊԻԾԻ ԱՄԵՌՆԸ

Մին եթիմ ախպեր ու քուր րն ըննմ: Ախպերը ֆյընում տ Մեծ Ննատակը*, շոքում, ղոշտնք տնում. — Ա Մեծ Ննատտոկ, լնվ վարալ րմ, լնվ ցանալ րմ, փստլ ա, նսկըկալոլ, տղնըծտմոլ:

---

* Արցախյան բանահյուսության մեջ Մեծ Նռատակը կամ Մեծ Մաման Անանիտ աստվածուհին է, իսկ Պիծի Նռատակը կամ Պիծի Մաման՝ Աստըղիկ աստվածուհին:

Վեր բդի հնձիմ, թոռը նի յա կա̈լա̈լ: Արև տռ հնձիմ, կալ անիմ, տանիմ տոն:

Մեծ Նհատակն ասում ա. — Աստված ընողանց պարտական ա: Ես քեզ մին մեծ ամեռն ըմ տամ, վեր ռուզիդ հնձիս, թա- կիս, տանիս տոն:

Ախպեր ու քուր հոնձն անում ըն, կալը թակում, տները ցոր- նավ լցնում: Վեր պրծընում ըն, թոռը նի ա օնում: Ախպերն ա- սում ա. —Պա խաղուն հունց կանինք: Ես հմանչում ըմ մնել Մեծ Նհըտակեն իրեսը տուս կյամ, քույրիկ, մհենգ էլ տուն քյընի:

Քույրիկը վննըպեպեգ քյընում ա Մեծ Նհատակը, չոքում ղա- չանք անում, վեր ամեռնը ըրկնցընե, արև ղարկե, խաղուղը քա- ղին:

Մեծ Նհատակն ասում ա. — Եր կաց, քյընի ղաչանքդ Պիծի Նհըտակեն ըրտ:

Ախնիգը օշը հլորում ա բդի Պիծի Նհատակը:

— Մեծ Մաման արև ա տվալ, խորքնը թակալ ընք պերալ տոն, թոռը նի յա կալալ, խաղուն մնացալ ա բաղումը: Պիծի Մամա, ես խաղու շատ ըմ սիրում, մին պիծի ամեռն էլ տու տռ, խաղուն քաղինք, պիրինք տոն քցինք:

Պիծի Նհատակը ըխնկանը խոսկը կոտրում չի, մին պիծի ա- մեռն ա տամ*:

## 52. ԾԾՄԱՐԱ ՔԱՐ

Ուխտատեղի, որ գտնվում էր հին Ավդուռի (այժմ՝ Ավդալ) անտառամերձ շրջակայքում, մի քարաշատ բլրի վրա: Չբեր կա- նայք այստեղ էին դիմավորում արևագալը՝ ոտաբոբիկ, չոքած զավակ աղերսում:

Չպեր հարթնը վննըտեպեգ, մին ծաղկած շլորու նեղնը ծեր- քեն, մնել մին կոլա նուր տանում ա Ծծմարա քարը: Իմ տատ ասար. կօզի անումը քար ա, քար չի ըլտլ, քարտ շինած մին ծծըպլիթ կնեգ ա ըլալ, խոխան էլ խտտեն:

Քյընողը շլորուն նեղնը տրալ ա ծծմարեն տոշին, կուպեն նու- րը ածալ ջանեն, հանց ըրալ, վեր շլորուն նեղնն էլ թրջի: Էրկու հափուռը ծծերեն տակավն ա կալա̈լ, մինչև կոթտլ ա հափուռը

* Արցախում հոկտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 25-ը ընկած ժա- մանակը կոչվում է «պիծի ամեռնը», որին ասվում է նաև՝ «քախշած ա- մեռնը»:

լցալ, էր ա կալալ պատառ խմալ, պատառ էլ պեց ըրալ, տո̈շավը տվալ, էրգ ըսելավ քեցալ տոն*:

Մինչև ռուգյու հաց չի կերալ: Պատառ ածեգ ա կերալ, մնել մեղրավ քաշած ճղպուրամաչ: Վեր մթնալ ա մարթին ճհետ քոն ա ըլա́լ:

## 53. ՇԼԼՈՒՎԵՆ ՏԻՋԵՐԸ

Էն ա Շլլուվա կոխկեն, Խրամորթա ճղցներեն թուշավը մին քելուկ մեծ ու պիծի թումբեր կան: Ասում ըն Շարան Շլլուվա (Խրամորթա) փեսա յա ըլա́լ: Մհետե ղոնաղ ա եկալ հանորը տոնը, օխտը ղզղան կուրկուտ կերալ, քյեցալ Շլլուվեն քմակեն, ըրըսկման տեղ, օխտը տեղ տիզ տրալ: Վեր արևը տուս ա եկալ, ո̈ւրան ըրածան հմանչալ ա, կոռացալ, կոչ եկալ, տեռալ Կրկառեն ղրաղեն Շլլուվեն Պառակը:

## 54. ՋՋՄՕՋԱԽ

Վանք Լաչինի շրջանի Մինքյանդ (հնում՝ Ագարակու գետ կամ Ագարակաշեն գյուղ) գյուղի մոտ, բարձր սարի վրա: Նրա մոտով հոսում է Զաբուխ (Սարբուխ) գետակը և խառնվում Հագարլու (Աղավնո, Հագարակու, Հագարու) գետին: Վանքը եղել է չբեր կանանց աղոթատեղի: Այստեղ կինը պարտավոր էր խոստովանել իր չբերության մանրամասները: Այդ են վկայում նաև ժողովրդական լեզվում դեռևս կենսունակ «Քյըռնի Ջջմօջախ, թաքուն դարդերդ քար ըրա», «Քյըռնի Ջջմօջախ դարդա մզվի» արտահայտությունները:

## 55. «ԸՐԱՆՍԱ ՀԱՐԹՆԸ» (ԿԱՊԱՐ)

Տափաստանային եզակի բույսերից է, օգտաշատ կիրառություն ունենալու պատճառով՝ սիրված Ղարաբաղի հայերի կողմից: Օգտագործվում է որպես կեր (հիմա էլ թթու են դնում մատղաշ ցողունները, դեռևս չբացված ծաղկեկոկոնները ու սերմապարկերը), որպես վառելիք, որպես մարգագետնային (բան-

---

* Ասացողը երգը չի հիշում:

չարանոցային) միջնացանկեր ստեղծելու միակ միջոց, տափաստանում որպես դեղաբույս՝ ոսկրակրճիկային, սրտային (ծաղիկները) հիվանդությունների, ստամոքսաաղիքային խոցերի բուժման համար:

Ծաղկած ժամանակ հիանալի գեղեցկության գետնատարած, բայց կոտ ու ամբողջական թփաբույս է, կարծես մարդու ձեռքով փնջված, կապի առնված («փնջած կապար»): Անվանում են նաև «Ըռանեն հարթնը» («Զոլեն հարթնը»):

Մատղաշ շիվերը թթու դնելուց առաջ 7—10 օր պահում են արևի տակ, 2—3 անգամ ջրափոխելով՝ դառնությունը ջրին փոխանցվելու համար:

## 56. ՇՈՒՆԴՈՒՆՑ ՔԱՇԿԸ

Ըրըվքարա քրըհանքերը Շո̈ւնդունցն ա ըլա̈լ: Թաքավերն էլ ո̈ւրան պալատը Շո̈ւնդունց քարավն ա ըլալ շնիյիս: Շենին համ երե անգյունն ա ըլալ ո̈ւրանցը, համ ներքե տնգյունը: Շենին զհմնենեն Շո̈ւնդունք ըն ըլա̈լ պհեիս:

Մեր մծերեն անա սկացած զրուց կա, ասում ա. «Քաշկը Շո̈ւնդունց անա ամա̈լ եկած ա: Շինդին մեծ ախպերն ա ըլալ, քաշկը՝ պիծին: Շինդին շինալ ա, քաշկը քանդալ ա: Մհետե Շինդին կզնըվալ ա քաշկեն թխալ, քաշկը նի յա մտալ Շո̈ւնդուն փորը: Շո̈ւնդունք ասում ըն՝ մեր փորումը սաղանա չկա, աո̈ւս ա եկալ, ժողովուրթն էլ ասում ա՝ տուս չի եկալ: Ամա հանց տ տուս եկած չընի»:

## 57. ԽՍԱՅԻ ՏԱՆՁ

Այս տանձը դրախտից երկիր է բերել Խսայի մարգարեն ու նվիրել մարդկանց՝ երկրայիններին: Ադամի հետնորդները տանձը կոչել են պարգևողի անունով՝ Խսայի տանձ:

Ղարաբաղի մի շարք վայրերում ինչպես պտուղը, այնպես էլ տունկը կոչվում է մալանչենի՝ բամբակի (մալանչի) պես ճերմակ ու փափուկ պտղամիս ունենալու պատճառով:

Համարվում է ամենից լավ տանձը իր համով ու բուրավետությամբ:

## 58. ԽՈՍՐՈՎԵՆԻ ԽՆՁՈՐ

4-րդ դարի առաջին կեսի հայոց թագավոր Խոսրով Կոտակի անունից: Ըստ ավանդության թագավորի հրամանով անտառներ ու պարտեզներ են գցվել, պատվաստվել են վայրի պտղատու ծառերը:

Դվին քաղաքի հիմնադիրը նաև հիմնադրել է զանգվածային այգեստաններ այնտեղ, ուր դարավոր անապատ է եղել: Ծառեղներ (ծառուտներ) ու այգիներ են տնկվել Հայաստանի տարբեր մասերում, նաև Միլ ու Մուղան դաշտավայրերի հանհնուտներում ու քարաստաններում, ապառաժների վրա, Քուռ-Արաքսի մոռուտներում: Երկարաձիգ ջրանցքներով ջուրը հասցվել է խամ ու խոպան հողերը, ոռոգվել ծառաստանները: Պտղատու նոր ծառատեսակներից շատերը բնականաբար կոչվել են բնասեր թագավորի անունով՝ խոսրովենի (թագավորական) խնձոր, տանձ, թութ, սալոր, ծիրան, խաղող, նուռ և այլն:

Շատերն են հիշում, որ հնում «Խոսրովա ծոեխ» կամ «Խոսրովա ծմակ» էր կոչվում Աղջաբեդի, Բահրամ թափա, Սանաթլու, Եվլախ, Լաքի, Ուջար, Քյուրդամիր և ուրիշ մեծաթիվ բնակավայրեր շրջապատող տարածությունները: Պզղալեցի Գիրիշ Առստամյանը, Լևոն Տեր-Գրիգորյանը, աշանեցի Աթանես Ավագյանը հավաստում են, որ հնում յուրաքանչյուր գյուղական (և քաղաքային) ծխի համար պարտադիր է եղել պտղատու և խաղողի այգիներ, վարդաստաններ, անտառներ ունենալը, հեռավոր վայրերից ջրատարներով (թունգի) ջուր բերելը, և նրանց մի մասի ջրարքի դարձնելը, 30—40 մեղվաընտանիք պահելը և այլն:

Այս ամենը նրանք լսել են իրենց նախնիներից:

## 59. ՄԵՂՐԱՃԱՆՃԸ

Ասում ըն բշխարքումս ուրուր նման պեն չկա: Էն ա կա: Մղրանանճն ու հայը մին տապակ ըն: Ուրուր նման: Էրկուսն էլ մեղր ըն շինում, իսկի նեստա մաննը չըն լուզում: Համա մին պենավ նոկվում ըն: Հայը ուրան մախաթը կուրցրալ ա: Ճանճը հալա պահում ա: Մեղր շինողը կծելը գիդալ չի՞:

## 60. ՇԱՏԸ՝ ՇՏԱՏԵՐՆԸ

Էն ա մին ղուշ կա, ամեն կյուրունքու տաղերգ ա ասում. «Շա-տը՝ շտատեռնը, շատը՝ շտատեռնը, ըղքադեն հարն օտե էշին հաքյին»:

## 61. ԳՅՈՒԼՈՒՄ ՂԱՐՂՈՒ ՏՆԳՈՂ

Հրիշտրակը քյնում ա տեսնում մին բելուկ խոխեք լղընախս, մինն էլ քոռ՝ հովտեն ղրաղեն նստած:

— Տեր, խնթրում ըմ մին հովուր իրավունքդ ինձ տաս:

— Տվե:

Հրիշտրակը քոռ խուխեն աշկերը լավացնում ա:

Խուխեն աշկերը պենվալն ըբաթ, մին ղարղու ա պուկ տամ, պառկը բզում, տանում նրումը անգում, հանցու լղանող խոցը մշկրնեն ծակե:

— Գափրիել, տեսե՞ր, աստուծ սարեն եշում ա, ծյունը տը-նում:

— Մեղա քեզ, տեր:

## 62. ՀՈՒՐ ԾՈՒՑ ՆԻ ՄՆՆԻՄ

Մե հետ Մեծ իշխանն ու öւրան կնեգը Հովդեն քշտավը քյը-նիյիս, մին ղուշ վլելին ըռաշան փախնում ա, կյամ նի մննում իշխանենն կնգանը ծուցը:

Կնեգն ասում ա. «է, ա ղաշäնգ ղուշ, վելելը յրա պրծավ, տöւ նի մտեր իմ ծուցս, ինձ ղուզղունն ա յրա պրծալ, պա ես հöւր ծուց նի մննիմ»:

## 63. ՀՈՒՆԻՆ

Հöւնին նելլի ծաղկում ա, արչն էլ կյամ ա տակեն նստում: Գյուդում ա, թա վեր նելլի յա ծաղկալ, նելլի էլ բար ա ալական: Մարթը տեսնում ա, խեղնն ա կյամ, արչին ծեռքան փռնում ա, տանում գյուլլասուն տակեն նստըցնում: Գիլասն էլ թäզա

նսած ա ընո̈ւմ, արշը յրան ա պրծնում օտում, խարտք տեռնում:
Հո̈ւնն ընդղան տսում ա.
— Էլնտ կյալ բդիս իմ կոշտս, ֆու դա̈րմանդ ես ըմ:

## 64. ԸԼԲՍՏՐԸԿԱԽՈՏ

Փափուկ, փափուկ, տմացկտն սարու խռա, վեր ըլբտստրակը տրեխ ա անում, կյենում: Հտմ էվույ տ շո̈ւնո̈ւմ ո̈ւրտն տռնը սըր–փում, թնջուկավն էլ աչկերը սղտլում ա: Ըլբաստրակը միշտ էն ա ընո̈ւմ էդ խոտեն մաշին նստած:

## 65. ԴԱԴԻ

Ասում ըն Դադին Հային ամենտտըրնտշ տխպերն ա ըլտլ, վեչ դա̈րդ ա ըլալ, վեչ դեյդ: Արսըզ ա ըլտլ, պտր ա եկտլ, երֆ տ–սալ, սաղ օրն էլ էն տ ըլտլ ֆեփու մտչի: Վեր նտցն ու կյինին պկասալ տ, ախպորցը թողտլ տ, ֆյեցալ ո̈ւրո̈ւշու տռնը: Մինչև մնենզ էլ էն ա ո̈ւրո̈ւշու տռտն, ո̈ւրո̈ւշու ծերֆու յշիյիս: Ըմանում չի թա կյա: Տա նետոե էլ խտղ, երֆ ըսեխս նոյերը միշտ Դտղուն ըն տամ, թա. — Հեյ Դադի՛, նիշտե՞ղ ըս, նե՛յ Դադի...

# ԱՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՄԵԶ ՀԱՍԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 66. ԱՆԱՀԻՏ

Հացվա կլերան տեն, Ըրվալուք սարան մոտե մին վանք ա ըլա̈լ, անումը Անահիտ: Վանքը էն ա ըլա̈լ Ըրբանուն տափումը: Կոխկե հղըցեն էլ ըսեիս ըն ըլա̈լ Ըրբանուն հղե: Հացվա Անահիտին ըխպրան կնանեքը կուժավ ճուր ըն ըլա̈լ տնեիս, վանքեն քարերը լվընայիս, հանցու թոռ կյա: Արաշտ սարեն վեր վանքեն քարերը լղըցրալ ըն, թոռ ա եկալ:

## 67. ԹԱՔԱՎՈՐԵՆ ՊԱԼԱՏԸ

Տումի գյուղի հարավային կողմում կա «Տանմոտա» կոչվող մի բլուր, ուր եղել է թաքավորական պալատ: Բլրամոտ աղբյուրն էլ անվանվում է «Թաքավորեն ախպյուր»: Կան շենքերի փլատակներ, խեղված գերեզմանաքարեր:

## 68. ՂԱԼՔԱՐ

Տումու շրջակա սարերից մեկը կոչվում է Ղալքար (Բերդաքար): Ասում են այդ սարից ստորերկրյա ճանապարհ էր իջնում Տումի: Տումուց մինչև սարի գագաթը փողորակով (թունգի) ջուր են տարել, ինչպե՞ս, հայտնի չէ:

Ստորերկրյա թաքստոցը դարեր շարունակ հին ամրոցի բնակիչներին պաշտպանել է թշնամիներից:

## 69. ՔԵՖԱՁՈՐ
### (Տումի գյուղի մերձակայքում)

Մի գեղահրաշ հովիտ է, որ գտնվում է Իքակ գետակի ափին, Կոափ քարաբլրի հայացքի առաջ։ Այնտեղ կա հանքային բուժիչ աղբյուր։ Ինչպես անունն է հուշում, հովիտը բնակիչների ուրախության վայրն էր, հիվանդների հույսն ու ապավենը։



Եկեղեցու դռան ճակատանախշ (17-րդ դ.)

## 70. ԻՐԵՔ ԾԱՌ (ԿՈՒՅՐԱԽՊՅՈՒՐ)

Դրանք երեք հսկա ճյուղատարած ընկուզենիներ են, որ երկինք են միտել խաչմաչ գյուղի դիմաց։ Ծառերն աճել ու զորացել են Վերին աղբյուրի ջրերով։ Հիմա աղբյուրը չկա, մնացել է անունը՝ Կույրախպյուր։

Պատմում են, որ գյուղ կար աղբյուրի կողքին, որտեղ մի սիրուն աղջիկ էր ապրում։ Մի անգամ աղջիկը կուժն առած ջրի է գնում, իսկ տղան սպասում դարձին։ Ջուր-վիշապը կլանում է շապող աղջկան։ Սիրատոչոր տղան փնտրում է և միայն դիակն է գտնում խայտացող ջրերի վրա։

«Չորանաս, աղբյուր, կուրանաս, աղբյուր»,— մղկտացել է երիտասարդը։

Տղայի անեծքից չորացել-կուրացել է աղբյուրը:
Ցամաքած աղբյուրից երեք ծառ է զորացել:

## 71. ՔՈՒՉԱԿԱՎ ԼՑՎԱԾ

Ղզղալա գյուղում մի թթայգի կա՝ Քուչակի բաղ, մի ակնաղբյուր կա՝ Քուչակի աղբյուր, մի մառու է եղել Քուչակ անունով:
Ասում են աղբյուրի մոտ մի սիրուն խաչքար կա թաղված, որ մի ժամանակ կանգուն է եղել մառուտի առաջ:

## 72. ՓԼԵԿ
(Ղզղալա գյուղի մերձակայքում)

Օխտը եխծե յա ըլալ, Մեծ շաչավը լոխ փոլ ա եկալ, ընգալ վեղեն տակը: Մնացալ ա մինակ մինը՝ Սիկունց եխծեն, էն էլ դուշմաններն ըն քանդալ:

## 73. ՎԵՐ ԵԿԱԾ (ՔՂՔԱՏԵՂ)
(Աշան գյուղի մերձակայքում)

Առաչվա Աշանը Սորփըրնուցա հովղումնա ըլըլ, մհենգի Ղուզարտերեն տեղը: Ընդղավ քյեցած Քարահարթավը, Շլորոտավը, Վսկըրխաչավը, մինչև Ցեց քարը մեծ քաղաք ա ըլալ: Մեծ շաչավը տները պարան ա եկալ, ժղովուրթը քոչալ ա ըստեղ-ընդեղ, մին փարան էլ խութին ըռաչին չեն ըն չինալ: Վեր շաչն ըլալ ա, չենին կյետն էլ տափեն տակեն ա մնացալ:

## 74. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, ՊԻԾԻ ՆԱՀԱՏԱԿ*

Էրկու քուր ըն ընում. մեծը Մեծ Նահատակն ա շինում, պի-

* Ըստ ավանդության Նահատակ կոչվող վանքերը հին Անահտական տաճարներն են (ծ Բ):

ծինը՝ Պիծի Նահատակը: Սահանք ուրանց հորը շատ ըն ընում որիյիո: Իլխան վեր կյամ ա, փիո մարթիք շատ ըն ընում, հորը չըչարում ըն: Էրկու քուրը կնճկյարմուր ըն տեռնում, յրգինքան կախ ընում: Հարը կնչկյրմուրան փռնում ա, եր ընում երգինք:

## 75. ԹՈՒԹԻՆ ԱԽՊՅՈՒՐ

Թութին մին սվըկյարի նախշուն ախճիգ ա ընում, լավ երգ ասող, լավ պար կյվող: Թուքմաննեն հիշտեղ նրան սպանում ըն, ընդըղան մին պրզանյուր ախպյուր ա տուս կյամ, անումը տնում ըն Թութուն ախպյուր:

Վելելնեն Թութուն մեյդը յոր ըն օնում, ռոֆպար ընելավ տանում Յղնախութ, էն պեցիր տեղը թաղում: Ընդղան էլա մին ախպյուր տուս կյամ: Անումը տնում ըն Թութուն ախպյուր: Հիշքան ղաշանգ ղուշեր կան Թութուն ըխպրին ակնան ըն տուս կյամ, հանցու վեր ուրան երքեն ասին, ուրան պարերը կյան, սրտենը տեղ տան:



Եկեղեցու խոյակ. Պիծի Նահատակ, Բերդաշեն (12-րդ դ.)



Եկեղեցու խոյակ. Պիծի Նահատակ, Բերդաշեն (12-րդ դ.)

## 76. ԱՂՋԱՔԵԴԻ

Էրկու հայ ախպեր ըն ըլալ Աղաշանն ու Հարտքեդը: Նահանց ընումանն էլ շենին անումը տեռալ ա Աղշաքեդի: Նտհանք դա-

մուրշեք ըն ըլալ։ Մինչև մենեգ էլ քշերը նահանց քուրան կածեր ա ընում երգինքը։

## 77. ՔԱՐԱԽՊՅՈՒՐ (ԱՂԲՈՒԼԱՂ)

Հնում կոչվել է Աղվան. Կառուցված է եղել հիմնականում տեղական սպիտակ քարից։ Այստեղով է անցել Պարտավ-Ամարաս մեծ ճանապարհը։ Վանքի սրբատաշ քարերի մի մասը օգտագործվել է Եմիշճան գյուղում տներ կառուցելիս։ Վանքի ձորում կա մշտակարկաչ աղբյուր, որի մոտ եղել է իջևանատուն։

## 78. ԴԱՅԱՄ

Ըստ ասացողներ Աթանես Ավագյանի, Մովսես Սնիկյանի, Ծուբյուր Խաչատրյանի և այլոց, Աշանի քնակիչները սերում են Գեղամա տոհմից։ Գեղամա տիրույթը Արցախի Միջնաշխարհն էր, Մեծիրանքի մի մասը (Մեծ Հարամի), իսկ նրա հովց տեղին Արցախի բարձրաճիստ լեռնաշխարհն էր։

«Մունք Դյամա ցեղան ընք բնամ եկալ։ Դայամն ու Դազին ախպերք ըն ըլծլ, Դայամը՝ մեծը, Դազին՝ պիծինը։ Մեծ դերն ասար՝ առաջ շնթկնեն լոխ ըրկը-երկու վրն ըլալ՝ Զոլու Աշան, Սարու Աշան, Արանու Ավդուտ, Սարու Ավդուտ, Ներքե շեն, Երե շեն, Դուզե ճարտար, Գյունե ճարտար. Համին շենին ժողովուրթը ամռնը սարեն շենումը կենար, ծմեռնը՝ չոլումը՝ Ըրասխեն յա Քյատեն դրաղեն։ Համա թամամ քոշին ուչ, ամեն տանա մարթ մնար, տարվա ամեն վախտ շնըթկներումը մարթ ընար։ Առոե վանքերն էլ ա ըլալ տի։ Շենը չոլումն ընար, վանքը՝ սարումը։ Վանքը միշտ պեյիր տեղ ընար, ճամ էլ շենան հեռե։ Հանե Ըմարաս քաղաքը, էնա ըլալ Ըյըքայի, ամա վանքը քանե վերստ տեր ա ըլալ»։

## 79. ՄՌԱՎԱ ԿԼԽԵՆ

Վաչական թաքավերը վեր մեռալ ա, տարալ ըն Մռավա սարեն կլխեն թաղալ։

Ամեն տարե ն-ան խոխեքը պցրընայիս ըն ըլալ Մռավը,



Սափոր վիշապանախշով Բեր-դաշեն



Վիշապ Աշան

կյրզմանան էրկու հափուռ վեղ քամուն տայիս: Ասըմ ըն, հöրը մինչև մեռնելը տի յա ըլալ թափշուր ըրած:

## 80. ԲԼԱԿԵՆ ԾՈՐԸ

Ծորեն ղրաղեն, Նըրտակա վանքեն հղեցը յրան մին կնճկյարմուր եխծե յա ըլալ, աուսի պտերեն ըստծու պատկերը քաշած, մաշկուսի պատերն էլ վսկըճրած, ըրծթճրած: Ըշկըհանիչ ա ըլալ: Եխծեն վեր քանդալ ըն, ծöրեն անումը մնացալ ա Բլակեն ծորը:

## 81. ՈՒՎՏԱՐԱՆ

Ուվտարանը սորփին կյրին խաթրու վըն շինալ: Սավեգը սորփ մարթ ա ըլալ, սորփին կյիրն էլ Կրիքոր Լöւսըվերեչը öւրան ա տվալ: Շնըրթունը շինալ ա, կյիրը տրալ մաշին: Ժողվուրթը նի յա մաալ ղոթալ, պենն էլ օնգատն ա ընգալ:

## 82. ԱՆԱՀՏԱԿ

Հացի գյուղը եղել է Աղվանից աշխարհի կաթողիկոսի ամառանոցներից մեկը: Հացու գերեզմանոցում են թաղված Աղվանից կաթողիկոսները: Հացու մեծատարածք անտառները որպես որսատեղի են ծառայել նաև Պարտավի թագավորների համար: Գյուղից ներքև, ձորաբերանին, կա մի աղբյուր, նրա դիմացի բլրին եղել է վանք, որից մի խաչքար գլորվել–ընկել է աղբյուրի մոտ: Վանքը, աղբյուրը, ձորը, անտառը Անահիտի անունն են կրում: Ըստ մի ավանդության, Անահիտը այն նախրապանի աղջիկն է, որին Վաչագան թագավորը Պարտավ հարս է տարել:

## 83. ՔԱՐԵ ԴԱԳԱՂՆԵՐ

Գիշում գտնվել են տասնյակ փոքր ու մեծ քարե դագաղներ, որոնց մի մասը հիմա գտնվում է գյուղի խոզաբուծական ֆերմայում, մյուս մասն էլ մասնավոր տներում:

## 84. ԱՄԱՐԱՍ–ՔԱՂԱՔ

Մեծ, հարուստ քաղաք ա ըլալ, տարեն պուպուր ամեռնը մաշին խաղ ընեիս: Տա հետե էլ Ամարաս ըն ասալ: Ամարասա ըխնըկերքը սերուն ըն ըլալ, անումը մինչև Կարս քյեցած: Լոխ փըրթալ ըն, կյուղացալ ըն ասրալ: Հին խոսկ ա. «Ամարասա տոխը տարեն էրկու հետ նոտեր կանե»:

Ամա Ուշաղա ըխնըկերքը Ամարասա ըխնըրկուրանցան նախշուն ըն ըլալ: Տա հետե ասալըն. «Հիշտեղ քյընիս օշաղը սերուն»:

Իմ սկեսուր պատմար, մարը Ըմըրասա յա ըլալ:

## 85. ԱՄԱՐԱՍ–ՎԱՆՔ

Ըստծու օծը վանքեն տված ա: Հու վեր խնթիրք ա անում, կնգանը փորումը ախճիզը տղա յա շըւնում, տղան՝ ախճիզ: Հայերն ըն հնարալ, հանցու թորքերը վանքը քանդին ուշ: Տի էլ տեռալ ա:

## 86. ՀԵՐՇԵՆ

Մինչև աշանցիների վերաբնակվելը այստեղ փոքրիկ գյուղ կար:

«Վեր ըշընեցեք Ղուզարտերան քոշալ ըն, շնըտեղու շատ շոռ ըն եկալ, եկավ ըստղես հավան կացալ: Վեր շենը շո̈ւնում ըն, շենին մաշտեղան Դաստա ապոռն ու ո̈ւրան ազկեն վեղ ըն տամ: Թո̈զա շենումը եխծե շնիլի պադեվն էլ ըն տամ Դստանց ազգեն: Շենին աջի ընգյունին Ղազունք ըն տոն շո̈ւնում, ծեխե ընգյունին՝ Ղայամանք, ներքե ընգյունին՝ Պռավանք ու Շո̈ւնդունք:

## 87. ԱՇԱՆ

Հին ու նշանավոր բնակավայրերից է: Գյուղը երեք անգամ բնափոխ է եղել, չլքելով իր բնաշխարհը: Ունեցել է Վսկախաչ, Պղնձիխաչ, սուրբ Ստեփաննոս, Խութին սուրփ, Ավետառան, Աստվածածին, Ղուզարտերեն եխծե սրբավայրերը, Ըշանաբերդ, Մահասըռ, Մոթ, Ցղնախութ, Սղնախ, Հաշու բերդերը, շուրջ քառասուն հազար հեկտար հողատարածություն (անտառներ, արոտավայրեր, վարելահողեր), արհեստանոցներ, հալոցներ, սրանուցներ, ջրաղացներ, գեղեցիկ լեռներ ու բլրաշարեր, բնական աղբյուրներ: Աշանի ձորը Եղնախութ սարից ձգվում էր մինչև Երգայի նահանգը: Նրա հողատարածությունները Մուշկապատի սարափեշերից հասնում էին մինչև Աղդամի մատույցները (այդ մասին կոնկրետ վկայություններ կան մեզ հասած չափածո ստեղծագործությունների մեջ):

Բնիկ ազգերն են. Ղյամանց, Ղազունց, Պռավանց, Դստա̈նց, Շո̈ւնդունց և այլն:

## 88. ՍԼՈՒԿՆԱԾԱՎ

(Թաղավարդի անտառամերձ մի վայր, ճահճուտ)

Այստեղ բժշկվելու էին գալիս քոռոտները, քոս ու քոր ունեցողները: Ճահճուտը առատ է տզրուկներով: Մարմնի հիվանդ մասը մերկացնելով՝ հիվանդը ընկղմում է ջրի մեջ: Անմիջապես

ազռուկները վրա են թափվում և ծծում կեղտոտ արյունը: Հիվանդը կազդուրվում է:

## 89. ԱՎԵՐԱԿ ՊՈՐԹ

Գտնվում է Մեծառանքի (Մեծ Հարամի) կենտրոնական մասում: Բերդից հեռու չեն եռամասունքը՝ արհեստական երեք բլուրները: Մեծ իշխանը կենդանացրել է հին բնակավայրը: Հայերը Արաքսի ջուրը բերել, հասցրել են այստեղ: Այստեղ միախառնվել են երեք գետերի՝ Արաքսի, Քռի, Կարկառի ջրերը: Նրանց գրկախառնումից ծաղկել է Մեծառանքը:

«Մեծ իխշանը քաղաքումը քառասուն եխծե յա ըլա̈լ շինած: Տհանցա մնին անումը Չլըպեղեգ եխծե յա ըլա̈լ: Ընկացալ ըմ, թա սաղ պատերը նախշած ա ըլա̈լ: Ամեն տեղա եխծուն հետե՛ նախշած քար ըն տարալ: Ղզըլան էլ ըն տարալ»:

## 90. ՀՈՎԴԵՆ ՏԱԿԸ

Էրկտն քարեն տափումը, Հովդեն տակեն Մեծ իշխանը էրկան քարեն ըրկընքունավը պալատ ա ըլա̈լ շինած: Վեր մուսուլմաննեն կյամ ըն Քարեն հարթը կրակ տամ, իշխանը կնգանը, խոցը ննետ Դաշթփա փախնում ա, կյամ էրկան քարեն պալատը:

Ետնան էն էլ ա öրան աեռնում:



Խաչքար (10-րդ դ.)

## 91. ՇԵԳՅԱՆՑ ԱԶԳ

Բազմաթիվ ասացողներ, վկայակոչելով հինավուրց զրույցները, հավաստում են, որ հայերը ըստ իրենց մաշկի գույնի բաժանվում էին Շեկյաններին և Սևորդիներին: Սևորդիներն ապրում

էին դաշտային արևախանձ շըր-ջաններում, հիմնականում Միլ ու Մուղան դաշտավայրերում, կասպիական ավազուտներում:



Գոնչա իշխանուհու կնիք-մատա-նին (13-րդ դ.)

Ծեկյանների բնակատեղին, Վարդաշեն—Նուխի—Զաքաթալա տարածքն էր Ծաքի/Ծեկի կենտ-րոնով: Սրանք ճերմակամաշկ, շիկամորուս, խաժակն ու զանգ-րահեր հսկայացեղ մարդիկ էին: Չկարողանալով դիմադարձ կանգնել օրավուր զորացող թշնա-մուն, հնաշխարհիկ հայացեղը պանդխտում է աշխարհի տարբեր կողմեր, մասամբ էլ խառնվում Ղարաբաղի լեռնային գյուղերի բնակիչներին:

# ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 92. ԴՐՂԱՆՑ ԱՌՍՏԱՄԵՆ ՔՅԼԳՆԵՐԱՆ ՄԻՆԸ

Քյալագ կյալը սվուրուք ա ըլալ: Անտես-աննանաչ մարթին էլ ըն քյալագ եկալ, մոտե ննգերեն էլ: Քյալագ կյվողեն քեփին վեչ մինը նի չի եկալ, սիրալ ըն, ներալ ըն, ծծաղալ ըն, քյեփ ըն ըրալ: Քյալագը մեր պըրուստան անպակաս ա ըլալ:

Ես կպատմիմ Դրղանց Առստամեն քյլգներան մինը: Առստամը մեր խոցը հարն ա ըլալ: Կտրվե նա, հունցու կտրվալ ա:

Առստամը շատ քյալագչի յա ընում, քյալագը Դրղանց տըրված ա:

Դըրուգյուն ար, կյրեկի, օրը կոնալ ար ծվերեն յրա: Քաշկա ծորեն ընգյունան, խուտուր նղըցավը, շենին վեխնարը կյամ ար, անցկենում Մեծ Շնըմաշավը: Մին սև ղոշ, զինքը շղնըրելավ, ննըսըզ լխլխայիս ամակը աշուծեխ շպըրտոտելավ անց ար կենում:

— Արա, նո՞ւրն ա էս ճպամաթը:

— Սիմոնանց Աքանեսինն ա:

— Հու վեր կարե քյուն-քյալագ անե, էս վեխնարը մորթել տա, մունք էլ նեստա մին թքյա օտինք, ես նա տղամարթ կասիմ,— նորթուր կարթից Դերունց Դավութը:

— Առստամը մեռալ չի, նեյլի էտ մսան կօտիք, ամա ծըպուտնեղ եր չանիք: Հու վեր սանա եռը էս վխնարան խոսե, ադի մուկուն օտե, վխնարեն ամակը ոնրան կնզանը քմական կախ ընի, Քուշակա ախպյուրը քյրընիյիս ծեխե անգյունը Ալի խութա թխե, աշինը՝ Եխծուն խութին: Հասե, ասում ըմ, էքուծ վխնարեն կեսը խրվլական ընք, ըստի ննգերավ օտինք, էն մին կեսն էլ կյլական ա մեր տոնը՝ էյսվա նետե:

Օրը պենդ մթնում ա, մարթիք ցրև ըն կյամ, քյըրնում ամեզը

ուրանց անէրը, մին քոռ թոխպ էլ կյամ ա յրգինքին աչկէրն օ-նում, սև խավարը նստում ա շէնին յրա: Առստամէն ըշկէրէն քոն չի կյամ: Առաչին վէրցակը վէր կանչում ա, մին մէծ ղար-ղու վա յոր օնում, մաչը թմզցընում, մաչավը մէ նէտ փչում, տէսնում վէր լավ ա, կոուտակէն տնում, հայդա, բդի Սիմոնանց Աթանէսին տոնը: Տանը պատէն տակէն վէնն ա կէնում՝ տէս-նում էն ա լուսածակը կըրհար, Աթանէսն էլ պարհանէն բռաչին խոմփցնում ա: Հանդարդ ղարղուն մոտակում ա բդի Աթանէսին անգունը, քշըքաշ ու քախծր ծէնավ խոսում:

— Աթանէս, Աթանէս, վախիս ուչ, վէր զուրթնանաս, էլ աչկէրդ պէց չանիս: Ես Հիսուս-Քրիստոսն ըմ, քու պարիտ ըմ օգնում: էն ա մին սև վէխնար օնիս, էքուծ Դրղանց Առստամէն ծէր տոանը մորթել կտաս, կէսը ղարկիս ուրանց տոնը, կէսն էլ ինքը հուրու ասէ, ծէր անըհվէն նէնէտ միհտեղ խրավաժ կանիք օտիք, փառք տաք Քրիստոսէն, հանցու խոխէքդ եթիմ չմնան: Հանց ըրա անիս հա՞, թաչէ խոխէքդ եթիմ կմնան: Արա, սկա՞-ցալ ըս, թա նորն ասիմ:

Աթանէսը քաղրյար տէռած ասում ա՝ սկացալ ըմ:

Առստամը հանդարդ քաշում ա ղարղուն, անցկէնում քյընում:

Առստամէնը քյընիլանը էտը Աթանէսը սէրուն զուրթնանում ա, աչկէրը հղլըղորում, էր կէնում, չորէրը դնըդէհա կյէնում, կնգանն էլ էր կցնում, հունչու վէր ըրազի տէսալ ա պատմում: Կնեգը մումը նի յա կցընում. «Վո՞յ, իմ իրէսս քու վէննանդ տա-կը, ա Հիսուս Քրիստոս: Աղմ, մին վէխնարը հի՞նչ ա, լուսա-նալն ըրաթ, քյընի էն մարթին պէր, մորթել տո, Առստամը պա-րի մարթ ա: Լուսը ծլլա սորվա ուրթունէն յրա»:

Առստամը զլոպում ա, վէր ուրթանա քշէրավ Աթանէսը նէ-տան կյլական ա, նէլլի էր ա կէնում, ծին թամքում, տոանը կա-պում, յանի՝ օրիշ տէղ ա քյննական: էդ վարումը Աթանէսը կյամ ա: Տէն ա տամ Առստամէն, կնէգը տոս ա կյամ:

— Ախնի, տու չըս հարկավէր, Առստամն ա հարկավէր, ա-սէ մին տոս կյա:

Առստամը տնս ա կյամ:

— Պարի լուս, Աթանէս, կօզի հղըցու յրան ըհիմ, էկ մին-մին կյէվաթ արաղ խմինք, լուսն օրհնինք, էհա հունչու կտասիս, կասիս:

— Շնորհակալ ըմ, Առստամ, վէննս դըքառաչ չըմ տննական,

համ էլ հի՞նչ հղե, հի՞նչ պեն. սօր մեր անըցե յըս, հա̈չաթ-մչութդ հվաքե, քյըննական ընք մորթ անինք:

— Արա հի՞նչ ա պտահալ:

— Քշերես աստուծ թափչուր ա ըրալ, վեր տու կյաս մեր սև վեխնարը մորթիս, մատաղ անիս, հանցու խոխեքս եթիմ չմնան:

Քյընում ըն: Ռոստամը վեխնարը մորթում ա, Աթանեսը կեսը տամ ու հըրվանեն, վեր տանե Ռոստամեն տունը:

— Արա, Աթանես, քզ էտե հի՞նչ ըմ ըրալ, վեր ինձ լվոթուն ըս անում, վխնարեն հինչին ըմ սեռ:

— Սուս ըրա, հալա̈ էս մին կեսն էլ հունչու ասիս, ընդի յընք ըննական:

Իրավունքն Ռոստամենն ա: Ծեն ա տամ չենին օտող-խմող տղորանցը, ըրգյվա չնըմաչին մարթունցը, օտում ըն-խմում, ըրխոթունը տեղ տամ: Ռոստամը կյեվաթը յոր ա օնում, հունցու ըլալ ա ընդի էլ պատմում: Լոխ ծծըղտում ըն, Աթանեսն էլ նահանց ննետ:

## 93. ՀԵՆԳ ՀՆԳԵՐ

Հենգ հնգեր ըն ընում. մինը քոռ, մինը քառ, մինը տկլոր, մինը կաղլեգ, մինն էլ քաչալ: Էն ըն ընում հղե քյընիյիս: Հղենենի քոռն ասում ա.

— Հոնանցե մին ղըլթու վա ըրվամ:

Քառն ասում ա.

— Ղորթ ա, սուս ըրեք, սա̈ս ա կյամ:

Տկլորն ասում ա.

— Կյլական ըն մեզ պլոկին:

Կաղլեգն ասում ա.

— Եկեք փախնինք:

Քաչալն էլ ասում ա.

— Վեր տի խոսում ըք է, մազերս բիզ-բիզ վենն ա կենում:

## 94. ՔՈԻ ԴԱՐԴԴ ԸՍ ՔԱՇՈՒՄ

Հար ու վերթի՝ էն ըն ընում թնըխարավ ուտեիս: Վերթին ասում ա.

— Ապա, հանց բեղար, ծվեն մինը մին ծմռուկու մշանք ը-նար:

— Հա շան տղա, էլնա ոխեղ դյորղն ըս քաշում, է, հավեն վեռեն դյորդը քաշում չըս:

## 95. ԷՍ ՀՂԸՑԱՎԸ ՉԻ ԿՅԱՍ

Մին չուլըցե մարթ էն ա ընում քյընիյիս Ծիծեռնավանք: Մին շենավ անցկնայիս մին կնեգ վենն ա անում.

— Ա դարիբ մարթ, հանց ըս հեռե աեղա կյախս, հեռե տեղ էլ քյնիյիս, եկ մին սաաքան արաղ խմե, էլ հա հղեղ քյընի:

Էս կնգանը ընում ա մին ղզղան իփած լոբի, մին ղզղան ի-փած կրաղփի, օխար հաց: Մարթը նստում ա լոխ թմփըցնում, եր կենում վեննը կենում:

Կնեգն ասում ա.

— Ախպեր, ասե տեսնամ՝ հի՞շտեղ ըս քյընում:

— Քյընում ըմ Ծիծեռնավանք մատաղ անիմ, շտահս պեն-վա:

— Հանց ապրիս, ա հայ, ետ տոնայիս էս հղըցավը չի կյաս, թա չէ խոխեքս կմնան տուզնը:

## 96. ՄՈԽԱՏԱՆԸ

Մարդիրոսը, խմած լոլ աեռած, կյամ ա մոատոնը: Ստաքա-նը յոր ա օնում. — Ամենափիս օրը ըստի ընի:

— Մարդիրոս դայի, սուս րրա, մոատոն ա, Կրիքոր դային մեռալ ա:

— Կրիքոր դային մեռալ չի, մունք ընք մեռալ, նա քեցալ ա ուրան տոնը, մունք ընք եթիմ, մունք չօնինք տոն: Համ էլ, Կրի-քոռեն տղա, ես վեր բսաըղավ պնց ըմ կացալ, Կրիքորը առանց արաղ ինձ պեց չի թողալ, ասալ ա՝ եկ մին սաաքան արաղ խմե: Տու վէլ ընիս ընդի, ես էլ նեղութուն քաշիմ, կյամ արաղ խմիմ:

## 97. ՄՀԵ ՊՏԸՀԼԱԿԱՆ Ա՞

Մին ծմռնվա օր Հանեսը մթընմթեն եր ա կենում քյընում վերսի:

Հրևանն ասում ա.

— Հիշտե՞ղ ես քյընում:

— Քյընում ըմ վերսի:

— Պա խե՞ թվանգ չըս եր կա̈լա̈լ:

— Մհե պեն ա պտհլակա՞ն:

## 98. ԷՆ ՄԻՆՆ ԷԼ՝ ՄՐԹԸՎԱՐԻ

Թո̈ւնին քյընում ա տեսնում՝ մին մարթ էրկու նվարան խաղու վա ծախում: Ասում ա. — Էրկու մանեթ տամ, թող օտիմ քուշտանամ:

Տարը ճամաձայնում ա:

Թո̈ւնին ճիթը յոր ա օնում, տնում պրանումը, քաշում, ճեռնը տեն քցում: Ծախողը մուտանում ա.

— Էդ ճո՞ւնց ըս օտում, մրթըվարի կեր:

Թո̈ւնին ասում ա.

— Էն մին նվարանն էլ մրթըվարի կօտիմ:

## 99. ՊԱ ԽՍ ԿՅՐԱՓԱՐ ԳՅՈՒԴՈ՞ՒՄ ԸՄ

Ռուսը կյամ ա ղարաբաղցէ պռավեն, թա.

— Կակ ձելա, բաբուշկա:

Պառավն ասում ա. — Այանը մատաղ, պա ես կյրափար գյուղո՞ւմ ըմ:

## 100. ԽՈԶԸ ՀԻ՞ՆՉ ԿԱՆԵ

Հրևանը ճըրվանեն կնգանն ասում ա.

— Ծեր խոզը եկալ ա մեր ճրին կոլան պարան տվալ:

— Օզում ըս, մեր խոզը կյա ծեր ճրին կոլան լցնե՞:

## 101. ՀԹԸՅԱԹԱՎ Ա

Մատին տղնըցավան ըղնում ա: Ասում ըն.

— Տանաս նո՛ւր մին վիչիլ կնի, տանf ո՛ւրան օտե, սղանա:

— Խասունց Սարին նըըյարավ ա, fեցեf նա կոշտը:

## 102. ՊԱ ՔՈՒ ԸՐԱԶՈ՞ՒՄԴ

Մին մարթ ըրազումը տեսնում ա կնեգը ո՛ւրո՛ւշու ննետ սիլի-բիլի յա անում: Ջո՛ւրթնանում ա, կնգանն էլ զո՛ւրթնուցընում, սկսում վեր թակելը:

— Ծան fած, վեր իմ ըրազումս տի յըս անում, պա fու ըրա-զումդ նի՞նչ կանիս:

## 103. ԽՄԱԾ-ՀԱՐՓԱԾԸ

Մինասը նարփա՛ծ տոն կյախս, տեսնում ա խոզը նղըցեն ղը-րաղեն ցեխումը պարանց ընգած խոխոցնեիս:

— Հարեղ, տու վը՞ս, նղանաս ուչ, նետադ շոո ըմ եկալ, fթա՛լ չըմ:

Տմանցան էշը զռռալավ կյամ ա:

— Հանես, նղղաս ուչ, նիշfան շըըշուղ ըմ ըրալ, fեզ էլ չըմ fթա՛լ:

Կտրան վերցակը լոf ա տամ ըռաչին կանչում՝ ծուղրուղո՛ւ:

— Ուստա Յական, էն ըս տու էլ խմած:

## 104. ՏԵՍՆԱՍ ՀԻ՞ՆՋ ԴՀԱՐԴ ՕՆԵ

Խասա այան բղավնու-մըfավնու մին չանիլ ա տեսնում, ծույ-նանը թխում.

— Պաշշ, տեսնաս նի՞նչ դա՛րդ օնե, վեր իրեսը վեր չի ա-նում:

## 105. ՏՈՒ ՊՌԸՇԻՍ ՏԻՐ

Կրիfորը մծացալ ա, ծեrfեrը տղաո̈ղում ա, կյինուն լիգյը ամանը մինչև պեrանը տանելը տակեն պեն չի մնամ:

— Բալա ջան,— տղեն ա ասում,— տու ամանը լցեr, պոըշիս ղrաղեն տիr, նանա եսը fեզ կոrծ չօնիս:

## 106. ԷՐԿՈՒ ՔԱՌ

Քառը fառեն պտահում ա.

— Ախպեr, համամ ը՞ս fյընում:

— Չէ, համամ ըմ fյըննում:

— Հա՛, գյդացե թա համամ ըս fյըննում:

## 107. ՄԻՆ ՏԵՂ ԿԿԱՆՉԻ

Թո̈ւնին մին շենում ղոնաղ ա ըղնում: Տնատարը մին չկամ մարթ ա ընում, ասում ա. — Թո̈ւնի, տու վrցըկանչին եr կկենաս, հանցու կաrիս սrինավ տեղ հսնիս:

Թո̈ւնին կլոխ ա ըղնում, վեr տնատարը մտադիr չի ուտթընեն հացը տա:

Քշեrը fոն չընում: Քշեrը կսիլու եr ա կենում, տնտտեոնը կնդլակ մին վեrցտկ ա ընո̈ւմ, փոնում տնում խուrջինումը, տանտն տո̈ւս կյամ:

Տնատարը զո̈ւrթնտնում տ.

— Տնաշին, կաց վեrցակը կանչի, ետնան եr կաց, ըլի:

— Վեչինչ, վեrցակը հղեննի էլ կկանչի:

## 108. ՄՈՒՏԱՆԱԼԴ ՀԻ՞ՆՉ Ա

Մաաին ու Պատին, մինը ծո̈rեն էն ընգյունտն, մինը էս ընգյունան, ո̈ւrո̈ւr էն չի մնտմ վեr ասին ուչ:

Մատին տսնալավ վեr Պատին պո̈ւլեrը կոխ ա տամ, պծըպիծի մուտանում ա:

— Արա, Մատի, էդ լնա խոսելը՝ խոսել, պա մուտանալդ նի՞նչ ա։

## 109. ՀՇՏԴԱ՞ ՔԹԵՆԱՄ

«Նանե,— Բաքվա թոռնն ա կյրում,— մին նալալ կթնակեր քթիր, ամեռնս կյամ փսակվիմ»։

«Նանը քե մատաղ, մնենգ նալալ կթնակեր կա՞, լոխ սգուշոնի մալակո կերած ըն»։

## 110. ԽՏ ՉԻ ՄՆԱՄ

Կյափին ու Ափին լուսըծլլոցեն քյընում ըն նոնձ։

Վեր մին խիլլա անց ա կենում, Կյափին ծեն ա տամ.

— Արա, քանե՞ խոռթն ըս ննձալ։

— Տասան իննը պակաս։ Տու քանե՞նն ըս ննձալ։

— Վեր ինն էլ ննձիմ՝ տասը։

— Քզանա ետ մնողեն նանը ծախիմ։

## 111. ԽՈՍԿԵՆ ՏԱԿԵՆ ՉԻ ՄՆԱՄ

Ղևին էն ա ընում ծմակեն ղուռուղը նռեյիս։

Հնդապանը կյամ ա թա. — Ղևի, քանե ետե չի, էշդ ծալի տիր քյնդիռին յրա, քյըռնի տոն։

— Դե լավ, լավ, նալա լուսը պեցվ՚ալ չի, գյոլը յոռ ըս օնում, քառեն կյամ։

## 112. ԽՍ ԿԳՅԻԴԱՄ

Խաբառը նսնում ա Ափուն, թա կնգանդ Վռառակը տառալ ա։

Ափին սկըսում ա նուռնըեռ շոռ կյալը։

— Ա տնաշին, նուռնըվեռ քյըռնի, նուռնըե՞ռ ըս քյընում։

— Ես իմ կնգանս խասյաթը գյուղում ըմ, տանն էլ ա տի, ամեն հինչին հակառակ ա քյընում:

## 113. ՃՐԱՔԸ ՄԵԽԿ ՉՕՆԵ

Դեր Մուքըյելը մին թա̈հրավ տառկապ ընելավ ժամումը ավետարանը կրթիյիս ա ընում: Ճլլը-ճելլի չիլ ա ըղնում, կմկմամ, հազում, ճղճղամ դրըցուվեն յրա. — Էդ ճրաքը կարքեն պահե:

Տառերը պրա̈նումը հղլուղուրելավ պատառ էլ ա կարթում, էլ հա դրըցուվեն յրա պրծընում.

— Ասում չըմ՝ էդ ճրաքը կարքեն պահե:

— Աղեր, վեր մին ահզ էլ նի կցընիմ քշտեղ պահիմ, էլ հա տի յըս կրթըլական, ճրաքը մեխկ չօնե:

## 114. ՄԻՆ ՕՐՈՒՄԸ ԿՃՆՋԻՄ

Պցիրան մարթ ա կյամ շենը, Պենին քյընում ա կոշտը, խնթրում, վեր պարեխուսե, ուրան մին դինջ կործ տան:

Ռայոնան եկածը հրցընում ա. — Կյրիլ-ճնչիլը գյուղո՞ւմ ըս:

Պենին ասում ա. — Կյրիլու նհետ կործ չօնիմ, ամա մեր կոլխոզումը հիշքան թոխտ կա, մին օրումը կճնչիմ:

## 115. ՊԱ ԿԱՍԻ՞Ն

Խոսք-խոսքու վա կյամ մին մարթ մնին վեխճար ա ասում: Սա քյընում ա Կափրիբեգին կոշտը կյենգյատ. թա. — Ըստի, ըսաի, էս մարթը նհախ տեղան ինձ վեխճար ա ասալ:

Կափրիբեգն ասում ա. — Արա, հմանչում չը՞ս, պա ըստի կյառնը մարթին վեխճար կասի՞ն:

## 116. ՏԻ ԱՊՐԱՆՔԸ ԿՄԱԽԻ՞Ն

Հցեցե Ալիխանենե մին թա̈մբալ, մաշկան բոշ ծի յա ընում: Օզում ա ծախե, կլխան ռադ անե, կյին տվող չընում: Քյընում ա

դալալ Սվաղեն խնբրում, վեր ֆյոմազ անէ, ծին ծախել տա: Սավաղը բզարումը մին թարիփ ա սկսում, ընզունենեղ վեչ սկանա: Վեր շատ թարիփ ա անում, Ալիսանը մոտանում ա.

— Սավաղ, էլ ծին ծախում չըմ, պա տի թարիփլու ապրանքը կծախի՞ն:

## 117. ԱՍՏՈՒԾ ՔՅՈՄԱԳ ՉԱՆԵԼ

— Հե՛ Ավաք,— նրևանեն ա ծեն տամ,— եկ ֆյոմագ րրա, էշին հակները քցինք յրա:

Ակուփեն խոսկեն յրա Ավաքը կյամ ա, հակեն մինը յոր օնում տնում էշին: էն մին հակն էլ Ակուփն ա պցրցընում, տնում էշին, համ էլ օշը կլխեր օնում. — Աստուծ, տու ինձ ֆյոմագ անիս:

Ավաքը հակը վեր ա քցում.

— Վեր ֆյոմագ օնիս, էլ ինձ հոր ը՞ս պնըխափան րրալ:

## 118. ԽՏՆԱՆ ԿՏԱՍ

— Ղավանդ, մին տասը մանեթ փոլ կտա՞ս:

— Չէ, Կարաբեղ, ըլածս լոխ հենզ մանեթ ա:

— Վեչինչ, էդ հենզը տո, հենզն էլ հիբը կընի՝ էն չախը կըտաս, ընիլ չի կմնաս պարտք:

## 119. ՄԿՐԱՏԱՎ

Մարթ ու կնեգ մինտեղ ֆյընում ըն հոնձ: Կնեգը շատ կոխկինա յա ընում. էս մարթը վեչ մին պեն կարում չի կնզանը յրա հախ անէ: Կեսօրեն, րրևեն տրըքտրըքնուտեխս վախտը, նստում ըն տանձին շուքումը, վեր դնչանան:

—˝ Տաքեն թանրը–յոն չօնէ,— ասում ա մարթը:

— Աղդբին էլ տաք չի, սանա սարին օր չրնիլ,— ասում ա կնեգը, եր կենում, րրևեն տակեն նստում:

— Դե վեր սարին ա, տեղ կաց:

Կնեգը եշում ա եշում, տեսնում ա՝ մարթը մնալ չի fցում, ասում ա.

— Օրը մթնից, եր կաց մկրատդ եր կալ, fյրնի արտը հնձի:

— Ա կնեգ, մկրատը վե՞րն ա, արտը չինավ ըն հնձում: Պա fա հոր դվանը վայ տամ:

— Շաշին մինը շաշ, մինչև մհենգ գյուղում չը՞ս, վեր արտը մկրատավ ըն հնձում:

Մարթն ասում ա՝ չինավ, կնեգն ասում ա՝ մկրատավ, öւրöւր ջլավ կոծում ըն մինչև մթնելը:

Րուզյունը կյետեն ղրաղավը fյրնիյիս, կնեգը հիրսան նհեա սլկըհում ա ըղնում կյետը:

— Ախնի, էտ րո խղտվիյիս, մհենգ ընի՝ վզավ կալ, արտը չինա՞վ ըն հնձում, թա մկրատավ:

— Մկըր... մըկըր... կնեգը խեխտվում ա՝ էրկու մանները մկըրտ-մկրատ ընելավ:

## 120. ՀԱՅԸՆՆԱԿԱՆ ԸՄ ՇՈՒՇԻ

— Մին կյեղ խոխա ըմ ըլալ, իմ հար ծառեխա մին աղվես ա փռնալ, fառասուն նոտ հետան վազ-վազ ընեյիս:

— էդ հինչ ա՛, իմ հա́ր էլ էն տարեն բուստանումը մին թաղ խյար ա վարալ, ըրկնացալ ա է՛, հսալ Շոշ*:

— Խյարեն թաղը էդfան ըրկնանալ չի:

— Տու ըղվեսին նուաերեն թիվը խրգյցըրու, թա չէ խյարեն թաղեն պտոկը հսցընեական ըմ Շուշի ղալա:

## 121. ՏԵՍ ԸՆՔ ԿՆՆԱԿԱՆ

— Ա կնեգ, կյարի հաց շատ ընf օտում, մին խրեգ էլ էն ցորնեն ըյլերան fցի, հացը պյծըռանա:

— Օզում ըմ հացը պատառ տեն կենա:

— Ախեր վեր հացը տեն կենա, մունf էլ տես ընf կննական:

---

* Շուշիքենդ գյուղի բնիկ հայերեն անվանումը.

## 122. ՏԱՔՈՒԹՅՈՒՆՈՒՄԸ ԽՈՍՈՒՄ Ա

Արշակը հիվնդանում ա: Մին իրեք-չորս հնգեր կյամ ըն զիրավ հնցընում: Վեր մին մա̈նզիլ զրուց ըն անում, Արշակը կլոխը պցրցնում ա.

— Ախճի, տեսա-տենա պեր, արաղն էլ պեր, էս մարթիքը մարթը մին ստաքան արաղ խմին:

— Ասում ըմ՝ հվատում չըն, հաստ բյաթի յա, ամեն օր տաքությունումը խոսում ա:

## 123. ԾԻՆ ՔՐՏՆՆՔԱԾ Ա

— Էն օրեն իրեք գող տանձ ըմ տվալ, ծիյին թամքեն հետե մին քեչա ինք կա̈լա̈լ: Փողեն պենն ա աժեր, փողն էլ վեր ճանգս ընգավ, ա կնեգ, մին ղաշա̈նգ, ճակատը ղաշխա ծի ըմ ինք ունճակտն: Ծին կպիրիմ, եր ընիմ, քյընիմ հանդը կյամ, աղունեն էլ կտանիմ ջղըցներումը աղիմ, պիրիմ:

— Լհա վեր ըյլերեն պեռնը վեր օնիս, ես էլ ծին եր կընիմ, քյընիմ իմ հա̈րանց տոնը, զիրավ հնցընիմ կյամ:

— Շան տղու քած, ծին քրտննքած, եր ըս ըննական քյընիս քու հա̈րանց տոնը՞:

## 124. ԱՆՈՒՄՍ ՑԱԿԱՆ Ա

Ցականը էշին նստած հանդը քյընիյիս ա ընում: Հանկարծ անումը մեննան քցում ա, սկըսում ա մաքումը շոռ կյալը. «Պուղուս ա՞՝ չէ, Հարութ ա՞՝ չէ, Սաքան ա՞՝ չէ, Դավութ ա՞՝ չէ...»:

Հիշքան շոռ ա կյամ, կարում չի քթենա: Ինքը ո̈ւրան ննետ կռև տալով քյընում ա: «Անումդ հինչ ա՞, ա հայ, պա բալի մինը հրցընում ա, ջողոպը հինչ ը՞ս ալական: Ասել չի, թա էս մարթը ղոնգի յա: Պա ղոնգի ըլած ուչ, հինչ ը՞ս»:

Էս քնընքումը հղըցեն էն ընգյունան ո̈ւրանց շնացե մին տղա յա տուս կյամ :

— Պարի լուս, Ցական դայի:

— Պա ղորմա քա հոր, արա էդ հշաղա քթի՞ր: Հա, Ցական ա, անումս Ցական ա:

## 125. ՄԻՆ Ա

— Հաթամ, ինձ մին լվոթուն ըrա: Եկ fյուխեն fշտեն վկա-յութուն տռ, վեr Պողուսը ինձ մին հակ ցոrեն ա պարտf, տամ չի:

— Հի՞նչ կընի,— համաձայնում տ Հաթամը:

— Հասե, իմ վկաս Հաթամն ա, Պողուսը ինձանա մին հտկ ցոrեն ա ինf կալա̈լ, ուրտցալ:

— Մինասը ղորթ ա ասում, Պողուսը Մինասեն մին հտկ կյարի յա պարտf:

— Կյարի չի, ցոrեն ա:

— Մհե վեr սոտ ըմ ասում՝ կյարի ըլած, ցոrեն ըլա̈ծ, մին չի՞:

## 126. ՔՈՒ ԸՍԱԾԱՎ Ա ԸՆՆԱԿԱՆ

Խլղանանց Մուfին շենին մեծ հղըցեն կոխկեն պիծի տղեն հետե մին տոն ար շո̈ւնում: Հղըցավը անց կենող մին մարթ տեսնում ա, վեr Մուfին ղյդին չի շո̈ւնո̈ւմ:

— Ապեr, էդ խե՞ տան հիմումը խուրդա fաrեr ըս տնում, պցիrումը՝ մեծ-մեծ:

— Անցվեr ախպեr, պիծի աղաս մին հանց ախնիգ ա օ-զում, վեr կյա, տոնը փrսըվեr ա աննա̈կան, էլհա խուրդան ընգլական ա կլոխը, մեծ-մեծը՝ տակը:

## 127. ԿՀՈՒՎԱՆԱ-ԿՇԱՏԱՆԱ

Սվեգանց Հանեսը դոլմա յա ըննո̈ւմ ուտեխս:

Հարթնն ասում ա.

— Ապա, դուլմեն մածուն ըվլցընի՞մ:

— Հինչ կընի, համ կհուվտնա, համ կշըտանտ:

## 128. ԱՆՑ ԿԱՑ

Աrևը յrգինfան կrակ տ վեrածում: Հնձվեrը հլոնի ծառեն տակեն նստած մծնըփrթուշ ա օտում: Հշտղա-հիշակը մին վեն-

ներն էրկան մորեխ լոՓ ա տամ ըղնում փրթուշին ամանը: Հըն-ձողը, նղացած-վատակած մարթ, էլ չըշարվում չի տուս օնե, մածնեն ննետ ավեր անում Փյընում ա:

Կոլ տայիս մորեխը պկեն տեմ ա ըղնում.

— Վեններդ տեմ չտաս, անց ըս կննական, անց կաց:

## 129. ԻՍԿԻ ՀԻՆՉ

Վանառականը էրկու չվալ լամբու շուշա ննոււն պեռնած Շուշվա կյախս ա ընում չենը: Տմանցան մին զոռբա չոբան ա առւս կյամ, կոմբալ մնակը օսեն տրած: Վեր մուտանում ա, մը-նակավ մե նետ ննոււն պեռնանը ածում ա.

— Հինչ ը՞ս ծախում:

— Վեր մն էլ թխիս, իսկի նինչ:

## 130. ՀԱՆԽՍԸ ՓԱԼԱՆԴՈՒԶ Ա՞

Հնեսին սերտը արաղ ուզիյիս ըննւմ, բըղածեն ածում, տանն էլ ըննւմ չի: Ընգուննեն ա նսնում, վեր Ավագյումը լավ թթու ա-րաղ օնե: Տոււս ա կյամ շնամաշը, տեսնում Ավագյումը նստած զըոււց ընեխս:

— Խոսկդ չՓյարավ ըմ կարում, Ավագյում, տանը բիզ կընի՞:

— Օնիմ, Հանես:

— Պա նո՞ւնց անինՓ, վեր մին օրավ ինձ տաս:

Եր ըն կենում Փյընում:

— Հանես, եՓ մին ստաՓան արաղ խմէ, էլնա բիզը կտանիս:

Հանեսը էրկու ստաՓան արաղ ա խմում, նացա-մացա ածում կլխեն, պերանը փեշկավը սըփում, եր կենում սուսուփուս տոււս կյամ:

— Այ տա, պա բի՞զը:

— Հեր օրննած, Հանեսը փալանդուզ ա՞:

## 131. ՔՈՆ ԻԼ

Օրվա մին օր ժլատ շնացուն ղոնաղ ա կյամ նեռե պարիկա-մերան մինը: Խեղնը եշում ա, եշում, տանը նացեն անաւմը ավող

չընո̈ւմ: Սա օզո̈ւմ ա հաստադ գյիդա հաց ալակա՞ն ըն, թա՝ չէ:

— Ա fուr, վէr հաց օտինf պrծնինf, հիշտե՞ղ ընf fոն ըննա̈կան:

— Մունf հաց ընf կէrալ պrծալ, տու հիշտեղ օզո̈ւմ ըս fոն իլ:

## 132. ՀԻ՞ՆՉ ԸՄ ՕՁԱԼ

— Ղավա̈նդ, ճխեվուլդ ինձ տո, կյումը սrփիմ fեզ տամ:

— Այ Առուշան, այ Առուշան: Ամեն օr՝ Ղավա̈նդ, կացենդ տո, Ղավա̈նդ, ցակատդ տո, Ղավա̈նդ, էս մինը տո, Ղավա̈նդ, էն մինը տո. տնաշին, ճխեվուլը հի՞նչ ա, վէr fյընում չըս հանդան կտrում, պո̈ւrում, հալա մին ուrիշի էլ տու տամ: Մին օr վէr fյընիմ, տասը կկաrիմ պիrիմ:

— Ղավա̈նդ, այ Ղավա̈նդ, ես fզանա խելf ուզեցե՞, թա ճխեվով:

## 133. ՄԻՆԸ՝ ՍՕՐ, ՄԻՆԸ՝ ԷՔՈՒԾ

Մաrթ ու կնեգ հունչու անում ըն, անում չըն, հաrթնանը կաrում չըն պնըցընին: Մին օr էլ եr ըն կենում, յանի fի, նուrը fյընիլի հետե ո̈ւrո̈ւr նենս կռև ըն անում:

— Ա կնեգ, կոժն ինձ տո, ես ըմ fյըննական նո̈ւrը:

— Թողել չըմ, տեղդ ծանդr նստե, խե ես հինչ ը՞մ:

— Ա կնեգ, հա̈զ ըմ անում նո̈ւrը fյընիլա, դաշանf ըմ անում...

— Չէ, վէr չէ, խե ես մեռած ըմ, վէr տու fյընիս նո̈ւrը:

Հաrթնը մաշ ա ըղնում.

— Կռև չանիf, մինը սօr fյընի, մինը էfուծ:

## 134. ՔՅԸՆՈՒՄ ԸՄ ՓՈՒՏՐՈՒ ԽԱՂ ԱՆԻՄ

— Ա կնեգ, վէr մեռնիմ, հի՞շ կանիս:

— Աղա, հո՞r ըս մեռնում:

— Չէ, սսե, վէr մեռնիմ, հի՞շ կանիս:

— Թազա շորերդ կյեց կտամ, թազա վեներմաներդ կյեց կը-տամ, մին լավ էլ լաց կընիմ, տանիմ վեղեն թափիշուր անիմ, էլ հինչ բդի անիմ:

Մին օր մարթը սատմեռուկի յա տամ: Կնեգը պորում ա թազա վննամանը կյեց տամ, թազա շորերը կյեց տամ, մն էլ փուշմանում: Վննամանը հանում ա, շորերը հանում ա, թողում հալավն ու փոխանը:

Հնգիստին ճանապարեն կնեգը սոֆ ա սսում, սուֆյումը ծեն տամ.

— Պա տու մին ֆանե հետ ֆյեցալ ի՞ր էդ հըրցավը, ադա, էդ հիշտեղ ը՞ս ֆյընում:

— Քյընում ըմ սաադիոն, փուտբոլ խաղ անիմ:

## 135. ԽՍ ԾԵՐ ԽՈՍՔԱՆ ՏՈԻՍ ՉԸՄ ԿՅԱԼ

Կնեգը մռնելանը եար մարթը սկըսում ա հրթներեն վեռան կեմթելը: Հարթներն ոուրանց մարթունցը կյենզատ ըն անում:

Մեծ տղան մե հետ հորը ծեն ա տամ ոուրան կոշտը.

— Ա հա՛ր, մծացալ ըս, օրսս եա ֆեզ փսակվելը փռնել չի, իրեֆ հարթն օնիս, սերտդ օզած վախտը վռրներան կեըմթե:

— Հա, ֆե մատաղ, պա ես ծեր խոսֆան տուս կկյա՞մ:

## 136. ԷՇ ԻՆՔ ՕՆՈՂԵՆ ՔՅԱԼԱԳԸ

— Էշը ծախում ըս՝ ֆու կործդ ա, պա էդ ղաշա՛նգ փալանն ու գոխտան խե՞ էշին նհետ ծախում ըս:

— Ա կնեգ, էշը կհալ ա, վեր հաֆուստ-կապուստը չընի, ինֆ օնող չընիլ: Ասում ըմ ֆուցե ըրծաթե լոխտեն թամահ ըրեն:

Էշը առաշն ա անում, ըղնում Խոնաշինա բազարը:

— Էշդ հի՞նչ աժի, — հարցնում ա մինը:

— Վեր տասը մանեթ տաս, լոզու էրկու շըմ անել, լոխտան կտնիմ ծերֆեդ:

— Տվե:

— Ծերֆդ տո:

Անծանոթը էշը ինք ա օնում, օշը հլո̈րում բդի տոն:

«Չէ, էս էշին պահել չըննիլ, շատ ա կհնո̈լ»:

Էշը թողում ա մին ծառու տակե, լոխտան ու փալանը շլակում, վազ տամ տոն, մին ղաշև եր կալած կյամ: Մտքումն ասում ա. «Էս նցեցեն վեր ինձ խափալ ա, ես էլ խնուշինակեցե յըմ, ո̈ւրան ըմ խփըլական»:

Ղաշևը յոր օնում, էշին մազերը հակառակ թուշավը սանդրում, մազերը բիզ-բիզ վեննը կցընում, յալն ու օնքերը քնձրոնում, մին փադի բիզ շո̈ւնո̈ւմ, առաչն անում: Տանում ա տեսնում ծտխողը հալա էն ա էշու շոռ կյտիս: Զինքը հվաքում տ, փափաղը պրտըրտու տնո̈ւմ, մաշկան կոռանում, ըռաչին վեննը կենում:

— Պարի օր, ա հայ:

— Աստուծեն պարին:

— Հանց ըս էշ ըս ինք ունենտկան:

— Հանց ըմ:

— Քյոհլան էշ ա, կյինը տասնհենգ մանեթ, խոսքս պրանիս ուչ, եր կալ քյընհի, խերն ըս տանում:

Մո̈ւշտարին էշին վորկլխեն եշում տ, հավան կենում, փողը տամ, յոր օնում քյընում: Էշը տո̈ւզն ա ընում, քանե շենան մուտանում ա, էնքան վենները թափ ա քցում: Վերչապես էշ ու ըշտատար հսնում ըն շենը:

— Ա մարթ, էշը ծխեցե՞ր:

— Էն էլ հունց:

— Էշ ինք կալի՞ր:

— Էն էլ հունց:

— Թյղըերիշ ա՞:

— Երիշը, ղորթ ա, ծտնդր ա, համա ըրվամ ա, վեր շատ խնելունք էշ ա:

— Հինչի՞ն յրա գյդացեր:

— Քանե շենը մուտացըվ, էնքան երիշը թուղըցրուց, իսկ վեր նի մտավ շենը, թուշին եկու մեր տո̈ռնը, նի մտավ կյումը, քեցավ ո̈ւրան ըխոտեն յրտ զոռաց:

Կնեգը մտնենը կծում ա, քյընում նի մննում կյումը:

— Աղտ, էս մեր էշն ա, պա փտլտնն ու լոխտան հո՞ր տ: Քու հտնողն ու պո̈ւռողը խար-խուրանա:

## 137. ԻՆՁ ԹՈՂԱԼ Ա, ԴԵՐԻՆ ԵՐ ԿԸՑՐԱԼ

Կնեգը մարթին միշա քյալազ կյախս ա ընում: Մին օր դերը կյամ ա տահանց տանը քշերը կենում: Մարթն ասում ա.

— Ա կնեգ, ինձ քշերավ եր կկցնիս, մինչև դերը եր կենալը քյննական ըմ մին կործ կա, պրծնիմ կյամ:

Կնեգը մինչև մարթին կործի քյընիլը քշերը եր ա կենում դերին շորերը տնո̈ւմ մարթին քշանն, մարթին շորերն էլ՝ դերին քշտեն:

Մարթը մթընմթեն եր ա կենում, դերին շորերը կյենում, տուս կյամ:

Առաջին պաանած մարթը ասում ա. — Օրնյա, դեր:

Մարթն ո̈ւրան տնդըղում ա, թա.

— Էս կնգանը եշի է, ես ասալ ըմ ինձ եր կկցընիս, դերին ա եր կցըրալ:

## 138. ԿԹՆԸԿՈՐԵԿ

Ջահիլ հնձվերը էն ա ընում կորկեն արար հնձիյիս: Եշում ա տեսնում՝ մին սերուն հարթնը զամբո̈ւլը ծերքեն արանեն մաշավը կյամ ա:

— Ա նախշուն հարթնը, էդ հի՞նչ ըս անում:

— Կաթն ըմ անում:

— Յանի հի՞նչ կընի, վեր ես մուտանամ, առւ հռանաս ուշ, մեր կորկեն արառմը մին հովուր կենաս:

— Վեր առւ մուտանաս, ես հռանամ ուշ, հինչ ա՞ ըննա̈կտն:

— Կթնըկորեկ:

## 139. ՊՌԱՏԱՎԸ ՔԱԽԾՐ Ա

Մին դերասան մին շենում թատրոն ապլանը եար քյընում ա ո̈ւրան հեռե ազգականեն առնը, վեր քոն նի: Ծրավում ա: Եշում ա տեսնում՝ անը օրիշ նրա̈ման չկա, մինակ պռուշը կոարած մին փարշ ա: Կնգանը ծլոլը քյընիյիս ա ընո̈ւմ, էս մարթն էլ խոկող: Մտածում ա, վեր պառավը սաղ ընգյունավը կընի խմեիս, հեքը

յոր ա օնում, պռատավը խմռւմ: Մն էլ մտածում ա. «Մին նրցը-նիմ, բալի լնա պառավն էլ ա պռատավը խմալ»:

— Նանե, պռատավը նիշքա՛ն ա քախծր, իրեք նետ խմեցե, էլ նա քուշտացե վուչ:

— Հա, նանը մատաղ, պռատավը քախծր ա, ես էլ ըմ միշա պռատավը խմում:

## 140. ԸՍՏԱՐԵ ՀԻ՞ՆՉ ԸՍ ԸՍԼԱԿԱՆ

— Հաբեդ, եկ ծիս ինք կալ: Հոնե ասալ ըս քավթառ ա, ըս-տարե նի՞նչ ըս ըսլական:

## 141. ՆՍՏԸՑՆՆԱԿԱՆ Ա

Սրըցեն չուլըցուն տոնը ղոնաղ ա կյամ: Ջուլըցեն մեծ կյե-վաթը էրկու նետ լցնում ա, տամ ղունաղեն: Ղոնաղը խմում ա: Իրեքրընչինն էլ ա ածում:

Ղոնաղն ասում ա. — Խնամե, խմածս եռ ա կյամ, էս մինն օզում չըմ խմիմ:

— Էս մինն էլ խմե, նստըցննական ա:

Սրըցեն խմում ա, նղե ընում տոն:

Հղեննի, մին արխու կլխավ ննցրնեիս, թոմփ, արխումը ընս-տում ա: Ասում ա. — Էսա նստըցրուց:

## 142. ՄԵՐԸ ՊԵՐ

— Ախնի, Հուռում, մին քյըրնի Վնեսին կացենը պեր, փաղը կտրիմ:

Կնեզը քյըրնում ա տերտակ կյամ:

— Տվավ ո՞ւչ: Քյըրնի Պատöնը պեր:

Հուռումը էլ նա տերտակ ա կյամ:

— Էն էլ չի տվա՞վ: Տանանց ժլատ ներն անիծած: Քյըրնի մե-րը պեր:

## 143. ՊԱ ՏՈՒ ՏՈՆ ԿՏԵՌՆԱ՞Ս

Ախպերը քյընում ա քվերը տոնը ղոնաղ: Քուրը էծու պաներ ա վեր տանում, թխծրած հաց:

Ախպերն ասում ա. — Ա քուր, վեր ամեն ղունաղու ըռաչի էծու պտներ վեր տնիս, թխցրած հաց, պա տու տոն կտեռնա՞ս:

## 144. ՁԱՐԱՅՆ Ա ՏԱՇԱԼ

Կյեշանը մին միլ ա ընձում պերած տռանը վեր քցած, վեր ա-շունքը, բաղա ետ կոնին կոտրած կյերանը փոխե: Եշում ա տեսնում՝ փադը ըստըղաս-ընդըղան տըշտշորած, նզամտ քցած, փուչըցրած:

— Ալիշան, ամեն օր ըստեղ խաղ ըս անում, տեսա՞լ չըս էս փադը հու վա տաշալ:

— Գյուղում չըմ, հանց ըմ Ձարայն ա տաշալ:

— Էս հի՛նչ ղաշանգ տաշալ ա, շշա՜, շշտ՜, շշա՜: Փա՛ն, փա՛ն, փա՛ն:

— Ձարայը կկարե՞ տի տաշի, ես ըմ տաշալ:

## 145. ԻՆՔՆ ԷԼ ՉԻ ԿԼՈԽ ԸՆԳԼԱԿԱՆ

Խըղուղեն բաղեն պահակը մին կյող ա փռնում, վեններըր կը-պոտում, բաղումը վեր քցում, ինքը վազ տալով կյամ նախագհեն կօշտը:

— Նախագա, մին կյող ըմ փռնալ:

— Պա հի՞նչ ըս արալ:

— Վեններըր կպռտալ ըմ, բաղումը վեր քցալ:

— Ծերքերը կապա՞լ չըս:

— Չէ:

— Պա քու տոնը չինվի, վեններըր ետ չընձակա՞ն, փախնի:

— Մեր չնացե յա, ես վեր կլոխ չըմ ընգալ, ինքն էլ չի կլոխ ընգլական:

## 146. ՎԵՉ ԿՈՌԱ, ՎԵՉ ՃՈՌԱ

Շատ հդե fյրնիլա վստակած մին հայ նստում ա մին արխու դրադե, չնթան տուս օնում կնգանը տրած պարիպասը՝ չոռն ու դոլման, սկսում օտելը:

Ուտեխս դուլմեն մինը թուլ ա ընում րղնում արխը: էս տնւզ-նը մարթը դաստի ծերfը արխումը չոռ ա աձում, ծերfն ընգած փափուկ պենը կոխում պերանը, կոլ տամ: Ծզանա հինչ կյեղիմ, արխան տուս կալածը կյերթնուկ ա ընում, պկումը սկսում ա կոռալը: էն էլ ասում ա.

— Դոլմա ըս, թա դոլմա չըս, կնեզս տրա՜լ ա ստըլական ըմ, վեչ կոռա, վեչ ճոռա:

## 147. ՌՈՒՍԵՐԵՆ ԽՈՍԵԼԸ

Մին մարթ կորած էծին չոռ կյախս ա ընում: Անյակ անգյու-նան մին չեզ մարթ ա տուս կյամ. մտfումն ասում ա. «Սա հանց ա ռուս ընի, պա ռուսերեն հո՞ւնց հրցընիմ, թա մեր էծը տե-սա՞լ չըս»:

Ծերfերը խչըմելիf տնում ա, պոզեր չինում, տնում կլխեն: Տեսնում ա, վեր պեն չի տուս կյամ, էծու նման կռանում տ, չորf վննանե տեռնում, սկսում էծու նման մկըկալը. բը-ա՛-ա, բը-ա՛-ա...

Անցվորը կլոխ ա րղնում, վեր սա էծու վա չոռ կյամ:

— էդ հինչ ա, էծո՞ւ վըս չոռ կյամ:

— Հայ ը՞ս, պա ասե ե, մչանf ռուսավոր խուսեցե, frտը-նոնfս պատից:

## 148. ՍԱ ԷԾ ՉԻ

Հա՛րին օզում ա էծը ծախե, Կա՛րին էլ օզում ա էծ ինf օնե: Սահանf ռւրռւր պտահում ըն:

— Հարտբեղ, էծդ կտա՞ս:

— Հի՞նչ էծ: Ես էծ չօնիմ, իմը կյումաշակալ ա: Կործը հաս՝ էս փիչը, ծծերը հաս՝ էս դուրթան: Հո՞ւ վա տսալ, թա էծ

ա, Հարաբեղը էծ կպահե՞։ Կամուրջավն էլ անց կնայիս ախս ուշ թա՝ «հե-հա», կասիս՝ «հո-հա»։

## 149. ԱՐՏՍ ԱՌԱՋԻՆՆ Ա

— Տաքն ընգալ ա, ա կնեգ, մին քյրնիմ կովատեն արտավն հնցրնիմ կյամ։

Քյրնում ա եշում, ետ տեռնում։

— Հը, ա մարթ, կավատեն արտը հունց ա՞։

— Թո կյնազոխան ծեթ տուս կյալի ընի, իմը առաջինն ա։

## 150. ԺՈՂՈՎ Ա՞, ԹԱ ԹԱՏՐՈՆ

Մին գյուղացի մարթ քյրնում ա Բա̈քի, պարիկամն էլ յոր օնում տանում թատրոն։ Թատրոնը սկսվում ա կոլխոզու ժողովավ։ Սա կլոխը տնում ա նստրանեն թա̈րքին. — Խնամե, սա ժողով ա, վեր թատրոնը սկսվե, կզօ̈ւրթնըցնիս։

## 151. ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ԱԽՔԱԴԸ

Հարուստը պտահնում ա ըխքաղեն, վենն անում. — Ա խեղճ, այ ապելա կյառնը, բոլա տի խեղճ կենաս։ Եկ ընձետե մին քանե օր ծրի պեն բրա, ես քեզ սվրցընիմ, թա հունց հրուստանաս։

— Չէ, առաջ սվրցրու, ետնան պեն կանիմ, հալա օխար օր էլ իվիլ կանիմ։

Հարուստը սկսում ա.

— Թա տեսնաս մին խեղճ պողնած մարթու ծերքե մին կտրքեն պեն կա, կլխեն տո, խլի։ Թա տեսնաս կտրում չըս ծերքան ինք օնիս, քշերը ծպպըցրու։ Թա տեսնաս քեզ վնաս մին գործ կա, վերթիդ էլ ընի հեռե շոռ տո, անիս ուշ։ Թա տեսնաս պարտաքեղ տարը խեղճ մարթ ա, ուրաց, էլ տամ’էր։ Թա տեսնաս...

— Բոլ ա, սվրեցե։ Դե մնենք տու ինձ անգուճ կալ։ Իմ հօ̈ր ասալ ա, հիշտեղ խեղճը կուրցրած մարթ տեսնաս, բստուծանա

օժ հմաքե, կլխեն իրեք հետ բամփե: Հանց բամփե, աշկերը կծըկրակ անե, քամակը՝ շորվա, վեններն էլ հինչեխ ածե: Դե մնենգ ումաց, ա խեղն, ա ապելա կյառնը:

Վեր ածծում ա, հարուստը ծվըկախած հավլու նման նկըռում ա:

## 152. ՀԵՐԻՔՆԱԶ ՀԱՍԻՆ

Էն ըն ընում ըրգյոնվա հացը ուտեխ: Հէրքինազ հմսին ե-շում ա տեսնում, հեռուստացույցումը էրկու մարթ ռւռւր նենա խոսում ըն:

— Աղա, Կրիքոր, խե՞ էն մարթունցը ասում շըս, կյան հաց օտին, համոթ չի՞: Ասե, ըլի, կկյան՝ կկյան, կյալ չըն՝ կյալ չըն: Բա՛լի լհա տռւզն ըն, ըլլը–նելլի սոփրեն եշում ըն:

— Այա, նահանք մեզ անսնում չըն:

— Լավ ա, սուս ըրա, յանի խե՞ տեսնում չըն, ջահիլ մար-թիք ըն, ըշկրենեն սաղ, վըննրենեն սաղ: Խեշլամ մտքումդ կա վուչ ծեն տաս, հանց ըս լհա քա նոր ժառանգը չընիս:

## 153. ՋԱՆԻ ԱՅԱՆ

Հարթնը նռւրը կծըցնում ա, փոխմուրթը տնում կոխկեն, վեր սկեսուրը կլոխը լվանա:

— Այա, էն ա լոխ հազըր, տու կլոխդ կըըվանաս, ես քյընում ըմ կործի:

— Հա, այան մատաղ:

Էդ վախտը, վեց արեկյան թոռնը՝ Շողերը, նի ա մննում տո-նը, հեռուստացույցը պեց անում, անսնում ուրան հետաքրքիր պեն չկա, թողում ա տուս կյամ, քյընում բանդը խաղ անում:

Ջանին եշում ա տեսնում, շորս-հենգ մարթ զրուց ըն անում: Հիշքան եշում ա թա պրծըընին քյընին, ինքը կլոխը լվանա, տա-հանք պրծընում չըն:

Խեղնը մնամ ա անլվա:

Կեսօրեն հարթնը կյամ ա:

— Այա, խե կլոխդ լվացալ չը՞ս հալա:

— Այան մատաղ, քաշվալ ըմ: Էն մարդիմազարը եկալ ա

տիլիվիզին պեց րրալ, էն մարթունցը նի րրալ մեր տոնը: Դա համոթ չի՞, նահանց քշտեն հունց կլոխ լվանամ:

## 154. ԹԱ ՄԵՌՆՈՂԸ ՏՈՒ ՎԸՍ, ԽՈՍԵ

Թալանին հիվանդանում ա, մաշվում թիլ տեռնում, տեսնում ա, վեր հոքոց-հանգուցելոց ա տոնըրլակ'ան, ծեն ա տամ մեծ տըղեն, վիսյաթ անում.

— Ա վերթի, ես մեռնում ըմ, տանը մեծը տու վըս մնամ, լոխ մհենզ քու ծերքետ ըն յշըլական, լավ կկենաս: Էն պատեն թոթխարը կշինիս, մին պիծի օթաղ էլ կոխկեն կվըլցնիս:

— Անումը տի պեն չկա,— դաթն ա ըղնում կնեգը,— էս սհաթես մունք տոն շնիլի հա՛լ չօնինք:

— Ա վերթի, տու ինձ անգուն կալ: Պիծի ախպորդ նեյլի կփսակիս...

— Անումը տի պեն չկա, էս սհաթես տղա փսըկելի թա՛հըր չօնինք:

— Ա վերթի, տու ինձ անգուն կալ: Էն դաշխա կավը վեր չպեր տուս կյա, կխարշիս, պահիս ուշ...

— Անումը տի պեն չկա, ընդի կավը ծախել չըն:

— Ախնի, դե թա մեռնողը տու վը՞ս, եկ տու խոսե, ես սուս անիմ, թա մեռնողը ես ըմ, պա տու սուս րրա, ըլի՞:

## 155. ԹԱՔ ՄԱՉԻՆ ՉԸՆԻՍ

— Ա դեր, մեռալը հանգիստարանը տնեիս յշիգին քմական քյըննիյն ա լավ, աշա՞ն, թա ծեխան:

— Ա վերթի, հիշտեղ ընիս լա՛վ ա, մինակ թա յշիգին մտչին չընիս:

## 156. ԿԱՏԱԿՈՒՄ Է ՂՉՂԼԵՑԵ ԽԼԴԱՆԱՆՑ ԿՈՒՔԻՆ

Դեր-Կրիքորանց Հանեսը շատ էրկան մարթ ա ընում, խլդանանց Կուքին էլ շատ կարճ մարթ ա ընում: Մին ցորտ օր Ծվերումը պտահում ըն:

Հանեսն ասում ա. — Ա Կուֆ, պա ես մրսում ըմ, դու մըրսում չը՞ս:

— էդ պեցիր տեղը ճի՞նչ օնիս վեր մրսիս, ֆշաց, ինձ նման ֆաշավը ֆյըրնի:

## 157. ՄԱՄԱՆ ԸՄ ՕԶՈՒՄ

Կուֆուն կնեգը էրկու շեբթավ ֆյըրնում ա Բաֆու:

Խոխան ասում ա. — Պապա, մամաՆ ըմ օզո՞ւմ:

— Գյուղում ըս թա ես օզում չը՞մ, իմ յնա պռուշս ճաֆում ա:

## 158. ԱՆՈՒՄԵԴ ՀԻ՞ՆՁ ԱՑԻԲ ՏՐԻՐ

Կուֆուն տղա Տիկրան Գրիգորյանը Բաֆվա կյամ ա շենը լեկցա կարթի: Ոայոնենն մեծը եր ա կենում ռուզյունը պեց անում.

— Դոցենտ Գրիգորյանը ձեզ ճամար կկարդա դասախոսութույուն միջազգային թեմայով:

Ժողովը պրծնելան եդը Տիկրանը կյամ ա տոն, ճարն ասում ա.

— Անզուենդ տես պաճե: Պա ես դեր ըմ ծեն տվալ, խարչբուրջ ըմ ըրալ, դաշնգ անում ըմ տրալ: Իմ տրած ընումես ճի՞նչ շաֆի օնե, վեր փուխեցեր Դոցենտ տրիր:

## 159. ՊԱ ՀԵՏԱՆ ՀՍԱԼ Ը՞Ն

1941 թվին Տիկրանը վիրավորված կռվան կյամ ա տոն:

Մարն ասում ա.

— Տիկրան, ճու վեր կռվան եկալ ա՝ մեղալ ա պերալ, ֆեզ էդ մեդալան տվալ չը՞ն:

Կուֆին ասում ա. — Ըրխեն ճետան ճսալ ըն՞, վեր տան:

## 160. ԺԼԱՏԸ

Ավդուռեցև Տզզանեն կնեգը էն ա ընում չայ խմեխս: Նրա չքմրեն կտորը տնում ա պրանումը, խաբարը կյամ ա, վեր ըւռանց խոտեն տիզը կրակ ա ընգալ: Կնեգը չըմֆարը պրանումը վազ ա տամ: Մարթը վենն ա կցընում.

— Ախնի, չաֆարը պրանադ տուս կալ, եդնան ֆյընի: Մինչև կֆյընիս-կկյաս, չաֆարը պրանումդ կնալի:

## 161. ԳՅՈՒԴՈՒՄ ՉԵՄ

Վարժաբեդը նիշֆան սաիրում ա, Նեսին խոսում չի:

— Նեսի, էս ի՞նչ տառ ա:

— Բելա գյուղում չըմ:

Տասա ետ ննգերուճֆը իրեսնըեր խոսում ըն.

— Նեսի, ա-ն ննցալ ընֆ, տու վել գյուղում ըս, էնֆան սաիրում ա խե՞ չըս ասում:

— Մեր վարժաբեդին խսյաթը գյուղում ըմ, վեր մինն ասիմ, բսլակյան ա մինն էլ ասե:

## 162. ԼՈԽ ՄԻՆ Ա

— Նեսի, էս նի՞նչ տառ ա:

— Բ-յա:

— Ա մեռած, պա սա Ա չի՞:

— Մին ա ըլի:

## 163. ՏԱՆԱ ԻՎԻԼ ԸՆԻԼ ՉԻ

Ապել վարժաբեդը շերտվա օրերը խոցը սվրցնում ա: Մին օր էլ սվրցրածը Գեսուեց Բագրաթեն անա նրցընում ա: Բագրաթը եր ա կենում նյլընելլի, նյլընելլի ասում. «ըրկուշեբեթ, ըրըֆշեբեթ, չրուֆշեբեթ, ննգըշեբեթ, վցըշեբեթ, ուխտըշերեթ, ութըշեբեթ, ինըըշեբեթ...»

Ապել վարժաբեղը մի կերպ վենն ա անում.

— Բոլ ա, տանա իվիլ ընիլ չի:

## 164. ԴԱՅՈՒՆ ԱՆՈՒՄ ՉՕՆԵ՞

Յականը ուրան անումը կարում չի մետը պահե, ճըլլը-ճելլի մննան ըղնում ա: «Քյըննիմ իմ քվեր տոնը, օխտը խոխա օնե, կտեսնան, անումս կտան, մեննս կըղնե»:

Քվերը տռանը էշան վեր ա կյամ, խոխեքը զիրավ ըն տեռնում.

— Դային եկալ ա, դային եկալ ա...

— Ծան տղեք, դային անում չօնե՞:

## 165. ՊԱ ԿԱՏՈՒՆ ՀՈՐ Ա՞

Օսեփը էրկու կիլո մես ա առնում, պերում տոն:

— Թևանեն ախճիզ, կեսօրեն ինձ ճհետ մարթ ա կյլական, դոլմա կշինիս՝ կոտինք:

Կեսօրեն հնգերը եր կալած կյամ ա, տեսնում՝ ղզղան չկա կրակեն, վեչ դոլմա կա իփած, վեչ շորվա:

— Պա քեզ հի՞նչ ըմ ասալ:

— Ես հի՞նչ անիմ: Տու մեսը պերեր, կատուն էլ քաշից կերավ:

— Կշեռքն էլ ա՞ կատուն քաշալ կերալ:

— Կշեռքը հո՞ւնց կոտե:

— Դե պեր բստեղ:

Կնեգը կշեռքը ուրան քրերավը պռուռում ա:

— Պա կատուն հո՞ր ա:

— Էն ա թախտեն տակեն մրափած:

Օսեփը կատուն փռնում ա տնո̈ւմ կշռքեն մին թային, էն մին թային էլ էրկու կիլովանուց քարն ա տնում: Կատուն կշռում ա, դո̈ւզ էրկու կիլո:

— Էս էրկու կիլո մեսը, պա կատուն հո՞ր ա: Իսկ թա էս կատուն ա, պա մեսը հո՞ր ա:

## 166. ՄԵԾ-ՄԵԾ ՆԻ ԿԱԼ

Հցեցէ Վանեսը թոռնանը ղարկում ա.

— Բալա ջան, ընկի թայդի շրղնիս, վազ տալավ քյընի քու դօ̈րփոր կոշտը, վազ տալավ եկ: Էն ա քու ղօ̈րփեր բաղումը նըրօ̈ւվեր կտրեխս, սաե, ապերն ասալ ա՝ տու վեյ չի թայդի ըղնիս, թյին ռեխը մեծ-մեծ նի կալ, նըլը-նեյլի թող ըրա:

## 167. ԽԵ՞ ԼԱՑ ԸՍ ԸՆՈՒՄ

Հրուտղա նստում ըն, վեր չփոթ օտին:

Հարն ասում ա.

— Ա վերթի, համը կալ. համ մին թքյա իվիլ կոտիս, համ էլ ինձ կասիս՝ համվ՞ ա թա կած:

Վերթին համն. օնում ա, տեսնում՝ կած, խափում ա թա՝ համվ ա:

Հարը մին մեծ քթոլ նի յա օնում, անում պրանումը, տեսնում՝ կրակ: Էլ կարում չի պրօ̈նան վեր ածե, ընդի էլ կոլ ա տամ, ըշկերեն ըռերը հիղե յա ընում:

— Պապա, խե՞ լօ̈ց ըս ընօ̈ւմ:

— Քեզ մնան վերթին մեռած հաշև ըրե, լաց ըլի:

## 168. ՀԱՆՑ Ա ՀԱՄԸ ՓՈԽԽԵԻՍ

Պատվականը ննեռանց տանան մին սուրհե թուղ քացախ տնեիս ա ընօ̈ւմ:

— Պելուն տղա, հանց ըս լավ պեն տնեի՞ս:

— Կյինի յա:

— Ինձ տո, պատառ խմիմ:

Մինասը կլխեն ա քաշում:

Պատվականը տեսնում ա վեր տակեն պեն չի թուղլական, ծերքան խլում ա:

Պատվականը վեր մին հարօ̈ւր չքըռ հռանում ա, Մինասը հետան ծեն ա տամ.

— Պելուն տղա, էդ կյինուն համը հանց ա փուխեիս, թա տեղը կա, խարշի:

## 169. ԷՇՍ ՆԱՍԱՁ Ա

Աթունը էշը առաշն ա անում, ֆյընում պահեսա, սխեռնը սաանալ:

— Իմ ուրականեր հինչֆա՞ն սխեռն ա հենում:

— Ութասուն կիլո:

— Հանց բառուծանա միթարիս, ես ութասունը տանիմ, առ իցցունը կյրի, էշս նասազ ա, վախում ըմ Դերունց ծոռավը անց չկենա:

## 170. ՄԻՆ ԻՓԻԼԻ ԷԼ...

— Ա կնեգ, հաած, փոփի աեռած տանձ տեսած ը՞ս, ծառեն լափ երե ճղնան կախ ըլած: Ես էլ ըմ բնդի, տու էլ:

— Ըսելիդ ասե:

— Ասում ըմ ամեգը չորֆ ֆաան տարե ապրալ ընֆ: Խուաուր հղըցավ էլ կընհինֆ ֆեցած, դեղան հղըցավ էլ կընհինֆ ֆեցած, շատն էլ դուզ կընհինֆ ֆեցած:

Մահեն անը վեր մարթին սերան ա ըղնում, սերտը կկղում ա: Օզում ըմ վզավ օնիս, ա կնեգ, թա մին պերցու կյալանը եար, ֆանե հեաե յըս հղեդ ծռալ, ֆանե հետե յա խաշը առանց դեր նուրդ ընզալ:

— Մեղա, աեր:

— Էն հինչ վեր սաառւծ ա գյուղում, ասե մունֆ էլ գյիդանֆ: Սրտումդ վեր պեն աարեր, սաառւծ հոֆուդ չարչարանֆ կաա: Սերտդ թամուզ ֆյընի բատծու վենն, հանցու վեղեն տակեն թիթև ընիս:

— Ա կնեգ, ծերֆդ տիր սրտեդ, բդի երգինֆը եշի, սրաենդ ասե, պեն չի կյեղխս, հա:

— Դե առաշ առւ ասե,— կնեգը սրաըրվանվում ա:

— Ա կնեգ, ֆզանա հինչ կյեղիմ, ֆանե հեա վեննս սլկըհալ ա, էն ա կյումեն պարհանումը մին ֆյոհնա փարշ կա, մաշը մին պիծի ֆար ըմ ֆցալ, գյդացալ ըմ բաածու դադասաանեն օրը: Քյընի ֆու ծերֆավդ առւ առ, հաշև բրա, եկ ինձ ասե:

Կնեգը լոֆ ա սամ փարշը պռւրում.

— Մին, էրկու, իրեֆ... 12:

— Լնա էս ա՞:

— Հա, ես իմ նոքին: Մին օր ասածու քաշին նուքյի ըմ ոլական:

— Ա մարթ, կարել չըմ մեխկս ինձ ննետ տանիմ կյրեզման: Քյըզանա կյըղեցե, քատուծանա նունց կյեղիմ: էն ա ներքե տանը մին կոծկած կարաս կա, քանե նետ անգյալ ըմ բրալ, մաշը մին լոքի ըմ քցյալ:

Մարթը լոք ա սամ, տուս տամ պուրում.

— Մին, էրկու, իրեք... 8:

— Լնա էս ա՞:

— Հա, իմ նոքին: Մնել քզանա նինչ կյեղիմ, ա մարթ, առնե քզանա կյըղեցե, քատուծանա նունց անիմ: Տանա մին ըփիլի ավալ ըմ Եխսունց Մաքթաղեն, ըրփըվերի կնեզ ա, իփյալ ա, ոըվալ խոցը: Հա, մն էլ քզանա նի՞նչ կյեղիմ, քատծու մին օր նուքյի յըմ ալական: Տանա մին ըփիլի իմ նյրանց ըմ ավալ, նեղ օրում ըն ըլալ, իփալ ըն կերալ: էն սարեն վեր ընդի չատ լոքի եր կալինք, ա մարթ, նիշո՞ւմ ըս, նա սերմն էլ ա տանա:

Ասում ըն էս վերջին խոսկան առաջ մարթն էն ա ըլալ խըրմփըցընեխս:

## 171. ԹՈՍՏԱՆՍ ՃՐԻՄ

— Խե՞ բեյքեփ ըս:

— Շան ողես թոռը կտրում չի, թա քստանս նրիմ:

## 172. Խե՞ ՋՈՂՈՒԹՍ ՏԱՄ ՉԸՍ

Մակիշը միշա դերին պտըննեյխս ասում ա.

— Օրննյա դեր, ա դեր:

Դերն էլ ասում ա.

— Աստված օրննի:

Մե նետ Մակիշը կյամ ա դերին պտանում, թա.

— Աստված օրննի:

Դերը մնամ ա շվարած: Մակիշն ասում ա.

— Խե՞ ջողուքս տամ չըս, քինդ ու քարաղ կապալ ըմ, նա՞:

## 173. ԹՔԵ, ՆՈՐԸ ՓՌՆԵ

Հաթերf մե հետ հենգ-վեց խոխա եր ըն ընում փռշնի ծառը, վեր փռեշն օտին: Տհանցա մինը ծառան վեր ա ըղնում, վեննը տուս fցում: Մնացած խոխեfը վազ ըն տամ խուխեն հորը-մորը դույուղ անում: Խուխեն անըցեf, պարիկամնեն, ազգականնեն կզնըված կյամ ըն, թա ծառը պուf տան: Մինը պցըրանում ա երե ճղնան կախ ընում, մնացածն էլ ուրուր վեննա կախ ըն ըռնում, հայ-հայ անում, վեր ծառը պուf տան: Պեցիր ճղնան կախ ըլած մարթը ճղանում ա: Ասում ա.

— Վայ, ծեrfս ըլկըհում ա:

Ուրան անա կախ ըլած մարթն ասում ա. — Արա, մունf էն ընf պենդ փռնած, տու ծեrfդ պեց թողե, թfե, նորը փռնե:

## 174. ԱՆՀԱՄ ԽՈՍՔ

Մելիf Շահնազարը Պըըպուղուն ասում ա.

— Թա կարիս մին անհամ խոսկ ասիս, վեր ես ասիմ անհամ ա, ծիս fեզ կտամ:

Օրեր ըն անց կենում: Հունվարեն մին փսնգյու fշեr, վրցըկկանշա եա, fամեհ պտուտն ար տամ, օզում ար թա տները կըլըածե Կրկժանա ծորը:

Պուղին եր ա կենում շորերը կյենում, fյընում Մելիf Շահնազարեն տռնան ծեն տամ.

— Հե՛ Մելիf Շահնազար, հե՛ Մելիf Շահնազար, արա մին տուս եկ:

Մելիfը fնըթաթախ, մտըկհլավաձ տռնը պեց ա անում:

— Տու հու վը՞ս, հինչ ա՞ պտահալ:

— Քու ախպեր թուրթաշ ածելը գյուղում ա՞:

— Չէ:

— Իմ ախպեր էլ չի գյուղում:

## 175. ԽՍ ԷԼ ԸՄ ՏԱ ՀԵՏԵ ԾԾԱՂՈՒՄ

Մելիf Շահնազարը Պուղուն եշում ա fահ-fահ ծծաղում:

Պուղին էլ ավելի պեցիր ա ծծաղում:

— Պուղի, հինչա՞վ ըս ծծւմղում:

— Պա տու հինչո՞վ ըս ծծւմղում:

— Ես լավ կերալ ըմ, լավ խմոլ ֆեփս ֆյուֆացալ ա, ծծւմղում ըմ: Ծծւմղում ըմ, ֆանե վեր ես մելիֆ եմ, տու՝ ծառա:

— Ես էլ ըմ տա հետե ծծաղում, վեր ես ծառա յըմ, տու՝ մելիֆ:

## 176. ԱՍՏՎԱԾԱՎԱՐԻ՞, ԹԱ՞ ՄԱՐԹԱՎԱՐԻ

Մելիֆ-Շահնազարեն հորը բաղարաֆյավը կյինի ածողը Պուղին ա ըննւմ:

— Մելիֆ, արեղ ապրած կենա, կյինին աստվածավարի՞ ածիմ, թա՝ մարթավարի:

Պուղուն խոսկեն յրա Մելիֆը շատ մտածում ա, ասում՝ աստվածավարի:

Պուղին կյինուն սուրհեն յոր ա օնում ածում՝ մենին՝ շատ, մենին՝ խրեզ, մենին էլ ըսկի ածում չի:

Մելիֆը կզնըվում ա.

— Մեռնիս ուչ տու, Պուղի, էդ հի՞նչ ըս անում:

— Տու ըսեցեր աստվածավարի ածե:

— Պուղի, աստվածավարին վերն ա՞:

— Աստվածավարին էն ա է, վեր աստուծ մնին կլոխնըվեր ա ածում, մնին էլ վեչ մին պեն չի տամ: Մնին փայը խրեզ ա ըննւմ, մնին էլ նանա խրեզ, մինը ինձ մնան ֆյասիբ ա ըննւմ, մինը՝ ֆեզ նման հարուստ:

— Ըսկացե: Կյըվթնեն մրթըվարի ածե:

## 177. ՏԵՂ-ՏԵՂ ՇՆՈՐՀԱՎՈՐ ԸՆԻ

Մելիֆ-Շահնազարը եշում ա տեսնում՝ Պուղուն շալվարը թաքա չիթավ տեղ-տեղ կրկատած: Մազաղ ա անում.

— Պուղի, շալվարդ տեղ-տեղ շնուրհավուր ընի:

— Օրումաշ ապրիս:

## 178. ՏՈՒ ԽԵԼՔ ՈՒՆԻ՞Ր

— Հո՞ւնց տեռավ, Մելիք, վեր փողը ավեր նուխըրցուն հերիք չի, հալա քյոհլան ծիդ էլ ավեր տըրկերտեցուն:

— Պուղի, խելքս կուրցրալ ըմ:

Պուղին պեցիր ծծաղում ա.

— Ես էլ յրկե մին քսակ վեսկե յըմ կուրցըրալ:

— Տու վեսկե ունի՞ր, վեր կուրցընիս:

— Պա տու խելք ունի՞ր, վեր կուրցընիս:

## 179. ԸՍՏԾՈՒ ՃՆԱՆՉՈՒՄ ԸՄ

Պուղուն մին քավթառ առաքուր ծի յա ընում, հյաքումը վեր ա ըղնում ստակում: Պուղին ախ-վիշ ա անում: Մելիքը մոտա-նում ա. — Դարդ մ'էր անել, Պուղի, աստուծ քեզ ավելի լավ ծի յա տըլական:

— Էդ քու ըսեխս աստուծդ քան մնեթա պակաս ինձ ծի չի տըլական:

## 180. ՑՈՒՑԱԿԵՆ ԱՌԱՋԻՆԸ

Մելիք-Շահնազարը կարքադրում ա, վեր Պուղին Շուշի քա-ղաքեն հիմարներեն ցուցակը անե, տա ըւրան: Պուղին հիմար-ներեն ցուցակեն առաջինը Մելիքին անումն ա կյըրում:

— Պուղի, էս հինչ ը՞ս ըրալ: Ես էլ ըմ հիմա՞ր:

— Մելիքը ապրած կենա, մեր քաղաքումը քզանա հիմար մարթ չկա:

— Խե՞...

— Հիշո՞ւմ ըս, իրեք տարե առաչ իրեք հարըւր մանեթ պարտք ավեր նուխըրցե վաճառականեն:

— Ետա՞վ:

— Պա նուխըրցե վաճառականեն պարտք կտա՞ն:

— Պրլական ա:

— Վեր պիրի, սատ էլ քու անումդ ննջըլական ըմ, ըւրանը կյըրիմ:

## 181. ՊՈՒՂՈՒՆ ՃԱԹԸ

Մեյիֆն ու Պուղին ֆյըռնում ըն վերսի։ Մին ըխպրու ղրաղե նստում ըն վեր հաց ուտին։ Մեյիֆը ուրան բուխճան ծյուճու նըրման սիպտակ հաց ա տուս օնում, տնում սուփրեն։ Պուղին էլ մին չոր սև ճաթ ա տուս օնում, տնում կոխկեն։

— Տեսնում ը՞ս, Պուղի, իմ ուտեիս հացս հունց ա, քունը՝ հունց։

Էդ խոսկեն յրա մոտե քոլան մին ըլբստրակ ա տուս կյամ։ Պուղին չոր ճաթը յոր ա օնում, հետան պրծըռնում։ Տեսնում ա կարում չի հսնե, ճաթը յրան ա անում, ըլբստրակեն կլխան ա կենում, սպանում։

Պուղին ըլբստրակեն ընգուճներան փռնած պուրում ա։

— Տեսնո՞ւմ ըս, Մեյիֆ, ես հունց հաց ըմ ուտում, տու՝ հունց։ Իմ հացս կօզի ճաթ, ղյրաթավ ա, համ հաց ա, համ՝ թվանգ։

## 182. ԵՍ ԷԼ ՔՅԸՆԻՄ

Պուղին մին կյրեկի քշերավ եր ա կենում, մետքն ա կյամ, վեր Մեյիֆին քյալազ կյա։

Շուշվա մեյդանումը վենն ա կենում, ստտ տեղան ծեն տամ.

— Ա ժողովուրթ, լոխ անգուն կալիֆ, սօր Մեյիֆ-Շահնազարեն տանը մեծ ճաշկերութուն կա։ Մեյիֆը խնթրալ ա, վեր լոխ ֆյըռնիֆ։

Պստար վեր անց ա կենում, Պուղին եշում ա, տեսնում մեծպիծի շարան-շարան ֆյըռնում ըն Մեյիֆին տոնը.

— Մհե քուցե ղո՞րթ ա, ես էլ ֆյըռնիմ։

## 183. ԵՏՆԱՆ ՏԼԱԿԱՆ ՉԸՍ

Մեյիֆին մարը մեռնում ա։

— Պուղի, քեզ հենզ գրվանքա եղ կտամ, թաք կյաս ուշ քաղարաքյավը խտուրու-մտուրու խոսիս։

— Հինչ կըճի։

Բաղարաքին թանձր վախտը Պուղին մին թազի յա փռնում, կշեռքը քցում թազուն անավ, ֆյըռնում Մեյիֆին տոնը։

— Հենց գրվանքա եղս տո: Քեզ լավ ըմ ճնաճչում, վեր բադարաքը պրծնե, տու ինձ եղ ավողը չըս:

## 184. ՄԱ՞ՐԹՆ Ա ՇԱՏ, ԿՆԵԳԸ

Մին ճպարապ օր Մելիքը Պուղուն ճրցընում ա.

— Ա Պուղ, ըշխարքես մարթը կընի շատ, թա՝ կնեգը:

— Կնեգը:

— Հի՞նչ գյըդացեր:

— Կնանեքը լճա կնանեք, մարթ կա կնգանա բեթար ա, նաճանց էլ ըմ ճաշև անում:

— Բա՛լի ընձ էլ ը՞ս ճաշև անում կնանուցը շարգյումը:

— Մելիքն ապրած կենա, քզ նմաններեն վեչ կնանուցը շարքումն ըմ ճաշև անում, վեչ տղըմարթունցը:

## 185. ՊՈՒՂՈՒՆ ՕԽՏԸ ՊԵՌՆԸ ՑՈՐԵՆԸ

Մին սավ տարե ա, ծյու–ծմեռնը: Խեղն Պուղուն խոխեքը պեն չկա թա ուտին: Պուղին նարանատյալ քյընում ա Մելիք–Շանճազարեն վեննը:

— Մելի՛ք, նար չօնիմ, մին էրկու ճակ ցորեն տո, տանիմ քյուլփաթս կյրունքճան անիմ:

— Է՞դ ա լճա օգածդ:

Մելիքը ղալամը յոր ա օնում մին թոխտ կյրում:

— Հասե էս թոխտը տանում ըս տամ Սարուշենա քյուխեն: Նա ինձ օխտը ծիապեռնը ցորեն ա պարտք, կպիրիս խոխեքդ բոլ–բոլ կոտին:

Պուղին մեկել օրեն խոխան չի, վեր մելիքին ճվատա, ճղեննի պեց ա անում նամակը կարթում: «Սարուշենա քյուխեն. օխտը ծի ծյունավ պեռնում ըս, տամ իմ խռնարճ ծառա Պուղուն: Թա չէ՝ փալանդ վեր կօնիմ»:

Պուղին նամակը ծալում ա տնում ծուցումը, եա տեռնում: Ամեռը անց ա կենում, կյարունքը անց ա կենում: Օգուտոսա մին տաք օր Պուղին նամակը յոր ա օնում, քյընում Սարուշենա քյուխեն կոշտը, նամակը տամ ուռան:

— Պողի՛, երգինքը կրակ վեր ըծեխս, ես օխտը ծիապեռնը ծյունը ճի՞նչ աեղա տամ:

— Վեչինչ, ծյունը կա ոչ՝ ցորեն տո, ես էլ կպարեխոսիմ Մելիքը ֆեզ տուս չի ֆցիլ, էլիա կմնաս ֆյոխա:

Պայմանը տի էլ կապում ըն:

Ըրևանցուկեն Պողին մին ֆարվանավ նի ա մննում Ավեսարանոց: Մելիքը եշում ա զարմանում: Պողին մին սիպտակ ծի նստած, բեղեն տակեն խաղ ըսելավ, օխար ծի էլ ցորնավ պեռնած տոն ա կյամ:

— Պողի՛, էս ճի՞նչ խաբար ա:

— Արեղ ապրած կենա, Մելիք: Հնցած ծմեռնը մին զուլում ծմեռն ար, ճղցկնեն էլ կապված-ֆշկռված, Սարուշենա ֆյուխեն կյրած նամակը կրեցալ չըմ տանիմ տեղաց անիմ: Սորե մեննս ա ընգալ, ըսեցե ֆյընիմ օխտը պեռնը ցորենը պիրիմ, մուճայոթունը լավ պեն չի:

## 186. ՔԹԵԴ ՀԱԼԸ ՀԱԼ ՉԻ

Մելիք-Շահնազարեն ճարը մեռնում ա: Մելիքը ծեն ա սամ Պողուն.

— Պողի, սատված կտրե պնոթունը, սաղ օրը ֆթավս թաղլեթ ըս անում, իմ ճոր բաղարաֆավը ֆթաս խոսիս ուչ: Իրեֆ մանեթ կտամ:

Պողին իրեֆ մանեթը ինֆ ա օնում, խոսֆ տամ, վեր խոսե ուչ:

Վեր բաղարաֆը սկսում ա, Պողին իրեֆ մանեթը տուս ա օնում, Մելիքին տեմ օնում. — Մելիք, իրեֆ մանեթդ եր կալ, կարել չըմ սուս անիմ, ֆթեղ ճալը ճալ չի:

## 187. ԴԶԴԱՆԸ

Պլըպուղուն աչֆը էն ա ընում Մելիք-Շահնազարեն ղզղանեն: Մին կիրեկի ծեն ա սամ, ղզղանը յոր օնում, վեր մաչին փըլավ իփի: Պուրում ա էրկու օր պահում, մին պիծի ղզղան էլ նըճեար տանում տամ Մելիք-Շահնազարեն:

— Պողի, էս պիծինը ճի՞նչ ա:

— Մելիք, պա սսել չըս, ղզղանդ ծնալ ա:

Մելիքը սուս ա անում, նոխտ ղզղանը յոր օնում: Մին չեբ-թանը եոր ճամին ղզղանը Պուղին մին էլ ա օզում: Մելիքը մը-տածում ա. «Ղզղանը տամ, բալի մին էլ ա ծննական»:

Մին ամես անց ա կենում՝ Պուղին ղզղանը պուրում չի:

— Պուղի, ա պել մեռած, պա ղզղանը խե՞ պուրում չըս:

— Մելիք, պա ասել չըս, ղզղանը ստակալ ա:

— Ա Պուղի, պա ղզղանը կստակե՞:

— Էդ հունց ա, ծնելին հվատում ըս, ստըկելին հվատում չըս:

## 188. ՏՈՒ ՔՅՈՒՌՆ ԸՆԳԵՐ, ԵՍ՝ ԱՐԱԽՍԸ

Մրթըկնեգ կռև ըն անում:

Կնեգն ասում ա.

— Քյըննական ըմ ըղնիմ Քյուռը, ֆզանա պրծընիմ:

Մարթն էլ ասում ա.

— Ես էլ ֆյըննական ըմ ըղնիմ Արախսը, էլ հա կյլական ըհֆ ճւրճւր ննետ ըղնինֆ:

## 189. ԱՓՍՈՍ Ա ՔՅՈՒՌԵՆ ԾՈՒԿՈՒՆԸ

Մրթըկնեգ միշտ կռև ըն անում:

Մին օր կնեգն ասում ա.

— Քյըննական ըմ ինձ ֆցիմ Քյուռը, ֆեզ խայտառակ անիմ:

Մարթն ասում ա.

— Դե՛, դե՛. մին թֆյա հալալ ծռւկուն ընֆ օտում, ֆյընում ա ըն էլ մուրտառե:

## 190. ՄԵՀՏԻՃԵՆՈՒՄ

Մարը ըխնկանն ասում ա.

— Մածունը մերալ ը՞ս:

— Հա, մերալ ըմ:

— Պա հի՞նչավ ըս պտատալ:

— Ապոըը շլվարավը:

— Պա եխտուտ չի ըլա՞լ:

— Չէ, հըլըղորալ ըմ, եռնան:

## 191. ՎԵՉ ՇՆԱՑԵ ՅԱ, ՎԵՉ ՔԱՂԱՔԱՑԵ

Մին մարթ նի յա մննում մին շեն: Մին հըլևուր էլ էն ա ընում շնըմաշումը նստած: Էս անտես-աննտնաշ մարթին եշում ա, ինքը ո̈ւրան ասում. «Սա շնացե՞ կընի, թա քաղաքեցե՞: Էստ քյրնում ա ըխպրան նոււր խմե, թա պերանը փեշկավը սրփից, ուրեմն շնացե յա, թա ջուբան յալլեխ տո̈ւս կալավ սրփից, գյիդա վեր քաղաքեցե յա»:

Աննանաշ մարթը չոքում ա ըխպրին կոխկեն, էրկտն նո̈ւր խմում: Լհա ընդի չոքած փափաղը վեր օնում, պրանավը մե հետ աչ քաշում, մե հետ՝ ծեխ:

Հըլևուրն ասում ա. «Սա վեչ քաղաքացե տեռավ, վեչ շնացե»:

## 192. ԴՐՂԱՆՑ ԱՇՈՏԵՆ ՔՅԱԼԱԳԸ

**Ղզլեցե** Աշոտն ու ռիպտակշնացե դնգլբաշի Տիկրանը սերավ հնգերունք ըն ըլալ, մինտեղ հաց ուտեխս, համ էլ ո̈ւրո̈ւր միշտ թոփ կյախ, ուրո̈ւր քյալյա̈գ կյախս: Մե հետ Աշոտը ռուգյունը մթընմթեն կյամ ա Տիկրանենն տոնը: Եշում ա տեսնում՝ կնեգը լվաց ըրած, տռանը քուղավը կախ ըրած: Տնգըղում ա. լվացան մին լավ հլըվփոխան յոր օնում, ծուցան թոխտը տուս օնում, կարքեն-սարքեն պտատում, տնում կռուտակեն, նի մըննում տոնը: «Այ պարի ռուգյու», «Աստծու պարին»: Ո̈ւրո̈ւր կըլվըկոլ ըն ընում:

— Աշոտ, էս ա քանե վախտ ա ըրվացալ չըս, դե պատմե տեսնամ:

— Տիկրան, հի՞նչ ասիմ, լավ ըմ: Նոր ըմ Բաքվա եկել: Մին հըլըվփոխան մեր Գոհարիկին հետե յըմ ինք կալալ, մինը՝ իմոր, մինն էլ՝ Շափաղաթեն: Օրիշ պեն կրեցալ չըմ պիրիմ, խնթըրում ըմ նղանաք ուչ:

— Էդ հի՞նչ նեղութուն ա վեր քաշալ ըս, խե տու օրի՞շ ըս, վեր խլաթավ-բրաթավ նի մննիս տոնս: Ախնի, տանը հինչ կլեղած-պտատած պեն օնիս տուս կող պեր. մեր Աշոտը քզ էտե խալաթ ա պերալ:

Կնեգը անհարմար ա զգում ղունաղեն քշտեն պտատածը պեց անե, ընդի էլ տնում ա տախտեն, ինքը հացու պադրաստութուն տեսնում:

Աշոտն ու Տիկրանը լավ ստում ըն խմում: Աշոտը եր ա կե-նում «Պարի ֆշեր» ասում, ծին եր ընում, ֆյընում:

Վեր մին ֆանե րոպե տնց ա կենում, Տիկրանենն խելֆը պար-զում ա:

— Ախճի, Ճոփաղաթ, ախեր ճիշֆան մտածում ըմ, ղզղլեցե Դրղանց Առստամենն տղա Աշոտը, սիպտակշնացե Տիկրոնենն կըն-գանը ճեոե խալաթ չի պիրիլ, մին էն պտատածը պեց բրա:

Կնեգը պ՛ուռ՛ում ա պեց տնում:

Մարթն ասում ա.

— Մաշալլա մորիփաթեղ, Աշոտ տղա, ճանց ըս ղորթ ասած ընիս:

— Աղա, էս իմ ճըրվփոխանս ա, էստ ճալա նամ-նամ, ֆու-ղան ա եր կալալ...

## 193. ՄԵՂՔ Ա ԿՆԵԳ ԱՍԵԼԸ

Աշանեցե 80-ամյա Ղզարանց Հակոբշանն ասալ ա.

— Ա ժողովուրթ, մեր Օսանենն ճետ էնֆան օրուֆշեր ըմ ը-րոլ, ֆուր-ախպեր ընֆ տեռալ, մեղֆ ա կնեգ ասելը:

## 194. ՀԻ՞ՆՉ ԿԸՆԻ

— Ճափաղտոր, ախճիգդ անակին կյեշ ա, մինչև մին ծի, մին կավ, մին կալ չտաս, տղես ճետե օզ՛ողը չըմ:

— Հինչ կընի, կտամ: Քյոռեն նրա՛ն ճի՞նչ կպկասե:

Երբ ճամաձայնության են գալիս, Ճափաղտորն ասում է.— Կլխես մատտղ ընիս, ես էդֆանը տվե, մին տես տուֆ ճիշֆտն բդիֆ տալ, վեր տանա ըլտծեն օզող ընի:

## 195. ԴԱՐԴՍ ՕՂՏԴ ՉԻ

Մին մորթ օղտը կուրցընում ա, շոռ կյախս մին ախճիգ ա պտաճում:

— Բալա, ջանեղ մատաղ, օղտը չըս տեստ՞լ:

Ախճիգն ասում ա. — Մեր շենան էրկու տղա ինձ օզղում ըն...

— Օղտ ըմ ասում է, օղտ:
— Մինը մեր շենան ա, մինն էլ իմ դայու տղան ա:
— Ախնի, տղա չըմ ասում, օղտ ըմ ասում: Օղտը չը՞ս տեսալ:
— Ես օզում ըմ շնացուս fյընիմ, թանրին եշած՝ մեր դայուն տղեն ըն տլական: Ես էլ օզում չեմ:
— Ախնի, լավ չը՞ս սկանում, օղտը, օղտը:
— Քյուլս վեռետ, ամեն մարթու դարդ հուրան հետե օղտ ա:

## 196. ԿԼՈՒԼԻՐ, ՄԻՆ ՕՂՏԸ ՇԻՆԻՐ

Ըլըվերդունց Անդունը իննասուն տրեկան մեծ մարթ ա ըլնում, հյաթումը նստած: Ճանչերը կյամ ըն յրա տեռնում, չըրչարում: Անդունն ասում ա.
— Ախ, աստուծ, յանի վեր ըշխարfես ճանչերը լոխ կլուլիր, մին օղտը շինիր, հի՞նչ կնար:

## 197. ԻՐԵՔ ՊԵՆ

Մին դարտբաղցու հրցրին. հի՞նչն ա էրկան բպրելիդ պատճառը: Ասից.
— Օթը, թոթը, թիյին կոթը:

## 198. ՊԱՏՄՈՂԸ ՍՈՒՍ Ա ԱՆՈՒՄ

— Ճղացեն կոխկեն մին հավու պուն ա ընում, մաչին՝ հավեր: Մե հետ աղվեսը կյամ ա թա կյուղանա, հանկարծ հվերեն տարը իրեսնըեր ա ընում՝ փաղը ծերfեն: Աղվեսը վխելան լոf ա տամ, պարհանավը ըղնում ճեղացը:
Պատմողը ըստեղ սուս ա անում:
Լսողնեն ասում ըն.
— Ետնան, պա հի՞նչ տեռավ աղվեսը:
Պատմողն ասում ա.
— Դե հի՞նչ բդի տեռնա, աղվեսը ճղացպտն չի տոնըլական, տուս ա կյլական փախնի, ըլի:

## 199. ԴԶԴԼԵՑԵ ԴԶԱՐԱՆՑ ՀԱՆԵՍԸ

Հանեսը վխեիս ա ընո̈ւմ, թա վրարած Կոկառավն անց կենա: Ծերքերը սրտեն խաչ ա անում, կոխկեն վեննը կենում: Էդ տրութունումը Լրկու կնեգ ըն կյամ, խնթրում, վեր ամեն մինը էրկու մանեթ փող կտա, մինումինակ թա ծրքրներան փոնե, անցկցնե կյետեն էն մին անգյունը:

Հանեսը սրտըվանվում ա, ասում ա. «Էս լհա լավ տեռավ: Նի կմննիմ էրկու կնգանը ղաթը, ինձ կտանին տուս օնին ընդեղ, չորս մանեթ էլ փող ինք կօնիմ»:

Վզա̈վ օնում: Կնանուցը ծերըրներան փոնում ա, նի մննում ճո̈ւրը: Կյետեն մաչտեղավը քյնիյիս, կյետը լափու վա տամ, կընանուցը մնին քշում տանում: Էն մին կնեգը ղաչանք անում.

— Հանես, ջանս քե մատաղ, վազ տո փոնե:

Հանեսն ասում ա.

— Սուս ըրա, թող քշի, էրկու մանեթը ճինչ ա, վեր նա ճետե նեղութուն քաշիմ:

## 200. ՄԵՏՔԴ ԽԱՅԻՆ Ա

— Կնգանդ փորեն ճղուպուր կոտրիմ:

— Թա մետքդ խային չի, էրկու քար եր կա̈լ, մինը տակեն տիր, մինը՝ կլխեն, ճղուպուրդ կոտրե:

## 201. ՎԵՐՑԱԿԸ ՀԻՆՉՈՒ ՀԵՏԵ ՅԱ ԿԱՆՉՈՒՄ

— Արա, Մաղաք, բա̈լի գյիդաս, վերցակը քշերը ճինչու ճետե յա կանչում:

— Պա քու տոնը չինվի, գյուղո՞ւմ չըս խե: Կանչում ա, վեր ճավերը քունավ չի ճնցընին, ծառան վեր ըղնին:

## 202. ԱՆՈՒՄԴ ՀԻ՞ՆՉ Ա

Մին մարթ մին մարթու պտանում ա, ասում ա.

— Անումդ ճինչ ա՞:

էս մարթը պատառ ուժեր ա ընո̈ւմ խուսեխս, կմկմամ ա.

— Մըս... մըս... մըս... Մոսես ա: Պա... պա... քունը հի՞նչ ա:

— Իմն էլ ա Մոսես, ամա էդքան էրկան չի:

## 203. ՏԱԽՏԵՂ ՉԸՔ ՕՏՈ՞ՒՄ

Մին ղարաբաղցե ըղնում ա մին թիֆլիզեցու տոն ղոնաղ: Եշում ա տեսնում՝ սուփրեն տախտեղ չկա, ասում ա.

— Տուք տախտեղ չըք օտո՞ւմ:

— Չէ:

— Խեղն: Պա հո՞ւնց ըք յոլա քյընում:

## 204. ՓԱԼԱՆԴՈՒԶ ԿՈՒՔԱՆԸ

Փալանդուզ Կուքանը սարքերը յոր օնում, Սզնեքա քյընում Ննգիչան, մին տան բանդ ընո̈ւմ: Տանը մարթը ուռթանան էր ա կենում քյընում հանդը, Կուքանը մնամ ա մինակ, ո̈ւրան կործեն նհետ: Տանը իրեք հարթն ա ընում, մին սկեսուր, մին նո̈ւրու խոխեք, բուխարիգին կրակեն էլ մին մեծ ղզղան: Կուքանը աշկեն տակավը եշում ա, տեսնում մեծ հարթնը եկու, ղզղանեն ղափաղը էր կալավ, մին հափուռ աղ ածից, խառնից քյընից: Մին հովուր վեր անց ա կենում, մաշնակ հարթնն ա կյամ, ղզղանեն տակը տամ, մին հափուռ աղ քցում, խառնում քյընում: Պատառ վեր կենում ա, պիծի հարթնն ա կյամ, ղզղանեն ռեխը պեց անում, մին հափուռ աղ քցում, խառնում, քյընում: Կլխավն էլ սկեսուրն ա կյամ, ղզղանեն տակեն մին չոփ աընում, մին հափուռ աղ ածում, շիրեփավ խառնում քյընում:

Կուքանը ղրաղե աշկը հոփ օնում. «Պա-հա, սահանք ո̈ւրո̈ւր անա խռավ ըն»: Եր ա կենում մին հափուռ աղ էլ ինքը ածում, հաշո̈ւթ-մշո̈ւթը հվաքում քոշում:

## 205. ՇՈՒՇՎԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

— Կարծես Շուշի ըս քյընում:

— Կարծես:

— Կարծես կյինի ըս տանում:
— Կարծես:
— Կարծես լավ կյինի ա:
— Կարծես:
— Կարծես նեստա մին լավ խմըլական ընf:
— Էդ մեկը չկարծես:

## 206. ՎԵՆՆԵՐԴ ՏԵՄ ՁՏԱՍ

Արևը կրակ ար վեր ածում, հնձողն էլ մուխրտանձին շուքումը փրթուշ ար օտում: Մորեխը լոf ա տամ ընգնում փրթուշին ամանը: Հնձողը լպստում ա տեն fցում: Պտտար չընգած՝ մին էլ ա նի ըղնում: Հնձողը մին էլ ա լպստում տեն fցում: Երրորդ անfամ վեր ըղնում ա, հնձողը փադի fթոլը տակավն ա տամ փրթուշին ննետ կոլ տամ:

— Վեններդ տեմ չտաս, իմ կողfս fունան հաստ ա, կոլ ըմ տլական:

## 207. ՔՈՒ ՄՈՐ ՏՐԽՆԵՆ ԿՅՈՒՂԱՆՈՂՆ Ա

Մե հետ մին կոխկենող ա կյամ խերխանա շնըմաշին վեննը կենում, թա.

— Հու կկարե տուս կյա առաշս, փռնիմ ճորմզի անիմ:

Կուփե ըն տամ խոլդուն fցում էն հեյվանեն առաշը: Խալդին լխեղճ-խեղճ ըռաշին վենն ա կենում, էն էլ թխում ա, բիզ-բիզ ա անում, կփրկուփե ա անում: Ընդղան մինն ասում ա. — Խալդի, հինչ պենե ըս, էդ fու մոր տրխնեն կյուղանողն ա, է:

Սկանալն ըրաթ խալդին փահլևանեն փռնում ա հիլըղորում, մին ճոխտ տրեխ շունում, թող անում fցում մարթունցը վններեն տակը:

## 208. ԱՆՑ Ա ԿՆՆԱԿԱՆ ՔՅԸՆԻ

Ողորմածհոfի Պլը Պուղուն էշը մտնում ա Մելիf-Շահնազարեն արտը:

— Մելիք, գիդում ըմ, չար մարթ ըո, ֆզանում պնըլական չըս, սան տեսնամ, հինչ ըս ըննական:

— Հինչ ըմ ըննական, կիրեկի օրը էշդ տննական ըմ շնամաշը, տամ ժղըվուրթեն դիվանն անե՝ էշիդ հաֆյին կտրին, պեց թողին:

Իմաստուն Պուղին բատեղ ծիծաղում ա:

— Հի՞նչավ ըս ծիծաղում:

— Էդ լավ ա: Էշս վեր տանիս շնամաշը, ժղովուրթ ըն, թուփ ըն տոնըլական, մինն բըըլական ա՝ պերեֆ հաֆյին տական կըտրինֆ, էն մինն էլ՝ մաշան կտրինֆ, մինն էլ՝ պտկան կտրինֆ, կռև ըն ըննական, ուրուր ըռեխ կըծկըծին: Էշս էլ ֆու խելֆեդ չի, մինչև հանգը-հունգը, հղե ա ընգլական կյա ուրան կյումը:

## 209. ԷՍ ԷԼ Ա ՇԱՏ

Աբրամը Թևոսեն հրևանն ար: Մին ուրթանա Աբրամը Թևոսեն ղոնաղ ա ծեն տամ: Թևոսը մին պիծի հափուռ նուր ա բրեսավը տամ, թա ուռ կյա, կնեգն ասում ա.

— Իրեսդ խե՞ սերուն չըս լվանում:

Թևոսն ասում ա. — Աբրամեն հալա էս էլ ա շատ.

## 210. ԳՈՐԾԸ ՀՈ՞ՒՆՑ Ա ՔՑԸՆՈՒՄ

Պելանց շենին բրիգադիրը իրեֆ հոֆու դարկում ա խաղողաբաղը, վեր հենակներ տնգոտին: Նհանցա մինը թդի փոքը կըտրե, մյուսը հենակը տնի կարած փոսումը, էն մինն էլ՝ վեղավ անե: Էֆսի օրը հենակ տնողը ֆյընում չի: Օրվա վերչին բրիգադիրը պտահում ա.

— Հը, գործը հո՞ւնց ա ֆյընում:

— Լափ լավ ա ֆյընում,— ասում ա փոս կտրողը,— դուզ ա, հենակը տնողը եկալ չի, ամա մունֆ մեր գործը ըրալ ընֆ: Ես փոսը կտրալ ըմ, Հաբեդն էլ վեղավ ա ըրալ:

## 211. ՏՈՆԸ ՊԱՐԱՆ Ա ԿՑԱՄ

Այլերեն չվալն էն ա ընում տրած տանը սթունին տակեն: Ջաղին ֆյընում ա թա մին կից նեստա յոր օնե, շտղաղ անե:

Սերքանը մինը սթո̈ւնին էս անգյունավն ա մեկնում, մինը՝ էն անգյունավը, կիցքում: Սթո̈ւնը մնամ ա կիցքած ծերքերեն մաշ-տեղը: Ճարը կարած հարայ ա տամ: Սաղ շենը հվաքվում ա: Պա հո՞ւնց անին: Որոշ ըն անում՝ կացենը յոր օնին սթո̈ւնը կտրին: Խեղճ Ձառուն մին սթո̈ւնանէ տոնը կլխրներեն պարան ա կյամ:

## 212. ՎԵՆՆԱՎ ՔՅԸՆԻՄ

Պելանց շենան մին մարթ ըղնում ա Բաքու՝ էրկու լիգյը չվալ էլ շլակեն:

— Կնեգս ասալ ա՝ պոեզդավ կքյընիս, պա պոեզդը վե՞րն ա:

Մին ժուլիկ սկանում ա, մոտանում.

— Հասե պոեզդը,— ցույց է տալիս ռելսերը,— մին վեննդ տնում ըս էս մին ըրկաթեն, մինն էլ՝ էն մին ըրկաթեն, դինջումդ քյընում:

Խեղճ մարթը մին վեննը տնում ա էս մին ըրկաթեն, մինն էլ՝ էն մին ըրկաթեն, էրկու չվալն էլ շլակեն, շքըռ-շքըռ թնելավ քյընում: Պատառ վեր քյընում ա, ասում ա. — Ա՛ սա պոեզդը վեր քյընի, վեր կյամ, վեննավ քյընիմ:

# ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՍԱՀԱՐԻ, ԿԱՆՉ** կամ **ԱՐԵՎԱԿԱՆՉ**.— Հատուկ արարողությամբ, երգով ու պարով մորթում էին հարսանիքի աքլորը («մսացուկը»): Մորթում էին վաղ առավոտյան, արևագալից առաջ: «Սահարի» նվագով էին զոհում բոլոր մատաղացուները: Զոհի արյան մեջ թաթախում էին նոր կողպեք ու բանալի, կողպում, որպեսզի չարի ճանապարհը փակվի:

**ԱՂԱՉՈՒՐ**.— Աղաչրով լողացնում էին փոքր երեխաներին, նորածիններին՝ մարմինն ամրապնդելու նպատակով: Աղաչրով լոգանք էին ընդունում նաև տարեցները, իբր դա զերծ է պահում մաշկային հիվանդություններից: Աղի թրջոցներ էին դնում թարախոտ վերքին:

**ԱՎԵՏՉՅԱ**.— Տալիս էին բոլոր բարի լուր բերողներին:

Ասում են մի մեծաթիվ ավազակախմբի գլխովին ջախջախելու, Ավդոտօջախ հին եկեղեցու հարստությունը Մաթեզա (Մաթիկ) վանքը անվնաս տեղափոխելու բարի լուրն առնելով, Վերին Ավդոտ գյուղի բնակիչ հարյուրամյա կույր Մկրտումը, տևական խրախճանքների համար, հաղթանակով եկած երիտասարդներին նվիրել է հինգ արջառ և հարյուր ոչխար:

**ԱՆԱՍՆԱԹԱՂՈՒՄ**.— Լավ եզան (գոմշաեզան), կովի (գոմշակովի) եղջյուրները կախում էին տան ճակատամասից, եզը սատկելուց մարմինը թաղում էին կալի մոտ (կալի գերեզմանոց): Պահում էին նաև վզի (յալ, ալի) և պոչի (ագի) մազերը, դնում էին քսակի մեջ, իրենով կապում, թաղում հողում, իբր նրա հետ թաղում էին նաև չարը:

Սատկած սիրելի անասունի հետ թաղում էին նաև այն զարդարանքները, որ կենդանության ժամանակ տվել էին իր վաստակի համար:

**ԿՈՒՐԶՈՎ ՏԱԼ** (կուժեզավ տալ).— Հարսանիքներում, տոնա-

կան հանդեսներին, թատերական, գուսանական ներկայացումների ժամանակ շռայլած հոն (հուն), դամբուլ և առանձնապես կորիզ էին նետում չսիրած մարդկանց. վատ նվագողին, վատ պարողին, դերը վատ խաղացող դերասանին, կարգը, սովորույթը խախտողին:

Եվ հակառակը: Իր շնորհքով, առատաձեռնությամբ, վեհանձնությամբ աչքի ընկածներին, որպես հարգանքի, պատվի նշան, թանկարժեք նվերներ, ուտելիք էին ուղարկում՝ հատուկ փաթեթների մեջ: Հաճախ ուղարկում էին խմիչքներ՝ լավ գինի, մեղրաջուր և այլն: Հարգվողը պարտավոր է, որպես փոխհարգանքի արտահայտություն, բոլորի ներկայությամբ ճաշակել, խմել, ընդունել ուղարկվածը:

ԽՆՁՈՐ ՏԱԼԸ.— Տղաները, սիրած աղջիկներին, առաջին հանդիպումին կարմիր խնձոր էին տալիս: Վերցնելը փոխադարձ սիրո իմաստ ուներ: Աղջիկները սիրած տղաներին ձեռագործ գեղեցիկ թաշկինակներ էին նվիրում, հարազատները (ծնողները)՝ ձեռագործ գուլպա, ժապավեն, գոտի և այլն: Տարվա որ եղանակին ուզում է լինի, տղան, սիրած աղջկան կամ ծաղկեփունջ պետք է նվիրի, կամ կարմիր խնձոր: Երբ անհնարին է հանդիպումը, կարմիր խնձորը կամ ծաղկեփունջը, հավատարիմ մարդու միջոցով ուղարկվում էր: Հարսանիքներին, ուրախ հանդեսներին, որպես հրավերի նշան, ուղարկում էին կարմիր խընձոր:

ՍՈՒՐԲ ԹՎԵՐ.— Իրեքը, չորքը (չորեքը), օխտը, քառասունը, հարուրը սուրբ թվեր են:

ՊԱՏՐՈՆ.— Փեսայի հայրը: Ըստ ընդունված կարգի, փեսայի հայրը հարսի առաջին հովանավորն էր ու խնամակալը: Պատրոնը միշտ ուշադրության կենտրոնում է հարսի, ինչպես և հարսը՝ պատրոնի: Առաջին նվերները պատրոնն է տալիս հարսին, իսկ հարսը հլու-հնազանդ ու նրանից անխոս ծառայում է նրան: Երբ առաջին անգամ հարսը լվանում է պատրոնի ոտքերը, նրանից նվեր է ստանում: Առաջին խոսելուց՝ նվեր է ստանում (առանձնապես՝ երբ ասում է «պապա» կամ «հայրիկ»): Հարսը չպիտի համարձակվի լիաբերան խոսել պատրոնի հետ. նա միշտ պարկեշտ է, չափավոր: Նրա իրավունքից դուրս է բարձրագոչ ծիծաղել, նրա ներկայությամբ գուրգուրել, համբուրել անգամ երեխային, ինտիմ հարաբերությունների մեջ մտնել ամուսնու հետ, ջուր խմել, ուտել, բղավել, կուրծք տալ երեխային,

երկար մնալ պատրոնի մոտ, նստել առանց հրավիրանքի, ի ցույց դնել օրորոցը։

ԳՈՐԳԱՄԱՔՐՈՒՄ.— Հնում, որպես կանոն, տանտիկինները գորգանախշերը պայծառեցնում էին քացախով։ Գորգը փռում էին արևի տակ և քացախաջրի լուծույթով շփում, մաքրում գորգապատերը։

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.— Հայերի հինավուրց սովորությունն է։ Մի ավանդությամբ՝ աստված ինքն էլ չի կարողացել խուսափել հայերի հյուրասիրությունից։ Հյուրընկալվել է հայերին ու մնացել «բերանը բաց»։ Այդ օրվանից անձնյուրընկալ ու մենակյաց աստված նախանձում է հայերին։

Մի կտոր հացը, մի գունդ սոխը, մի բաժակ օղին, մի թաս գինին, տան եղած-չեղածից միշտապես սեղանի վրա էին, քանի որ կարող էին հանկարծակի հյուրեր հայտնվել («Ղոնաղն աստծունն է», «Ղոնաղը հմաշկուտ կրնի, ուտըցընել բդիս», «Ղունաղեն անա խնայիլ չըն, տան ըլած-չլածը կտրնին ղունաղեն բռաչին», «Յա տուզնը մարթին հաց տված, յա քա հոր յրա քար ըրգած»)։

Ընտանիքը ճաշելիս միշտ ավել բաժակ ու ափսե էին դնում սեղանին՝ հանկարծահաս հյուրի համար։ Ոչ միայն տանը, օջախում, այլև՝ այգում, դաշտում, կալում, ճանապարհորդելիս իշխում էր նույն հաստատուն օրենքը։

ՀՅՈՒՐ ԿԱՆՉԵԼԸ.— Յուրաքանչյուր տուն պարտավոր էր հանախակի հյուր կանչել գյուղի (բնակավայրի) պատվավոր մարդկանց, բարեկամներին, ազգայիններին, բարեկամներին, հարազատներին, ազգի, թաղի մեծերին, ազգում, թաղում հայտնված նորեկներին և այլն։ Նման դեպքերում ճաշասեղանի վրա պետք է լինի ամեն ինչ. «Քաշին պնեռան մինչև սոյնին եղը»։ Պետք է լինի բնտանի և վայրի թռչունների մսից պատրաստված սարբեր կերակուրներ, և իհարկե, խորոված, ընտանի, վայրի կենդանիների մսերից պատրաստված բազմահամեմ ճաշատեսակներ, ձկնեղեն, խնեցու նոր հարած յուղ ու թան, հին գինի, օղիներ՝ ըստ ճաշակի, աղանդեր, տարբեր պտուղներ, բանջարեղեն, կանաչի և այլն։

Վերջում հյուրերին հրամցնում են անուշաբույր հյութեր ու մեղրաջուր։

Հյուրին մենակ չեն կանչում։

ՏՈՆԸ ՏՈՆ ՉԻ ԿԱՄ ՍՈՒՓՐԱՆ ՀՎԱՔԵԼ.— Յուրաքանչյուր բն-

տանիք պատրաստ պետք է լինի ընդունելու ճանապարհորդին, տան դուռը ծեծողին, պատահական անցվորին և բավարարելու նրանց պահանջները, հյուրասիրելու սառը ջրով, կաթով, մածունով, թանով, ոգելից և զովասուն ըմպելիքներով...

Բաց սեղան չունեցող սանտիրոջը կոչել են՝ ՁԿԱՄ, ընտանիքը արհամարհվել է համայնքի կողմից և տուն (օջախ) չի հաշվվել:

ՍՈՒՓՐԱՆ ՀՎԱՔԵԼ.— Այս դարձվածքը ունեցել է անհյուրընկալ լինել, մարդահաշվից դուրս գալ, մահանալ, տունը ավերվել, ժողովրդից կտրվել իմաստները:

Սեյդիշենցիները անհյուրընկալ են: Ասում են. եթե կեսգիշերին էլ անծանոթը հասնում է Սեյդիշեն, նրան խորհուրդ են տալիս շարունակել ճանապարհը. «Օր կա, եր ընցեր»:

ԱԽՊԵՐԱՆԱԼ.— «Հնմին հացան կծել».— Երկու ընկերներ ախպերանալուց առաջ կծելով մի հաց էին ուտում: «Ուրուր պըրանում թքել»:

«Մազ թաղել».— Յուրաքանչյուրն իր ունքից մի մազ է պոկում, որ միասին դնում են ու թաղում հողի մեջ: Այս արարողություններից հետո մինչև իրենց կյանքի վերջը ախպերացած մարդիկ իրար հավատարիմ են մնում:

«ԷՍ ՀԱՑԸ ԻՆՁ ՔՈՒՌԸՅՆԵ».— Երդում հացով: Ձեռքը դնում էին հացին՝ երդվում և անպայման կատարում էին խոստումը: «Էս հացը ինձ քոռըցնե, թա անիմ ուչ», «Թա սու ասիմ՝ էս հացը ընձարս վեչ քթենվա» և այլն:

ՀԱՑ ԸՐԱԾԵՆ ՏՈՆԸ.— Վեր չենը ղոնաղ ա եկալ, տըրկացալ ըն, հու վեր էտ օրը հաց թխած ա ըլնի, դարկալ ըն նահանց տոնը: («Թաժա հացը դունաղենն ա»):

ՄԳՐԾԸՐԱՎ ՀԱՑ.— Տոնական օրերի համար պատրաստում էին տարբեր թխվածքներ. բիշի, գաթա, կթնահունց և այլն: Թխվածքները հունցում էին նռան հյութով, կաթով և մեղրաջրով:

«ԳԱՆՁՈՎ».— Առավոտ վաղ, գյուղի ամենալավ զուռնաչին բարձրանում էր դիմացի բլուրը, «Գանչ» էր նվագում և մարդկանց ուղևորում աշխատանքի: Գյուղացիները «Գանչով» հանդից գալիս էին, «Գանչով» հաշում, «Գանչով» հավաքվում ժողովի և այլն: Ժողովուրդը գիտեր, թե «Գանչի» այս կամ այն մասը կամ տարբերակը ինչի է հրավիրում: «Գանչը» «Յալի» պարեղանակի նախանվագն էր: Հարսանիքի օրը «Գանչի» փոխա-

րեն նվագում էին «Յալիի» պարեղանակներից մեկը (նրա մեջ մտնում էր ավելի քան հիսուն պարեղանակ):

ՀԱՄԵՑԵՔ ԱՆԵԼ.— ա. Հարսանիքներին և ուրախ հանդեսներին, պատվավոր մարդկանց, հյուրերին արժանավորապես հրավիրում էին, խոնարհաբար խնդրելով ներկայանալ: Նրան բերում էին ձեռքը գոտկատեղից բարձր բռնած «Կլխրներես (կլխես) յրա տեղ օնիս», «Տոնը քունն ա, տարը տու վրս, տոնը փրըվեր տիր, հունցու քեփդ տամ ա, ընդի վրա» և այլ արտահայտություններով: Իսկ երբ արժանավորն ինքն է գալիս, նրան դիմավորում են տան մուտքի մոտ, հանդիսավորապես բաց են անում դարբասները, ձեռքից բռնած բերում նստեցնում էին հյուրասեղանի «գլխին», հատուկ գահավորակի վրա (թախտին) և փափուկ բարձը դնում կռնատակին: Մուտքից հաճախ հրավիրելու են ուղարկում նաև դեռահաս՝ 8—15 տարեկան փոքրերին:

բ. Հարսանիքներին, ուրախ ծիսակատարությունների ժամանակ պարի էին հրավիրում պատվավոր մարդկանց, աղջիկը՝ սիրած տղային, տղան՝ աղջկան, իրար հրավիրում էին թշնամի անձինք, պարելով հաշտվում, իրարից խռով մարդիկ և այլն:

«Համեցեք անելը» միաժամանակ առանձնահատուկ պար է՝ պար աղերսող շարժումներով ու բովանդակությամբ: Աղջիկը կամ տղան կարող են «Համեցեք» պարել միայնակ՝ արտահայտելով իրենց սերն ու կարոտը, համակրանքը, անգամ հակակրանքը (ժողովրդի մեջ տարածված հայտնի կարծիքին դեմ գնալու համար): Այս պարազայում, պարողը որպես արարողության ավարտ, պարում է իր սիրածի հետ՝ ուրախ ու անձնվեր:

«ԽՌԱՎԸ ՀԱՇՏՎԻ».— Հարսանիքների ժամանակ, ուրախ հանդեսներին, երբ առանձնապես սաստիկ մութ է, գիշերը, մի քանի րոպե հանգցնում են լամպերը՝ առանց վաղօրոք զգուշացնելու: Մինչ այդ, խռով ու պապակ սիրահարները մերձենում էին իրար և լույսերը հանգցնելուց համբուրվում էին իրար հետ: Ուշացած «հաշտվողները» ծիծաղի պատճառ են դառնում լույսը վառվելուց հետո: Որպես կանոն, «հաշտությունը» պետք է կայանար մինչև լույսերը նորից վառվելը:

«ՅԱԼԻ».— Սկզբնապես արևազալի հետ կապված ծիսական պար էր, որ դարեր շարունակ ուղեկցել է հայ ժողովրդին և միշտ էլ համարվել է լավագույն ու հոգեհարազատ պարեղանակը հայ աղջիկների և տղաների համար:

Սակայն «Յալին» մի պարեղանակ չէ, այլ հնում ստեղծված

բոլոր պարերի ամբողջությունը, որ հետագա դարերում հղկվել-ամբողջացել է, դարձել հարսանեկան, հերոսական պարերի յուրահատուկ մի գանձանակ՝ իր մեջ ներառնելով մեր ժողովրդի ստեղծած հնավանդ պարային հարստությունը:

Մեր հին լեզվում յալին հոմանիշ էր պար (պապար) հասկացողությանը:

Հնում, ստավածներին զոհ մատուցելու ժամանակ, ժողովուրդը «յալի» է պարել մինչև զոհի արյունահամ լինելը և պարով աղերսել է ծագող արեգակին, որ զոհն ընդունելի լինի: (Տե՛ս «Կալա եա» և «Գանչով» բաժինները):

ՊԱՊԱՐԿԱՆՁԻ.— Պարի հրավեր.— Գարնան տոներին, ծաղկահաղեսներին, հարսանիքի ժամանակ, տղաների կամ աղջիկների խումբը, ձվագակցության տակ երգով ու պարով կանչում է մյուս խմբին՝ «Յալի» պարելու: Պապար կանչել կարող է նաև անհատը: Կանչվող խումբը (կամ անհատը) պարտավոր էր ընդունել հրավերը: Պապար է կանչվում այնքան ժամանակ, մինչև որ համալրվում են խմբերը, պարի մեջ են մտնում բոլոր պատանիներն ու աղջիկները:

ՃԻՆՋԵԴ ԱՄԵԼ.— Ճոճախաղ: ՃՈՃ—ճինջեղ.— Բարձրաբերձ ծառի ամրակազմ և հորիզոնադիրք ճյուղին ամրացված երկտակ պարան, որով ճոճախաղում են:

Երբ խաղացողը հասնում է ճոճաթռիչքի բարձրակետին, մահակով (ճիպոտով) խփում են նրա ոտներին, ասելով՝ «Նշընածեղ անումը տո»: Եվ նա պարտավոր էր տալ: Իսկ երբ համառում էր, ավելի ուժգին էին խփում, մինչև հասնում էին նպատակին: Այսպես, բոլորին «փորձության» ենթարկելուց հետո ընդգրկում էին շարունակվող արարողությունների մեջ:

Ճոճվողը լրիվ անունն ասելու փոխարեն կարող է արտաբերել անվան միայն առաջին հնչյունը՝ սիրածի անվան գուշակությունը թողնելով լսողներին:

ՆՈՐ ՏԱՐԻ.— Վեր տարեն փիս ա ընում, տարվա վերջին օրը հանդավարը սրփում ըն, տարեն ընեծում, փսորեն ճհետ տեն քցում, ասում. «Քյըընիս՝ վեչ կյաս»: Օտում ըն-խմում, հղե տըռնում, մին քող յոր օնում, հղեն կապում, քշկըռում, վեր կարե վուչ ետ կյա:

Վեր հրնցած տարեն լավ ա ընում, տարուն կլխեն օտում ըն-խմում, սոփրան հվաքում չըն մինչև նոր տարեն կյալը: Հնցնեիս տարեն պատվավ, շախավ-շուխավ հղե ըն տնում: Բիշուն,

կթնըհունցնեն կեսը հին տարումն ըն օտում, կեսը՝ նոր տարումը: Հին տարվա կյենացը խմում ըն, աղերսում, վեր եոնայինը նորեն էլ քյուհնիհն աշկավը եշի: Ասում ըն. «Շենքդ-շնորհքդ թազա տարումն ընի», «Նոր տարե, թա պակաս ըս ընձական, փոխ կալ», «Քյընի հին տարե, եկ անկյին տարե», «Վեչ մին հրսանեք տեղան շիլ չըղնե» և այլն:

Ա տարե, հաղաղ ընիս,
Վեսկավ շաղաղ ընիս,
Կնձկյըմուրավ լուսվիս,
Բարավ ճնուփվիս:

Չարը պրանա,
Չբերը բրանա,
Կյող վենը ծկըթե,
Կյող աշկը չուրանա:

**ԿԱԼԱ ԵՏ.**— Հանդիսավոր արարողությունների մեծ մասը ղարաբաղցին անում է կալա ետ: Տորքը՝ կալա ետ, կնոնքը՝ կալա ետ, հրսանեքը՝ կալա ետ: Տարվա տլյուրը աղում են՝ կալա ետ. «Թüզա հացան օտինք, ծմոնեն տեմ կենանք»:

Հնում հայտնի «Կալպարին» «Յալի» պարի տարբերակներից էր, ասվում էր նաև՝ «Պապարկալի», պարում էին կալը վերջացնելուց: Պարը մասսայական էր, քանի որ պարում էին իրար հարևան բոլոր կալվորները:

**ԲՈՒՆԳԸ ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՆԵԼ.**— Նոր տուն կառուցելու ժամանակ բարեկամները, հարևանները հերթով հացով (նաշով) ապահովում են կառուցողներին: «Բոխնա յըն շüնում»: Հացատըվությանը մասնակցում են նաև ուրիշ գյուղերում ապրող մերձավորները: Տուն կառուցելու առաջին օրը նրանք բոլորը ներկա են լինում և «բüնգը շնորհավոր են անում»: Ոմանք փող կամ թանկարժեք իրեր են դնում տան հիմքում: Տերտերը օրհնում է: Օրհնում են նաև տարեց մարդիկ ու կանայք. «Լուսը ծլլա քզ արա», «Ծոխը միշտ երգինք ընի», «Մաշին օխտը խուխավ հացու նըստին» և այլն:

Առաջին անկյունաքարին են դնում բոխչաներից մեկը, հաց են կտրում, օղի և գինի խմում: Բարեկամները ջվալներով ալյուր, կով, երինջ, ոչխար էին նվիրում տուն կառուցողին. «Շինութունը շենավ կշինին», «Մինակ քարը պատան չի կենալ»: Մինչև տան ավարտը բարեկամները պարտավոր էին օգնել տուն կառուցողներին. «Տնը թոթխար չըն թողել», «Տանը յրա էրկան կմըտածին, նեյլի շինին»:

Կինը, որ երեխա չէր ունենում, ասում են՝ չպերք ա: Տղամարդուն, որ երեխա չի լինում, ասում են՝ անպտուղ ա: Սովո-

րաբար, զավակ չունեցող ծնողների մոտ երեխաներից չէին խոսում: Երբ անզավակ ծնողը գալիս է մեկի տունը, երեխաները թողնում են իրենց խաղն ու զբաղմունքը և փակվում սենյակում: Դժվար աշխատանքներում երեխաները պարտավոր էին օգնել անզավակներին:

ԱՂՆԱՂԱՋ ԱՆԵԼ.— Աղունաղաց անել.— Նոր բերքի համտեսը: Առաջին կասանն անելուց հետո, հենց կալից դուրս մոտ 10—15 կգ ցորեն էին ուղարկում ջրաղաց, աղում, հաց թխում և բերում համտեսի: Այս արարողությունն է աղնաղաղ տանելը: Համտեսը տեղի էր ունենում հանդիսավոր պայմաններում, «օտել-խմելավ, պարավ, երգավ»: Այդ նպատակով կալակողերին հորված գինու կարասները էին բացում, անասուն էին զոհում և օրհնում էին առաջին հացը՝ գյումբան, որ հաճախ թխվում էր ջրաղացում:

ՓԱՐՇ ԱՆԵԼ.— Վեր մծավոր ա բլալ կյալս, հղեն գյքավ փարշ ընեիս ըն ըլալ: Խրիմյան Հայրիկը վեր եկալ ա, ըշընեցեք Նորշենա մինչև Աշան հղեն գյքավ փարշ ըն րրալ (շուրջ չորս կմ): Խրիմյան Հայրիկը ըշընեցունց օրհնալ ա. «Աստուծ ծեր բոլոր սերունդներեն հղեն փարշ անե»:

Այս սովորության հետ է կապված Ամարաս վանքը տանող հին ճանապարհի անունը՝ «Սահակա հղե»: Ասում են, այս ճանապարհով են Սահակն ու Մեսրոպը եկել Ամարաս՝ ուսուցչական դպրոց հիմնելու համար:

Փարշ են անում նաև տունը (հատակը, պատերը):

ՍԱՆԴ ԹԱԿԵԼ.— Հնում, մինչև կալին անցնելը, հացահատիկը պատինից (պանույն) հանում էին ձեռքով՝ ծեծելու միջոցով: Արարողությանը մասնակցում էր ամբողջ գերդաստանը: Տալապատիկ շրջանաձև նստում էին և կողքներին դարսված խրձերը (որանը) քարե հսկայական սանդերի վրա փայտով ծեծում: Հետագայում այս նույն գործողությունը կատարվում էր չոր տափարակի վրա, առանց սանդի: Վայրը կոչվում էր կալ կամ կալատեղ:

ԿԱԼԱՍ ԱՆԵԼ.— Բազմությամբ փայտով ծեծում կամ ոտքերով տրորում էին հասկը: Ավելի ուշ՝ այս աշխատանքը կատարվում էր անասունների (եզան) օգնությամբ: Այս գործողությունը կոչվում էր կալաս անել, որին հետևում էր պանը քամուն տալը, որով էլ հատիկը առանձնանում էր:

ՄՋԻ ԱՆԵԼ.— Գյուղատնտեսական կամ կենցաղային ծանր

ու մեծաքանակ գործերը կատարում էին կոլեկտիվ կերպով, փոխօգնությամբ, որ կոչվում էր մչի անել։ Փոխադարձ օգնությամբ կատարվում էին բուրդ գզելու, բամբակ քաղելու, քծծելու, այգեկութի, վարի, ցանքի աշխատանքները։

ՋՈՒԱՎԱՐ.—Ուրեէ գործ ավարտելուց հետո հայ արհեստավորը, հողագործը խորհել են նաև բարձր նաշակի և գեղեցկության մասին։ Երբեք չի մոռացվել, որ արված գործը պետք է նաև գեղեցիկ լինի, հանույք պատճառի տեսնողներին, բոլոր մարդկանց, բնությանը և աստծուն։ Աշխատանքի հանդեպ ունեցած այս գեղագիտական կուլտուրան կոչվել է զարդար անել։ Այս նույն իմաստն ունեն նաև նխշրնգյար (նախշանկար) անել, զարդանախշ տալ, աշկու պիրիլ, զարիլ, դշրնգագործ անել և այլ արտահայտություններ։

«Աստուծ աեր ա ղաշանգը սիրում, մարթը՝ ավեր»։ «Անվայլ ծառեն դուշն էլ չի թառ ընում»։ «Ըրած գործեդ ննանցն եշի»։ «Ըրած գործեդ ուրուշու աշկավ եշի»։ «Մարթին տեն քցիյխս քարն էլ բդի ղաշանգ»։ «Մարթին ամեն հինչը սերուն բդի, կընեգը լիա սերուն բդի, սերուն բդի»։ «Գործը րրա, կողքան եշի, վեր քեզ տուր չի կյա, ուրիշին էլ չի տուր կյալ» և այլ ասացվածքներ խոսում են վերը շարադրվածի օգտին։

ՆԱԽՇԱԾ ՃԳԱՏ.— Նախշում էին ձեռնափայտը, պուրթրնըպառը, յղրնպառը, դնգլբաշուն կոպալնեն, ղմին կոթը, բիշինախշին և այլն։

Հայկական գեղանախշեր էին փորագրում դեռևս թարմ շիվերի վրա և վերցնում որպես ձեռնափայտ, հատկապես երիտասարդները։ Հանախ նվիրում էին աղջիկներին, ընդունելը փոխադարձ սիրո նշան էր։

ՅՂԸՃԳԱՏ.— Կեղևահան արված ողորկ շիվ, վերնամասը նախշած։ Խնոցին հարելու ընթացքում յուղանպատը մտցնում էին խնոցու փորանցքով՝ որոշելու հարվածքի վինակը։ Եթե փայտիկը յուղոտված է լինում, ուրեմն ժամանակն է յուղը թանից առանձնացնելու։

ԽԶԿԱՆ, ԱՄԱՆ ՆԱԽՇԻԼ.— Նախշում էին նաև պաուղները. տանձը, խնձորը, նուռը, սեխը, ձմերուկը, սերկևիլը, վարունգը և այլն։

Ամառ ժամանակ վարունգը, խնձորը, տանձը և այլն գեղեցիկ կարում էին, կոթունը նախշում և դարձնում կուլայի կամ կուժի ձևի։ Խնձորը սաամնածև նախշում էին, բաժանում երկու մա—

ռի, նորից միացնում այնպես, որ կտրվածքը չի երևում: Պտուղների միջուկը հանում էին, դարձնում բաժակներ, նախշազարդում և նրանով թան, ջուր, գինի խմում: Ձմերուկի և սեխի կեղևները նախշում էին և նրանցից պատրաստում տարբեր խաղալիքներ (սայլ, վրան):

ՃՃՈՒՓԵԼ.— Արու ոչխարի, գառան, ձիու, եզան, կովի, ուղտի վիզը զարդարում էին գույնզգույն մետաքսաթելի վարդանըման փնջիկներով (ճուճուփ), որ նրանք ավելի գեղեցիկ երևան: Մոտավորապես նման զարդեր (ծուպեր) էին գործում նաև երաժըշտական գործիքների, վարագույրների, սփռոցների, տոպրակների, պայուսակների, ձիերի երեսակալների, արծաթե, ոսկե թամբերը գեղեցկացնելու համար: Կոչվում է նաև պուժուժ (բոժոժ):

ՅԱԼԸ ԽՈՉԻԼ.— Մեկ տարեկան քուռակի վզի մազը խուզում էին, ճակատամազերից ճուճուփներ էին կախում, պոչը կտրում կամ հանգուցում: Ձիու վզից կախում էին նաև զանգուլակներ, որ հաճելի ձայներ էին հանում վազքի ժամանակ:

ԽՆՈՑԻ ՀԱՐԵԼ.— Խնոցին դնում էին փափուկ ներքնակի վրա և հարում: Հարողը փոքր երեխային նստեցնում էր իր ուսերին և հարելու շարժման ընթացքին ներդաշնակ երգում.

**Խնեցե հրեցե,**
**Եղը ես տիմ,**
**Թանը՝ (տալիս է երեխայի անունը):**

Երեխան միամտաբար կրկնում էր:

ՀՈՒ ՎԵՐ ՅՓԼԱԳՈՒ ՊՈՒՆ ՏՈՒՍ ՏԱ՝ ԿՔՈՒՌԱՆԱ. — Ձնայած բուն համարվում Լր կեղտոտ թռչուն, բայց Ղարաբաղում պաշտամունք կար նրա նկատմամբ: Ինչպես հայտնի է, բուն անխնա ոչնչացնում է մկներին: Երևի գյուղատնտեսությանը նրա օգտակարությունն Լ պատճառը, որ բուն ավերողներին նման սպառնալիք է ուղղվում:

ՄԱԶԵՐԸ ԼՎԱՆԱԼԸ.— Հնում կանայք մազերը լվանում էին լուսնահողով և մոխրաջրով: Մազերը ներկելու համար օգտագործում Լին ձվի հարած դեղնուցը, սոխի հյութը, կաղաղի, խինդեղի հասուն պտուղների թանձր եփուկը: Գույն տալուց հետո օծում էին կտավատի ձեթով: Եփուկին բուրմունք տալու համար խառնում էին ծոթրինի և անթառամի ջուր:

ԲԱԴԱ ՏԱԼ, ԲԱԴԱ ՇԻՆԵԼ.— Պատանդ տալ. իմաստն է՝ գե-

րության տալ, ընդմիշտ կորցնել։ Սովորական բան է եղել առանձնապես՝ թաքար-մոնղոլական, պարսկական տիրապետությունների ժամանակ, հարկահանության ընթացքում։ Հարկահանները վերցնում էին երեխային և որպես պատանդ՝ պահում մինչև հարկ վճարելը։ Շատ հաճախ հարկը վճարելուց հետո էլ պատանդը չէր վերադարձվում։

ՔԱՐԱՊՐԱՆՈՒԿ ԱՆԵԼ.— Ճանապարհների եզրերին, գյուղի մուտքերի մոտ, փողոցներում, վաղօրոք քարակուտակներ, քարաշեղջեր, քարե բլուրներ էին սարքում՝ սպասվող թշնամուն քարահարելու համար։

Քարապրանուկի էին ենթարկվում նաև անհավատները, հավատուրացները, դավաճանները, անբարոյական կանայք ու աղջիկները (տղամարդկանց սպանում էին զենքով), ազգային սովորությունները դիտավորյալ խախտողները։

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ.— Առավոտյան մարդիկ վեր էին կենում արեվածագի հետ և հանդիպելուց իրար «բարի լույս» էին մաղթում։ Պատասխանը լինում էր. «Աստծո բարին», «Լույսը բարի», «Բարին լուսն հետ»։

Իսկ տնեցիները (փերդաստանի մարդիկ) իրար բարի լույս էին մաղթում լվացվելուց հետո։

ՏԻՉ ՏՆԻԼ, ՄՈԼ ԱՆԵԼ.— Ձմռանը անասուններին կերակրելու համար հարդ ու պահով մարագն էին լցնում, իսկ չորացրած խոտը դիզում էին դրսում։ Հատուկ պատրաստված փայտե կառույցի վրա դիզված խոտը կոչվում էր չրդխատիզ, գետնին դիզվածը՝ տփատիզ։ Երկու դեզերի կենտրոնում էլ, հենց սկզբից, տնկում էին մի քանի մետրանոց փայտ՝ տզափադ (դիզափայտ), և նրա շուրջը հյուսում խոտը («Տիզ տնիլ»)։

Փայտը պաշտպանում է դեզը փլվելուց։ Մարտ-ապրիլ ամիսներին կանաչ խոտի հետ նաև չոր խոտ էին ուտեցնում անասուններին՝ որովայնային հիվանդություններից զերծ պահելու համար։ Այդ շրջանը անվանվում է «լպզտան»։ Ապրիլ ամսվա վերջին և մայիսի սկզբին, երբ անցնում է լպզտանը և չոր խոտը այլևս պետք չի լինում, դեզախոտի անձրևահար, փտած մնացորդները անձրևից հետո կուտակում էին պտղատու ծառերի տակ և ծխում՝ որպես ընդունված պայքարի միջոց պտղատու ծառերի վնասատուների դեմ («Մոլ անել»)։

ՄՈԼ արմատով ինչպես հայ հին լեզվում, այնպես էլ ժամանակակից հայերենում գործածական են ոչ քիչ թվով բառեր։

ԿԱԼ համալիրը ուներ հետևյալ կառուցվածքը.

ա. Ընդարձակ կալատեղը (կլատեղ)՝ խուրձը կալսելու համար.

բ. Մարագը, որի մուտքի հակառակ կողմի մղակով (տրմնածակ) միանում է կալատեղին.

գ. Ձվցտան. կալատեղի կողակառույց տուն՝ հանգստանալու, նաշելու համար: Յուրահատուկ մառան:

դ. Գոմ՝ կամ գոմատեղ:

Կալը ունենում է նաև շուքարան, փոքրիկ բանջարանոց, պտղատու այգի, արոտավայր՝ երկու-երեք լաքի չափով:

ՕՁ.— Օխծու նման թքում ա:

Օխծու նման աշկեղ մաշին թքում ա, էլ կարում չըս թա պենաս:

Երկու թքողներից՝ ուղտից ու աղջից հետո՝ երրորդը առընչվում է օձին:

Հայտնի է, որ օձերից կոբրան է, որ թույնը թքում է հակառակորդի աչքերի մեջ: Վերոհիշյալ արտահայտությունները վկայում են, որ Ղարաբաղի հին բնակիչները ծանոթ են եղել թքող օձի տեսակներին, որոնք այժմ բացակայում են մեր բնությունից: Ենթադրվում է, որ հնում կոբրայատիպ օձեր կարող էին բնակվել Արցախի շոգ դաշտավայրերում:

Ուշափու նման թքում ա:

Իմ անեծքս հանցա օխծու թքենք, ծեփու նման նեստա յա կենում:

ՕՐՀՆԸՎԻԼ.—

— Այանե:
— Աշանե:
— Եկալ ըմ օրհնիս:
— Աստված քեզ օրհնի:

Այան համբուրում է օրհնվողի ճակատը, բռնում է ձեռքը և օրհնում:

Կամ՝

— Ապա:
— Ասե, ապան մատաղ:
— Ինձ օրհնի:
— Քեզ աստված օրհնի:

Օրհնանքը լինում է ընդհանուր և կոնկրետ՝ կապված կատարվելիք գործողությունների, հարկադրական ճանապարհոր-

ղության և այլնի հետ: Օրհնվում էին ամուսնացող զույգերը, հղի կանայք, հիվանդները, բոլորը: Օրհնիքը եզրափակվում էր հակիրճ բարեմաղթություններով. «Ճանապարհ պարի ընի», «Վեսկավ հնուփվիք», «Լիանաս-բուլանաս», «Վեղ յոր օնիս, վեսկե տեռնա», «Ջարուր չընիս», «Բլրուլ տեռնաս» և այլն:

ՀՐԿՇՎԵ.— Տան զավակները ամուսնանալուց հետո բաժանվում էին հայրական տնից և իրարից, կազմում էին առանձին ընտանիքներ, որոնք տարիների ընթացքում ճյուղավորվում էին, հեռանում իրարից: Բաժանվողները ստանում էին իրենց բաժինները: Սակայն տան (ազգի, ցեղի) նահապետի ընտրությամբ ամենից լավ ծառը կամ այգին մնում էր որպես բոլորի սեփականությունը և կոչվում էր «հրկշվե»: Այգին (կամ ծառը) քաղում էին ազգովի՝ մեծով, փոքրով: Հարսները ներկայանում էին օրորոցներով, նոնք էին գցում այգու ծառերից... Ազգի յուրաքանչյուր ընտանիք բերում էր իր բոխճան, ցույց էր տալիս իր «շընորհքը», բերում էին գառ, հավ, գինի՝ մեծ խնջույքի համար և ստեղծվում էր յուրահատուկ մի տոնախմբություն: «Հրկշվե» ծառի (այգու) բերքը հաճախ բաժանվում էր տասնյակ ընտանիքների և ճյուղերի միջև (կարևորը քանակը չէր): Որքան թվաշատ են հրակաշները, այնքան աշխույժ ու հետաքրքիր էր անցնում սիրո և բարեկամության արարողությունը: Այդ օրը խռով ազգակիցները հաշտվում էին, միևնույն ճյուղից պտուղ էին կըտրում, բաժակ-բաժակի են խփում և խմում համերաշխության ու հավերժ միասնության կենացը («Սեր ընինք, փոնչ ընինք», «Ազգ ընինք, կից ընինք, ցեղ ընինք, մինտեղ ընինք», «Աստված մեր թմահան կարե՝ սերության յրա տնի»):

Տոնախմբությունը վերջանում էր սրտակից զրույցով, զվարճախոսություններով, խաղով, երգ ու պարով:

Ծառի (այգու) չորանալու հետ վերջանում էր նաև այս սովորությունը:

ԾԱՌ-ՕԺԻՏ (ԾՌԸՊԵԺԻՆՔ).— Ամուսնացող աղջկան օժիտ էին տալիս տան եղած ինչքից: Պարտադիր ցանկի մեջ էր կահկարասին՝ աղամանից մինչև կարաս, գդալ, շերեփ, 2—3 ձեռք վերմակ-ներքնակ, գորգ, կապերտ, նափռաշ, խուրջին, հայքա, գառ, երինջ և այլն: Ընդունված էր նաև ծառ կամ այգի տալը, որի նպատակը նորակազմ ընտանիքին կապելն էր պապենական օջախին: Ծառ-օժիտը պարտադիր էր, առանձնապես, եթե ա-

մուսնացողը գնում էր հեռավոր գյուղ և մղոններով հեռանում հայրական օջախից:

Սովորությունն ապահովում էր ընտանիքների (նյուղերի) բարեկամությունը: Այգեկութը վերածվում էր արարողության: Բացում էին այգու (ծառի տակ) թաղված գինու կարասը, հորթ կամ գառ էին մորթում, կանչում էին ընկեր, հարևան ու բարեկամ և սկսվում էր խնջույքը՝ ուրախ ու տևական:

Տերտերն օրհնում էր ծառը, տան նահապետը նրան մաղթում էր երկարակեցություն և հավերժություն՝ պապենական երդի: Աղջիկը հերանց տուն նվերներ էր բերում:

ՔԹՈԼՓՈԽ ԱՆԵԼ.— Հավատարմության, սերության երաշխիք ուներ իր հիմքում: Տան կրտսեր անդամները ուտում էին մի ընդհանուր ամանից և փոխանակում էին գդալները: Այս սովորությունը ընդունված էր նաև հովիվ ընկերների միջև: Քթլփոխ անողները պարտավոր էին օգնել իրար, հարեհաս, հոգեկից, հավատարիմ ու նվիրված լինել մեկմեկու:

ՓՐԹԿՑՆԵԼ.— Հանդվոր ընկերները մածնեբրդուշ էին ուտում (ոչ միայն) մեծ փայտե ամանի (կյուշ) մեջ՝ բոլորված նրա շուրջը: Նրանցից յուրաքանչյուրը ջանում էր ծիծաղեցնել մյուսին՝ զվարճախոսությամբ, ծամածռություններով, սրամտությամբ և այլն: Փրթկացնողը այլևս չէր շարունակում ուտելը և շարքից դուրս էր մնում: Այդ կարգով շարունակվում էր: Հաճախ ընկերովի պատրաստված բրդուշը բաժին էր ընկնում մեկին: Իսկ երբ բոլորն էին ծիծաղում (փրթկացնում), նույն պայմանով սկսում էին նորից:

«ՏԱՓԸ ԿՈՏՐԱԼ Ա».— Երբ երեխան ընկնում է, նրան «մեղադրում» են գետինը «կոտրելու» համար: «Տափը կոտրալ ըս»: Երեխան թողնում է լացը, քննում գետինը, և որպես իր կատարած «հանցանքի» երաշխիք, չի շարունակում լացը: Հմտո. «Ոչինչ, կմեծանաս, կմոռանաս» (ցավը), կամ. «Մծննական ըս, սոս ըրա» («Խոխան վեր ընգելավ-եր կնալավ ա մծանում»):

***

Ուրախ հանդեսների ժամանակ յուրաքանչյուր երիտասարդ ընտրում է իր ընկերը կամ ընկերախումբը և նրանք ամբողջ արարողությունն անց են կացնում միասին. պարում են, երգում, զվարճանում: Պատանիներից յուրաքանչյուրը ընտրում է նաև իր

սիրած (համակրելի) աղջկան և պարի է հրավիրում, սեղանի բարիքից առանձին բաժին է ուղարկում նրան: Երիտասարդը պարտավոր է հսկել իր սիրածին, պահպանել անվտանգությունը արարողության ընթացքում, միշտ «աչքը վրան պահել»:

ՃԻ-ՃԻ ԱՆԵԼ (Ճի—ճիտ բառի բարեհունչ ձևն է).— Տատը, մայրը կամ հարազատներից մեկը, նստում է սենյակի ծայրում, տարածում ձեռքերը և դիմում երեխային.—Եկ, ճի-ճի անենք:

Երեխան գնում է (տանում են) սենյակի մյուս ծայրը կամ կանգնում որոշ հեռավորության վրա:

— Ճի-ճի, ճի-ճի, ճի-ճի...

Երեխան վազում է ընկնում նրա գիրկը:

Արվում է փոքրիկինման գալ սովորեցնելու, քայլերը կայունացնելու նպատակով: Աշխույժ, հաճելի վարժանք է:

ՄԱԿԱՐ.— Մակարների խումբը բաղկացած է լինում 25—50 հոգուց (թվաքանակը պայմանավորված է հանգամանքներով, իրադրությամբ, հեռավորությամբ): Մակարները սովորաբար լինում են 20—30 տարեկան չահել տղաներ: «Հրասնեքը մակարն ա անց կցընում»: Նրանք պարտավոր են երգել, պարել, պարեցնել, «ծաղկացնել», ուրախ անցկացնել հարսանիքը: Նրանց հիմնական պարտականությունն է անփորձանք անցկացնել արարողությունը, վտանգից զերծ պահել հարսին ու փեսային:

Հնում մակարների կարիքը ավելի շատ էր զգացվում, քանի որ հաճախ առկա էր լինում հարսը առևանգելու վտանգը:

Մակարները հարսնապաշտպան երիտասարդներ են՝ կռվի և հավատարիմ ամուսնացող ընկերոջը: Հարսանիքի ողջ ընթացքում (3 օր, մի շաբաթ), հարս ու փեսան գտնվում են նրանց շրջափակի մեջ՝ առանձնապես պարելու ժամանակ: Արարողության հետ կապված բոլոր իրավունքները գտնվում էին մակարների ձեռքին: Մակարախումբը ընտրում էր իր մեծավորին, որ կոչվում է մակարբաշի («կլխավէր»): Իր հերթին մակարբաշին ընտրում է պարի, երգի, ծափի ղեկավարներ, որը հետամտում էր հարսանիքը ուրախ ու կանոնավոր անցկացնելու նպատակ: Առանց մակարի հարսանիք չի լինում:

ԿԱՐԱՍ-ԹՈՆԻՐ.— Հաց թխելու նպատակով պատրաստում էին հատուկ կարասներ, որոնց արտաքին պատերը (ուռուցիկ մակերեսը) ծածկում էին աղյուսով (քարփուն): Կարաս-թոնիրները ամրացնում էին գետնին, ներքևի սրավուն մասը մտցնում էին հողի մեջ:

Ցախով (փայտով) լցնում էին կարասը և վառում այնքան, մինչև շիկնում էին դրսի պատերը: Հոցը թխում էին սովորական կարգով, դրսի պատերի վրա: Կարաս-թոնիրներն առավելապես օգտագործում էին բնակատեղիներից դուրս. սարում, բերդ-ամրություններում, վանքերում, կալերում և այլն:

Պատրաստի կարաս-թոնիրներ պահում էին հեռու հանդամասերում:

ԹԱՂՈՒՄ.— 1. Հնում ամբողջական հսկա քարը փորում էին, դարձնում դագաղ և մահացածին դնում նրա մեջ ու թաղում հողում (ըստ երևույթին ոչ բոլոր մեռածներին էին նման պատվի արժանացնում): Նման դագաղներ գտնվել են Գիշի, Ղզղալա, Աշան գյուղերին մերձ հանդամասերում:

2. Հաստաքեսա քարերից պատրաստում էին մարդանձև մարմիններ՝ բաղկացած երեք հատվածներից (գլուխ, իրան, ոտքեր) և թաղում մահացածի փոխարեն: Հանգուցյալի մարմինը հրկիզում էին: Այս մասին պատմել է բերդաշենցի հարյուրամյա Գրիշա Առստամյանը (Դրղանց) 1968 թվականին: Մի քանի տարի անց նման գերեզմանոց գտնվել է Աշանի Ծոպլա կոչվող տեղամասում, մի բլրակի վրա: Քարարձաններին հետ գտնվել են նաև քարակերտ պաշտամունքային արձանիկներ՝ նույնպես ոչ ամբողջական քարից պատրաստված:

3. Մահացածներին թաղում էին նաև կարասների մեջ, ուր դնում էին նաև կենցաղային ու պաշտամունքային առարկաներ: Կարասային թաղումը շատ տարածված է եղել և համեմատաբար մոտ ժամանակներում: Գերեզմանոցային կարասներ գտնվել են Ղարաբաղի շատ տարածքներում:

***

ՄԱՔՐԱԿԵՆՑԱՂ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—

Կարում ըս (կարո՞ղ ես) իրեք նոռնը կեր՝ վեր վեշ հատիկ թողիս, վեշ հատիկ վեր քցիս:

Կարում ըս կղաղավը օխտը նղուպուր կեր՝ ծերքերդ ղողե վուչ:

Կարում ըս մին տոպրակ արաղ խմե՝ դա՛ստի ասե՝ օխտը:

Կարում ըս շահ նուռնեն տոպը ծամե՝ պերանդ թըըմոշկում'էր:

Կարում ըս կծոխուրը կեր՝ կծըխըրում'էր:

Կարում ըս մին ըփիլի պրինձ ճնդրե՝ մաշին փսոր չմնա:

Կարում ըս կյումաշեն «ճո»-ն տառ-տառ ասե (բառ, որ չի գրվում):

Թքում ըմ. կարում ըս մինչև թրքենքս չուրանալը քյընի կտլը՝ եկ:

Կարում ըս մժմահուն մաշին «Յալի» պար եկ:

Կարում ըս թոթ կեր քուշտաց՝ ծերքերդ ո̈ւրուր անա չկենա:

Կարում ըս մոշ կեր՝ պռուշնեդ ղողե վուչ:

Ծափ տամ՝ աշկդ ճպում'էր:

Կարում ըս մին ճափուռ կորեկն ու մին ճափուռ կտավատը ո̈ւրուր ճհետ խառնե՝ մն էլ ճոկե:

Աշկերդ ճոփ կալ, չամենչը տնիմ պրանումդ՝ գյիդտ թա ճինչու չամենչ ա:

***

ԺԱՄԱՆՑՆԵՐ.— Հանդեսներին, տոների ժամանակ, ճաշից հետո, որպես հետաքրքիր ժամանց, հանելուկներ, խնդիրներ, շուտասելուկներ էին առաջարկում, խաղեր առաջադրում: Օրինակներ.

1. — Տես, տես:

— Հի՞նչ տես:

— Ըստըղաս, ըստըղաս մին քյաքլիզ ծեռ ըմ տեսնում ճաքյին տեղեն, կարո՞ւմ ըս, քթիր:

2. Կարում ըս ճավաս գյիդա:

3. Կարում ըս գյիդա. ճի՞նչ ըմ մտածում:

4. Մտքումս կորչիմ, ինձ քթիր:

5. Գյողլը կենամ, ինձ քթիր:

6. Փախնիմ՝ ինձ փռնե:

7. Հո̈ւնչու անիմ՝ կարում ըս ըրա:

8. Մթնավ, կարում ըս քյընի, ճանգիստարանան մին քար պեր:

9. Ես մտածիմ՝ տու ասե:

10. Կարում ըս ճամ լաց իլ, ճամ ծծաղե:

11. Մին երք ասե, վեր ես գիդամ ուչ:

12. Մին տաղ ասե, վեր ես գիդամ ուչ:

13. Կյեղած շնորքդ ճնաշ տռ:

14. Ես քու ճվավդ պար կյամ, դու՝ իմ:

15. Կարում ըս էնհինչին հանգերն ըրա:

16. Կարում ըս գիդա՝ հուր հանգեր ըմ անում:

17. Կարում ըս մին ֆաք հնարե՝ ասե:

18. Մին սուտ ասե, վեր ասիմ՝ սուտ ա:

19. Կարում ըս կֆավլու նման կֆավե, վլելու մնան վլելե, ծիու նման խրխնչա:

***

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔԱՅԻՆ ԽՐԱՏՆԵՐ.—

ա. Կարկուտ կյախս ֆսկարենքը վններավ կլխըեր ըն տնում, վեր կարկուտը կտրե:

բ. Խնձողեն նուր ածե, վեր արազ չտեսնաս:

գ. Հուրու տան նշանած ախնից ա ըլալ, կրակեն կլխտվը ֆմըկառաչ լոֆ տայիս ըն ըլնըլ:

դ. Կրակեն կլխավը լոֆ չըն տալ:

ե. Կրակավը խաղ չըն անել: Վեր կրակավը խաղ անին. 1. Քշերը փիս-փիս ըրըզնե կտեսնան. 2. Քշերը տեղաշորումը կկյուզին:

զ. Կրակեն վեր չըն թակել: Կրակը մեխկ ա:

է. Մոխրվել.— Հնում մահացածին լողացնում էին և մոխրով օծում ողջ մարմինը:

1. Պզղանեն տակը լպստողեն հրթննֆավը թոռ կկյա:

2. Ամանդ մաֆուր կեր, վեր նշանածդ սերուն կյա:

3. Էրած հացը թող մ'էր անել, կեր վեր կյուլա վախխս ուչ:

4. Խոխան նրան ըն (ծուվան, ըխպրան) տուս օնում:

5. Կյերթնուկ սպանողեն ծերֆեն կյերթնուկ վեր կկյա:

6. Շատ եր կալած ծառեն տակեն ծու վըն տնում, վեր աշկ չի նի կյա:

7. Գայլի սիրտ ու թոֆեր էին ուտեցնում այն երեխաներին, որոնք վախկոտություն կամ տկարություն էին դրսևորում:

8. Նապաստակի տաֆ արյուն էին խմեցնում հոգով և մարմանով տկար երեխաներին, հոգեկտն հիվանդներին:

9. Ագռավի կռռցը, կաչաղակի կչկչոցը ուրախ կամ տխուր լուրի նշան էր: Քաշը վեր «ղա» յա անում, տնատարը տուս ա կյամ, ասում. «Այ ֆաչ, խեր ը՞ս թա՝ չա՞ռ: Թ՞տ խեր ըս՝ տեղդ փոխե, թա չառ ըս՝ թոչի ֆյընի»:

Վեr տեղը փոխում ա, ասում  ըն՝ խեr ա. վեr թռչում ա fյընում, ասում ըն՝ fաշը սվիrես ա, շառ խաբար ա պեrալ, իrես չօնե ասե:

10. Թոfախտով հիվանդներին և սrտանեղ մարդկանց խմեցնում էին էշի հում կաթ, ուտեցնում էին մկան, շան և ոզնու մի̈ս:

11. Հղըցումը վեr կյուզիս, աշկեդ պուզտի կփըսնե:

12. Հու վեr պլոթուն անե, թազա վնըամանը կծակե:

13. Հացեն պատառը թողել չըն տափեն,
Կպաշին, տնին նկատեն:

14. Երբ երեխան զկռտում է, ասում են. «Դերին fթӧլը կյուղացալ ըս»:

15. Եթե ծիծեռնակը մեկի տան օնոrfում բույն է հյուսում, ուrեմն այդ տան հաrազատը օտաrությունից գալու է:

16. Գայլը եթե ոrևէ մեկի տան առաջ ոռնում է, բախտավոr-վելու է:

17. Հու վեr ուrան ամանը թմզցընե, լավ տղա յա տընըլական, հու վեr եխտուտ ուտե, fեթը միշտ եխտուա ա ընըӧկան:

18. Կյուլը վեr շենին սմթեrfումը սrտըկուտուr կյոռուց, հավան փսննական ա:

19. Կյեն ծառը վեr կrակեն fցիս, կաrկռտ կկյա:

20. Խոսողեն խոսfը կտrել չըն:
Ձոռայիս էշին անգուհեն թխել չըն:

21. Էrկու ուrուr նհետ խուսողեն ղաթավը անց չըն կենալ:

22. Ուrիշին զrուցին խառնըվել չըն,
Կոտrած fթӧլու նման ըղնել չըն ղաթը:

23. Շնըմաշումը վեննը կացած մաrդունցը մաշավը անց չըն կենալ, շոռ կտան կողfավը fյընին:

# ՀԱՆԴԱԽԱՂԵՐ

Հանգախաղի մասնակիցները (մեկ-մեկ կամ խմբերով) իրար առաջարկում էին բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ և հակառակորդները պատասխանում էին՝ ստեղծելով հանգախաղ: Պատասխանները հաճախ դուրս էին գալիս բառախաղերի սահմաններից և ներկայանում որպես ամբողջական կարճ բանաստեղծություններ՝ որոշակի տեսքով ու բովանդակությամբ:

Հանգախաղին մասնակցող ամբողջ խմբի մեջ կարող է միայն մեկը իր վրա վերցնել առաջարկողի (խաղը վարողի) պարտականությունը: Մյուսները, ըստ իրենց կարողության, սրամիտ հանգեր էին կառուցում: Խաղի հիմնական նպատակը առաջարկվածին զեղեցիկ ու սահուն հանգեր հորինելն է՝ որքան հնարավոր է արագ և զավեշտական:

Հանգախաղերը ծավալվում էին նաև երկու հարևան գյուղերի պատանիների և աղջիկների միջև, որոնք, այդ նպատակով, հավաքվում էին սահմանագլխին: Օրինակ, Աշան, Ղզղալա (Բերդաշեն) և Եմիշճան (Իմիֆճան) գյուղերի երիտասարդների հավաքատեղին Բլեն աղբյուրն էր: Հանգախաղերին մասնակցում էին նաև տարեցները: Մի ժամանակ բոլոր ղարաբաղցիները հանգախոսներ էին: Ընդունված կարգով՝ խոսքը հանգավորվում էր տոնական օրերին, հարսանիքների, խնջույքների, առօրյա խոսակցության, անգամ տխրության պահերին: Փաստեր կան, որ հանգախաղերը մտային մարզանքի ժամեր էին նաև դպրոցներում՝ Մեսրոպի ժամանակներից սկսած և դրան ի նպաստ կային ձեռնարկներ, որոնց մեջ ընդգրկված էին նաև խաղերգեր, շուտասելուկներ, հանելուկներ և այլն:

Տոնախմբությունների և թաղային հավաքների ընթացքում հանգախաղեր էին տեղի ունենում աղջիկների և տղաների միջև:

Պարզ է, որ նման դեպքերում խաղն ստանում էր առավել սիրային բովանդակություն՝ ընդունելով խոսքի այլաբանական ձևեր:

1. — Ասե՚* Ննգի:
— Ննգի:
— Հացը թընգի,
Խոխան ուտե,
Վեռը պընդի:

2. — Կլոլե.
— Մերքաս փըռնե հըլորե,
Ծոն տեռ՝ եխաս քըլոլե:

3. — Տանձի.
— Կլոխըդ տակեն խնձը-մանձի:

4. — Ճղպորե.
— Էշը կեր, թափանը քորե:

5. — Այանե.
— Աջանե:

6. — Մըտետ ա՞.
— Հափռումըդ կտետ ա:

7. — Սիրեկ.
— Քեզ սիրիմ քշեր-ցիրեկ:

8. — Գիշի.
— Մուկները շիշի:

9. — Ծլորե.
— Ճըղնաս փռնե՝ ճլորե:

10. — Կացեն.
— Ես տու նստինք մղըրհա-ցեն:

11. — Հմանչի.
— Հանդերը կնանչի:

12. — Ճաթտաքուրի.
— Քշտաս կորի:

13. — Հաց.
— Պատառ կաց,
Պապեն կյա՝ վեռան կաց:

14. — Ջավեն.
— Թոխսը տընիմ ծեր հա-վեն:

15. — Ցըղպատառ.
— Գյուղու պատառ:

16. — Հաչիմ, հաչիմ.
— Թևադ քաշիմ,
Թոշադ պաչիմ:

17. — Կյուլ.
— Վեռը թուլ:

18. — Էծ.
— Վեռը պեց:

19. — Ջկեռ.
— Ես պիրիմ, տու կեր:

20. — Բիշի.
— Ես ոտիմ, տու եշի:

21. — Մնեշակ.
— Ըխճըկան փեշակ:

22. — Մանաս.
— Տակես տըմանաս:

23. — Պրինձ.
— Ես քեզ սիրիմ, տու՝ ինձ:

24. — Սամեթ.
— Նեստա կնամ ծամեդ:

---

* Այսուհետև «ասե» սկիզբը առաջարկվող բառի հետ չի կրկնվելու:

25. — Հիրի՞.
— Ինձ տաս քու բիրի:

26. — Կոստանտ.
— Հրաանեք քյընինք մին տանա:

27. — Ավանես.
— Կավ-կավ անես,
Քոլեն տակեն ճոտեր կանես,
Մինը փըռնիմ՝ վայ-վայ կա-
նես:

28. — Ծաճնազար.
— Փեշկըղ լցնիմ, տար բա-
զար:

29. — Մեր սարերը կանանչ ա
— Աշկերըս ճոփ՝ ծամեղ
վետը ճանանչ ա:

30. — Մըրտես ա.
— Փայըս էս ա,
Օտիմ, էս ա,
Զօտիմ՝ էս ա:

31. — Չղըրճաղի.
— Վենները փաղի:

32. — Կտուրթակե.
— Կըտոր թակե,
Կեր տրաքե:

33. — Օխտը.
— Կեր մեր շանը կոխկը:

34. — Բիժի.
— Հինչ ասալ ըմ՝ նիշի:

35. — Նունե.
— Ծերքաս փըռնե,
Տոշիս կընռնե:

36. — Արտո.
— Ծալվարըս մար տո:

37. — Տըշտըճուց.
— Քըշտես կաց:

38. — Դանա.
— Ես ու տու տուս կյանք
մին տանա:

39. — Հունի.
— Քեզ նմանը ճո՞վ ունի:

40. — Վեց.
— Խզըտակեղ կյամ՝ տոխը-
նեղ կյեց:

41. — Թուզի.
— Աշկերդ չորեքկուսի,
Մազերըս լուսի:

42. — Կղարծե.
— Ես ու տու քյընինք պը-
ղարծե:

43. — Պեխե.
— Աշկըղ աշկես մեխե:

44. — Օթ.
— Կեր մին ամսան թոթ:

45. — Էրկու.
— Չվալը եր կալ, քյընի
կորկու:

46. — Ծի.
— Վեռանը կըծի:

47. — Տասը.
— Կեր մեր էշին պարի-
պասը:

48. — Վոսիմ.
— Ծուցումըղ խոսիմ:

49. — Պուքյի.
— Կարում ըս պուկի:

# ՉԱՓԱԾՈ

## ՏԱՂԻԿՆԵՐ, ԽԱՂԻԿՆԵՐ

### ԱՇԱՆ, ԱՇԱՆ

1
Աշան, Աշան,
Քրքռաշան...
Ավդուոր նռնու ծռեան,
Պրթաշենք կուռնու ծռեան,
Մուշկապատք ծորու ծռեան,
Կղարծեն սռնու ծռեան,
Հացեն՝ ծացու ծռեան:

2
Մինչ յայգոց,
Մինչ ի Հոծ,
Մինչ ի Շարս Մեռելոց:
Լեր զորավիգ,
Տեր, ի նեղութեան՝
Ջսուրբ Ստեփաննոս,
ՋԱղու, զԱշու, զԻմիռնան:

### ՀՄԱՅԱԳԻՐ ՆՄՈՒՇՆԵՐ

3
Ջարկամեն չար աչկը
Ջար փոշ նի մննե:

4
Տանն ու տեղեն
Մեղրեն ու եղեն,
Եզնանն ու կրվեն,
Կյառնանն ու վխնարեն,
Ճորուն ու ծիյին,
Էծին ու ծոլին,
Կյումաշին ու գյրդակեն,
Էշին ու քուռակեն,
Վարեն ու ննծին,
Կաթեն ու փնչին,
Կալին ու կոռեն,
Հացեն ու կըրկուռեն,
Ըրկանքեն ու սրքնուցեն,
Թխտրմորեն ու ծունցեն,
Ջուռնեն ու ղրվալեն,
Տաշտին ու շրվալեն,
Ըլածին-շըլածին,
Հասեն-շծասեն:

5
Տանն ու տեղեն,
Մեղրեն ու եղեն,
Լծկաններն ու կթաններ,
Թաներն ու թցաներն,
Թրզին ու կցաներն,
Բյազին ու Քրթաներն,
Քոլեն ու ծըմակեն,
Վրխնարեն տըմակեն:

6
Տանն ու տեղեն,
Մեղրեն ու եղեն,
Հավեն ու ճավեն,
Ըխպըրին ու ծավեն,
Շանն ու կատվեն,
Վըստաներն ու բուստաներն,
Բըզին ու թըլին,
Ըսեղեն ու ղըռներեն,
Մեր պապե Հրբեղեն,
Գյըբին ու կըրպեաներ,
Բաղեն ու բըխճին,
Արֆին ու տուրֆին,
Հարթներըս ըխտուճուֆվին:
Ասաված պաշտի
Հնոցը, Քթոցը,
Մեր հըրթներեն ու ըրխոցը:

## ԽՆԵՑԵ

7
Խնեցե, խնեցե,
Սօր հարվածքը
Հրեցե,
Եղը թանան
Ճուկեցե:

Եղը բալաս կոլ կանե,
Տատեն թանան շոռ կանե,
Պապեն կոտե հանդ Քյընի,
Շմաթն էլ շանը բոլ կանե:

Խնեցե, խնեցե,
Սօր հարվածքը հրեցե,
Հինշեր, հինշեր
Շնեցե:

8
Կալին խոտը հարալ ըմ,
Կամնը նորը Քարալ ըմ
Դե Քշի, Քշի տղտղա,
Մի ախնից փռնե ճղճղա:

Կալը թըմուզ ճռալ ըմ,
Խորթնը մաշին շարալ ըմ,
Դե Քշի, Քշի, ա տղա,
Նհախ տեղան ճղճղա:

Հարթնանը շորը կարալ ըմ,
Վեսկեն յրա շարալ ըմ,
Աշկս էն ա էն կլխան
Հրըկաշիս ըխճըկան:
Դե Քշի, Քշի տղտղա,
Մի ախնից փռնե ճղճղա:

## ՓԱԼԱՆԴՈՒԶ ԿՈՒՔԱՆԵՆ ԵՐՔԸ

9
Մարթ օնիս՝ լավ կնեզ իլ,

Հարըն օնիս՝
Լավ սկեսուր իլ,
Հրևան ըս՝ լավ հրևան իլ:
Հունչու կաս,
Պապ ըս թա տատե,
Քու փայ յորղանըդ
Ղաշանգ պտատե:
Լավան վնաս չկա,
Վեր լվöթուն անիս
Էս ջանը թաղիս,
Քու վերջի օրեղ
Տու էլ լավ կրöյիս:
Սադանեն անգուճը խուլ.
Է-հեյ, ա շար մարթ,
Հարթն ը՞ս թա զեմֆուշ,
Ղաթը ֆանդիս ուշ:

10
Աղե, արկանֆ,
Մաղե, արկանֆ,
Դարդըս ծով ա՝
Քաղե, արկանֆ:

11
Նախշալ ըմ սարեր,
Նախշալ ըմ չոլեր,
Մին ծերֆես ալաթ,
Մնումը՝ հորենֆ...
Պա մհենգ հո՞ր ենֆ:

Ցորեն ըմ հնձալ,
Սամեթ ըմ կյընձալ,
Քարեր ըմ տաշալ,
Արխեր ըմ ֆաշալ...

12
Այան մաաաղ ֆու ջանեդ,
Էդ լեն ու պեց ճկատեդ,
Դարդ չտեսնաս, մծանաս,
Վարֆ ու տուրֆիս տըրանաս:

Այան մատաղ ֆու ջանեդ,
Քղցըրլöւզու պրանեդ,
Մեր աղոթֆը ըսածու աաս,
Մեր դա́րդերը ֆամուն տաս:

Այան մատաղ ֆու ջանեդ,
Ճապկենպատ բդանեդ,
Դուշմանին աշկը վխծըցընիս,
Տանը լöւսը ճուխտըցընիս:

13
Պապար, պապար, իմ բալա,
Ծաղկած պապար, իմ բալա,
Վեսկե լալա, իմ բալա:
Շաթալ կյործիմ ու ֆոշիկ,
Թագիկ տնիմ կոկոշիդ,

Հոպ-նա ծածառ, իմ բալա,
Հոպ-նա պապար, իմ բալա:

14

Նախշուն, նախշուն, իմ բալաս,
Նախշած աշուն, իմ բալաս,
Հոփալ-բոփալ, իմ բալաս,
Լիզը մոթալ, իմ բալաս,
Հրեյի հսնող, իմ բալաս,
Ճելլի փսնող, իմ բալաս:

15

Պապար, պապար, իմ բալաս,
Մի փոնչ կապար, իմ բալաս,
Ափաթ-ափաթ, իմ բալաս,
Մոշու նաբաթ, իմ բալաս,
Բոստան ու կյինձ, իմ բալաս,
Պարկ ի պրինձ, իմ բալաս:

16

Պար կանե, պապար կանե,
Զալ կյառնը մատաղ կանե,
Մորթեն էլ փափաղ կանե,
Ռանգ-ռուշտը շափաղ կանե,
Դըռ-նա, դըռ-նա, տմբըլա,
Ծափ տո պար էկ, քեփ ըրա:

17

Պապար, պապար, պար անինք,
Բա̈լքի դա̈րդիս ճար անենք,
Պար կյանք, քշերը լուս անինք,
Դա̈րդերը տանան տո̈ւս անինք,
Դըռ-նա, դըռ-նա, տմբըլա,
Ծափ տո պար էկ, քեփ ըրա:

18

Ճակատդ պաչիմ, խելունք ընիս,
Աչկերդ պաչիմ՝ բաբայ անիս,
Քեթըդ պաչիմ՝ պլկանուդ չընիս,
Թոշերդ պաչիմ՝ կամբուր ընիս,

Պերանըդ պաշիմ՝ ըշունցատու շընիս,
Մազերըդ պաշիմ՝ կեռ-կըռանաս,
Ձանադ պաշիմ՝ մրfավուր տեռնաս:

19

Կուկուն մամե,
Կուկուն միմի,
Աշերը օնե
Բաբայ անե:

Ծիծիկը մամե,
Փափունը հանե,
Հալավը հանե,
Ցիցիկ անե:

Պեցիկը հիտի,
Վեր բուբուն կյա վուշ
Վեռը կիծի:
Անիկը կապե,
Վեր բուբուն կյա վուշ
Բաբայը տանե:

20

Այիբ բեն,
Տախտեն դփեմ,
Օխտը հացը
Մեհետ կըխպեմ,
Պենեն ժամեն
Փախնիմ-կոrշիմ,
Հացեն ժամեն
Կյամ խլըշիմ:

21

Ցոrեն հաց՝
Մաշկաս կաց,
Կոrեկ հաց՝
Փոrաս կաց,
Կյաrի հաց՝
Վեռաս կաց:

22

Ըլալ ա-շըլալ մին պել մոզի,
Եկալ ա այուն կլոխը խոզի,
Ուrանց Շուղեrեն օզի,
Տրնի տեպեզ պոզին,
Տանե տա Պլոզին:
Պլոզ, Պլոզ, պըտըտնա,
Թա ուզեցեr՝ աշկըդ լուս:

23

Թեխը լակ-լակ,
Տrեխը ծակ-ծակ,
Կլոխը թակ-թակ:

24

Քաշալ, fաշալ, fաrտաշի,
Քաշալն օտե շան կաշի,
Օխտը բrբա հուն պեrեf,
Մեr Քըշալեն տուն պեrեf:

25

Թթըրմաղե, թթըրմաղե,
Քու մար ասում ա ճելլի մաղե:

26

Քռակեն, քռակեն,
Ծուկլուկու տամ չխըրակեն,
Թա իմ դայու հավան չըս,
Եկ մեր էշին քուռակեն:

27

Շելլի, Շելլի, շլլուվեցե,
Աղնաղազ ըրե՝ քլլըվեցե,
Կյինի տըվեն՝ մուպուրվեցե,
Քերծեն տակեն պուպուրվեցե:

28

Փեսա, փեսա փստըցընիմ,
Մլին կուտուր հացավ քուշտըցընիմ,
Տռա̈նը տակեն նստըցընիմ,
Հարթնը տանան փխնըցընիմ:

29

Քեցե Շաքի
Ընգե Բաքի:
Շաքին հի՞նչ ա
Կրտրած հաքի:
Հանց ետ տեռե՝
Կացե վուչ թա
Օրը ծաքի:
Ընձ էտե հի՞նչ.
Տըղաս Բաքի,
Մարթ ըս՝ Շաքի,
Թող դուշմանիս
Սերտը ճաքի:

30

— Հիշտե՞ղ ըս քյընում:
— Նախճըրվան:
— Հինչո՞ւ վըրս քյընում:

— Ըխնըկան:
— Հիշտե՞ղ ըս ֆյընում:
— Ճաֆի:
— Հինչո՞ւ վըս ֆյընում:
— Կարաֆի:

31

Վեր մարտ ամեսը տուս ա կյամ,
Պառավն ասում ա՝
Մարդըս հընցավ,
Դա՛րդըս հընցավ,
Հոլըս ու էծըս
Կյառուճf հըսավ:
Մարտն ասից՝ հի՞նչ...
Քեցավ օխտը օր արեյան փոխ կալավ,
Պռավեն էծերը կոտրից:
Պառավն ասից՝ «Աստուծ, տեսե՞ր,
Եկեր ինձ նըհետ հվըսըրեցեր»:

32

«Յալի» պար կյան, դնչանան,
Տասը հոֆի մին տանա:
Քսան հոֆի մին տանա՝
Պար կյա, չանը դնչանա:
Ջանա, չանա, չան-չանա՝
Պար կյա, չանը դնչանա:
Համեցեf անելն ընձանա:

33

Դնգըլ, դնգըլ ման արի,
Գիշերները տուն արի,
Դնգըլ սարերի տակին
Յարըս է արևը հաֆին:

Դնգըլ, դնգըլ ման արի,
Հիշաեղ ֆյընիս՝ տուն արի,
Դնգըլ սարերի տակին
Յարըս է՝ իմ սերը հագին:

34

Յարըս հանդին ֆաղ կանե,
Քաղեն մաշին խաղ կանե,
Յարիս թաժա հաց տանիմ,
Քլլած սերտը պեց անիմ:

Տարեն վեսկե տարե յա,
Մեր աղերն էլ պարի յա,
Քու հոր ղարկե կյա մեր տռն՝
Նշընվելու տարե յա:

35

Կալ ու բաղըս աշխարում,
Ըրնոտ խաղըս աշխարում,
Ծոխ ու դաղըս աշխարում,
Ամենազոր իմ աստված,
Ինչ՞ըս մընաց աշխարում:

36

Ըշկըխփուկ ա, ըշկըխփուկ,
Վեր անինք կոնըփոնուկ,
Հիշքան քյընինք, նոանանք,
Էս ըշխարքան վըրանանք,
Դարդ դյուրդու տանք թեթևանանք,
Բալքյա դյուրդը մոռանանք:

37

Ես մին սար,
Տու մին սար,
Հըրևան ըս՝ յարաս տար:

Ես մին սար,
Տու մին սար,
Բոյավ չընինք հըվասար:

38

Ասին, չասին՝
Աստուծ մեծ ա.
Համ կարող ա,
Համ տանող ա,
Համ ներող ա:

39

Այ ախպեր,
Հայ ախպեր,
Վայ ախպեր,
Sժեr օrեն
Թայ ախպեր:

40

Հայու աղ,
Հայու մաղ,
Հայու հաց
Թուռնան կաց:

41

Հյավուր ընք,
Սվավուր ընք,
Թվավուր ընք:

Հայ ընք,
Վայ ընք,
Ըսածու թայ ընք:

42

Ճոկում չըն յավը վաղան,
Ջորը՝ թացան,
Ճաթը՝ հոտցան,
Երգիրըս ա առուփախան,
Հայ վաթան, ջան վաթան:

43

Հինչ կա վեր,
Թող կնեգըդ կյեշ ընի,
Հինչ կա վեր,
Թող ուլախըդ էշ ընի,
Սեղանըդ սատոր ընի,
Տնըդ էլ կատր ընի,
Կարքըդ էլ խուտուր ընի,
Թաք հացըդ կուտուր չընի:

44

Սարես նստալ ըս,
Ծո՛րըս լցալ ըս՝
Սև թուխպու նման:
Պա հի՞ր ըս քոշում՝
Սև թուխպու նման:

45

Հեյ բրա, հեյ բրա
Դանան կյա,
Ծըհանը մեկնե
Կուտանան կյա:

46

Ավար, ավար,
Այ ախնից,
Ղաշխա տավար,
Այ ախնից:

47

Սըրերեն խոտ ա կյամ,
Մարալ ըս մոտ ա կյամ,
Նշընածես ծըմերան
Ծղըզներու վետ ա կյամ:

48

Ցա՛քին ասից.
— Այ հրամեռ,
Խե յըս տեռալ
Ճղնըկուտուր,
Կըրկուտաքակ,
Կտուրաքակ:

Կաղնեն ասից.
— Իմ չափից տա՛ս
Լուս սըհլան
Ես տեռալ ըմ
Ճղնըկուտուր,
Կըրկուտաքակ,
Կտուրաքակ:

49

Կորեկըդ վարե,
Խեղնըդ ըմբարե,

Թողես ուշ դուշմանըդ
Կո՛րենեղ հմբարե:

50

Ղարաբաղցին եմ՝ Բաղդադ դալեղի,
Սատրծուն իմ պարտք կանչով տալեցի,
Խաղեր կապեցի, խոսքեր շարեցի,
Որ կենաց ձնդով ողու մի ասի·

51

Վարթիս Լեռալ թն, տեղը րաշ ռանտ.
Հազար տարվա տարիքս ս մեր թն բրալ,
Ըրաբաունքաս՝ Քաու Առախսն ա վուարալ,

Թարթառը, Կարկառը ֆրըֆար ըն ըլալ,
Պլոկված ըմ, մամային ըմ, հի՞նչ անիմ։

Ըրիֆնակը իմ դա̈րդաս ա խրավվալ։
Խեղճ լուսննգան լա̈ց ա ըլա̈լ, մլարվալ,
Դայաղ չօնիմ, լայաղ չօնիմ ըշխարում,
Աստուծ անզոռ, բանդան անզոռ,
Ես էլ մի խեղճ ռանչպար ըմ, հի՞նչ անիմ։

Կծկծամ ա Մուղան հասու աշկերը,
Վննատակ ա նա սև-սերուն վարսերը,
Սրտես նման սև ա բախտեն աստխերը,
Իմ դուշման ըս համ օժավ ա, համ նաշար,
Առոե աստծուն հավասար ըմ, հի՞նչ անիմ։

Դարդոտ Հանես, բախաեդ աշկը ֆոռ ըրա,
Ետանաս ուչ, հինչ վեր անիս՝ սօր ըրա,
Զոռդ շատ ա, հավաֆ ըրա, առն ըրա,
Թշնամուն թոխկան ֆաշի, մշկանոռ ըրա,
Ասիս ուչ թա՝ ես յասար ըմ, հի՞նչ անիմ։

# ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

## ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Ա լո̈ւզո̈ւ, սուս ըրա, թա չէ Շուշի կքյընիս:
Ախնըրկանը վեր պծոց թակիս վուչ, մծոց ծոյնըրդ կթակիս:
Ախնիգ կյա, նեյլի կյա (Ասում է կինը՝ երկունքի ժամանակ):
Ախնիգը կտրելու ծմերուկ ա:
Ախնիգը մորը կյոտկան ա ընո̈ւմ:
Ախնիգը պեր, պեժինքը հզըրե:
Ախնիգը վերս ա, տղան՝ վերսկան:
Ախնկանը վեր ետե փըրկեցեր, խուխեն կաթնը կտրեցեր:
Ախպերն ախպորը մեռնելն օգիլ չի, փիս ապրելը կօգի:
Ակնան խմում ա, ախպրին թքում:
Ահեն տարեն հի՞նչ ըս ըլալ, թա մտհեն տարեն հինչ ընիս:
Աղեն ա կյնձին, մաղեն ա պրնձին:
Աղն էլ ա ծերը, մաղն էլ:
Աղվեսին շհադը հաքյին կընի:
Աղվեսին անումն ա եր ըլած, ամա ըշխարքես տոնը քանդողը կյուլն ա:
Աղունը նղացումը չըն չուրըցընում:
Ամանը թամո̈ւզ կոտին:
Ամեզը իրանցեն մատաղ:
Ամենաթիթևն էլ ա խոսկը, ամենածանդրն էլ:
Ամենաիժանը թանգն ա:
Ամենալավ տաշը քարն ա յոր օնում:
Ամենաքաղցըր բառը հափռեղ մաշին ա փսնում:
Ամենաքաղցրը մարթին քրտնանքն ա:

Ամեն դո̈նում կյետը կյերան չի պիրիլ:
Ամեն դո̈նում պապը քյաթա չի օտել:
Ամեն թող ըրած քարու հետա վազ չըն տալ:
Ամեն խմորա քյաթա չի թխվում:
Ամեն ծենու անգուն չըն օնել:
Ամեն համեցեք ընողու հետան չըն ըղնել:
Ամեն հավք ո̈ւրա̈ն պո̈ւնո̈ւմն ա թառ ընո̈ւմ:
Ամեն հաց ուտեխս փորեղ կեսը տերտակ եր կաց:
Ամեն հի̣նչին թազան, հնգերեն՝ քյոհնան:
Ամեն հինչ սվրովի յա:
Ամեն հինչ օրեն կըեշի, օրը վեչ մին պենու եշիլ չը:
Ամեն հյևուր իմաստուն չի:
Ամեն մարթու ըրած ո̈ւրան առաչը կկյա:
Ամեն մարթու հալավ ո̈ւրան ջանան մոտե ա:
Ամեն մարթու հետե ո̈ւրան վեղն ա քախծր:
Ամեն մարթու հնար չի, վեր բիշի ուտեխս մարթու համեցեք անե:
Ամեն մարթու մին դա̈րդ կընի:
Ամեն մարթու մին ուրխընյատեղ կընի:
Ամեն մարթ ո̈ւրան խաչն ա քաշում:
Ամեն մարթ ո̈ւրան կարեն յրա յա ծիք տամ:
Ամեն մարթ ուրան հետե մաղուր ա·
Ամեն մարթ ուրան հետե մարթ ա:
Ամեն մարթ ո̈ւրան սանդն ա թակում:
Ամեն մարթու քշտե սրտամաչ չըն պենալ:
Ամեն ջենա մին պել պերեք, խանծքա՝ հու վեր պտահե:
Ամեն պեն դո̈ւզ ասլել չի, ամա ամեն պենին դո̈ւզը կընի:
Ամեն սիպտակ ծյուն չի:
Ամեն վեղում վարթ չի փսնել:
Ամեն ցավ ո̈ւրան ճարն օնե:
Ամեն ուռթանա ո̈ւրուզյուն օնե, ամեն ուրուզյուն՝ ուռթանա:
Ամեն փաղա մասան չի տեռնալ:
Ամեն փւըստրատե տւլող վեսկե չի:
Ամեն քյլիդ էլ աչառ օնե:
Ամեռնը ըրա, ծմեռնը կեր:
Ամեռնը շուման ա հազ անում, ծմեռնը՝ ուջաղան:
Այլերդ ըգյորա թոզ ըրա:
Այլերը նեղացն ա անում, դլմրդալը՝ չանչախը:
Անաստված տեղը կաց, անդայաղ տեղը՝ կենում'էր:

Անբութա տեղը կաց, անարխա տեղը կենում էր:
Անգուճը նա հետե չի մծանում, զի շատ պեն ա սկանում:
Անդար կյառնը կյուլ կոտե:
Անեծքը ճեյլի յա տեղ հսնում, քանց աղոթքը:
Անեկ հացը կըփքե:
Անե Հուրին, ծաղկե Փուրին:
Անխս-անխս՝ կյետեն նստխս տյլեր մտղխս:
Անծենը ծվվամ ա՝ մազաղու հետե:
Անհաշև խարչողեն հաշևը պրտքատարը կպահե:
Անղոնաղ տոնը ավերակ տոն ա:
Անճարը կերավ պենչարը:
Անմրոք քյընից մրոքու հետա՝ բեղերն էլ կուրցըրուց:
Անշոն չեն ա տեսալ, առանց փադ շոռ ա կյամ:
Անողը պրծավ, չանողը՝ ոչ:
Անպենը կիրեկի պեն կանե:
Անպենին միշտ փուրտցավ կընի:
Անչախ-անչախ Հեղինան ծի եր ըլավ:
Անտես լավեն թարիփ չըն անել:
Անումը կա, ըմանումը չկա:
Անումը հրանեք ա, վեր սերտ չընաքե:
Անումը պծոց ըն յոր օնում:
Անումը փարսանգ ա՝ մարթին նիտան կախ:
Անփոշ վարթ կընի, անփոշ մարթ չընիլ:
Անփոշ վարթ կնարվե, անփոշ սերտ՝ նարվել չի:
Աշխտղած հացն ա հալալ:
Աշխադանքա ավիլ օտելը հարամ ա:
Աշխադանքեն կյինը գյուղողը մարթինն էլ կգյիդա:
Աշխադանքեն շատ ու խրեզ չի ընիլ:
Աշխադող տղեն հետե փիս կործ չի ընիլ:
Աշխարքես ըլածը աշխարքեսա մնամ:
Աշխարքես ամենաղöւզ քաթը «Քաչ Նազարն» ա:
Աշխարքես ամենաղöւզը օղտեն վեզն ա, մնացածը՝ նանա ծոռ ա:
Աշխարքես ամենալյավ մարթը քյասիրն ա:
Աշխարք ընք եկալ, վեր մեր խաչը քաշինք:
Աշխարքես կործը հունցու փոնիա՝ ամալ կկյա:
Աշխարքը շոռ ա եկալ, դրախտը ö րան վեղումը քթալ:
Աշխարքս ընեսավ-թուղեյավ ա կենթան:
Աշխարքս կործն ա շինալ:

— Աշխարքս հի՞ր կլավանա:
— Հիրր կարեն վազ տա փռնե, աղվեսը խափի վուշ, օղտեն մաշկը դուզի, քշեղակը քրքզա վուշ, կյուրը՝ ծիծաղե:
Աշխարքս մարդրվան ա. մինը վեր ա ընցնում, մինը՝ եր:
Աշխարքս պարզ ար, հունցու կյապուտ երգինքը, թվանգը նամարդոթունը քցից բշխարքես մաշը:
Աշխարքումս էրկու պեն կա վեր մեռնում չի՝ մինը լվոթունն ա, մինը փսոթունը:
Աշկա հնոե՝ ուրտա հեռե:
Աշկդ տուս կալ, քցի հանդավարդ:
Աշկեն սիրածը ղաշանգ կընի:
Աշկը՝ ջոր, սերտը՝ ծոռ:
Աշկը տեսածան ա վախում:
Աշկս հանե՝ հացս եռ:
Աշուղը ուրան տեսածը կպատմե:
Աշավը տամ ա, ծեխավը յոր օնում:
Աշը ծեխեն հետե անել չի:
Աշի կուռնանը կործը ծեխեները կարել չի անե:
Աշ ծերքը ծեխեն ախպեր ա:
Ապրանքեն տարը, վերթուն՝ հարը:
Ապրել կա արծաթ ա, ապրել կա՝ արկաթ ա:
Ապրելն ա ոժեր, մեռնելը հեշտ ա:
Ապրելումը խազանգն ու թնըկարավը ախպերք ըն:
Առանց զուռնրդավալ հրսանեք չընիլ:
Առանց ժողովուրթ վեչ բաղարաք կընի, վեչ՝ հրսանեք:
Առանց յունգառ կարել չըս փանյեան ընիս:
Առանց նար դարդ չընիլ:
Առանց չեն ն են նի՞նչ անե, առանց նղե չենը նի՞նչ անե:
Առանց վ[illegible] [illegible] թիաշա չընիլ:
Առաշ քս [illegible] քթեդ ըն թթխում, դրես քս քյընում՝ դրանեդ ըն թթխում:
Առաշ օտ[illegible]. ես [illegible] խոսքեն:
Առյուծը նանե [illegible] մոռնել:
Առյուծը [illegible] ըլած է՝ ննեշալի յա:
Ասելը հեշտ ա. անելն ա ոժեր:
Ասեղեն կյխեն զոմփուշավ թխել չըն:
Ասողեն էլ ականող ըկղի:
Ասողն ասողեն. պուրթը կյըգզղեն:

Աստծու անա մեծը էլիա աստուծ ա:
Աստծու ըռաշին ծունկ չոքե, ամա կործեն հետըմը կաց:
Աստծունը աստծուն տո, թաքավերենը՝ թաքավերեն:
Աստծու պահած կյառնը կյող օտել չի:
Աստծու պարտքը վեչ մին մարթ կարել չի տա, բդի ջանաս:
Աստծու տված ցավը բանդան ա տանում:
Աստծու տված փայան իվիլ օտվել չի:
Աստծու քանդած տոնը կնեգը շինում ա, կնգանը քանդած տոնը աստուծ կարում չի շինի:
Աստուծ բիդիս, վեր կարիս ըստծու սերտը գյիդաս:
Աստուծ էշ ա ստեղծում, մարթը՝ մաշին:
Աստուծ լավեն նհետ ա առաատուր անում:
Աստուծ կա, պայց զորու չի:
Աստուծ համ տամ ա, համ տանում:
Աստուծ հուրու շատ ա տամ, նանա շատ ա օզո̈ւմ:
Աստուծ մարթին ռուզի յա տամ, հետան եշում:
Աստուծ մընին եղում ա, մընին՝ դաղում:
Աստուծ մին տեղա կտրում ա, մին տեղա տամ:
Աստուծ վեր մընին օզի փո̈րթուն անե, խելքը կլխան տուս կօնե:
Աստուծ վեր տա, չորս ընգյունան կըտա:
Աստուծ վեր տըվավ, էլ չափը հրցընել չի:
Աստուծ վեր տըվավ, կլոխն ի վեր վեր կածե:
Աստուծ վեր քզանա խռավե, հույսըդ վեղեն յրա ահր:
Ասում ըմ՝ ասում'էր թա էշը քած ա, ասում ըս՝ քոռակն էլ ա քած:
Ասում ըմ՝ լո̈ւզուս ա ցավում, սուս ըմ անում՝ սերտըս ա ցավում:
Ա սև եզնը, պեռնըդ տանում չըս, տանում չըս, պա փալանդ խե՞ տանում չըս:
Ավիլ թիքան փոր չի ծակել:
Արաղ կա՝ ղոնաղ կա:
Արաղ՝ տղամարթու վարաղ:
Արթար խոսքը մեռնել չի:
Արթար մարթին փորը կոշտ չընի, փորը կոշտ մարթը արթար չընի:
Արթար չափե, արթար կտրե:
Արծիվը ճանճ չի փռնել:
Արջը խաղվավն ըլավ, տանձը մննան քցից:
Արշը ո̈ւրան ահան կկյոռռա:
Արշը օխտը երք ա գյուղում, օխտն էլ տանձու մասին:

Արտեն տշկը ննձվերեն յրա կընի:
Արևեն տված հախը կորած չի:
Արևը համ խուխեն ա հարկավեր, համ՝ հըրվուրեն:

Բաբը բաբեն ա պտահում:
Բաղը պահե, բարը կեր:
Բաղ ըս տամ, գիլա չի տամ:
Բարաքյալլան տոն կքանդի:
Բարը ծառան ա ճնանչվում, ծառն էլ՝ բարան:
Բդուրղան ծին թաք քու տակեդ չի բդուրմիշ ընի:
Բիժի, վեր տու եկեր, քուրուն ըստեղ չա՞ր:
Բհոն տոն կքանդի:
Բուղազեն խնայիլ չըն, փորեն կըխնային:
Բուստանճան վեր կյըղոթուն անին, բոստանչուն փայը կթողին:

Գյանքը հիշքան առաչ քյընի, էլ հա էն ա ծոռումը:
Գյողլը կացած օղտ չընիլ:

Դա̈րդը ծիծաղելավ կպըկասե, պարտքը՝ տալավ:
Դա̈րզուն ըսեցեն՝ քոչի, ասեղը թևքը կոխից:
Դե, եկ ցորենը կյարան նոկե:
Դերը մռոք չօնար, խոսքը՝ ննցավ ոչ:
Դերին ըսեցեն. — Խեր ընի, հիշտեղ ը՞ս քյընում: Ասից. — Ինձ
հետե խեր ա, ամա մարթու տոն ա քանդվալ:
Դերն ասից՝ ըրածս անիք ուչ, ասածս ըրեք:
Դըլլա̈քեն հետե քաշալը յա մեռած, յա սաղ:
Դըրախտը վեր ընթունե վուչ, դժոխքը լհա ղտշանք կանե:
Դո̈ւզ խոսողեն ծին թամքած բեդի, դո̈ւզը ասե, նստե փախնի:
Դո̈ւզ խոսող մարթը խանեն կլոխ չի տալ:
Դո̈ւզ խոսքան հմանչիլ չըն:
Դո̈ւզ խոսքը գյափումը կասին:
Դո̈ւզ խոսքը կծո վա ընո̈ւմ:
Դո̈ւզ խոսքը ամեն մարթ կարել չի կոլ տա:
Դո̈ւզ խոսքը կյին չօնե:
Դո̈ւզ խոսքը դմու նման պկումը տնգըրվում ա:
Դո̈ւզ խոսքը պատան չի կենալ:
Դո̈ւզ խոսքը ըսողեն յա խոխա կասին, յա՝ կյիժ:
Դո̈ւզ խոսքը տեղ չի հսնում:
Դո̈ւզ խոսքը քյոմննանում չի:

Դո՛ւզ խոսելաս փափաղս ծոռ ա մնամ:
Դուզն ասե՝ կլխեդ պատառնը ճզըրե:
Դո՛ւշմանը տանա կընի:

Եզնը եր ըն կցնում, տակյան դանա օզո՛ւմ:
Եթիմը թոքի կըճի:
Եթիմ խոխան ճիշնան անում ա, էլ նա կոռծեն կեսը էքսն ա ըղնում:
Եթիմն ասալ ա՝ ես կապրիմ, աստված թա՝ ես նիշտեղ ընիմ, վեր տու ապրիս:
Եխտոտ փոխմուրթը տանը կլըվանան:
Եկավ սավը, պանից կավը:
Եղոտ մանն՛ը յուղ կտան:
Ես ասում իմ՝ աղը վետալ ա, տու ասում ըս՝ վեղն էլ ա վետալ:
Ե[illegible] ասում, տու՝ տանձ:
Ես կյոն ըմ ննծում, տու կոն ըս սերմում:
Ես պաք՝ շուտելան, տու պաք՝ ուտելան:
Ես սյեն ըմ ասում, տու սյեմ, ակ ըս սկանում:
Երանե նա, նու վեր եռած վերթի չօնե:
Երքը զա՛նգ ա, ուրիշի սրտում ա ծեն հանում:

Զերրունը քոն բյածին փայր կոտե:
Զռավար ընելի նետե՝ մարթին վարը դո՛ւզ բեղի:
Զուռնաս փչըլակյան շըմ, թա քու էշդ խրտնում ա:

Էլնա էն կյուշը, էլնա էն փրթո՛ւշը:
Էլնա յավ ա վաղեն յավ ասիս, քան յավեն՝ վաղ:
Էլնա շատը շտատեռնը, խըեզը խըրզատեռնը:
Էծը վինյարեն ասում ա՝ խե վեռդ պեց ա: Վեխնարը թա՝ քունը ամեն օր պեզ ա ընում, ես նո՞ւնց ըմ անում:
Էծու ննետ առատուր չըն անել:
Էն մեռալը շոն աանե, վեր յրա պոչեր չի քանդին:
Էն տանը մատաղ, վեր նամ կկծե, նամ կըրղալի::
Էն վաղ ար, վեր էշը կաղ ար:
Էշան վեր ըղնողը կմեռնե:
Էշան քյամբախտ պեն չկա. մին նա՛ր օնե՝ էշ, մին մար օնե՝ էշ:
Էշը գյիդա՞ց մոշը նինչ ա:
Էշը էշին քշտեն կապիս, յա քոյը կըրվերե, յա՝ խասյաթը:

Էշը ըխպըճարեն թավիլ ա տվալ, մոխերը զիրավ տվալ:
Էշը ըռաշիս, շելակը շլակես:
Էշը կտըրե, տանգը՝ վուչ:
Էշը ճանգ չի տվավ, փալանը քլուլեցեն:
Էշը մատաղ չըն անում, էշակյինն ըն մատաղ անում:
Էշը վեր Երուսաղեմ էլ քյընի, էլհա անումը ո̈ւրան յրա յա:
Էշը վեր էշ ա, մե հետ ա ցեխումը մնամ:
Էշը քլուլելին տեղ, փալանն ըն քլոլում:
Էշին եշում ըն, կապուկը կապում:
Էշին զարգացածը մին տեղ ընիլ չի:
Էշին ըսեցեն՝ աշկդ լուս, քոռակ ա ըլալ. ասից՝ տանավ պեռնս թթվանում չի:
Էշին ըսեցեն՝ հրթննքա ծեն ըն տամ. ասից՝ յա ջո̈ւրն ա պակաս, յա՝ փադը:
Էշ ընիլը վեշինչ, թաք ըշոթուն չանե:
Էշ իմաստունը մին տեղ ընիլ չի:
Էշին կյրեզմանը վերչիվերշը կյուլին փորն ա, վխճարենը՝ ղասաբեն դո̈ւքյանը:
Էշին մնեշակ տվեն, թա վետ օնե, հալոից կերավ:
Էշին յրա կզնըվում ա, փալանը թակում:
Էշին պեռնը վեր ծռե վուչ, քարը ղարիբոթուն չի քաշիլ:
Էշին վեռեն օղ ա կախ տամ:
Էշին վեր քցեցեն, ծիին նլեցեն:
Էշին փախածը փռնըրվել չի:
Էշն անե էշն օտե, պա ըշատարը հի՞նչ կօտե:
Էշն անե, էշն օտե:
Էշու հաքյվու նման վեշ ըրկնանում ա, վեշ կրճանում:
Էս ըշխարքես կեսը թայդի ըղնել ա, կեսը՝ թայդի չըղնել:
Էս աշկը էն աշկեն տեղ լուս չի տամ:
Էս պերքը, էս էլ քշերքը:
Էս քաթանը վեշ մոու տապան ա, վեշ սաղու փոխան:
Էրկու անգուն, մին պերան:
Էրկու ժուլիկին անա շնըկոտեգ կընի:
Էրկու լսե, մին խոսե:
Էրկու ծերք անեյ, մին կլոխ թակել:
Էրկու հարուստ նոև ըրեն, մին քյըսիբու քյամանչա կոտրեցեն:
Էրկու [illegible] մնին տալ չըն:
Էրկունը իրեք տեռնալ:

Էրկունը վեր մին տեռեն, մինը՝ հեչ:
Էրկու վխնարավ սո̈ւրու չընիլ:
Էրկու տվարեն կլոխը մին ղզղանում իփվիլ չի:
Էրկու փահլևան մին քյնդիրու յրա կարել չըն խաղ անին:
Էքսվա կործեն յրա ծյուն կկյա:
Էքսվա քոչը ըրուգյունն ըն քշում:

Ըլածեն կյին չընիլ, չլածեն կընի:
Ըմռնվա կյողը ծմեռը կասե:
Ըմռնվա քարն էլ ծմեռը կկղում ա (ոտվում ա)
Ըմռնվա օրը տարե կքուշտըցնե:
Ընդեղ քյընի, հիշտեղ տու հարկավեր ըս:
Ըննողեն աստուծ էլ ա պարտական:
Ընցած օրեն օր չի հսնել:
Ըշկրծկոթունը ըղանո̈ւր ա, հիշքան խմիս, էնքան կծրավիս:
Ըսեցեն. — Ա ծառ, խե՞ հղըցեն ղրաղեն ըս փսնում: Ասից.
— Վեր հղեն ավլադ անիմ:
Ըսեցեն. — Աղբյուր, խե՞ հղեցը ղրաղեն ըս տուս կյամ: Ասից.
— Քյընող-կյվողու նո̈ւր տալու հետե:
Ըրբան ճոռային տեղ, արարաշին ա ճոռամ:
Ըրած լվո̈թունը ըրեսավլը չըն կյալ:
Ըրած ցեխեն մին քթո̈լ նո̈ւրն էլ ա բոլ:
Ըփըրվերի կնգանը փեշկը նի կացած ա:

Թա առանց պահել հեյվան ընի, հանդերը լիքյը կընի:
Թազա հավեր ըն տո̈ւս եկալ, ըրկաթե ծվեն ըն ածում:
Թազան վեր կյավ ուչ, քյոհնան հիշվիլ չի:
Թազին էլ ա շոն:
Թաթերը թաթման քցած կատուն կարել չի մուկուն փռնե:
Թամրո̈լ ախնիզը վարար նո̈ւր չի սիրիլ:
Թանգ ու իժան մին կյին ա:
Թա վեր չըս տրալ, նո̈ր ըս յոր օնում:
Թարիփան կոչ բըղիս կյալ, վեչ թա ծքվիլ:
Թալ փալանս ընձար ա յա, կլոխս փոխիս, փոխիս ուչ՝ հո̈մին հաշևն ա:
Թաքուն մռնողեն էլ ըն ժըղվուրթավ թաղում:
Թա օգո̈ւմ ըս գյիդաս աշխարքս հունց ա, մռնողան հրցըրու:
Թա օգո̈ւմ ըս կործդ առաջ քյընի, տու քյընի կործեն հետան, թա օգո̈ւմ չըս, ո̈ւրուշու դարկե:

Թա օզո̈ւմ ըս շնըվաշի ապրիս, մրթըվաշի մեռնիս, փակվե, թա օզո̈ւմս մրթըվաշի ապրիս, շնըվաշի մեռնիս՝ փակվում'էր:
Թիժ կրակը ճելլի յա էրում—վեր հնցընում:
Թողել չըն կածանը ծյուն կոխե:
Թող ըրած քարեն հետան վազ չըն տալ:
Թող փորս կոշտ ընի, հետաս տո̈ւզնը ծեն տան:
Թոշան կտրում ըն, պրանեն տեմ օնում:
Թոռը վեր թոռ ա, ամեն մարթու թրշում չի:
Թոռ թակե պեզնեզը, արև էրի պեզնեզը:
Թորքն ասում ա՝ հային ետե խելքը իմը քիդար:
Թվանքը մոտե յրա յըս անում, հեռե տրաքում ա:
Թվանքը մոտե տրաքում ա, հեռե մարթ ըսպանում:
Թուլ ընգող քարը մամուռ օնել չի:
Թունդ քացախը կարաս ա ճքըցնում:
Թուռունը հաց թխից, տնղեզինը պրծեցավ:
Թևերը կքավեն հետե պեռնը չի:
Թսսամ էր, մոլ չանիմ:

Ժամանակը կյող ա:
Ժաման ես ըմ կյամ, «օրհնյա դերը» տու վըս ասում:
Ժամեն տռա̈նը լոխ «ա կնեգ, վայ ա»:
Ժլատեն ըսեցեն՝ տո̈ռնը պեց, կըրհար ըրավ,
Կյողեն ըսեցեն պտրհանավը եշի, ծկըծո̈ւկի ըրավ:
Ժղովուրթը ծոռ պեն չ'անել,
Ժղովուրթը ծոռ պեն չ'ասել:
Ժղուվուրթան տո̈ւս կյվողեն յա վեզը կկոտրե, յա՝ պոզը:
Ժղուվուրթեն անեծքը աշկ էլ կքուռըցնե:
Ժղուվուրթեն անեծքը տափը չըղնել:
Ժղուվուրթեն աշկը շողուլ ա:
Ժղուվուրթեն մննածը աստուծ կղո̈ւզըցնե:
Ժղուվուրթեն նհետ ապրե, ժղուվուրթեն նհետ մեռեր:
Ժղուվուրթեն պերանը կարել չըս կապիս:
Ժղուվուրթեն պցրցրա̈ծը աստուծ էլ չի կարել վեր քըցի:

Իժտն մսան քախծը շորվա չ'ընիլ:
Իժան մսումը թնըխաշու չընիլ:
Իլա̈ծավը պտըպատ ա անում, չլածավը՝ յան տամ:
Իմ ապրանքս հո՞ւ կյուղանա, հո՞ւ. Հարարեղին տղա Գոգին, էն էլ մին պիծի մհակավ:

Իմաստուն վերթին հորն անա կհրցնե,
իմաստուն հարը վերթուն մրթատեղ կտնի:
Իմ գյիդալս էշին վեռեն ա լո̈ւս տամ:
Իմ դո̈ւշմանիս դո̈ւշմանը իմ պարիկամս ա:
Ինսանեն պենը գյիդվալ չի:
Ինքը մարթ չի, մարթու էլ հավան չի կենում:
Իվիլ թամահը տոն կքանդի:
Իվիլ թիքան փոր չի ծակել:
Իրավունքը հրուստենն ա:
Իրեսեն թքեցեն, ասից՝ թոռ ա կյամ:
Իրեսեն թքեցեն, ասից՝ թոռա շա՞տ ա:
Իրեսը իրեսան կհըմանչի:
Իրես ըս տամ, աստառ էլ ա օզում:
Իրեսն էլ պրանան ա հմանչում:
Իրես պահե՝ իրես կեր, սեր պահե՝ սեր կեր:
Իրիգունը ալաթ ա անում, ուռթանան կյութան էլ չի տեռնում:

Լամբը ո̈ւրան տակեն իշեղ չի տալ:
Լավ ա անիս ուշ, հինչ փիս անիս:
Լավ ա անհախ ըշխադիս, հինչ հպարապ կենաս:
Լա́վ ա առանց հաց ընիս, հինչ՝ պարտք:
Լավ ա ըստծու շուխկեն կլոխ տաս, քան խանեն կլխեն:
Լավ ա էշու մես ուտիս, հինչ աննանանչ ղսաբու խնդիրք անիս:
Լավ ա կնգանը աշկը հանիս, քան լեշակը:
Լա́վ ա հարո̈ւր օր պորթումը կենաս, քան մին սոտ ուրթումն ուտիս:
Լավ ա մարթին աշկը տուս կյա, հինչ անումը:
Լա́վ ա մարթին փորը տո̈ւզն ընի, կլոխը դինջ:
Լավ ա նեղութուն քաշիս՝ պարզիրես մնաս, քանց շանտղութուն անիս, անպատեվ տեռնաս:
Լավ ա շլակիմ, հինչ չու ասիմ:
Լավ ա տու ընիս հիվանդ, հինչ տանը հիվանդ ընի:
Լավ ա փայ հվաքիս, հինչ հարփիս:
Լավ է ամուսնանալ, քան թե ջեռնոլ:
Լավ ըշխադե, ջանդ էլ պահե:
Լավ խոսքեն տարը կմեռնե, խոսքը կմնա:
Լալ խոսքը թևեր կանե, թռչի:
Լավ խոսքը հրեղեն դուշ ա:

Լավ խոսքը վարքու փոնչ ա:
Լավ խոսքն ու աեղեն բրարմունքը հինչ ասիս աժին:
Լավ ծին բրըսկապան չի ամանալ:
Լավ ծին կյարին կվլցընե, փիսը՝ թակը:
Լավ ծին ճոլին ապեն էլ ա ճնանչվում:
Լավ կենացը էրկու հետ ըն խմում:
Լավ կոծ բրա, լավ քոն իլ:
Լավ մարթը իցուն աարանը մին ա ծնվում, լավ թաքավերը՝ հազարանը մին յա ծնվում ա, յա՝ չէ:
Լավ մարթը քարեն ծեռք տա, վեսկե կտեռնա:
Լավ պենը կուրչիլանը եռն ա մղափռւնդ կյամ:
Լավ փիս էլ ա ընում, փիս լավ էլ:
Լավան վնաս չկա:
Լավաշը շոնն էլ ա ուտում, պաները մաչին պտասեյը չի գյուդում:
Լացին սուրը կտրվե:
Լացու հնգեր ընիս, հացու հնգեր չընիս:
Լաց կա՝ սերա ա հվցընում:
Լեն օրում ըս, ծերքդ մեկնե բդի քու մար, նեղ օրում ըս՝ էլնա քու մար:
Լիզյը թվճնգին տրքուցան մին մարթ ա վախում, տրտճկան՝ օխտը:
Լի օրավ հպարապ շոռ չըն կյալ:
Լլեգին լուզուն մարը կգյիդա:
Լլեգին լուզուն լալեգը կգյիդա:
Լշակերը կտուցան ա րըվամ:
Լոխ Իրանան ըն կյամ, ախպերը՝ Բղանան:
Լոխ մնին մաչին ընիլ չի:
Լոխ ստո ա, ծմեռնը դորթ:
Լչռնեն տասը լեշակ կընի:
Լվըթունավը դուշման չըն ծեռք պիրիլ, նախանձ ծեռք կպիրին:
Լոք տո ծովան ընգեր սարը,
ասսուծ ա քու հվասարը:
Լուզվեն դաղը լճվանալ չի:
Լուզուն՝ կապ, սերտը՝ պեց:
Լուզուն համ տոն կչինի, համ տոն կքանդի:
Լուզուն մինն ա, անգունը՝ էրկունը, մե հետ խոսե, էրկու հետ լսե:
Լուզուն վեսկեռ չօնե, հունցու օզում ըս՝ հլռում ըս:

Լուսն էլ օնե շոխքը:
Լուսն ու մթենը մին հղըցավ ըն կյամ:

Խալխեն աշկեն շերանը տեսնում ա, ո̈ւրան աշկեն կյերանը
տեսնում չի:
Խալխեն աշկը քեզ լուս չի տալ:
Խալխը ո̈ւրան չի հավան, ինքն էլ՝ ուրիշի:
Խաղեն վերջը կու կտեռնա:
Խաղուն խաղվեն յշիլավ ա սվանում:
Խաղուն վեր հսավ, ծմերուկը՝ հեչ:
Խաշար չվալավ այլեր չըն պիրիլ:
Խաչավ յոր ա օնում, խչըմանավ վեր տնո̈ւմ:
Խաչը տեռնը զորավոր կանե:
Խաչն էլ ա քունը, զորութունն էլ:
Խելունք դո̈ւշմանը կես պարիկամ ա:
Խելունք տղան հորը ըլածավը պարծենալ չի:
Խելքը դարդ ա:
Խելքը հասակումը չընիլ, կլխումը կընի:
Խելքը տարումը չընում, սա̈րումն ա ընում:
Խեղնդ տնիլ բղիս կործեն մաչին, վեր կործ տեռնա:
Խեղնի․ խեղն ասողը շատ կընի, ծերք մեկնողը՝ խրեզ:
Խեղն քյփուտեն վեռը պեց չընի:
Խեղն քյփուտեն հացը կուտոր չտեռնա:
Խեղնը հվատեն կեսն ա:
Խինդեղնը հիշքան բեջարիս, մնեչակ չի տեռնալ:
Խմել-պահելը տղըմրթոթուն ա, խմել-հարփիլը համոթ պեն ա:
Խնամե-խնամե,
շատ ասիս կնհամե:
Խնձորավ կու չընիլ:
Խոխան լաց ըլավ, թա՝ փայըս խրեզ ա, քաշը յրա տվտվ տարավ:
Խոխան հինչու տեսնա՝ էն կսըվերե:
Խոխան մորավ կընի եթիմ, հորավ եթիմ չընիլ:
Խոխան վեր ընգելավ—եր կնալավ կմըծանա:
Խոխան մին եղու նման կհալվի, մին վարթու նման կպենվա:
Խոխան ջանաս ա, ախպերս՝ բղանաս:
Խոխան ուրխընալավ ա մծանում:
Խոզը միշտ ցեխ կքթենա:
Խոսում ըս՝ վայ ա, խոսում չըս՝ վայ ա:

Խոսքան էրկան պեն չկա:
Խոսքավ՝ արծիվ, կործավ՝ կորե:
Խոսքավ օծ ըրա, կոև մ'էր անել:
Խոսքեն էք ու վերց կընի:
Խոսքեն հետան վազ չըն տալ:
Խոսքեն քամակը խոսքեն ըռաշան կըրվա:
Խոսքերքը վեր տընիս ճղացեն քարեն տակեն, մին կաթ ծեթ չի
տուս կյալ:
Խոսքը բղի խելքավ պժենիս, վեսկավ քշըռիս:
Խոսքը թվավուր կընի:
Խոսքը իփի, ետնան տուս քցի:
Խոսքը խոսք ա պո̈ւրո̈ւմ:
Խոսքը կործան ա տուս կյամ, կործը՝ խոսքան,
թա խոսքը կործ չի, իսկի խոսք էլ չի:
Խոսքը կործավ ա խոսք:
Խոսքը մեղր ա, կործը՝ սախտեղ:
Խոսքը սկընողենն ա:
Խոսքը տեղեն կասին:
Խոսքը քյանդիր ա, վեր փոնիս՝ կրկընանա:
Խոսքը օրիշ կասե, կործը օրիշ կանե:
Խոսքն ու կործը մին բղին, տերտակ խոսքեն կյին չբիղի:
Խոսքն ու սերտը մին բղին:
Խոսքը կոլա, սերտը ախպյուր, էրկուսը կնի՞ն մին քոլա:
Խորագ իփողնեն վեր շատ ընին, խորագը նալի կմնա:
Խրավածը հանց ոտել բղիս, վեր փորավդ կուխկտնաղը փոնիս։
Խրեգ կործն էլ ա շաա կործ շինում:
Խրեգ վարե, հիշտ շվարե:
Խուխեն իրես չըն տալ:
Խուրագան կերենք ուչ, ծուխան ըշկրնես քուտացավ:

Ծամե, վեր հիշտ կոլ տաս:
Ծառան ծռաակը հիշտ ա ըրվամ:
Ծառը՝ բարավ ա, մարթը՝ աշխաղանքավ:
Ծառը կտրալ ըս, էլ հո՞ր ըս ասում, թա՝ ծտերը հո՞ր ըն:
Ծառը վեր շատ յոր օնե, նեղնը կքշանա:
Ծառը վեր շղարում ըն՝ շեշման ա վեր ըղնում:
Ծեծաղը վերսկանն ա, ցավը՝ կյեզտնը:

Մեծաղը՝ տես, մահը՝ տեն,
      ծերքդ՝ պեն, հա պեն:
Մեռը հի՞նչ ա, թա ծարխաշուն հի՞նչ ընի:
Մեր կոտրած ծերքը թող ծեր թևքումը մնա:
Մերքեն մանները դո̈ւզ ըն, վե՞ր աշխարքս դո̈ւզ ընի:
Մերք մկնողեն ծերքան փռնե, վեր նամարդ չասին:
Մերքը չհսած տեղը ծերք չըն մեկնել:
Միան վեր եկու, ծին մննան քցից:
Միավուրը վննըվուրեն հղըցհնգեր չի:
Մին մինչև տտակելը կրածե:
Մին շլլեղավ չըն քշիլ, ծին կյարավ կքշին:
Միվիլը գյուղում չի, մկրատը ծերքն ա օնում:
Մմակը առանց կյեզան չընիլ:
Միին եշում ըն, նալը թխում:
Միին եշում ըն՝ կյարին քցում:
Միին քոսը կյարին կսղցնե:
Միք տան եզնենքը, առաին ըշըռոտենքը:
Մյուն ա կյամ, վեր վեննը մռսե՞:
Մյունան սիպտակ պեն չկա, բայց վննըտակու կոռչում ա:
Մյունավ ըրած եխաը պեց կընի:
Մյունավ լցած հանդը, ետնան ծաղկավ կլցնե:
Մյունն էլ ա սիպտակ, բայց վեր յրան կյուզում ըս՝ աղնում ա:
Մնեն վախաը քանե մուտանա, կավը աղաաավ կպռանչի:
Մնողը վերթուն փիսը օզիլ չի:
Մոռ ըշխարքումը շիտակ ապրելը ածեր ա:
Մոռ խոսքեն ումբուր չընիլ:
Մոռ նստե, դո̈ւզ խոսե:
Մոռ վեզը կտրել բըդիս:
Մոռ փադին վեր մաշկդ տեմ ըրեր՝ մաշկդ կծըռե:
Մոռ մաշկը դո̈ւզ փադը կդո̈ւզըցնե:
Մովը քթո̈ւլավ արտակել չի:
Մովը քյընի՝ կցմաքե:
Մովն ասից. վեր ես հեռ կյամ, հետե կաց ինձանա.
      իսկ թա տու հեռ կյաս՝ մուտաց ինձանա:
Մովն ըղնողը օխծին հաքյվան էլ ա փռնում:
Մռեռեն քմակեն ծմակն ըռվամ չի:
Մո̈ւլին փորը կործ ընեխս կցավե:
Մո̈ւլն էլ ա ծո̈ւլացալ:

Ծո̈ւկունը հիբը փռնիս՝ թա̈զա յա:
Ծո̈ւկունը ո̈ւրան ճո̈ւրը քթավ:
Ծուկուն ուտողեն քամակը միշտ ճրո̈ւմը բդի:
Ծուվակյող՝ ծիակյող:
Ծուվումը վեր ճոտ ա ընո̈ւմ՝ ծվվամ ա:

Կաթնեն նհետ նի մտածը հուքվին նհետ տուս կկյա:
Կաթուկը վեր վեր ըղնե, ծառեն տակը կղնե:
Կալխոզը ծառեն տակեն ա, կլխեն նհետ պեն չօնե:
Կաղլեգ էշին քոռ նալբանդ քթին:
Կապդ էրկան պահե, լո̈ւզուդ՝ կարճ:
Կավը կաթնն ըգյորա կպռանչի:
Կավը ստկելանը եար միշտ կթնատու կընի:
Կավս յղե ընի, հենց ամես ետե ծնե:
Կատվեն վազ տալը մինչև մարաքը կընի:
Կատուն աղանձ ա օտում:
Կատուն ուրան փորեն հետե յա մուկուն փռնում:
Կարել չըս դո̈ւզ քյընիս, վեր հղեն ծռըմոռ ա:
Կեղը յրեն ա փռնում:
Կեղծավորոթունը կես թաքավորոթուն ա:
Կենն էլ չորին հվուրավը էրվում ա:
Կեռեքը կտրածն ա ծամում:
Կեսատ պատը ցորտ կտանե:
Կեան ըղնողը ճղնըճեղնը կվազի:
Կետը փիս պենը յոր չի օնել, թող կանե, քցի դրաղ:
Կեր եղեղեն, պեր հրեղեն (հղի կնոջը):
Կլոխն ասից. — Ա վեննը, շնուրհակալ ը՞ս, վեր քեզ Շուշի չըմ
ղարկում:

Կլոխը պեց չի թողիս, հաքյին էլ ըս պեց թուղյական:
Կլխըպեցին հղեն փափաղչուն տռնավր կընի·
Կծողեն քմակեն վեննը կաց, քացի ավողէն՝ ըռաշին:
Կկողան մին տո̈ւս կկյա, պենդան՝ էրկու:
Կյալին էլ քյընիլ կընի:
Կյարին կյարի յա օտում, ցորենը՝ ցորեն:
Կյարի օտող ծին վերշումը կյարի կռող կտեռնա:
Կյարմո̈ւր խնձորեն մաշը փոշ կընի:
Կյարմո̈ւր խնձորեն քարավ կտան:
Կյարունքը վարե, ամեռնը հնձի,

ծմեռնը նստե կյնձի:

Կյետը յա կտանե, յա կպիրի:

Կյինին ըրեսեն համոթը տուս կօնե:

Կյինին մարթին սպանել չի, շան օր կքցի:

Կյինին մհնավ—շհնավ կխմին:

Կյինուն նհետ կոխ չըն կենալ:

Կյինուն վեր ասխս փիս ա՝ կյուլ կաեռնա քեզ օտե:

Կյինուն փարշեն վեռը պեց մ'էր անել, թա չէ, ինքն էլ քու վեռդ պեց կանե.

Կյողն ասից՝ հուրու օնե, իմն ա:

Կյողը եկու՝ վայ մինաաար, կյուլը եկու՝ վայ մինատար:

Կյողը կյամ ա՝ բալա լայ-լայ, կյուլը կյամ ա՝ բալա լայ-լայ:

Կյողը, կյուլը, տարը հրակաշ ըն, հու վեր ռաշիդ բնի, էն էլ կտանե:

Կյողը մթնու շոռ կկյա:

Կյութանն ա գյուղում ժնջիլը հունց ա ծիք տամ:

Կյուլը թոխպ օրը կծծաղե:

Կյուլը մթեն քշեր կօզի:

Կյուլին աշկերը ըղվեսին ուստա յըն չինալ:

Կյուլին նհեա օտում ա, տեռնը նհետ ոռնում:

Կյուլին վեզը նա հետե յա հաստ, վեր öւրան պենը öւրան ծեր-քավն ա փոնում:

Կյողոթունը սել ա, վեր փոնըվիս ուչ:

Կնեգդ կյեշ բդի, ուլախդ էշ բդի, տոնդ էլ կտոր բդի:

Կնեգը ըրտըսունքավ կեխնե:

Կնեգը իփիլավ-թփելավ ա կնեգ:

Կնեգը հցապեն բդի:

Կնեգը մարթինը չի, ախճիզն ա հոռենը:

Կնեգը վեր լավ ընի, ըստծու էլ կընի:

Կնեգ ըրա, քնենք ըրա:

Կնեգս պին ա, հացերը խրդըխուրդա յա թխում, ես էլ էրկունն օտում ըմ, մինը հաշև անում:

Կնգանենը մարթն ա, կոժը:

Կնգանը աշկը լացու հեաե յա ստեղծվալ:

Կնգանը պատնը մարթը կպահե:

Կնգանը վեր թակխս ուչ՝ կգյիդա թա ըրփըվերիյա:

Կնեգը վեր öւրան մարթան քաշվից ուչ, ուրիշան քաշվիլ չի, քաշվիլ չի:

Կօզի ծռւկունը կլխան ա վերթնում, պայց հափջվան ըն ֆջիրում:
Կօզի վխնարան շատ ըն կարվում, էլհա վխնարեն սռտու կը-
նի, շանը ընիլ չի:
Կոժն էլ ըն դերին կլխեն կռարում, կոլան էլ:
Կոլան ճրին հղեցը կկռարե:
Կոխտանչ աեղը խոտ չի փսնել:
Կոշտը հինչ ա գյուդում, թա ըղֆադեն փորը դռռամ ա:
Կոշար աուզնին ամանը խուրղա նի կփրթի:
Կոշա պուրթը ախնիգս կյզի, կակողը՝ հարթնս, կոշար պուրթը
հարթնս մանե, կակողը՝ ախնիգս:
Կոշտ օտել-արաֆելը կյումաշին կսազի:
Կռաեգը շանը փորեն տակեն ա գողլը կենում:
Կոռած անակեն կոթը վեսկե կընի:
Կոռավ ապրանֆ, կոռավ հուֆի:
Կոռեկն էլ՝ ուրան ըգյոռա:
Կոռծ անողը խռեզ կխոսե:
Կոռծ անող մարթին կոռծը պրծնել չի:
Կոռծեն նհեա՝ դուզ կոռծ անելը սվեռե:
Կոռծը ամեն հինչին եխնում ա:
Կոռծը գիդողան բաղրյար ա ընում:
Կոռծը ընողանա վախում:
Կոռծը ընողեն պարտական ա:
Կոռծ ընելան վեչ մինը մեռալ չի:
Կոռծ ընելավ չըն հռուստանում, կեոֆան կարելան ըն հռուստա-
նում:
Կոռծ ընողեն հետե ամենածանդր կոռծը անկոռծ կենալն ա:
Կոռծը սեռն ա անում:
Կոռծ ըռա, վեռ շտա̈հավ հաց օախս:
Կոռծդ պրծեր, եանան լղվոթուն ըռա:
Կոռուն յա մաշկեն ֆցած, յա հուֆին հանած:
Կոռ անելը չի աղըմրթոթուն, եխնելն ա աղըմրթոթուն:
Կովումը չամենչ չըն պժենում:
Կարից ցիլս, կտրից թիլս:
Կռակեն ոխան պրծնումնը չընիլ:
Կռակը առանց ծոխ չընում:
Կռակը էռած աեղն ա էռում:
Կրկնատաթակ թութան արաղ չի տուս կյալ,
շախկա աված թութան ըրկնատակ տուս կկյա:

Կրշկրշող հավը ածան կընի:
Կուժեն բռաշին կոլա էլ ա կոտրում:
Կուկուն անե, ճինին տանե:
Կքավեն ճոտը հավեն տակեն կենալ չի:

Հազար խոսողը Ղազար չի տեռնալ:
Հազար սոտը մին ղորթ չաժի:
Հալալ մազը կարել չի, հարամ կյերանը կկոտրե:
Հալավը լաշան մոտե յա ընում:
Հա̈մին էշն ա, փալանն ա փոխվալ:
Համ հավեն ա փչում, համ՝ կածին:
Համ օժավ ա, համ՝ նաշար:
Հայան խելունքը հայը կընի:
Հայացունը մին ղաշանգ ախնիզ ար, թորքերը փխնըցրեն:
Հայը հային պարիկամ կընի:
Հայը մինչև նղանա վուշ՝ եա չի տեռնալ:
Հայը մինչև նղանա վուշ՝ նստել չի:
Հայը մղրաճանչ ա, խարար կուրցրած:
Հային թմզոթունը, թորքեն փյադա քյինիլը:
Հային հրցրեն. — Հի՞նչավ ըս ապրում, ասից՝ ումեղավ:
Հային պենը պրծնել չի:
Հայ-հայս քեցալ ա, մնացալ ա վայ-վայս:
Հայում՝ ավարած, թորքում՝ ավարած:
Հանա̈քին վերշը շանաք կընի:
Հանդին խոսքը առն չըն պիրիլ:
Հանդին կարե, վեր կալումը թող շանե:
Հանց ա մոլլա՝ խոզու մսու յշիյիս:
Հանց բեդար աշխարքս շնողենն ընա̈ր, վեչ թա քնդողենը:
Հանց բդար ղորթը ծառ ընար, լոխ անգուային:
Հանց ըրա, ուտեիս պենիդ համը պրա̈նումդ կորշի վուշ:
Հանց խոսք կա, քարն էլ կնքցնե:
Հանց վախա ա ընում, կաղը սաղան առաչ ա քյընում:
Հանց վախա ա ընում, սաղը ճքածեն բռաշին ա կոտրում:
Հանց վախա կընի, մեծը պիծինին հետան կքյընի:
Հաշան շոնը խածան չընիլ:
Հաշի, հաշի, ետ մաշի:
Հաստ ու պերակ մին կյին ա, վայ պերակ մնողեն:
Հավատը սարը տեղան աո̈ւրո̈ւր կտա:

Հավեն ճրին ճո̈ւրն էլ ա խորագ:
Հավեն վերը վեր թոխսը կյա, ծվենը ասկը կանին:
Հավքը՝ թևավը, մարթը՝ խելքավը:
Հաաեգը վերան բդի, վերթին փորան բդի:
Հարամը եկու, հալալը աարավ:
Հարգե՝ հարգվե:
Հարգս՝ հարգավորաց, պաաեվս՝ արժանավորաց:
Հա̈րը շլոր կերավ, աղեն կեռեքը առնից:
Հա̈րը անգալ ա, վերթին մծըցալ, կյողը եկալ ա աար տուս եկալ:
Հարթնանը վեռավը փսեն լվոթուն ա անում:
Հարթնը պլոթուն ըրավ, սկեսվերը քեթը դղեցեն:
Հարթնը փեսան կաանե, շաբաշը՝ ածողը,
մկառեն լհա մին վորքեց պար կյալ կմնա:
Հարուրը կուրցնողը մինավը ուֆ չանել:
Հարուր ճղպորան հենգը փոչ կընի:
Հարուր աարե կյղոթուն ըրե, հարամ թքյա չկերե:
Հարուր արեկան էլ ընիմ, ծոռ փադը չալիգ չըմ շինիլ:
Հարուսար թագա շոր կեցավ, ըսեցեն՝ շնըհավուր ընի, աղքադը
կեցավ, ըսեցեն՝ հշար՞ղա յա:
Հարուսար ջուբեն ա թխում, ֆյասիքը՝ ծույնանը:
Հարուսար ֆյասիբ կընի:
Հարուսար օխծը կերավ, ըսեցեն՝ ճար ա, ֆյասիբը կերավ, ըսե-
ցեն՝ ա̈ուզն ա:
Հարուսան էլ ասից՝ հո̈ւրու օնե՝ խա̃ն ա, կյուլն՝ էլ:
Հարփող մարթան հեռե շոռ տո:
Հենգ մաածե, մե հեա խոսե:
Հացեն կարածը թոռը կարել չի:
Հացեն հարկը չգիդողը առն չի աեռնալ:
Հացը դո̈ւշմանին աոռնը կաանե:
Հացը՝ ծույնանը, աշկը՝ կնգանը:
Հացը կոխ ավողեն ասաուծ ա կոխ աամ:
Հացը հաց ա, հացեն լավ ու փիս չընիլ:
Հացը մաշկեն քցիլը մեխք ա, հացը ըրեսեն կպահին:
Հացը մարթին փորումը մնալ չի, բայց հաց ավողեն անումը
կմնա:
Հացը շա̈ա̈հավ ըն օաում, կործը սերավ ըն անում:
Հացը սորփ ա:
Հացը՝ սուլթան, ճուրը՝ վեզիր, մնացածը՝ գզիր-մզիր:

Հացը վեր նամարդութին անե, կավը տոնը կպահե:
Հաց ուտեիս կծո տախտեղ կտիին, կծո խոսք չըն ասել:
Հացը՝ ուտողեն:
Հացը քեզ ննանչիլ կտա:
Հացը քռտնոնքն ա սիրում:
Հացու վըմ տնում՝ հսնում ա, պենու վըմ տնում՝ կորչում ա:
Հեռե ընիլը թավ չի, թաք մտեն ընի:
Հեռե շոռ եկու, մոտե քթավ:
Հերթը մեզ հսավ, ճղացեն ցիցը կոտրից:
Հիլին տեսնում չի, ըրվըցնում ա:
Հինչավ հիվընդացալ ըս, նանավ էլ սղաց:
Հինչա փոնիս կկրճանա, խոսքա փոնիս՝ կըրկնանա:
Հինչ հավա ածիս՝ պար կկյա:
Հինչ մըսմըսցրած մինտեղա տռս ասե՝ Մոսես:
Հինչու ընիլի ընի, ըննական ա:
Հինչու վարիս, էն կհնձիս:
Հինչու վեր վետ կյա, աղավ կանին:
Հինչու վեր քեզ ըն տամ, հտլըպաթ մհետե եր ըն կալալ:
Հինչու տվեր՝ քունեն ա, հինչու պահալ ըս՝ քունըը չի:
Հինչու օնիս՝ կուրցըրու, պատեղ տեղը պահե:
Հիշտեղ մինն օտե, մինը եշի, ընդեղ կոռ կընի:
Հիշտեղ՝ սեր, ընդեղ՝ կեր:
Հիշտեղ տրալ ըս, ընդղան էլ եր կալ:
Հիշտեղ օրան ա ըլալ, օրան, Գեոկը լհա օրան:
Հիշքան աշկը պցրճնա, օնքան կարել չի պցրանա:
Հիշքան ըրքան փիս ընի, էնքան ճըռ հա ճըռը շատ կըճի:
Հիշքան մտածիս՝ հարուր կապեկը մին մանեթ ա:
Հիշքան պեռնդ ծանըր ըմի, էնքան հղեդ նեղլի կքյընիս:
Հիշքան պկասե, ըշխարքաս մազ չի պկասել:
Հիշքան վերը խոր կտրիս, էնքան նուրը իրես կընգե:
Հիվանդը չի հիվանդ ընիլ, հիվանդատարը կընի հիվանդ:
Հիվանդութինը հիշտ նի յա մննում, տժեր տռս կյամ:
Հղեն մինն ա, ցավը՝ հազարը:
Հղե քյըընողը հղցա առս չի կյալ:
Հըըցավը քյըընողը նղանալ չի:
Հըըցավը քյըընողը պարպաա շըղնել:
Հալալ ա՝ քզ էտե, էրալ ա՝ քզ էտե:
Հյվանեն մինը վեր ստակե վուչ, էն մինը խնդըկել չի:

Հնգերեն, մն էլ ծիին, մե հետ ըն փորցում:
Հնղրողը հնղրվացքավ կըղնե:
Հնցածը կորած ա:
Հշտըղավ հաց թող տաս՝ նուր տուս կկյա:
Հոլը (ուլը) նվրանեն տակեն կենալ չի:
Հո-հա՞ կա սար ա տանում, հո-հա կա քցում ա ձöրը:
Հո-հա՞ն ղալբ եզնանը ջանն ա:
Հոնձ անողը սամավ էլ հոնճ կանե:
Հորածը ետ չի կյալ, կորածը՝ կկյա:
Հոր խանեն քշտեն փլավ օտիմ, հոր բեղս եղուտ տեռնա:
Հոր կտրե՝ խոր կտրե:
Հպարապ օրը տարե յա:
Հոնանցե ամեն հինչ հիշտ ա թվամ:
Հրևանդ վեր ննջում ա, քու ննջդ էլ ա վեր կոխում:
Հրըվանեն վեխնարը կյուլը տարավ, հրևանը սյղացավ:
Հրթննքա ետ՝ նղարա:
Հրթնոթüնը սև վեղան սվերե:
Հրկըշվե մատաղն էլ ա հարամ:
Հրսանեք քյընիմ, հինչ տոն տանիմ,
սաղունձ ծամիմ՝ հինչ կոլ տանիմ:
Հրցնելը համոթ չի, չգիդալն ա համոթ:
Հրուստեն վերցակն էլա թոխս կյամ, նոտեր անում:
Հույսավ ապրել չընիլ:
Հույսը հվըտըվուրեն խափիլ չի:
Հույսը ուտելան լավ ա:
Հույսը քար տեռած կյիր ա, մին օր կրթվլական ա:
Հունցու բրոտում ա, ընդի չի թոռ կյամ:
Հունցու օզüմ ընք, ընդի չընք ապրում, հունցու կարում ընք՝
ընդի ընք ապրում:
Հու վա գյուղում հüւր դüրդ:
Հու վեր ամեռնը անե վուչ, ծմեռնը օտել չի:
Հու վեր ասից՝ հüւր նհետ ըմ, նա թողե, հու վեր ասից՝ նու վա
ինձ նհետ, նա նհետ հնգրոթուն բրա:
Հու վեր ասում ա՝ մաննս խյար ա, աղը յոր ա օնում, վազ տամ:
Հու վեր էրկան ա ծամում, նա էրկան ա ապրում:
Հու վեր խոսում ա, սաքի յա տüւս կյամ:
Հու վեր կարթի՝ էն էլ մարթ ա:
Հու վեր կտտու չի պահում, մուկուն ա պահում:

Հու վեր կործ չանում, դնջընալին համը ճի՞նչ ա գյուղում:
Հու վեր չուստ՝ փորը կուշտ:
Հու վեր պնըրհացա քուշտացավ, գիդա վեր ջանումը քամե կա:
Հու վեր սկանում ա, էն էլ կտեսնա:
Հու վեր փափուկ պերց ա տնում տակեն՝ յրտն նստում ա:
Հու վեր քամուն հակառակ թքում ա՝ öւրան ըրեսավն ա տամ:
Հուրու ըրքա նստիմ, նա երգն ասիմ:
Հöւրու խելք ըն տամ՝ ճյսըրթունն էլ ննեար:
Հöւրու կլոխ սափ ա, ջանը սափ ա:
Հուրու հաց ընի հարկավեր՝ նա ըյլերու հոքս կանե:
Հöւրու ճöնջ օնե՝ մաննը կլöւզի:
Հöւրու օնե՝ կկյենա, հöւրու օնե վուշ՝ կեշի:

Ղանջըղեն վեր դայաղ ընի, կյուլ կկոխե:
Ղաշանգ անպենը տանը մնաց, öնվալ պնըրվուրեն հետան գյուլլա
քցեցեն:
Ղտշöնգ ըրեսեն փրթöւշ չըն օտում:
Ղաշöնգն ասում ա՝ ինձ հոնանցե եշի:
Ղաշանգ պատան թրեք չի նեստա կենալ:
Ղարիբը ուրիշին վեղումը մինակ ըրտասունք կթողե:
Ղտրիբ շոնը հաքյին շքրումաշումը կպահե:
Ղեյնը մսան տուս չօնվել:
Ղոնաղը տոն նի մննեխս կյառն ա, տöւս կյիս՝ աշուղ:
Ղոնաղ մարթին խոսք չի հսնում:
Ղունաղեն լուզուն կարն կընի:
Ղունաղեն կերածը աստուծ ա տամ:
Ղոնաղն ըստծունն ա:
Ղոնաղ շան տղան öւրան ղնուղվաշի կպահե:
Ղոնաղը վեր էքսը քյեցավ ուշ, տեռնում ա ղոնղաղ:

Ճանջն ածում ա, ճիճին տանում:
Ճանջս կորած, աշկդ՝ օռած:
Ճաշը լավ ա, վեր ծեր տանն էլ ընի, մեր տանն էլ:
Ճելլի եր կենողն ու ետե կյվողը ռուզավ կըղնին:
Ճեղացը հոնե աղունն ա աղում:
Ճիճին ճի-ճի ընելավ ա մեռնում, թթոմաղեն՝ թոթռալավ,
մարթը՝ տնջվիլավ:
Ճիճին մին երք ա գիդում, էն էլ ամեն օր ասում ա:
Ճկըտակիրը ճնջըրվիլ չի:

Ճկրտմաչին եշի, դունչն ասե:
Ճղուպուրը պատառն չի կենալ:
Ճղուպուրը քշրվանա տուն կյամ:
Ճղացեն ծոռը ճուրը կղուզըցնե:
Ճշմարիղը շպերք ա:
Ճոնղը ծերքան պեց շըն թողել:
Ճո́րուն ընգուններեն մեծ ու պիծի չկա:
Ճո́րուն պինիրը վեր տուս կյա, առաչ ո́ւրան վեռեն նի կկյա:
Ճպատղ քոլաղ կտրե:
Ճրաքվի շոռ եկե, անճրագ քթի:
Ճրին սասը ծարավը կսկանա:
Ճրո́ւմը նստում ա, ցմաքումը լղանում:
Ճո́ւրը հունցու քյընում ա, նհետը քյընիլ բղիս:
Ճո́ւր ընի, ճեղաց պեն կանե:
Ճո́ւրը վեր մին տեղ շատ կաղնում ա՝ վետում ա:
Ճո́ւրը ո́ւրան հիղեն քթենում ա:
Ճո́ւրը ո́ւրան տեղավը կքյնի:
Ճո́ւրը էն տղան ա, վեր ո́ւրան հիղեն ինքն ա շինում:
Ճո́ւր խմեխս խնգարել շըն. մարթ ընի, թա սարթ:
Ճո́ւրը վազ տալավ կետեն կհսնե:

Մազաղ, մազաղ, հիշտե՞ղ ըս քյընում:
— Քյընում ըմ մազաղ անիմ:
Մազենեն փոխը մածուն շըն տալ:
Մածունը կատուն կերավ, թակը՝ խոխան:
Մածունն էլ ա փշում, եռնան օտում:
Մահան ու շարան փախչիլ չկա:
Մահը լավեն ա սիրում:
Մահը հանց օղտ ա՝ լո́ւխնու տռան շոքում ա:
Մաշտեղ օտող, տուս շոռ կյվող:
Մատտաքը կորկու շըն տնիլ:
Մարդ կա լո́ւզվեն տակոեն սրտեն ծալումն ա, լո́ւզո́ւ կա՝ տակոն շօնե:
Մարթին կյիրը վեր կորչում ա, աստուծ էլ ա նեստա խռավ » ք:
Մարը մեռած սաղանան ո́ւրան անա հեռե յա շոռ տամ:
Մարը վեր տակռավը եր ընի, ախնիգը տլըտալ շոռ կկյա:
Մարթ–դա́րդ:

Մարթը ընգունեան կպռավե, հեյվանը՝ դոնաղան։
Մարթը կքթենամ, խոխան էլ կպիրիմ, պա ախպերը հշտղա՞ քթենամ։
Մարթը մարթին վեր սիրից, աշխարքը բարավ կլցնե։
Մարթը մեռավ, քարը մնաց։
Մարթ ընիլի հետե մին հարստոթունը բոլ չի։
Մարթը ըշխարքես յուր ուրան տանը պտրհանան ա տեսնում։
Մարթը վեղան փափուկ ա, քարան պենդ։
Մարթը վեր սուս անե, քարը կխոսե։
Մարթը քյընից, դուրղն էլ ննետը քյընից։
Մարթը մեռնում ա, դուրղը ուրան տեղն ա փոխում։
Մարթը ուրան դալուն քարեն ա տեմ անում։
Մարթին այիքը բրեսավը չըն կյալ։
Մարթին անա կյախս վետն էլ բդի պարի։
Մարթին անա մրթավետ բդի կյա։
Մարթին աշխադանքավ ըն ննանչում, տորքավ։
Մարթին ապրանքը ուրան նման կընի։
Մարթին գիդայիս կործը պարզ, ըմըռնորան օր ա։
Մարթին ըսեցեն՝ հշտըրղա՞ցե յըս, ասից՝ կնգանս հրգրու։
Մարթին կոշտը մարթ կքյընի, մարթը մարթավ ա մարթ։
Մարթին մեծը չնըյանան ա։
Մարթին շորավ չըն ննանչիլ։
Մարթին վեռը տուս ար տեռալ, մինն ասից՝ կտրիմ, տանիմ տամ մեր շանը։
Մարթին վեր թարիփ անիս, պոզերը տուս կանե։
Մարթին փափաղը կնեգը պեցու կպանե։
Մարթին փորը փյնըրնվարան չի, վեր հինչու ածիս՝ տանե։
Մարթին քմակեն փիս խոսել չըն։
Մարթիս գյանքը կյուրունքու ծյուն ա։
Մարթիս մահավը աշխարքս վրչանում չի։
Մարթ լուզվավ ա թալակ ըղնում։
Մարթ կա դերին ա սիրում, մարթ կա՝ դրըկնգանը։
Մարթ կա լուզուն ա պրտող, մարթ կա՝ սերտը։
Մարթ կա կարթում ա՝ մարթ տեռնում, մարթ կա կարթում ա՝ էշ տեռնում։
Մարթ կա օսի, մարթ կա՝ մոզի, մարթ էլ կա՝ քաչալ կլոխ կխոզի։
Մարթ հինչու անե՝ ուրան կանե։
Մարթ հինչու անում ա՝ ստածու փառքեն հետե։

Մարթ ճակատը պեց բդի տուս կյա շնամաշը:
Մարթն էն ա, վեր խեղճը կենթան պահում ա, մարթն էն ա, վեր աշխարքս ավաղ պահում ա:
Մարթ ու կնգա վեղը մին տեղա յա եր կալած:
Մարթ ու՛րան աշկը քոռ չօզի:
Մարթ ու՛րան կործեն աշուղը բդի:
Մարթ ուրան ջուխկան իվիլ կարել չի լոք տա:
Մարթ փիս օրեն կտըմանա, լավ օրեն տմանալ չի:
Մարթ քանե մծանա, քանե սնղերքան վեր կածե:
Մարթ քեցավ թա կախ ընի, ըսեցեն՝ չաթուն եր կալ, մին կապուկ չոփ պեր:
Մեծ աշկը փսոր կրղնե:
Մեծեն խոսքեն վեր անգուն օնիս, վեննդ քարեն նի չի կյալ:
Մեծեն կյոք տռ, բարը կեր:
Մեծեն ղադիրը գիդա, վեր մծանաս. վեր գիդաս ուչ՝ վեչ մծանաս, փոչ մծանաս:
Մեծեն ղադիրը գիդա, վեր քու ղադիրդ էլ գիդան:
Մեծեն մին աշկը քոռ բդի, մին անգունը՝ քառ:
Մեծ ճու՛րը մեծ արխավ կքյընի:
Մեծ-մեծ խուսելավ փլավ չի իփվում, եղ ու պրինձ բդի:
Մեծու ասած, պծինու ըրած:
Մեծ օղտեն մեծ էլ յարա կընի:
Մե հետ՝ ճանանչ, էրկու հետ՝ պարիկամ:
Մեղր ծախողը մաննը կլու՛զի:
Մեղքն էլ ա սվըրովի:
Մեռնելը ադա՛թ բդա՛ր, պռավելը՝ վուչ:
Մեռնո՞ւմ ըս, մե հետ փուճ ըրա:
Մեռնում ըս, մեռնում ըս, էլ խոխցընելդ հի՞նչ ա:
Մեսն առանց վեսկեռ չընիլ:
Մես օտող դուշեն կտոցը կեռ կընի:
Մեր տանը կենում ա, մեր հացն ուտում. ուրիշի տռան հաչում:
Մթեն տեղը քար չըն քցիլ:
Մինակ թա խորթը աշխարքը չընի:
Մինակ ծերքը ծափ չի տալ:
Մինակ օխծան վախե, վեր դույուղ չանում, ետնան կծում:
Մին անում էրկու չըն անել:
Մին աշկը մնին աեղ իշեղ չի տալ:
Մին ճղտցեն վեռն ա լու՛զ տամ, մին՝ ճղըցպանեն:

Մինը մե հետ գիդի-գիդի ընելով մին կյառն ա քթա̈լ, նանա ետը միշտ գիդի-գիդի յա անում:

Մինը մշանք եշում ա՝ աշկն ա տո̈ւս կյամ, մինն էլ մշանք օտում ա՝ փորն ա տուս կյամ:

Մինը շինումա, մինը՝ քանդում:

Մինը պերան օնե՝ հաց չօնե, մինն էլ հաց օնե՝ պերան չօնե:

Մին թըխկալով ծառ չի պարան կյալ:

Մին թքյան մինակ կեր, մինը ժըղըվուրթեն հհետ:

Մին խելքը ամեոնը-ծմեոնը հի՞նչ անե:

Մին ծերքավ տամ ա, էն մինավը կյուղանում:

Մին ծերքավ քշկոռ չըս ետ անել:

Մին ծերքը վեռեն ա անո̈ւմ, մինը՝ կլխեն, շոռ կյամ:

Մին կա հազար աժի, հազար կա՝ մին չաժի:

Մին մուկունը օխտը կարաս կմուրտառե:

Մին շոն վեր ուռթընանց քլըլվում ա, ընդի էլ սաղ օրը քլըլվելավ քյընում ա:

Մին շուքավեր ճղպոռու տակե հարո̈ւր մարթ շուքըհան կըհին:

Մինչև աչեռը եզնը կտեռնա, տարը խոզ կտեռնա:

Մինչև խելունքը մտածելը, կյիժը կետն անց ա կենում:

Մինչև խոխան լաց չընի, մարը ծեծ չի տալ:

Մինչև նի մննելը տուս կյալին մասին մտածե:

Մինչև շոն տեռնալը տես հիշքան ա հազալ:

Մինչև քոռակը էշ տեռնալը փալանը մղմողն օտում ա:

Մինչև օխծին հաքին կոխիս ուչ, քեզ կծել չի:

Մին պատառ պեմբակ ունի, էն էլ մոռու ոխե քյընից:

Մին սըո̈ւնը տոն չի պահել:

Մին վխճարան էրկու մորթե չըս հանել:

Մին տաս՝ էրկու կոզի:

Մին տարե՝ հրթնոթո̈ւն, օխտը տարե՝ կյլո̈թո̈ւն:

Մին տարում էրկու կյարունք չընի:

Մին ցավը մարթ չպանել:

Մին փոռ հացավ վեչ հառուստ ըս, վեչ քյասիբ:

Մին փոռ հացը մին վերը խափան կանե:

Մին քար էլ ես տնիմ խալխեն պատեն:

Մին քար ըս թող անում, զյոլը պըղո̈ղում ա:

Մին օրվա թաքավըրոթունն էլ ա թաքավըրոթուն:

Մկրատն էլ ա ո̈ւրանը, կտոռն էլ, հունցու օզո̈ւմ ա՝ կտրում ա:

Մղրճո̈նչին մին կծելը հառուր ընդի նանչ աժի:

Մնթնն̆դ քեցալ ա, կպկեդ ա մնացալ:
Մնին հայ-հայն ա, մնին՝ վայ-վայը:
Մնին ծոխը վեր կտրե վուչ, մնինը եր չընիլ:
Մնին եղում ըն, մնին՝ դաղում:
Մշկապատ կյղոթուն քյընողը ո̈ւրան հալալ աշխադանքն ա օտում:
Մոզի, տու ըրածե քզ էտե, ես էլ նպոոտիմ՝ քզ էտե:
Մոտե էշը կյուլն օտել չի:
Մորը եշի, ախնիգն օզի:
Մորը թղեխս սաղանան վեննը կոտրում ա:
Մորը պեժինը ըխնըկանը կյոտկումը կընի:
Մոր սուքյումը սաղանան ո̈ւրան անա փախչում ա:
Մշանք փրթո̈ւչ բղխս օտել, վեր փորդ կլխադ պցրա̈նա (քթեդ նի կյա):
Մշանք օտել բղխս, վեր փորեդ յրա պարանց ընզխս, վեններդ տափան կտրե:
Մոլնեն գիդում ըն, թա սաղերը հալվա ուտեխս ըն ընում:
Մռնողեն հետան քյընում չըն (մեռնում չըն):
Մռնողեն ցավ կընի, երանի՞ դա̈րդ չընի:
Մռնողեն քմակեն փիս խոսել չըն:
Մրթըմաշի մարթս ընի, հազար թուման պարտքս ընի:
Մրոք կա՝ եխծե, մրոք կա՝ էշու հաքյի:
Մրքեն հետան քեցալ ա, բեղերը կուրցըրալ:
Մորը աշկեն վերթին մծանալ չի:
Մուկնեն նոտն էլ չվալ կծակե:
Մուկունն ասում ա՝ կատվան օժավ պեն չկա:
Մուհալ մ'էր անել, քթեդ կփսնե (առաշդ կկյա):
Մուհ-մուհը տոն կքանդի:
Մուշհավեն ըսեցեն՝ խե՞ սև ըս կեցալ. ասից՝ մինակ էդ չի՞, դա̈րդան խանանդա էլ ըմ տեռալ:
Մուշհավեն ըսեցեն՝ խե՞ մարթա հեռե յըս շոռ սամ. ասից՝ մարթին ըրարմունքն ա ո̈ւրան անա հորցնում:

Յարան սղտնում ա, դաղն ա մնամ:
Յա փաղ բդի, յա՝ օժ, թա չէ կորած ըս:
Յզնըհավաք անիմ, պարիկամս ննանչիմ:
Յղե ըս՝ ծնե, սուքե ըս՝ ծնե:
Յոր օնելը հիշտ ա, տալն ա տժեր:

Յրգինքին կյրածը երգիրը կարել չի վեր անե:
Յրգիրումս տվողի պեն չկա, լոխ սվրողի յա:
Յրկե կերածը սօր օքութ չի:
Յումբրուղեն վեր տմացալ ըս, քացուն էլ ըս տմննա̈կան:

Նամուսը վննատակ չըն տալ:
Նամուսը տվեն շանը՝ կերավ ուչ:
Նա տուս ըրած կյումը հեյվան չի նի մնել:
Նեղ օրեն հա̈րզակ օր էլ կընի:
Ներակ ընդո̈ւր կընի, պտուղը պարի կընի:
Ներակ ընդո̈ւր կընի, ո̈ւրան գյուլլան ո̈ւրան նի չի կյալ:
Ներակ ընդո̈ւր կընի՝ ո̈ւրան ըրածը ո̈ւրան առաչը կկյա:
Ներակ մեզ, վե մեր մեծերը Ատին ա, Մատին, Պատին:
Ներակ նա, հու վեր մե հետ ծնվում ա, մե հեա մեռնում:
Ներակ նա, հո̈ւրու մռնեխս ղորմի ըն տամ:
Ներակ նա, վեր տերութո̈ւնումը անդար չընիլ:
Ներիլը հիշտ ա, մննան քցիլն ա տժեր:
Նի փրթածդ տուս կտաս:
Նհետ ըլած տռանը պենվալ էլ կա:
Նոթե շոնը տեռնը կկծե:
Նոթե փորը կղողռա:
Նոռնը կեր՝ նղըվերվիս ուչ, նղըվերվալ ըս՝ նոռնը կեր:
Նոռնը ըրևեն բալան ա, արևն էլ հային բալան ա:
Նոռնն ասից՝ քչևս փոչ չի:

Շահը վեր շահ ա, առանց նոքյար կարել չի ապրե:
Շահեն խալաթ տալավ կարել չըս եխնիս, կլխեն բամփել բդիս:
Շանան կոտեգ կընի:
Շանան շատ տրեխ կյուղանող չկա, էլհա պեպեգ ա մնամ:
Շանը զոռավ վերսի չըն տանել:
Շանը էրկու անում չընիլ:
Շտնը ճրգրեն, թա. «Մին օրումը քանե՞ քտր ա քեզ նի կյամ»:
Ասից. «Մարդիմտզարը պտըհելին նհետ ա»:
Շանը վեր դալու ընի, կյուղ կկոխե:
Շտնը վեր քարավ չտաս, հաչիլ չի:
Շտնն բոըխեն եշի, կերած տրխեն:
Շան տղեն հացը հիշտեղ վարիս՝ փսնում ա:
Շաջին թխում ա, խնձղկոթեն օտում:

Շառը պերալ ա սթöւնան կապալ, թա՝ աստուծ, շառը հեռե տանե:
Շատ գյուղող աղվեսը էրկու վեննավ ա թալակ ընգնում:
Շատ ընողեն հիշտե՞ղ ա ըլöլ բախտ:
Շատը խըրըգյան ա կույանում:
Շատ ըպրելավ չըն սվերում, շատ տսնալավ ըն սվերում:
Շատ ըս գիդում, խրեգ խոսե:
Շատ խոսողը շատ կսխալվի:
Շատ մեղր-մեղր ըսելավ պերանդ քղցրանալ չի:
Շատն էլ շատ ցավ ա:
Շեշմա տակռուն շեշմա շոշ կընի:
Շնըշեն շոռ եկե, մեր շենան լավ շեն չկա:
Շիլը քոռան լավ ա:
Շլոր ուտողեն կեռեքը կառնե:
Շղումքուր կյառնը օխաը մար կծծե:
Շնանտնչը օխծին ասից. «Տու դöւշմանիս աշկեն ըրվա, ես՝ կըծիմ, սերտը նքլական ա»:
Շնäցուն ապրուստը տվըրտծան հրցրու:
Շները հաչին, քäրվանը քոչի:
Շողոմ լուզվավ օխծը պöւնան տուս կօնիս:
Շոնը թկելավ կսաակե:
Շոնը կերտծը կքաքե:
Շոնը կուակոց մöնլöւմ կանե:
Շոնը նչիլան տհանիլ չի:
Շոնը հիվանդ ընիլöն խոտ կրածե:
Շոն ընիս, կյուղ ընիս, քրվանեն (տանը) պիծինը չընիս:
Շոնը շանա, էրկուան էլ մին տանա:
Շոնը շնըթöւնավ կստակե:
Շոն ըռ ըլöլ, վեր վսկեռավ էլ յոլա քյընիս:
Շոնը վեննը չի տարավ, բայց վեննը տանան կարից:
Շոնը աեռնան ա կտաղում:
Շոնը տöւզնըրթունան կկյուղանա:
Շոնը öւրան կոաեգը նարում չի հաչև անել:
Շոնը öւրան նöքյին կտրողան կվախե:
Շոնը քյնում ա, հöքին՝ հաց:
Շոնն ու շեմքը՝ հարթն ու սկեսուր:
Շոռ կյալ-քթընալան չի, աստուծ տալան ա:
Շոռ կյըվող կյույը տöւզնը կենալ չի:

Շորերն ածիս կրակեն, մրնեղնը չի եր ընիլ:
Շտա̈ճնեն աշկը փոր չըն քցիլ:
Շուհը եկալ ա, շփոթը քշալ:
Շուշըցեն ո̈ւրան էշան թարիփ կանե, փիս տղամարթը՝ կնգանան:
Շուշվա շոնն էլ ա ասում՝ Շուշին չեն:
Շոշի կյուղ, Շոշի պերթ, սուկին՝ շլոր, թափանը՝ ներք:

Չալ շանան չալ թուլա կընի:
Չալ օխծ տեսածը չալ չաթվան կվախե:
Չարեն հետան պարին կընի:
Չարը պարի կընի:
Չարն էն ա, հու վեր չարու վա շոռ կյամ:
Չգիդալը համոթ չի, չհրցնելն ա համոթ:
Չըշխադողը աշխադանքեն կյինը գիդալ չի:
Չինը ժանգ օտում չի:
Չլա̈ծեն իրեսը ցորտ ա ընո̈ւմ:

Պա խղճըմտանքավ մարթը մարթ ա՞:
Պա ծո̈ւ չածիս, վեռդ ծտոտ ընի՞:
Պամիդորեն համ սո̈ւրթան ա նուբար, համ վերչինը:
Պառավը գիտկան չընում, կլոխը եկած ա ընում:
Պարի խոսքը լավ ա, պարի կործեն ըստծու աշկն էլ ա յրան:
Պարիկամեն պլոկել չըն:
Պարիկամթունումը արունդ տո, սերդ տամ'էր:
Պարիկամներեն մաշին նազ ու բազն իվիլ ա:
Պարիկամ քթենալը տժեր ա, կուրցնելը՝ հիշտ:
Պարիկըմոթունը իրեք խնձո̈ր ա, վեր մինը կես ըրեր, բեյվեջ ա տեռնում, էն մինը մե հետ էս անգյունն ա հնցընում, մե հետ՝ էն անգյունը:

Պարիկըմոթունը քշովի չի:

Պարի կործումը շառ խոսել չըն:

Պարի պտուղը պարի ծառան կընի:

Պարի օրը միշտ ըլա̈ծեն ննետ ա:

Պարտքը լո̈ւ վա տեռնում նի մննում, օղտ ա տեռնում, տուս չի կյամ, տոնդ քանդում:

Պարտքը ծանդր քար ա, հիշքան նելլի տաս, էնքան էլ նելլի յըս թթվանում:

Պտրտքը կրակե հալավ ա, ջանդ էրում ա:

Պարտք մծանում ա, ծնղրանում, թöւլ ընգնում, ընգնում խղնեղ յրա։

Պարտքը տալավ կպկասե։

Պելը հմանչիլ չի, պելեն տարը կհմանչի։

Պելը ջöրմա կտա, խելունքը՝ ոշվաք։

Պել խուխեն վերշը խելունք կընի։

Պելին հիշքան գյափ-գյուփ անե, հրսանեքը սերուն հրթնացուն վալը կքցի։

Պել Հուտին մին վելա յա մանալ։

Պեխկը հիշքան սեյրագ ընի, էնքան մեծ-մեծ կընի։

Պենը ըսելումը չի, պենը ընելումն ա։

Պենը պեն նհաշ կտա։

Պեն կա, վեր անել բդիս՝ գիդաս, պեն էլ կա, վեր գիդալ բդիս՝ անիս։

Պեռնած էշը ցեխան տուս կկյա, հöրբած մարթը՝ կարել չի։

Պերանն էրածը մազնեն էլ ա փչում։

Պեցիր սարումը վեր թվանգ արաքից, օխար սարե ծենը ծöռումը կդմբդմբա։

Պեց վեռավը մազաղ կանին։

Պիծինը մորը ծույնին ա ցավ տամ, մեծը՝ սրտեն։

Պինն էլ öւրան կնոնքն ա օզöւմ։

Պղենձը վեր ընգավ, կոտրից ուչ, սասը öսմանն ըլöվ։

Պմբկծախուն աշկեն չալ շոնը փիս կթվա։

Պնöվուրն ասում՝ անիմ-ոտիմ, անպենը՝ ոտիմ-անիմ։

Պրöնաղ տուս եկած խոսքը քունը չի։

Պողը քյթուկան կմնա։

Պողվատը կկոտրե, ամա ծալվիլ չի։

Պորտ-պորտ ըրա, օխար պորաը պտըռե։

Պռավեն ըրածն աշխադանք ա, կերածը՝ կորած։

Պտըհողեն ըրեսեն վեր ծծöղում էլ չըս, մռոզ էլ եշում'էր։

Պտոկը վեր տրին, վեր ըն կուխլական։

Պտուղը ծառան հեռե չի ըղնել։

Պրտքատարը կօզի պրտականը էրկան ապրե, պրտականն էլ կօզի պրտքատարը նեղլի մեռնե։

Պöւրթը արöլ ա՝ պեմբակ ա կյզում։

Ջգյրանա, ջիգյարին ղադիրը գիդա։

Ջհիլին օժը, մեծեն խրատը՝ մինտեղ սարեր շռռ կտան։

Ռեխը լակ-լակ, կլոխը՝ թակ-թակ, տռեխը՝ ծակ-ծակ:
Ռեխը լեն՝ փոխկը ճոթռած:
Ռեխը չվալ չի, վեր կապած պահիս:

Սաղանան ճո՞ւր ճնետ չի գյափ անում:
Սաղանան ուրան ուշունց տալ չի տալ:
Սաղանան ուրան փռնել չի տալ:
Սաղ ջտնը պերհացումն ա:
Սաղ վախտը՝ խտետս, կաղ վախտը՝ կտետս:
Սառած օխծը ուրան թխծնողեն կկծե:
Սառնանը կյրում ա, բրեեն տեմ օնում:
Սավա ճոտը ծու ածող կընի:
Սավա ճոտը յա քաշ կտանե, յա՝ չաղալ:
Սարեն եշում ա, ծյունը տնում:
Սարեն ըսեցեն՝ ծռռ ա, վեզը ծոից:
Սարերն բրուտոյին տեղ՝ ծոռերն ըն բրոտում:
Սարը կարել չըս չվալումը կյեղիս:
Սարսաղ ջանիլը սարսաղ էլ անիլ կընի:
Սար տսնայիս՝ էծ ա տեռնում, ճոր տսնայիս՝ ծուկուն:
Սար քյընի՝ կաքավ տես, արտ վարե՝ սալամնը տես:
Սելին պերածը սելը կտանե:
Սեճրագ տրտը դագարլու կընի:
Սերը սերունը կօտե:
Սերը սիրեմնավ ըն կապում:
Սերմը վեղումը կենալ չի:
Սերմը ուրան վեղը քցի:
Սերտղ վեր ծափ չտա, ծերքեն ծափը տերտակ ա, մարթին սեր-
տը բդի ծափ տա:
Սերտը աշկան լավ ա տեսնում:
Սերտը պեց մարթը զռուց ընելավ ա մեռնում:
Սե՜րա օնիս՝ բախտ չօնիս:
Սեր օնիս՝ խառնե վեղեն:
Սխտոր կեր՝ ճուշղ աեղը կենա:
Սկացած խոսքեն սոտը ընիլ չի, շղվըցրածը կընի:
Սկեսուրը ընգուճեն մինը քառ կպանե:
Սողան չըմ կերալ, էլնա սերտս էրում ա:
Սոտը լավ ա երմիշ ընոււմ, ճինչ ղորթը:
Սոտը խուսելավ ապրում ա, դուզը լկվերավ՝ մեռնում:

Սոտ բողեն շինողը միշտ քշտեն կրնի:
Սոտն ու կեղծավորութունը վեր թաքավեր տեռեն, ածեր վեր կըղ-
    նին:
Սոփիր պերեք պաշիմ:
Սրընուցեն պղոսիգն էլ ա պռոկ ըլլը:
Սրտան տուս եկած խոսքն ա սերտ նի մննում:
Սրապվ քտրեն էլ քյրնիս, քարն էլ կկնանշի:
Սրտեղ նստիմ, մոքղ քանդիմ:
Սուղանեն էրկու տնում չընիլ:
Սուտեն կրկատան չընիլ:
Սուտեն հազար վեններ կրնի, պայց կարել չի սարը եր ընի:
Սուտեն վենները կարն կրնի:
Սուտեն վեններըէրկան կարել չի վազ տա:
Սուրթան վեր պեց թուղեցեր, վերշն էլ ըս պեց թուղլական:
Սուփրեն նստել չըն՝ տուզը եր կենալ:
Սևեն սև սսե, սիպտակեն՝ սիպտակ:
Սև էծը սև օր կծնէ:
Սևն ու սիպտակը հիմամանը եռը մննլում կտեռնա:
Սոր բաղումն ընք, էքուց՝ վեղումը:
Սոր վեղ չօնիս, էքուց՝ հաց չօնիս:

Վազ տվող էշին թխել չըն:
Վախե էն շանան, վեր թաքուն ա կծում:
Վառին սաղ ընի՝ էշը կյուլ օտե՞:
Վաստակ եզնը ըշկերան կըրվա:
Վարդ վեր դուզ չընի, ծերքղ պեն չի փռնել:
Վարթը թաղեն յրա չի կենալ, խոսքը՝ մարթին սրտումը:
Վարթը տակոտն ա կյըմրում:
Վարթ քղեխս՝ ծերքղ փուշը կծակե:
Վարըս՝ վարեղ ավազ, խարակս էլ իվիլ:
Վեթեսը տրին գյիբին յրա, թուլ ընգավ, ընգավ տափը:
Վեխնտրը կյանքը ճնանշում ա:
Վեխնարը մինչև հարուրը տեռնալը՝ մորթեն հազարը կտեռնա:
Վեխնարն օտում ըն, տեռնը ճնետ կռև անում:
Վելելն ուրան վերսը սրբրումն ա փռնում:
Վեղան քտխծր պեն չկա:
Վեղավը ուրթամնը կեր:
Վեղղ կյապացեն, լուզուղ կյապացեն:

Վեղը կյանքն ա, վեղը մարթն ա:
Վեղը մարն ա, արևը՝ հարը, քրանոնքն ա տարը:
Վեղը մնին հազար կտա (վեղը մինը նզեր կանե)·
Վեղն ասից՝ ինձ կուրցրեր, քեզ կուրցրեր:
Վեղն ասից. «Համ պահում ըմ, համ թաղում, ես էլ ըսաի մար ըմ»:
Վեղն ասում ա՝ առ ինձ պահե, ես՝ քեզ:
Վենն ըլած տվարեն մին կուծի հո-հան էլ բոլ ա:
Վեշ աղ ընիս, վեր քեզ լօ̈ւզ տան, վեշ աղու ընիս, վեր քզանա փախնին:
Վեշ աղումն ա, վեշ մաղումը:
Վեշ արտը վարողն ա աարը, վեշ էլ կալսողը, օտողն ա տարը:
Վեշ բզարեն տերեն ա հավան, վեշ տվերեն:
Վեշ ըլածավը ուրխաց, վեշ չլա̈ծավը ախրվե:
Վեշ ըմոնըվա ցուրտեն հվատա, վեշ ծմոնըվա ըրեվեն:
Վեշ լավավն ա ուրխընալի, վեշ փիսավը՝ տխրվելի:
Վեշ ծօ̈ւ օնե, վեշ՝ եղ, քթըվուրու վա շոռ կյամ:
Վեշ կհա̈լ ախնիզ տեսե, վեշ քյոհլան հարթնը:
Վեշ հակումն ա, վեշ հուկումը:
Վեշ հիմարեն կործ տո, վեշ էլ նհետը կործ ըրա:
Վեշ մեծ կործ կընի, վեշ՝ պիծի, մեծը նխշընգյարն ա:
Վեշ մինը օ̈ւրան թանեն թթո շասել:
Վեշ նօ̈ւր, վեշ արև, վեղեն ուղուրմղ խառնե:
Վեշ ուզողեն ետ տո առնան, վեշ տշուղը՝ շնըմաշան:
Վեշ օ̈ւրօ̈ւշու հավու ծոռ եշի, վեշ՝ ծավու:
Վեշ քշերավ եր կենողն ա տոժում, վեշ նելլի փսակվողը:
Վեռան կտրում ըն՝ ոխեն տեմ օնում:
Վեսկե կացենն էլ ա ծմակ քյընում:
Վեսկեն վեսկե խոսքեն հսնել չի:
Վեսկեն փեյնումն էլ ընի, էլհա վեսկե յա:
Վեսկուն օ̈ւրան անումը բոլ չի, էն էլ բդի օ̈ւրան ծանդր պահե́:
Վեր ամեն մարթ օ̈ւրտն ըրածն օտե, ըշխարքես կեսը կկաորվին:
Վեր ասողը սուս էլ անե, դօ̈ւզ խոսքը սուս չընենական:
Վեր գիդի թա ընդեղ վեր ի ընգլտկան, մին գյարբա կքցի:
Վեր դանան մորը առաշն ըղնե, կյուլ կտանե:
Վեր էրկու հոգի խոսում ըն, կոտրած քթօ̈լու նման ղաթը չըղնիս:
Վեր ընգածեն կոխ չըն տալ, ծերքան կփռնին՝ ե́ր կցընին:

Վեր թայդի կործ ընի, էլնա թայդի շըղնիս, բայց դե՝ կիրեկի էլ չանիս:
Վեր կլխեդ տեղ չկա, տակեդ էլ նստել չըմ:
Վերթի, քա հոր պեռնը եր կալ, վեր հոքուդ պեռնը ծանդր չընի:
Վերթին վեր հափռումը փլավ անե, մորն ուտըցնե, էլնա կարել չի ամագին տական տուս կյա:
Վերին անա պաշիմ, խուլեր կփանե ջանեն:
Վեր կյենգատն անին, բստուծեվուր կանին:
Վեր հավը ղազու նման քյընի, վեններր կկոտրատե:
Վեր հըըվանեդ էրկու կավ ընի, քեզ էլ մին աման շուրաթան կը-նի:
Վեր ղզղանումը շորվա չկա, հո՞ր ըս շիրեփը ինձ տամ:
Վեր ղորթը ծառ ընի, ես հզերը կտնգիմ:
Վեր մարթ ուրան եշի վուշ, աստուծ էլ չի եշիլ:
Վեր մին պենան ջատ կերեր, համր-լազաթը կկորշի:
Վեր մին տեղ կրակ չընի, ծոխ չի պցրանալ:
Վեր մղրնանչերը լոխ մեղր տան, աշխարքս մեղրավ կլցնե:
Վեր մուկունը ընի վուշ, խեչանը կատու չի պահել:
Վեր յշիլավ ավրելան ընի, մեր շներր մեե ղասաբ ին տեռալ:
Վերսին գյըըվումը յրա կանին:
Վեր տանան կեռ տվող չընի, տոյսումը վեր չըն ըղնել:
Վեր տան վեր բահմազ ընի, էն տանը մըշեմնը կընի:
Վեր տափր պնդանում ա, եզնը եզնան նղանում ա:
Վեր տըաքուցը կտրում ա, ամեն լյüզու տրաքուց ա տեռնում:
Վեր տված չընիս, տալ չըն:
Վեր ըրüշին ծաղկած ծառավն ուրխացեր, քունավն էլ բախտավեր կընիս:
Վեր ըրüշին սիրիս, քեզ էլ կսիրին:
Վեր քու մդղարդ գիդաս, ուրիշինն էլ ըս գիդըլական:
Վեր օղտեն շուքըցընիս ուշ, կարել չըս պեռնիս:
Վերց էշին քոռակ չընիլ:
Վըրսկանեն լյüզուն կցավե, ծöկնանեն՝ աշի կոռնը:
Վըղին շասած ղöզ խոսքը անվöդա վըցակու կանչ ա:
Վխլըկոտը տասը հետ ա մեռնում, անվախը՝ մե հետ:
Վխնարեն ըսեցեն. «Մեսդ խե՞ մարթին ըս տամ»: Ասից. «Կոթնը ամեն օր տվողը մին օր էլ մեսը կտա»:
Վխնարեն սüրուն ես տեռավ, կաղլեգն առաշ ընգավ:
Վխնարեն ամական օտում չի, թա՝ վեռան մոտե յա:

Վխողեն տղա չընում:
Վնասեն կեսան ետ տեռնալը օքութ ա:
Վրցակեն մին կյեվաթ կյինի տվեն, քեցավ թա ըղվեսին խեղդի:

Տ'ալա՞ (պժընելավ) ծովն էլ կվրշանա:
Տակե քարը վեր կլոխն ա ըլալ, մար ու քուր չկա:
Տակը լիգյը, կլոխը լիգյը:
Տանան տուս եկ, շենան տուս մ'էր կյալ:
Տանել ճուրը, ծարավ ետ պիրիլ:
Տանն առո́ւծ ա, տöւսումը՝ կատու:
Տանը զöռը կնեգն ա, սեղանները՝ կյինին:
Տանը ղոնաղը չըս ճնանչում, արտումը՝ ճöրեն:
Տանը պենը խոփեն անա կգիդան:
Տանը վերցակ ա, տöւսումը՝ հավ:
Տանձը՝ ինձ, խնձորը՝ ինձ, սլկըվոլու էլ ա շտäհաս տամ:
Տանձը վեր հսավ, ծառեն կենալ չի:
Տանձին հսածը չաղալը կոտե:
Տանձ, տանձ, ընգեր պերտնս, էն էլ կոթը կլխըեր:
Տանչանքը, չրչարմանքը հացեն ճհետ ա:
Տան-տռա́ն՝ աչի կուռնան:
Տասը հետե խաչան պաշալ ըմ՝ վեչ մին պեն, մե հետ քշտեն տռեցե՝ ինձ խայտառակ ըրավ:
Տարեն վեր թռույին ընի, արաղը թերհատ խմե:
Տարը մեռալը ճնանչից:
Տարը տրտծեն ա փեշման, կյույը՝ մնըցածեն:
Տափեն թքում ըս՝ երգինքն ա ընöւմ:
Տափեն չտըմäնող օխծը ճելլի յա կծում:
Տեղդ վեր ճղանա, էլհա քեզ դöւզ խոսքը կպանե:
Տեղեն սսած խոսքը վեսկու կյին օնե:
Տեղս փուխեցե, բտխաս հիշտեղ փոխիմ:
Տենակն öւրան կոթը կարել չի տաշի:
Տեպեգ վեննը փոշ կընի:
Տեսալ չի պատան, տեսնում ա ճկատան:
Տերմանը չի քունը, տրմնանուցն էլ չի՞ քունը:
Տե́րտակ ըրբան կնոնա:
Տերտակ խոսքը քամեն կտանե:
Տերտակ չվալը վեննը չի կենալ:
Տերտակ քթöլը պերան չըն տանել:

Տ՛եր ըս թքում՝ օնք ա, տվեր ըս թքում՝ մրոք ա:
Տժեր գործա առաշ՝ զինքդ հվաքե:
Տկլորը պլուկվելա վախել չի:
Տկլորը սելա վախել չի:
Տղամարթը խոսքեն տարը կընի:
Տղամարթը կլոխն ա, կնեգը՝ փեշկը: Տանը խնձորը փեշկավն ըն սրփüմ:
Տղամարթը վեր խմիշքում տեմ չկենա, վեշ մին պենում տեմ չի կենալ:
Տղամարթը ցավն էլ ա տղըմարթվաչի ընթունում, մահն էլ:
Տղան էն ա՝ համ խմե, համ պահե (տեմ կենա):
Տղան տան սթüնն ա, ախճիգը՝ նխշընգյարը:
Տղըմարթին աշկը կործա վախել չի:
Տղըմարթին ապրանքը աշկեն ըռաշին բդի:
Տղըմրթոթունը ջանումը չընüմ, ջգյարումն ա ընüմ:
Տղըմրթոթունը օժեն հախտում ա:
Տնըտարեն տռնան ըն ճնանչում:
Տոնդ շինի, ըրուշինը քանդիս ուչ:
Տոնդ պիծի պահե, սերտդ՝ հüրզակ:
Տոնդ վեր տվեր, կնեգդ էլ կտաս:
Տոնը մաշան կմծանա:
Տոնը պարան ա կյամ, ժաժքը վեղեն մաշին ա ընüմ:
Տոնը սրփողը էվուլն ա:
Տոնը քարավ ըն շինում, տոնը քարավ ըն քարավ տամ:
Տոնն արքայություն ա:
Տոն շինինք, վեր շեն կենանք:
Տոռնը չի թակիս, քու տոռնդ էլ կթակին:
Տո՝ վախել մ՛էր, օգի՝ հմանչիլ մ՛էր:
Տüզնը կյուլին ըսեցեն՝ մշանք կերալ ա, կարում չի թե լենջտվը եր հնցնե:
Տüզնը մարթին պերանը ըղովել չի:
Տüզն ըո՝ մարթու մաշ քյընի, տկլոր ըս՝ տան մաշ:
Տüզնը տոնըտüռնը շոռ եկու հմանչից ուշ, կործ ընելան հմտնչից:
Տüզնոթունը կյողութունեն մարն ա:
Տու ինձ սիրի կորկու մշանք, ես քեզ սիրիմ ցորնու մշանք:
Տու շրեփե, ես ըրեփիմ:
Տüսինը ծյունն ա, մաշկուսինը՝ արաղը:

Տու վեր ժղըվուրթեն սրտավն ընիս, ժողվուրթն էլ քու սրտավդ ա ըննա̈կան:
Տու տըզզ ըրա, ես մեղր անիմ:
Տու տիր, տու եր կալ:
Տու ինձ թխեցեր ուշ, ես էլ վեր չընգե:

Ցամաք կետան ծո̈ւկուն չըս փռնել:
Ցավեն ծնղրոթունը ցվատարը կգիդա:
Ցավը վեր աստուծ ա ղարկում, դա̈րդ ընելի տեղ չօնիս:
Ցեխան թամուզ տուս կյվողն ա թաքավերը:
Ցեխումը կաց, թամուզ կաց:
Ցորենը նհաշ ա տամ, կյարին ծախում:
Ցորեն հացը պոզեր կանե, հարե:
Ցորեն հաց չօնիս, ցորեն լո̈ւզու էլ չօնի՞ս:

Ուզիլավ կարել չըս տոն պահիս:
Ուզողեն աշկը տալավ կհանին:
Ուզողեն աշկը տվողեն ջուբեն կընի:
Ուզուղեն մին իրեսն ա սև, չտըվողեն՝ էրկու:
Ումեղը խոխա յա, յա կմըծանա, յա՝ չէ:
Ուտելին անումը տամ ըս՝ ըսկանում ա, ընելին անումը տամ ըս՝ քռանում ա:
Ուրան թիքին յրա չի հաչում:
Ուրան հետե քոն ա ընում, ո̈ւրուշու հետե արագ տեսնում:
Ուրգյոնեն կերածը կորած ա:
Ուրիշին այիբավը ծծաղել չըն:
Ուրիշին կվեն յշողեն հացը ցամաք կմնա:
Ուրիշին հացը ուրիշին փորումը կենալ չի:
Ուրիշին պատառը պկում կմնա:
Ուրիշին քրտնոնքը մարսել չի:
Ուրուշու ծի եր ընողը նելլի վեր կկյա:
Ուրուշու հետե նրաք ա տեռնում, ո̈ւրտն հետե նըրքկալի էլ չի տեռնում:
Ուրուշու հետե դոնգի, ո̈ւրան հետե խելունք:
Ուրուշու հետե վեր կտրողը ինքը կղնե մտչը:
Ուրուշու շներավ վերսի չըն քյընիլ:
Ուրուշու ստոլե քու հացդ օտիս ուշ:
Ուրուշու փուլավ ինք կալած շալվարը կարճ կընի:
Ուրուշու քրտնոնքը ամեն մարթ կարել չի օտե:

Ուռուցքյունը ալար ըս անում, ուրթանան կյութան էլ չի տեղ-
նում:

Փալանը էշին հետե ծանդրուցք չի:
Փախչիլ-պրծնելն էլ ա տղըմրթութուն:
Փայ ընողեն փայ չըղնել:
Փառաշ կյառնանը հետան կյուլ չի հանել:
Փափաղը աղըմարթին պատեվն ա:
Փափաղչուն աշկը փափաղ կարել տալավ կհանին:
Փեյնը նղե՝ տո, փեյնը նղե՝ եր կալ:
Փեշակը մարթին հետե մին կուտուր հաց ա՝ տրած կուտնըտա-
կեն:
Փթած փաղը մեխ չի պահել:
Փիղն ասից. օխտը տարանը մին ըմ ծնում, ամա փիղ ըմ ծնում:
Փիս ախպերը հարհուր հնգերա լավ ա:
Փիսանը ետը լավն ա:
Փիս խոսքը հացա ետ կասին:
Փիս մարթը պարիկեննթանեն էլ ա փիս:
Փիս չի, գիդում ըս թա լավ ա:
Փիս տարեն նոխա կընի:
Փիս տարուն ումբուրը կարճ կընի:
Փլավը՝ ուտողեն, խոսքը՝ լողեն:
Փլավ-փլավ, կլխեն էլ մին հավ,
մինչև օախս ուշ, ասիս ուշ՝ լավ:
Փոխը օխտը տոն ա պահալ:
Փոխ կալած հացեն բրաքն չընի:
Փողեն ըս աշին համ սարը կլոխ կտա, համ քարը,
մինան սար սերտը չի կլոխ տալ:
Փողը համբարք ա սիրում:
Փողը՝ փուղաատեոնը:
Փոսը վեր կտրալ ըս, պա դե առն շինի, խե՞ օզում ըս օրիշը ըն-
գե մաշը:
Փորդ պատառ տուզնը բդի, աշկդ՝ բդի կոշա:
Փորեն խափիլ չըն:
Փորեն տոկավը քամե հնցնողեն հեաան ախ ու վիշ չըն անել:
Փորը հացն ա քուշարցնում:
Փորցած թանը լավ ա, հինչ անփորցիլ մածունը:
Փորցված սաղանան լավ ա, հինչ անփորց հրիշտակը:

Փոքս փչողեն խոսք չի հսնում:
Փակվելը եղ–մեղր չի, հոփ տաս՝ կոլ տաս:
Փեսան հանորը էշը կընի:
Փուլան մրթոթուն չտեսե:
Փուլ ըշխադելը հիշտ ա, պահելը՝ տժեր:
Փուլը փուլեն յրա կկյա:

Քաթան հարց չըն տալ:
Քած կյուլան պրծումնը չընիլ:
Քախծր խոսքը յըղմեղր ա:
Քախծր պենը ամեն օր քախծր չընիլ:
Քանե տարվա շոն ըս, խե՞ մհենգ ըս հաչում:
Քաշ ա թոշում, ասում ըն՝ քաշ ա, պեցուր ա թոշում, ասում ըն՝ քաշ ա:
Քաշեն ըսեցեն՝ կոռոցդ խե՞ թոբա չըս անում. ասից՝ վեր ինձ մնար, մհե թոբա յի ըրալ, թարիփ ընողնե շատ կան:
Քաշեն նոտն էլ ուրան հետե յա քախծր:
Քաշ խոսե, վեր համեղ ընի:
Քաչալը ուրան փփաղեն հավան կկենա:
Քառասուն ավազակ մին տկլորու կրեցեն ուչ թլանին:
Քառը սկանալ չի, կնմընցնե:
Քավթառ ծին էլ ա կյարի օտում:
Քավթառ շանը քուչի–քուչի չըն անել:
Քարեն մինը վեր կոշտ ընի, մինն էլ կակող կընճի:
Քարեն պաչի՝ քարեն սերտն էլ կպրճկե:
Քարեն պիծինը չի մծանում:
Քարը պատեն ա ընում՝ պարաքը՝ սրտեն:
Քարը վեղան ա տուս կյամ:
Քարը տեղը ծանդր կկենա:
Քթöլավ պöւրöւմ ա, կյվաթավ տամ:
Քթըլքթöլ թուփ ընք անում, շիրըփշիրեփ տöւս տամ:
Քմալի տարեն փափաղդ պենդ պահե:
Քմակեն խոսքը քամակ ածի:
Քյամբախտը նա չի, վեր քյըմբըխտոթուն շատ ա տեսել, քյամբախտը նա յա, վեր քյըմբըխտոթունը կարում չի տանե:
Քյանդիրը ծմակավն ա օնում, մին նպտո կտրում:
Քյանդիրը կյեփավն ա անց կննական:
Քյանդիրը պերակ տեղան ա կտրում:

Քյասիբը այլեր բռավ, ամբարն ըյլեռում չըլնի:
Քյասիբը վեր գիդա վուչ թա նռուստընննական ա, սեռտը կնափե:
Քյասիբը վեր հավ կեռավ՝ յա ֆյասիբն ա հիվանդ, յա՝ հավը:
Քամեն ասից՝ հո՞ւ վա գիդում, թա հինչեր ըմ անում:
Քյասիբը ռւռան խելֆան կընի ֆյասիբ:
Քյասիբը փուլ ֆթավ, գիդաց ուչ թա հինչ անե (հիշտեղ տեղի):
Քյընդիրին մին նռնդան փռնե՝ մնացածը կյլական ա:
Քյընի հանդը՝ համ ըռա, համ կեր, համ սվեռե:
Քյոմագ ըռա, վեր ֆեզ ֆյոմագ անին, պահե, վեր ֆեզ պահին:
Քյսիբին ախնիզը օգիլը հիշա ա, պահելը տժեր:
Քյսիբին աշկը կոշտ կընի:
Քյսիբին սեռտը պեց կընի:
Քյսիբին սիպտակ կեռեֆ չըդիս ննաշ տալ:
Քյսըբոթունը վեր վեր ա կոխում, ամեն ընգյունավ ա վեր կոխում:
Քյոտ ա, գյոտա:
Քյոտեն նստել, այլեր մաղել:
Քյոտումը ծռւկուն, Վաոին ցամաֆ հաց ոտե՞:
Քյոտը մռրդ ա ըլալ, մհենգ նամռրդ ա տեռալ:
Քյոտը մին վայ բալա յա ծեն տամ, մին՝ վայ մամա:
Քյոտեն դռրդը Քյոտան շատ ա (ոռանան վարար ա):
Քյոտը մեր կյոտացած կավն ա:
Քյոտը ֆյոտոթռն չանում:
Քշրֆեն մին անգյունը մե հետ ծնդռանում ա, մե հետ թթվանում:
Քոլա-ֆոլա հնգեռս կյա:
Քոն իլ—եր կաց, բախտ օղի:
Քռռակը վեր մծանա՝ էլնա էշ ա տռնըլական:
Քոռը փռնածը պեց չի թողել:
Քոռ ծխողեն հնֆ օնողն էլ կընի ֆոռ:
Քոռն հինչ կօզի՝ էրկու աշկ, էն էլ՝ խլաշ-պլաշ:
Քոսոտ էծը ակնան կխմե:
Քչեղակն ասից. — Արթար ակնեն ֆար ֆցիլը հնձ խըրբզան շինից:
Քչըղակեն ֆարվանըբաշի տնիս՝ լուխնու կկտկռտե:
Քսի-փիսին տռն կֆանդի:
Քսորա ետ մարթ ա տեռալ:
Քվթառալ ա, հալա զոռայիս:

Քրիստոսս խաչը հային ա պաժին ընգալ:
Քրիստոսը վեր հայ չընի, չրչարմունքը հայ ա (մեխկը հայ ա):
Քու եղդ քեզ ընի, իմ թանես նի չի կյաս (մոռուս ույ):
Քուռանտ էն աշկը, վեր առաշ ճուրան չի տեսնս.
Քու սանդ թանը ուրիշին մեղրան լյաւ ա:
Քուրն ասում ա՝ ախպեր օնիմ, ախպերն ասում ա՝ քուր չօնիմ:
Քյուխեն շտահավը հաց օտող:

Օրան հղըցեն յրա յըն վեր թողում, վեր շոնը սայաղ ընի:
Օրան անգում ըն, առնը քանդում:
Օգած կործը քթած կործ ա:
Օզիլը համոր չի, չաալն ա համոր:
Օժան վախում'էր, նմուսան վախե:
Օժը ուտելին մաշին ա:
Օլին եր կացավ, մին կոնդ կոխից:
Օլին յա տանը, յա առանը:
Օխծը կծում ա՝ օխծանչուն կոխկն ըն քյընում:
Օխծը մաշկը կփոխե՝ պնոթունը փոխել չի:
Օխծին թխել չըն, հղեցը վեր քցիլ:
Օխտը ծոռեն կլոխը մին սեռ ա օնում:
Օխտը հուքյի, մին պուքյի:
Օխտը տարանը մին կնգանը անգուն կօնին՝ հակառակն անին:
Օխտը տարանը մին շան սարե կանե:
Օղտան էլ չըմ վխըլական, գյոզոական էլ:
Օղտեն ընգունումը ղնգլբազ թկեցեն, թա՝ էս հինչ ղնգղնգոց ա:
Օղտեն հրանքա ծեն տվեն, ասից. «Վեչ պար կյալի վեններ օ-
նիմ, վեչ շվշվող պռուշնե, յա Թաքու նոթու վըն ղրկըլական, յա Նախճըվան՝ աղու»:
Օղտերը պեց ըն թողում, լվենը փռնում:
Օղտը թողած զողոակեն հետան ըն շոռ կյամ:
Օղաը խմորը կարում չար ծամե, չուրացած հաց տրին պրծնու-
մը:
Օղաը հիշքան ստակած ընի, էլհա կաշին մին ըշապեռն ա:
Օղտը մոռե բրածում ա, հեռե եշում:
Օղտը շլակում ա կյըրըրկյող շոռ կյամ (չքըչոք):
Օղտը հայու նման ա՝ համ մեծ ա, համ պարի:
Օտելը լավ ա, քանց չօաելը:
Օրեն էքսին ումեղ չկա:

Օրը իրեք հետ սով կրնի:
Օրը պահանջավ ա, մունք՝ նահանջավ:
Օրփաթ՝ հաց, կիրկամոտ՝ լվաց.

## ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ածած-քցած—1. անթերի, 2. պատրաստ:
Ակաս-մակաս, տու իր պակաս:
Ակեն-սակեն-սրակեն—ամեն ինչ տեղը տեղին արած, պատրաստ:
Անան էլ ա հնցած, մահան էլ:
Աղա՞ս ըս, թա դա̈րղաս:
Աղուզ կերած դանա:
Աղ ու հացը ծույնանը յրաք ու ըննում—բարեկամությունը սառեղծվում է նեղ օրում:
Աղուն՝ աղի կասիմ, նալուն՝ նալի:
Աղու տանձ կծած—անտրամաղիր, մռայլ
Աղքաղ զեաեզ:
Ամեն աշկու քախծր թվալ:
Ամեն հավա պար կյվող:
Ամեն հինչ աշկեն առաչն օնել—ոչնչից չվախենալ.
Ամեն օր ուրուր տանըլական չընք—պետք չի վառություն անել:
Այամը ժամանակ ա տեռուլ:
Այլերը մաղել, մաղը կախ տալ:
Այ քախծր տախտեղ (Քյաքուկեցին):
Այուն վեռե՞ հընգընգոցն ար պակաս:
Անգունը ծակ—ըմբռնող, հասկացող:
Անգունը կանչի...
Անգունը ծենու:
Անգունը փթելս:
Անգունս ի եր...
Անդար ընդերու:
Անեծք չար սաղանեն:
Անըսելի պեն:
Անի յա, թա չանի—չե՞ն է, թե՝ ավերակ:
Անիրես հանըչ:
Անկեզ պուրթ—կոպիտ, անտաշ:

Աշկերդ կփուչանա (կմաշի)—ասում են օտար աղջկան նայողին:
Աշկերդ քե կենա...
Աշկերը արյուն կալած:
Աշկերը ճեպուռ կոխած
Աշկերը մունուկյզի վեր կախած.
Աշկը ծակ:
Աշկը կոշտ, սերտը կոշտ:
Աշկը ճղըցու:
Աշկ կյուղանոլ—փախուստ տալ:
Ուրան ըռնեն մաշին պարանց ըղնել—յուրայինների դժբախտության պատճառ դառնալ:

Ուրան թափ տալ—իրեն հավաքել:

Ուրան թուփումը-ծուպումը նստել—յուրայինների հետ լինել, սիրել իր օջախն ու գերդաստանը:

Ուրան խոսքը առաջ տանել—համառել, իր ասածն անց կացնել:

Ուրան կլոխն ուտել—ինքն իր մահվան (դժբախտության) պատճառ դառնալ:

Ուրան կուրցնել—գլուխը կորցնել, շփոթվել, մոլորվել:

Ուրան նհաշ տալ—իրեն ցուցադրել:

Ուրան չխարակը մանել—զբաղվել իր գործով, ուրիշների գործին չխառնվել, փոխ. հասարակական գործերին մասնակից չլինել:

Ուրգյունաշի տալ—ծմռանը արևկողի տալ, արևի տակ տաքանալ:

Ուրթումնանաք ընիլ—բազում անգամ երդվել:

Ուրթումնը ետ ուտել—երդմնազանց լինել:

Ուրթումն ուտել—երդվել:

Ուրո՜ւն անել—փնտրել, տեր կանգնել:

Ուրուշու աչկավ եշիլ—անտարբեր լինել, իրենը չհամարել:
Ուրուշու թերմացքավ կենալ—մուրալ, ապրելու այլ միջոցներ չունենալ:
Ուրուշու փարչավ նöւր խմել—համարձակ, աներես լինել:
Ուրöւր անավ ածել—հաշտ պահել, խաղաղեցնել:
Ուրöւր անավ ընգել—իրար հրմշտել:
Ուրöւր անավ քցիլ—զանցանքը, մեղքը իրար վրա բարդել:
Ուրöւր անել—մի կերպ կցել, կցմցել:
Ուրöւր ըղնել—իրար հասկանալ, հաշտ ապրել:
Ուրöւր ղյնամաշը եր ընիլ—իրար վիրավորել:
Ուրöւր մես ոտել—կռվել, իրարից ետ չմնալ:
Ուրöւր նի կյալ—իրար վիշտ պատճառել, վիճել:
Ուրöւր պրանում քքել—հավատարիմ լինել, համակարծիք լինել:
Ուրöւր ռեխ կրծկոծել—կոպտորեն վիճել:
Ուրöւր տշտշորել—վիճել, իրար վիրավորել:
Ուրöւր քցիլ—սարքել, շինել, գործը դրսել:
Ուրöւր օնել—իրար բռնել (ով՝ ում):
Ուրöւրոցավ ածել—կարգավորել, կարգի բերել:
Ուրöւրոցավ տալ—իրար խառնել:
Փալանը փոխել—ա. նոր զգեստ հագնել, բ. պաշտոնավորվել:
Փայը պրծնել—էս աշխարհից գնալ, մահանալ:
Փöսս-փöսան քաշիլ—քաշվել, առմիշտ հեռանալ:
Փասին տալ—ծեծել, ծաղրել:
Փարչ անել—տունը, ճանապարհը գորգապատել:
Փարվանի տալ—ուրախությունից ցատկոտել, պարել:
Փափաղը պեցիր պահել—պարզերես լինել:
Փափաղը տափին կյալ—հրաժարվել, հեռանալ:
Փեշխուրթը քցիլ—ա. առաջին արդյունքը երևալ, բ. սկսվել, սկզբնավորվել:
Փեշկան կարել, ծույնանը քցիլ—աղքատիկ կյանքով ապրել:
Փթուք-փութուք կյալ—փուքալ, ջանալ:
Փլստրատե տալ—փայլել, փայլատակել:
Փխրտորս անել—հարևանություն անել, փոխհարաբերության մեջ լինել:
Փշուր-փշուր կյալ—սիրտը փշուր-փշուր լինել, զգացվել:
Փորեն խափիլ—քիչ ուտել:
Փորը ծակ տալ—սոված լինել:
Փորը կտարել—որովայնը ցավել:

Փորը հացուտ ընհլ—ապրուստը լավանալ:
Փորը հլոր-հլոր անել—ցավել:
Փորը մաշկտն կենալ—սովածությունից կուշ գալ:
Փորը պնդցնել—լավ ուտել:
Փորը վեց-վեց անել—սոված լինել, ուտել ցանկանալ:
Փորս անել—զոռոզանալ, անպարկեշտ ձևեր անել:
Փորումը արոլն կարել—վախենալ:
Փոփ տեռնալ—ա. պտուղը գերհասունանալ, բ. զառամել:
Փոք տալ—զուռնա նվագելիս՝ թուշերն ուռեցնել՝ օդ կուտակելու և անընդմեջ նվագելու համար:
Փռնգյու անել—նույնը՝ քամե անել, քամե ննետ տալ:
Փրշըփարա անել—պատառոտել:
Փրսըվեր ըղնել—ա. փորի վրա պառկել, բ. խռովել, գ. հիվանդ լինել:
Փուշերեն-թվերեն անել—հակառակվել, դիմադրել, չենթարկվել:
Փուշի հվաքել—մուրացկանություն անել:
Փուշերը պեց անել—թերությունները, թուլությունները բացահայտել:
Փուտին եր անել—ոչնչացնել:
Փուրացավ ընհլ—խնդիրք, պահանջ ունենալ:
Քաթ անել—պատմել, զրուցել:
Քաղ անել—քաղել, պտուղը ծառից, թփից կտրել:
Քաղ կյալ—ա. անասունների զուգավորվելը (կով, գոմշակով), բ. սեռական ցանկություններ ունենալը (աղջկա):
Քամակը կտրել—հետևել, սիրահետել:
Քամակը ննետ չկյալ—սկսած գործը վերջացնել չկարողանալ:
Քամակը քշիլ—վախենալ:
Քամակը քշեղակ կոխել—պատժել:
Քամքաշ ընիլ—թերություն, պակասություն ունենալ:
Քանդ-քանդ անել (քնդըքանդի անել)—ա. համարյա ոչինչ չանել, իրեն զբաղված ձևացնել, բ. քրքրել, ինչ-որ բան փընտրել:
Քան-քան անել—ստեղծել, ստեղծագործել, հնարել:
Քարեն քացի տալավ ապրել—դժվար ապրել:
Քարերը փեշկան վեր ածել—խաղաղվել, համաձայնել, հաշտվել:
Քարը գլխին կյալ—գործը խանգարել, փչացնել:

Քարը գյուրգյան վեր ածել—խաղաղվել, համաձայնվել, հաշտվել:

Քարը կապեն տեմ ըղնել—գործը դժվարանալ:

Քարը քարեն օտել—ա. ջրաղացը անաղուն մնալ, բ. սովածանալ:

Քարնիգ չընիլ—ա. գաղտնապահ չլինել, բ. փոխ. առնականություն չունենալ:

Քարոզ կարթիլ—խրատել:

Քեթը եր քաշիլ—չհավանել, գոռոզամտել:

Քեթը ըռնել—թեթևակի, աննշան տուժել:

Քեթը կախ անել—վիրավորված, նեղացած լինել, տխրել:

Քեթը կոտրել—ծեծել, խեղճացնել:

Քեթկալը վեր քաշիլ—նախապատրաստվել գործ սկսելու, զրուցելու համար:

Քեթ-քեթ անել—չհավանել, չմահավան լինել:

Քեթ-քթու անիլ—մտերիմ զրուցել:

Քեմքերը պտռել—ա. կարծիքն իմանալ, բ. գաղտնիքներ կորզել:

Քըխկ անել—քաջությունը փորձել, վախեցնել:

Քըս-քըս անել (քըս տալ)—դրդել, գրգռել (շանը), փոխ. լարել մեկը մյուսի դեմ:

Քթան փոնիս, ջանը տուս կկյա—տկար, անուժ, վտիտ է:

Քթեն թխել—կանգնեցնել, հետ դարձնել, խանգարել:

Քթեն կյարի քցիլ—ա. զբաղեցնել, բ. կաշառել:

Քթև անել—զննել, բան փնտրել:

Քթըծկերավը վեր ածել—լավ կյանքից հետո՝ վատ կյանքով ապրել, չվայելել:

Քթոթ անել—ա. քչուչ անել (թռչունը), բ. զննել, փնտրել:

Քմական վեդրա կապել—ծաղրել, անպատիվ անել:

Քմական վետ օնել—մերձենալ, մոտենալ:

Քյաման տալ, քյաման քցիլ—կախաղան հանել, պատժել:

Քյանդիրը ծմակավն օնել—ա. ուժից, կարողությունից դուրս գործ բռնել, բ. դժվարին գործ ձեռնարկել:

Քյոթուն անել—չարաճճիություն անել (երեխային):

Քյոքը կտրցնել—ցեղը ոչնչացնել, իսպառ վերացնել:

Քյուլքյուդ անել—լիքը լցնել:

Քչկոռը ետ ընիլ—մեծանալ, բացվել:
Քոռ տնակում մորթել—տանջել, չարչարել:
Քչրված ծառ եր հանել—չարչարել, տանջել:
Քռանգունը տնիլ—չլսելուն տալ:
Քռավ կյալ—այծի, ոչխարի զուգավորվելու ցանկությունը:
Քորքոտ անել—հրել-հրմշտել, չարաճճիություն անել:
Քսի-փսի անել—բամբասել:
Քստակեր տեռնալ—անասունների բերանները քիստահարվել:
Քրպռանով անել—քարկոծել:
Քրբքար ըղնել—պանդխտել, թափառել:
Քրթեղեն ռեխն ըղնել—վնասվել, խեղվել:
Քրծրեր անել—խրտնեցնել, փախցնել:
Քուլուլ կենալ—ա. ջների կռիվը, բ. երեխաների խաղը, կոխը:
Քուղումբ կենալ—միշտ շիտակ, արդարամիտ լինել, չապականվել:
Քունա ըղնել—քնի ժամին այլ բանով զբաղվել:
Օթը բեշ անել—ա. հարկահավաքին խաբել, բ. գործը հաջող կատարել:
Օխծը պուճան տնս օնել—ճարպիկ, հնարագետ լինել:
Օխտը կաշի մաշկել—շահագործել:
Օխտը ճետ թղըթաղե անել—զրախոսել, հայհոյել:
Օխտը ռանգ փոխ տալ—ամաչել, անհարմար զգալ:
Օղտեն քթոլավ ճուր տալ—գործը կատարել՝ նկատի չունենալով դժվարությունը, գործը բստ պահանջի չկատարել:
Օնգատն ըղնել—հաջողվել:
Օնքերը ետ մաչիլ—տխրությունը թոթափել:
Օնքերը չաթել—մռայլվել, ունքերն իրար բերել:
Օնքերն ուռուր տալ—մռայլվել:
Օշը տեն անել—երես թեքել, արհամարհել:
Օռնավ կլխեն թխտծ—գիժ, հիմար:
Օսփոխ անել—օգնել, գործը թեթևացնել:
Օտել, կլխեն ճուր խմել—ա. վերջացնել, բ. հետքերը ծածկել:
Օրան անել—փչացնել, ավերակել:
Օրը տժեր տեղ մթնել—անել վիճակի մեջ ընկնել:
Օրն իրիգյուն անել—օրը մթնեցնել:
Օքտան կյալ—պատժել:

## ՕՐՀՆԱՆՔՆԵՐ, ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ախրդ խեր ընի, վերջդ պարի:
Անջեն ըք՝ ջնանաք, անտոն ըք՝ տնանաք:
Աշխարքս քզանավ լիանա:
— Աշկդ լուսի (ուրախության պահերին):
— Աշկդ լուսավ լիգյը կենա, փոխն էլ քեզ ընի:
Աստված ամբարդ լիգյը պահե:
Աստված էլ քու պերանդ հմղցընե:
Աստված հակեդ կենա:
Աստված մին հափուռ վեղու մեզ արժան անե:
Աստված շատ չի համարե...
Աստված պերանդ համեղ պահե:
Աստուծ ամեն մարթու բրած ուրան առաչը պիրի:
Աստուծ, աշունքս վեսկե շինիս:
Աստուծ խեր տա. փիս ա՝ լավ ընի, լավ ա՝ լավ ընի (նորահար-սին):
Աստուծ արազդ պարին զադարե:
Աստուծ արթառեն յրզինքումը պահե:
Աստուծ արժանեն հակեն կենա. արժանեն անարժան չի համա-րե:
Աստուծ բախտեդ քար չքըցի:
Աստուծ, յոր չօնիս...
Աստուծ, ղաչանք ըմ անում. թակած տեղը թակիս ուչ, էրած տեղը էրիս ուչ:
Աստուծ շառը-փորցանքը մեր կլխան հեռե տանե:
Աստուծ պահե ժոնզնեղ:
Աստուծ վերը լավ ա, լավն անե:
Աստուծ ումբուրդ ըրկնցընե:
Աստուծ «ուտան» ժղըվուրթան անպակաս անե:
Աստուծ էնքան կյանք տա, էնքան շնորք տա, ծնողնեն անփեշ-ման ընին, թևեր անին թռչին: Աստված վեչ փշմընորքուն տա (նորապսակներին):
Աստուծ քեզ թևեր տա, թռչցընե:
Աստուծ քեզ հզեր հղներ անե:
Բալադ տոն կյա:
Գյուրզյըդ լիգյը կենա:
Գյուրզյրնեդ շատ թրչի:

Դոստու, պարիկամու սրտավ ընին, դու̈շմանու սրտավ չընին (նորապսակներին):

Էս տանան վեչ քուշտանաս, ներակ սահամ ծեր տոնը էս տանան կտրե վուշ (նորահարսին):

Էրկան ումբրավ ընի քար նախշողը, կարպետ կյործողը:

Էրկու շղարն ըք՝ մին տեռնաք, մնանաք. մնանաք, մին պերցու ծրանաք:

Էրկուսն ըք, նեղվածք ըք՝ լնանաք:

Ընումավ ընի (նորածնին):

Ըստուծանա մին լուս ծլլա քզ էտե (դժբախտ պահերին).

Ըստուծանա մխթարիս (հանգուցյալի հարազատներին):

Ըստուծեն խեր խբա̈րը քեզ (ուրախ լուր բերողին):

Իրեքվիս, նոաքվիս, եր հմբարցվիս:

Լավս տեսնաս, փիսս աեսնաս ուշ:

Լուսը ծլլա կյրըզմանեն (հանգուցյալին):

Լուսը ծլլա քզ արա:

Լուս տեռնաս, լուսըվերվիս:

Խուխենավ ննուփվիք, մեխկ ա էս վեղը:

Ծառդ ծաղկե, աստխեր յոր օնե:

Ծառ-ծրանի տեռնաս:

Ծեծաղը ըրեսադ անպակաս ընի:

Ծեծաղը միշա պրանեդ կենա:

Ծերքդ էրկան ընի:

Ծերքդ մրքավդ անց կցընիս, չորս անգյունդ ծաղեզ աեսնաս, պմբա̈կու նման փափուկ ընիս:

Ծեր-ծրանա, ծերքը մրքավն անց կցընե, վերշը պարի ընի:

Ծնունդը պարի ընի, կնունքը տարի ընի:

Կապն էրկան ընի (նորահարսին):

Կլխավդ պտըպատ անին:

Կյարունք ընի, խելունք ընի, ըշկըհելունք ընի:

Կնանչիս, կանանչ կենաս,
ժղըվուրթանց նանանչ կենաս:

Կպարու նման նղնըհանիս, կպարու նման նղնըվերվիս, կպարու նման վղըվերվիս:

Հար-հավիդենական նոխտ մնաք (նորապսակներին):

Հացեն՝ ըժընոթո̈ւն, ջավեն՝ թնգոթո̈ւն, մահեն՝ թաղություն:

Հիշտեղ վեր է, ըստուծանա մին կաթ կաթե,
Հիշտեղ վեր է, ըստուծանա ծլլա քզ էտե:

Հիշտեղ քյընիք, պարավ քյընիք,
Հիբը կյաք, պարավ կյաք,
Ուջաղան վեչ պուք կյաք,
Միշտ նոխտ կենաք:
Հղըցավդ կննշկյարմուրը կապե:
Հու վեր եկալ ա, պարավ ա եկալ, մունք էլ ո̈ւրան տոնը պարավ քյընինք:
Հու վեր մարթու հրեյի հսնում ա, աստուծ էլ ո̈ւրան հրեյին հըսնե, հու վեր մարթու եշում ա, աստուծ էլ ո̈ւրան եշի, քյոմագ ընողեն աստուծ քյոմագ անե:
Ղորթը նռաքվի, ստոր նղըվերվե, մեր ըշխարքան փախնի:
Ղորմի կապ ու կամուրջ շնո̈ւղներեն:
Ղորմի պարուն, պարութո̈ւնին,
Քրիստոսա հարութո̈ւնին:
Ճանապարը պարի ընի, արքայութո̈ւնան փայ-պեժին ընի (հանգուցյալին):
Ճանապարը պարի ընի, ետ չի եշի, նգյըրնատեղ չընի (հանգուցյալին):
Ճղպորու նման կանանչ ընիք,
Ծոք տաք, շուքավեր ընիք,
Վեչ թափվիք, բար տաք, բրաքվիք:
Ճրո̈ւ նման էրկան ընիս, նրո̈ւ նման պարզ, նրո̈ւ նման սերա հվըցնող:
Մաղարդ հարուր նեղնը տեռնա:
Մինդ էրկու տեռնա:
Մինը Քյուն ընի, մինը՝ Արախսը. ըրարին, վրարին,
Բարու կյան, բրանան, մին պերցու ծրանան:
Մին ծլիս, հազար ծաղկիս:
Մին կուտուր հացը մզանա անպակաս ընի, մեր սղանեն միշտ քթենվա:
Միշտ փնչված ընիք:
Ներակ էնդուր կընի, ժառանգը պարի կընի:
Ներակ էն յրգինքին, ներակ էն սրտեն, վեր սև չըն ընիլ:
Ներակ նա, հու վեր նրակեն կտեսնա:
Ներակ տեսնամ, աստուծ հար-հավիդենական կյանք տա քեզ:
Ներակ տեսնամ, աստուծ տա:
Շեն կենա մեզ ուտըցնող, կեց տվողը:
Շեն կենաս. օջաղդ շեն կենա:

Շուքավեր ընկ.։
Ողորմա, աստված, ողորմա բաղներեն (ավողներեն)։
Ողորմա մոնողանց, ապրին ողջերը,
Աստված ուղուրմը տընի մարթին սրտումը, մարթին ճանապարը էրկան ընի, չորս անգյունը կանանչ, ծաղկու նման պենվա, բար տա, կլխեն ծածկոցը կննչկյարմուր ընի։
Չար աչկը ֆշկովե։
Չարը խփանվե։
Չարը պրանա. թա պրանա վուչ, չար ցավու տրանա։
Պարավ ըս եկալ, պարավ էլ ֆյընիս։
Պարի աքթխեն, պարի սհաթեն ընի։
Պարի աքթխու տակե ընի (հարսանիքը), բախտավեր ընին (ամուսնացողները)։
Պարին պարավ ա եկալ (բարի մարդուն)։
Պերանդ քախծր կենա, շաղենքդ համեղ։
Սերունդավ մծանաք։
Սուրփ Պառակ, Նաճատակ,
Ովտըրանուց, Սըրփանուց,
Վըսկախաչ, Ըրծթախաչ, Պղնձախաչ...
Ուրուր անա խաչվին, մխթարվին,
Լիանան, ծուվանան, վեչ քուշտանան։
Ուրուր անա միշտ տուզնը մնան,
Լուզ տան, լպզտին, կննչկյարմուր կենան։
Սուփրադ առանց լաէյա մնա։
Վեղ փոնիս, վեսկե տեռնա,
Օխծը փոնիս, կաքավ տեռնա։
Վետավ ընիք, փնջավ ընիք, բարու հանիք։
Վեռավ ընիք սզնու ծաղկու նման,
Հիշտըղավ ֆյընիք, հետավ ընիք։
Վննը կյալիքդ պարի ընի։
Տանդ կննչկյարմուր կապե։
Տանդ հղեն վեչ կնանչի։
Տանդ օխտը ըրուրուց զնգա։
Տանդ օխտը լայ-լայ զնգա։
Տեռնաք ճճուփած խնձորե։
Տոնդ ավադ կենա։
Տոնդ պրնձավ լցվե։

Տուք մեր տոնը տխրության ըք եկալ, մունք ծեր աները ուրախության կյանք:
Ուրանք ո̈ւրանց սրտավն ընին, ուշուրնեն ո̈ւրուր անա տեն չանին:
Քյոմագ ընողեն սատուծ քյոմագ անե,
Հակա փոնողեն հակեն կենա,
Դայաղ ընողեն դայաղ կենա,
Հու վեր մին տա, հազար յոր օնե:
Քու հա̈ր ապրե:
Օխտը խուփավ հացու նստիս:
Օխտը հուքյավ սուփրա պենաս:
Օխտը պորտդ լուս տեռնա:
Օխտը վերթավ նռաքիս:

## ԿԵՆԱՑՆԵՐ, ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ, ԾԻՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստված ողորմա Քրիստոսա հավատացյալ բոլոր ննջեցյալների հոգուն: Աստված ողորմա Հայր Աբրահամին, Գրիգոր Լուսավորիչին, 318 վարդապետանց, Մելիքսեթ քահանային և թող նրանց բարի ու անարատ օրհնությունը լինի ժողովրդաց վերա:

Աստված ողորմի կամուրջ կառուցողանց, ախպյուր ու ակն շնողանց, մարդկանց ծոված հակեն տեմ կնողանց, ըրփըրվերի կնանուցը դալու կնողանց, եթիմ պհողանց...

Աստված ողորմի Կյեշանի հոգուն և թող համբերություն մաղթենք բարեկամաց:

Ժողովուրթ, հաց կերեք, Կյեշանը հաց օտող մարթ ա ըլա՛լ:

Ա. ժղովուրթ, էս մին կտոր հացը լուխճին տանն էլ ճարվում ա, փառք ըստծու, սօր սա կարոտ մարթ չկա: Մունք կարող ինք էս մին թիքա հացը ամեզը մեր տներումն ուտինք, պայց վեր հվաքվալ ընք ըստեղ, մեր տանը հացը մինտեղ ընք օտում, սա սերության նշան ա: Խմինք սերության կենացը և պարեմաղթինք, վեր աստված մեր թմահան կտրե սերության յրա ըրնի: Եր կալիք խմեցեք:

Ներակ տահամ, ամեն հինչ ո̈ւրան տեղն ընի, ամեն հինչը ո̈ւրան տեղավը քյընի: Տանը լուխճին պառը, տառը, սկնը, սա-

զըլ բդի փոնե: Հու վեր կտրում ա փոնըցնե, նա կենացը: Ա. ժղո-վուրք, տոնը սուրփ ա, օջաղը սուրփ ա, հու վեր սուրփին աչկը փուռ չի քցիլ՝ նա կենացը:

Օտող-խմողեն կենացը, ուտըցնող-խմըցնող տըղըմարթին կենացը: Հու վեր համ ուտում ա, համ ուտըցընում ա, համ էլ կերածը պահում ա, նա կենացը: Հրփողեն, ըռըխեն չափը չնըն-նըչողեն, մարթին հալալ հացը վեր ըծողեն վեչ կենացը:

Լավ ընինք, զառավ ընինք, ողջ ընինք, առողջ ընինք, սաղ ընինք, սլմաք ընինք, միշա ընինք, հիշտ ընինք, մարթ ընինք, վտրթ ընինք:

Սաղ ընինք, օրախ, վեչ կոնդ ընինք, վեչ չոլախ: Պարզիրես ընինք, սվիրես չընինք, ո̈ւրուր դո̈ւզ աչուք եշինք, ո̈ւրուր անա ուշուրնես տեն չանինք, մեր պարըլուսը հալալ պարըլո̈ւս ընի: Ծր կալիք, խմինք մեր հալալ պարըլուսին կենացը:

Հու վեր էս կործավը ուրխացալ ա, նա շատ կենացը. հու վեր ուրխացալ չի, նա էլ կենացը, բալի խելքը կտրում չի, աստված կարողություն տա, էն էլ ուրխանա: Իսկ հու վեր էս ուշաղեն փիսն ա օզո̈ւմ, նա վեչ կենացը, ընդինը թող քյըրնի տկլոր ցաք շլո̈ւկե, քերծավը թուլ ըղնե:

Պարի կործ փոնողեն, պարի կործավը ուրխընողեն, պարի կործեն թո̈րիփ ընողեն կենացը:

Հու վեր նեղ տեղ ա, նա կենացը, եռնայինը նա տեղը հրզկըց-նե: Հու վեր ղարիբբթունում ա, վեղեն, ուշաղեն, խուխեն, օղլու-շաղեն հետե հուրու պռուշ ճաքում ա, հնար չի քթենում կյա, նա-հանց շատ կենացը:

Հո̈ւրու աչկ հըղըցու վա, հո̈ւրու փոր հացու կտրոտ ա, թող հավք տեռնան թռչին, հրեշտակեն թվերավը կյան, ո̈ւրանց մին հափռու վեղեն արժան ընին:

## ԱՆԻԾՔՆԵՐ

Ազարը նի օնե ծեզ:
Ազարը տանե ծեզ:
Ախծավ հնցընիք (անասունին):
Աղու օտիս:

Աղու-լղե ոտիս:
Աղու տեռնա կերածդ, քեզ սպանե:
Անդար անիմ քեզ (անասունին):
Անդար մնաս (անասունին):
Անիծյալ ընիս (անիծվածի):
Անխեղճը տկլոր ցաք շլակե, սրըսար շոռ կյա:
Անտակ ծովն ըղնիս:
Անումդ քարեն կյըրիմ:
Աշկդ խվարե:
Աշկդ հեռա:
Աշկդ հեռա, վեր թափե:
Աշկդ պլթա, վեր տեռնա:
Աշկեդ բաբազը կոխած:
Աշկումդ մազ փսնե:
Աստված ընեծի քեզ:
Աստված քեզ քոր տա, ղեյնը չր
Աստուծ կլխեդ քարեր վեր ածե:
Աստուծ կտրե շան խասյտթդ:
Աստուծ կտրե քեզ:
Աստուծ տանե-պտանե:
Արևդ խվարե:
Արքանդդ կրըկուփ կյա:
Բողմա օնե քեզ:
Բոյդ տափումը տնիմ:
Գյավուր մնաս:
Գյուլլաթակ տեռնաս:
Գյու լան սրտադ կենա:
Գյուլլըխարավ ընիս:
Դալուղ տափան կենա:
Եթիմ մնաս:
Եռնայինը քեզ մին թա՛հրու տընի:
Եսիր ըղնիս:
Եր հմբարցվիս:
Եր քաղվիս:
Էրվիս-փթոթվիս:
Ըլա՛ծդ կտրե:
Ըլա՛ծդ պերցու տակե ոտիս:
Ըշկտհեռ:

Ըշկըհեռան ըղնիս:
Ըշկըհեռեն ցավան ըղնիս:
Ըռնըթաթախ ընիս:
Ըռնում կենաս:
Ըռնում ճմրթիմ քեզ:
Ըռնըփրթուշ տեռնաս:
Ըրածս աշկերդ օնե:
Ըրևու զարուր մնաս:
Թա ծնողքդ ուրանաս,
    էրկու աշկավ քոռանաս,
    էրկու վեննավ չուլխանաս:
Թեզունքդ տափան կենա:
Թորը եշիս՝ ինձ տեսնաս,
    Թորը շոռ կյաս՝ ինձ   քթենաս,
    Միանտերան ըմ օզա̀լ:
Թունբաթուն ընիս:
Թուրունն ըղնիս:
Թուրունն ըղնիս, խրավվիս:
Թուփավ-ծուպավ,
    Ակավ-տակավ,
    Հունավ-տունավ,
    Տեղավ-ցեղավ ճնջըվիք:
Ժմաժենքը քեզ տանե:
Ժմըժենքավը քյընիս:
Իրեսդ կարիմ:
Իրեսդ կտրվե (շան իրեսդ):
Իրեսդ սվանա:
Լլկըվիս, լլկըցվան ըղնիս:
Լղե օտիս:
Լոբիդ օտիմ (ասվում է կատակով):
Խափան մնաս:
Խզըխուր մնաս:
Խոր խուրանա տոհմածառդ:
Խոռկը պկադ կենա (անասունին):
Խոռկ օնե քեզ (անասունին):
Խվարվիս տու:
Խորախանդակ ըղնին մեծամեծերդ:
Ծառդ պտուղ չտա:

Ծերքդ մեկնիս, վեչ եր կենաս:
Ծճանվիս տու:
Ծծամեռ (ընիս):
Ծպուտդ կտրվե:
Կալ-մարաքդ կրակ ըղնե:
Կապավ ճնցրնիք (անասունին):
Կլխավս մատաղ քյընիս (կլխես մատաղ ընիս):
Կլխըվեր քյընիս:
Կլխեդ քար ըղնե (ղայա տրաքե):
Կլոլվիս տու (տու կլոլվիս):
Կլոխդ մոշիմ:
Կլոխդ վեղավ անիմ:
Կյիժավ ըղնիս:
Կծըքամ տեռնաս (ընիս):
Կռնդդ թաղիմ:
Կտռըվիք տուք (անասուններին):
Կուռներդ վեր տեռնա:
Կուտանա ընիս (տեռնաս):
Հավատդ ճաքե:
Հավատ նստե:
Հափուտդ կոշ կյա (ժլատին):
Հինչու ինձ ասում ըս, ըրեսադ կենա:
Հիշտեղ եշիս, ինձ տեսնաս:
Հղեդ ցաքիմ:
Հրսանեքդ փռնած մնա:
Ճտկատդ շռն ճսնե:
Ճոթերդ ցրև կյա:
Ճրավ ճնցրնիք (կոտորվեք):
Մազերդ տխտակեն սանդրիմ:
Մաճավ ըղնիք՝ մաքրվիք,
Տանավ-տեղավ թմզվիք:
Մաճը ըղնե մշրնեդ (անասունին):
Մաշկեդ սեռը կտրե:
Մեսդ վեր թափե:
Միլլիմիրի մնաք (թռչուններին):
Մինդ էրկու չտեռնա:
Մին մանըը մոխեր քեզ ծածկե (ճանաքով ասված):
Մին ծկիս, օխտը փքիս:

Մին շալ օխծը փորադ կենա:
Մին շմուշկավ օխտը մղակավ նի մննիս:
Մին ֆաշալ խաթա ֆեզ պշպշորե:
Մշկանոռ տեռնաս:
Մոխերս կլխեդ (վեռեդ):
Մսըպոտխս, մեսդ ոտխս:
Մրմնջավ ըղնխս:
Յաղին տանե ֆեզ:
Յոխ ընխս տու:
Նի փրթածդ տուս տաս:
Նոթան ածիմ ֆզ արա:
Նոթը ծլլա ջանեդ:
Նոթուտ տեռնաս:
Նստխս՝ էրի, եր կենաս՝ էրի:
Շան-կյոկու փայ տեռնաս:
Շան միլլաթ:
Շան փայ տեռնաս:
Շեմբաշեն ըղնխս (փուշի նվաֆխս):
Շնըկոտեզ (շան կոտեզ):
Շնորֆդ կտրվե (աստուծ կտրե):
Ջառռ օնե ֆեզ (անասունին):
Պառդ աստուծ կտրե:
Պառդ կտրվե:
Պեժինֆդ կապած մնտ:
Պլանաս, շոլերն ըղնխս:
Պլորեն մարը պկադ կենա:
Պլորս պկադ կենա:
Պլորը ֆեզ յոր օնե:
Պոշերդ պկավդ տամ:
Պոշերդ վեշ սպտտկե:
Պոշերդ տխտակեն սանդրիմ:
Պոշերդ ֆանդիմ:
Պրանեդ վեր ընգածը գյուրգյըդ ըղնե:
Ջանդ մրմնջա:
Ջանդ մրմոնջ օնե:
Ջնանեռ նստխս տու (ջնանե՛ռ):
Ռամուզդ կտրվե (ֆու):
Սերմդ կտրվե:

Սերմդ փուշ տöա կյա:
Սրտամեռ-կլխամեռ (սրտամեռ):
Սրտըխարավ ընիս:
Սրտըմնա-սրտըկոտոր տեռնաս:
Սրտումդ տխկրտենակ տեռնա (կերածդ):
Սև անիմ խելքեդ կցանը:
Սև անիմ խելքդ:
Սև ատակը քյընիս, վեր քյընողը կյամ չի:
Սև խվարեն տակը քյընիս:
Սև խավարը քյընիս, ընդեղ քյընիս, վեր քյընողը ետ չի տեռ-
նում:
Վայիդ նստիմ, փայիդ նստիմ:
Վարամ օնե քեզ:
Վեշ ընիս, փոշ ընիս:
Վեշ բրարիս, վեշ դլöրիս,
Հանց շուրանաս՝ վեշ վրարիս:
Վեշ մծանաս:
Վեշ պտղվիս:
Վեշ օր տեսնաս, վրշանաս-փուշանաս:
Վեսկեռդ ծկըթոտե (ծկըթե):
Վեր թափիս տու:
Վզահոռ-մշկահոռ տեռնաս:
Վիրքուտուրքդ կրակ ըղնե (էրի):
Վնեռավդ քյընիս, մաշկեդ յրա կյաս:
Տափան կենաս, վեշ եր կենտս:
Տափերը շնգռոտիս:
Տափերը տփտփիս:
Տափը թումբ անիս:
Տեղդ տերտակ մնա:
Տերտակ նստիմ քզöնավ:
Տերտակ նստիս:
Տխկրտենակ տեռնա, պոկդ օնե (կերածդ):
Տխկրտնակեն-տխկըցավեն կյտս:
Տխկրտնակեն ցավեն կյաս:
Տնածակ:
Տնաքանդ:

Տոնդ ըրիքնակը քանդի:
Տոնդ խվարե:
Տոնդ ծակվե:
Տոնդ կրակ ըղնե:
Տոնդ պած ըղնե:
Տոնդ վայվրուդ ըղնե:
Տոնդ վարիմ, բոստան անիմ:
Տոնդ փրսըվեր ըղնե:
Տոնդ քանդուքարա տեռնա:
Տոնդ քանդվի:
Տոտոնդ պած ըղնե:
Ցավս պկեդ վեր կյա:
Ցավու–ցցու կյաս:
Ցաքավս ցաքվիս:
Փսոկդ կտրվե:
Փրթըվիք տուք:
Փուշի հվաքիս:
Քա մոր արքանդը չուրանա:
Քաշկավ ըղնիս:
Քաչալ խթավ ըղնիս:
Քացախ օտիս:
Քացախ օտիս՝ քցախիս:
Քյընիլդ ընի, կյալդ չընի:
Քյուլվիս տու:
Քյումադ նի կենա:
Քնըծմըռու հայ:
Քռանաս, քուռանաս,
Տափան կենաս, վեչ եր կենաս:
Քրքրվիս տու:
Քու եղավդ եղվիս,
Քու ղաղավդ ղաղվիս:
Քու լա́վը մեռնե:
Օնքերդ կտրվե (մռայլ մարդուն):
Օնքերդ քեզ կտըրե:
Օխտը պորտդ չուրանա:
Օջաղդ բուստընատեղ տեռնա:

# ՍՈՒԳ

*Հանգուցյալի ծնողները ապրում էին Բաքվում՝ միշտ էլ անբաժան հայրենի Եմիշճան գյուղից: Նրանք երկու տղա ունեին: Նրանցից փոքրը, պարտադիր զինվորական ծառայությունը կատարելու ժամանակ զոհվում է Սև ծովում՝ խեղդվող ընկերոջը փրկելիս: Հայրենական պատերազմի տարիներին այնտեղ էր զոհվել նաև նրա մորեց պապը: Հայրը զոհվածի դին ամփոփում է պապենական գերեզմանոցում: Վաղամեռիկը օժտված էր նկարչի բնատուր շնորհքով և ամենայն ջերմությամբ կապված էր գյուղին:*

ՄԱՅՐԸ.— Ախ, աստուծ, թակած տեղը հի՞նչ ըս թակում, էրած, մոխեր տեռած տեղը նորը հի՞նչ ըս էրում:

ՍԳՎՈՐ ԿԱՆԱՆՑԻՑ ՄԵԿԸ.— Ղաչանք ըրա ըստծու խռխադ եա պիրի, ախճի:

— Ես մինակ չըմ անում ըստծու, ինքն էլ ա գիդում, պա նա աստուծ չի՞: Հու վեր տեսալ ա էս ցավը, ես նրան մատաղ, հու վեր տեսալ չի, էլ տեսնա վուչ: Սա դա̈րդ չի, էրած թուրուն ա, ռեխը կապած, ես էլ մաչին, էլ պրծումնը չկա:

Շուքերը թանձր ար քզ էտե, նի կենան էդ շուքերը, նրերը ցորտ-ցորտ ար քզ էտե, նի կենան էդ նրերը: Ախճի, մինը կա վուչ ասե՝ խե՞ տի յըս ասում, պա բալադ էդ շուքերումը շոռ ա եկալ, պա բտլադ էդ նրերան խմալ ա: Էն շոքը թող թանձր կենտ, պա էն շուքումը օրիշ բալենե չըն շո՞ռ կյլական, պա էն նրերան նոր-նոր բլենե՞ չըն խմըլական: Աստուծ, թող նո̈ւրը ցորտ-ցորտ կենա:

Էրկու շևին մինը տակռավը պուք տվեն, մինն էլ ծռալ ա մին ընգյունին յրա, աղերս ըմ անում, թողիս ուչ խոխաս կռանա, աստուծ:

Միշտ տղտողալ ըմ, վեր իմ ախպեր մաղար ա, համ մաղար ա, համ եթիմ: Աստուծ սկացալ ա, ասալ ա՝ մղարա հա̈զ ըս անում, նոխտդ մղարե: Ես մարդու փսոթուն չըմ բռալ, իմ մարթս բրալ չի, հո՞ւ վա ասալ, թա՝ տանդ նզամը ծռե: Մամա, գիդում ըս խե՞ Ռոդիկը պերալ ըմ կոշտդ, տու սվեր ըս, աստուծ հինչ դարդ տամ ա, տմա̈նում ըս: Ախ, մամա, քզանա նեղ ըմ, վեր ինձ մծըցրալ ըս, դո̈ւզ չըն ասալ, վեր ասալ ըն եթիմը ապրել չի: Ըպրեցե, վեր էս օրս տեսնամ:

Մատաղ անիմ քեզ, վեր ասալ ըմ առանց քեզ կարել չըմ կենամ, քյընում'էր շենը, պա տի՞ յըն քյընում շենը, պա աի՞ յըն կյամ շենը: Էդ հո՞ւնց ըս եկալ շենը: Պա շենը կյվողը տխտա-

կումը կկյա՞: Պա չենը կյվողը տերաակ կկյա՞ տատուն կոշար: Ա սերտը լիգյը բալա, ա խելքավ լիգյը բալա, ա շենքյավ լիգյը բալա:

Բանակ ճանապարհիս քեզ ասալ ըմ՝ խելուք կկենաս, պլոթուն չանես, ջահիլ ըս, ջնըլոթուն չանես, քշաեղ կյող կընի, տու կյըղոթուն չանես, պրանեղ թիքան ընգերեղ ճհետ կես կանես: Հինչու ասալ ըմ, ըրալ ըս, պա ես քեզ ասալ ըմ կյանքդ էլ կես կանես ընգերեդ ճհե՞տ: Ա նամո̈ւրդ, պա կյանքը կես կանի՞ն:

Ես Սև ծովը էն տակյան չըմ սիրալ, սև մնա ծովը, իմ հո̈ւր էլ ա ծովեն մթնումը մնացալ: Վիշապու նման հորս կուլ տվեր, պա վերթուս խե՞ կուլ տվեր:

Մամա, մհե մտքումդ ասում ըս՝ ես քեզ տի չըմ խրատալ, խե՞ լո̈ւզուդ պեցվալ ա իմ քշաես, էս ժըղըվուրթեն քշտեն: Էս լոխ Ռոդիկն ա հինձ տվալ, էս լո̈ւզուն Ռոդիկն ա պերալ պտանեն ճհետ: Մամա, քու պատերազմդ 41 թվին ա ըլալ, իմ պատերազմս էլ մհենգ ա: Հայը հիբի՞ յա կովա տուս եկալ, վեր մունք տուս կյտենք:

ՏԱՏԸ.— Գիդում չըմ թա երգինքն ա մեղավեր, թա օրենքը...

— Մամա, սահմանան տուս չկյաս: Վեր խաբար տվեն, թա հարը կյա, ըսեցե՝ իմ խուխես հորը չբիդի ծեն տան, ամեն հինչ մտքավս անց ա կացալ, էս օրը մեննս չի եկալ:

Մայր հող, խոխաս քեզ հավերժական նվեր ըմ պերալ: Վեր էրկու հետե պեցիր խոսալ ըմ, ծենս կտրալ ա, մհենգ ամբողջ ծենավ քեզ ղաշանք ըմ անում, խուխես աեղը փափուկ կպահիս: Շնորհակալ ըմ, աստուծ, ղորթ ըն ասում՝ առանց ճար դո̈ւրդ չընի, շնորհակալ ըմ, աստուծ, վեղը մեր սերտը կյրմրցնելի հետե ըս ստեղծալ:

Բոլան քսան տրեկան չընի, բալան էրկու ըմսական կընի, բլեն ըշկըտրածը օրիշ աանել չի, բլեն նշանածը մո̈հլում չընի:

Վեր նստալ ա, թա նկար քաշի, տարվալ ա յրգինքավը, տարվալ ա խոտ ու հավքավը, հեռե ընք կացալ, ուզեցալ չընք խընգարինք, խոխաս սիրալ ա սյաք-սյաք կոծը. ժողովուրթ, յրան սյա՛ք-սյաք լաց ըլիք: Ուրթումն ըմ կերալ՝ տղամարթ կենամ, սրտես կրակը թո̈ւնդ ա, կարում չըմ սուս անիմ, ժողովուրթ, ներող ընիք:

Վերչին նմակումն ասալ ըս՝ մամ, նոյեմբերին կյլական ըմ: Հալա̈ նոյեմբերը եկալ չի, սպասում ըմ, հուսս կտրալ չըմ, շտամ

կկյաս, շատամ մե հետ էլ կտեսնա՞մ: Հինչ անմիտ ըմ ես, չէ՞ որ ատտվածանից իմ պաժինս էս ա:

ԿԱՆԱՆՑԻՑ ՄԵԿԸ.— Ախնի, էսՓանը վեր ածում ըս Փու մոր տո՞շը, նա հունց ա տեննական: Ախնի, էսՓան ծլլոցեն Փու մար հո՞ւնց ա տմննա՞կան:

— Մամա, ես միշտ ասալ ըմ, Ռոդի՛կը իմ պապու նման ա, էլ հի՞նչ ախնիգ ըմ, վեր իմ պապու փայ չըմ տլական: Ռոդիկը փայ ըմ տամ պապուն, պապան աշկը թուներու յրան ա Փյեցալ:

— Կրիֆոր (ամուսնուն), ծովն ընգողեն պրծումնը չկա, գիդացալ ըմ, թա կրլական շըս Փթենաս պիրիս: Շնուրհակալ ըմ Փզանա, տու միշա էլ ընձ էտե պարի ըս ըլալ:

Տոոնը թխկա՝ սերտս էլ ննետն ա թխկըլական, սալդաթ տեսնամ, սերտս տղըհան ա ըննական, ծով տեսնամ՝ սերաս պըրտուղլական ա, այ իմ խուխես հնգերուՓ, ցլլըեկլլի տուՓ կըրվաՓ իմ տշկես, տուՓ ընձանա անպակաս ըհիՓ: Աստուծ, սահանց ճանապարը պարի անիս:

Ասում ըն՝ Փյնողն ա Փյըճում, մնողն ապրում ա, հինչ նամ՛որդ խոսՓ ա, պա էս ապրե՞լ ա, վեր ես ապրում ըմ: Քյըճողը Փյըճում ա, ծնողն էլ մեռնում, վեննանը յրա փաաչոր ա տեռնում, Փյըճող խուխեն ննետ ծնողն ա մեռնում:

Դե, վեր լսեցեր ուշ իմ դաշանՓ-պղատանՓս, այ իմ բալա, Փյըճում ըս, էլ դրետ եշիս ուշ, ինձ կեշիս, իմ հետաս կկյաս, առւ ինձ ըս ըլալ սիրիս: Պոատած կյանՓդ էլ կրախշիս Եղիշին (եղբայրն է), կրախշիս Ռազմիկին (տղան է): Ասաուծ, տու էլ սկաց: Հանց ըրեՓ Եղիշան լաց ընիիս տեսնամ ուշ: Ասալ ա, ա Փուր, մունՓ պապա չըՓ ասալ, բայց ինձ պապա ասող կա՞, ես բախտավեր ը՞մ:

ՍԳՎՈՐԻ ՔՈՒՅՐԸ.— Ռոդի՛կ, նամարդ ընիս տու, պա իմ ջահիլ Փվերս հնգիստին հղեն խե՞ ցեյլի նհաշ տվեր: Հո՞ւնց կպեցեր նրան հնգիստին վեղեն: Քույրի՛կ, լաց իլ, լա՞ցը դնջոթուն ա, լաց իլ, լաց ընինՓ, թթվանանՓ, բայց հանց ըրա, աստուծ մեզ միշտ լա՞ցին հղցեն չտեսնա, կգիդա թա լացը սիրում ըՓ:

— ԷնՓան դարդս մեծ ա, լուխնին բոլ-բոլ ա, աստուծ, ես հի՞ւր ըմ հինչ ըրալ, հո՞ւ վա ինձ ընեծալ, հո՞ւ վա ասալ՝ հետավ ըղնիս: Ես հի՞ւր ըմ հինչ ըրալ, հո՞ւ վա ինձ ասալ՝ թուրունն ըղնիս, հո՞ւ վա ինձ ասալ՝ նոխտդ կնդե, հո՞ւ վա ինձ ասալ՝ խըրվխարավ կյաս: Ասալ ըմ՝ էրկու տղա ըն, ուրուր դա-

յաղ կընին, պիծինը մեծեն մնակյալ կընի։ Մնակու տարե չի, մղարու տարե չի, մինակը ցավեն տմանալ չի, ֆարեն տմանալ չի, շառեն տմանալ չի, պա հո՞ւնց կանիմ, աստուծ։ Մեծ դարդ, տու ինձ թանրերը կըրվրցնիս, մեծ դարդ, տու ինձ փանդերը կըրվրցնիս, մեծ դարդ, թաֆուն բանդերը կըրվրցնիս։

Մեծ սար, թվավուր սար, մարաֆավուր սար, ջրգյավուր սար, (դիմում է Զարգյամարազ սարին), հնարավուր սար, հանդ, ծառ, ախպյուր, ծաղեգ, լաց ըլիֆ։

Ծառան նեղնը վեր կըղնե, լոխ էրկու նեղն ա, վեր մինը վեր ըղնե, տակեն ծառ կմնա՞։ Պա ծառը նեղնը չի՞ տալ, եռնան վեր ըղնել։

Լացին սուրը կտրվե։ Սերտս յարա յա, անդար ըմ, անբար ըմ, անֆոն ըմ, անտոն ըմ, Զարգյամարազ, ինձ էլ եր կալ խուխես ննետ, ներակ խուխես կոխֆե մոլներեն։ Ներակ տեսնամ մինչև պիծինս խուխես հանած էս շորերը կյենալը, ես կենամ ուշ։

ՍԳՎՈՐ ԿԻՆ.— Պա առանց մամա բալան հի՞նչ կանին,
Պա առանց թալա լալան հի՞նչ կանին,
Պա առանց բալա մաման հի՞նչ կանին...
Բալա-բալա, դաշանգ բալա, սերուն բալա,
Բալա-բալա, թերհար բալա, կեսհար բալա,
Բալա-բալա, հիշաեղ ֆյընիս ինձ տար,
բալա։

ԱՅԼ ՍԳՎՈՐ.— Պա ֆոլերն ի վեր ֆարշ չըմ ըլա՞լ,
Պա ֆարերն ի վար թող չըմ ընգա՞լ,
Պա երգինֆն ի եր պրպառա՞լ չըմ,
Պա ֆշեր-ցիրեկ լաց չը՞մ ըլալ,
Հու ֆար չըմ ըլալ,
Քար տեռնա մարը։

ՄԱՅՐԸ.— Ծանդր ֆար ար, տրին սրտես, մեծ կրակ ար, ըծեցեն ծուցս։

ՍԳՎՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— Էդ թուրունը ես էլ ըմ ընգալ,
Էդ կրակեն մաշին ես էլ ըմ էրվալ,
Էդ ցևֆան ես էլ ըմ վեր ընգալ,
Այ բալա, վայ, կորած բալա վայ...

ՏԱՏԸ.—Ամեն ուրթունա եր ըմ կացալ, Նհրտակեն եշալ, ասալ՝ ա Նհատակ, խոցս հակեն կենաս։ Վեր ըրիֆնակը տոնս ա եկալ, ասալ ըմ՝ ա ըրիֆնակ, խոցս հակեն կենաս։ Ամեն ուրուզ-

յուն վեր լուսնգյան տուս ա եկալ, ասալ ըմ՝ ա լուսնգյա, խխոցս հակեն կենաս: Լոխ սոտ տուս եկեն, աշխարքս ընձ էտե սուտից, էլ հավատ չմնաց, մհենգանց տենը մին պենու էլ կհըվատա՞մ: Էս օրանց տենը ընձ էտե Նհատակ չկա, բրիքնակ չըկա, ուրթանա չկա, լուսնգյա չկա: Իմ փայս կրակ ըղնին լոխ, հունցու կրակ ընգեն, փթոթվին լոխ, հունցու փթութվեցեն...

Ժողովուրթ, հրաքվիք տուք:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ավ-ավ, Բաբադուշի, Գյուղլկանե, Դլլըքփոսե, Դնգլե, Երնեկ տեսնեմ ով պիտի գա, Ձոփի (կոխի մի տեսակ. հակառակորդները հրում են իրար կրծքով և ուսերով, մինչև մեկն ու մեկի պարտվելը), Ըշկըճպովան, Ըրկընցուփե, Թոփե (գնդակախաղ), Թուխկըլաշի, Թուխկակոխ, Թուշ օնել քցիլ, Լուքտանե (երկարությամբ և բարձրությամբ ցատկելը. ցատկում են երկու ձևով՝ վազելով և երկու ոտքերն իրար միացրած), Խզըցուփե, Կլըկոնձի, Կլըպնդրեզի, Կլոխը տնիլ կուռնըտակեն, Կմբլեշի, Կյրթնուկ-Կյրթնուկե, Կնդըքթամբի, Կոև-կոև, Կոխ (իր տարատեսակներով. մհակ թխել, զոփի, քյանդիր ծիք տալ, լուքտանե, նշընքարե, վազ տալ և այլն):

Հաբի, Ծուխտըբթամբի, Ծուխտըկնդե, Մծըքարե (նշանքարե), Մհակ թխել, Մննըքարե (մոլլաբրի), Մշկըհոռե, Մուղանգախ, Ցխըկոև (եխա, Ցըխըղ անե), Չլնգի, Չխկլի, Ձոփենըթսե, Պլլըպաշի, Ջշըլախտե, Սպոլիշխանե, Վազ տալ, Տնըկտնակե, Տնըտընե, «Ցկըտ-մկըտ», Ցուփե, Քսկրենքի:

Վերջում մայրերը (խաղի գլխավորները) հաշվում են ու որոշում հաղթողներին:

Վաղորոք առանձնացնում են երկու մեծ քար (սորփ) («Աչի քարը իմն ա, ծեխե քարը քունը»): Յուրաքանչյուր հաղթանակից հետո «սուրբ» քարի մոտ ավելանում են փոքրաչափ քարեր՝ հաբեր: Շատ հաճախ հաբերը հաշվում են հանդիսատեսները և նրանցից արդարամիտ մարդիկ «դատ են անում»: Մայրերը խաղը վեր են լուծում, թե որ խումբը խաղի որ ձևից է տարվել և ինչու: Հաղթողները տարեց մարդկանցից նվերներ են ստանում:

**Մհըկկոև.— Այս խաղի վերջնական նպատակը հակառակորդի մահակը խլելն է, ոչ թե ձեռքով, այլ՝ մահակով: Պարտություն է, եթե ձեռքից ընկնում է մահակը, հարվածից կոտըրվում է, հարվածից շպրտվում է: Եթե հակառակորդը իրեն պարտ-**

ված է ճանաչում, մանուկը դնում է ճաղբողի ոտքերի առաջ: Նա այլևս իրավունք չունի այդ մանուկին տեր կանգնելու: Մանուկը չինում էին թանդի, սզնի, հոնի և ուրիշ պինդ ու գեղեցիկ ծառերի մասաղ շիվերից: Կային այնպիսի «Մհակ թխողներ», որոնք միաժամանակ կռվում էին չորս–հինգ մանկավորների հետ: Լավ «թխողը» իր վրա հարվածը չպետք է ընդունի:

Թուխկակոխ, թուփկըկոխ.— Գոտեմարտ: Կոխի ձև: Հակառակորդները բռնում են իրար գոտուց և ջանում գետնակոխ անել: Խաղի կանոնների համաձայն հակառակորդներին մարմնի ուրիշ մասերից բռնելու իրավունք չէր վերապահվում: Գոտին կտրվելու դեպքում խաղը դադարեցվում էր, և գոտին փոխարինվում էր նորով:

Խաղի գլխավորը կոչվում էր մար (մայր), մյուս խաղացողները՝ ճոտեր: Ճտերի քանակը պայմանավորված է խաղացողների թվով: Մոռացված մի սովորությամբ մայրը «թուխս» էր նստում և «ծռտում» (ածում) էր ձվեր: «Ձվերը» բռան մեջ թաքցրած քարահաքեր էին, որ կռացած ժամանակ (ձու ածելիս) մեկ–մեկ գցում էր: Իբր ածած ձվերից դուրս են եկել ճտերը: Սովորաբար մայրն ածում էր այնքան «ձու», որքան խաղացող ճտեր ուներ: Խաղի ժամանակ, երբ ճտերից մեկը մարմնական վնասվածք էր ստանում, մայրը նրան նստեցնում էր հատուկ նախանշված տեղում (ծառի տակ) և կարգում էր խնամակալ:

***

Գոյություն ունեին նաև մտային բազմաթիվ հետաքրքրաշարժ վարժանքներ, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև.

ա. — Մին խոսք ասե:

— Խնձոր:

— Խնձոռը խնձորեն ոտե, տու էլ իմ խնձորս ոտիս, վեր խնձորս կյա ծեր տոնը, հի՞նչ կտաս:

— Նոռնը:

— Նոռնը նուռնեն ոտե, տու էլ իմ նոռնս ոտիս, վեր նոռնս կյա ծեր տոնը, հի՞նչ կտաս:

Պետք է խաղացողն այնպիսի պատասխան ընտրի, որ հարցնողը պարտվի: Օրինակ, ասենք՝ պատարագ (բաղարաք):

— Բաղարաքը բաղարաքին ոտե, տու էլ իմ բաղարաքս ոտիս...

Հակառակորդը պարտվում է:

բ. Կարո՞ղ ես նախադասություններ կազմել, որի բոլոր բառերը սկսվեն միևնույն հնչյունով: Օրինակներ. «Թամբալ Թունին թեն թողից Թռուանց թուրնեն», «Տիրոջեն տատը տավարը տարավ տվավ տվրածեն» և այլն:

գ. Խաղամերը ցուցամատը դնում է իր ծնկանը, նրան հետեվում են մյուս խաղացողները: Պայմանն այս[illegible]: Ինքը թռչուն է դարձնում բոլոր ծանոթ առարկաները, բայց խաղացողները պետք է անմիջապես ընկալեն, որ, ասենք, ուղտը թռչուն չէ, և չբարձրացնեն մատները: Այսպես.

— Թռո, թռո, ճնճղակը թռո:

Բոլորը բարձրացնում են ցուցամատերը և իսկույն իջեցնում՝ կրկին բարձրացնելու համար: Իսկ նա շարունակում է որքան հնարավոր է արագ.

— Թռո, թռո, ծիտը թռո,

— Թռո, թռո, կաքավը թռո, թռո, թռո, սոխակը թռո,... և հանկարծ՝

— Թռո, թռո, կյումաշը թռո...

Բարձրացնողը պարտվում է և իր վրա «պոզ» է գրանցում: Խաղը այս ձևով շարունակվում է:

դ. Երեխան դժգոհում է.

— Փորս ցավում ա:

— Հինչա՞ յա ցավում:

Հետո հարցնողը սկսում է դանդաղ թվարկել, այնքան դանդաղ, որ «հիվանդը» հնարավորություն ունենա ընտրություն կատարել:

— Խնձոր ոտե՝ ցավե վուշ, տանձ ոտե՝ ցավե վուշ, չամենչ ոտե՝ ցավե վուշ...

Թվարկումը վերջանում է, երբ երեխան կատարում է իր ընտրությունը:

ե. — Էշին տաք նուր կտաս, թա՝ ցո՞րտ:

— Ցորտ:

— Պա մրսից, մրսից, խեղն էշը մրսից (ականջը ձգում է):

Պատժից փրկվելու հույսով՝ երեխան ասում է.

— Տաք:

— Պա էրից, էրից (էլի ականջը ձգում է):

Սա հնտրավորություն է տալիս, որ երեխան մտորի այնպիսի

պատասխան գտնելու, որ խեղճ էշը ոչ մրսի, ոչ էլ շոգի: Ջուրը լինի թքուչի:

## ՊԱՏԱՍԽԱՆԻՐ ԱՐԱԳ

1. Ծո̈վկունկեսը կպկկես ա, օխտը ծո̈ւկունը քանե՞ կապեկ կընի:
2. Մին կիլո պեմբակն ա ծա՞նդր, թա մին կիլո արկա՞թը:
3. Ծառեն իրեք քաշ կա, մինը վեր թվանգավ վեր քցիմ, տակեն քանե՞սը կմնա:
4. Էշին հաքյին վեր կտրած ընի, վեր ցեխումը վեր ըղնե, հի՞շ տղա կփռնիս պցրցնի՞ս:
5. Էս մարթին կնգանը ախպերը իմ դայի յա, էս մարթը իմ հի՞նչ ըս ա:
6. Էրկու հո̈ր, էրկու վերթի կյամ ըն ղոնաղ, տնատերը հըյաթումը իրեք ծառ ա ընո̈ւմ, ծիենը հունց կապին, վեր ամեն ծառու մին ծի ըղնե: (Ես, իմ տղան, իմ տղես տղան):
7. Մի գերեզմանաքարի վրա գրված էր. «Աստ հանգչի հայր, մայր, քույր, եղբայր, մարդ ու կին»: Քանի՞ հոգի են թաղված:

## ՏՎՐԱԾԵՆ ՄԻՆ ՕՐՈՒՄԸ ՕԽՏԸ ՀԵՏ ՓՈՐՑԻԼԸ

1. Փորեղ օխտը շոփ տնիմ՝ կարում ըս եր կաց:
2. Էրկու քար եր կալ. մինը փեշկանդ տակեն տիր, մինը՝ կըլխես, վեր վեր թակիս, շոնը բուրաշաղ ա վեր քցլմկան:
3. Վեր կարիս հացը մեր շանը ճկատան տաս, շոնը աշկեղ ըռաշին ըլբաստրակ ա տոնլական:
4. Էն ա մին թղաղվուց օնիմ, կարո՞ւմ ըս քթիր, տո̈ւս տո:
5. Կկարի՞ս փփաղեղ տակեն խոտ հարիս:
6. Կկարի՞ս էս ժենգալը պուք տաս:
7. Հտնց ա ծեն տվող ընի, հեյ ըրա:

## ՀԻԾԻԼ ԿԱՊԵԼ

Ձիախաղը գարնան-աշնանային հանդիսությունների անբաժանելի մասն էր: Խաղասկզբում հեծյալները հավաքվում են «ա-

խոռի» մոտ, նախապատրաստում ձիերը, «թմարում, թամբում», ջրում և դուրս գալիս ազատ ասպարեզ: Երբ բոլորը վերջացնում են, հեծնում են ձիերը և ջոկում, ընտրում «մայրերը» («խաղամարը»):

«Մայրերը» այն երիտասարդներն են, որոնց ուժային և խաղային առավելությունները ակնհայտ են և ընդունում են բոլոր խաղացողները: «Մայրերը» աջ ու ձախ թևերով իրար հանգուցված (որպես եղբայրության և համաձայնության նշան) կանգնում են ասպարեզի կենտրոնում: Մնացած խաղացողները «նուտերն» են, որոնք բաժանվում են զույգերի: Զուգընկերները ունենում են մոտավորապես հավասար կարողություններ ու ֆիզիկական կազմվածք: Զույգերից յուրաքանչյուրը իր համար պայմանական նշան է ընտրում: Օրինակներ. «Ես հիլին ըմ, տու՝ ծիլին», «Ես հորն ըմ, տու՝ ծöրը», «Ես եղն ըմ, տու՝ մեղրը», «Ես տանձն ըմ, տու՝ խնձորը» և այլն:

Զույգը մոտենում է մայրերին: Մայրերից մեկի և մոտեցող զույգի միջև տեղի է ունենում այս կարճ սուլիսը: Առաջինը խոսում է զույգը:

— Հալա, հալա:

— Բեզիս հալա:

— Հիլին ը՞ս, թա ծիլին:

— Ծիլին:

Ծիլին անցնում է «ծիլի» ասող մոր կողմը:

Այսպես նաև հաջորդ զույգը, երրորդը, հինգերորդը, վերջինը:

Մայրերը պատասխանում են հերթով և ստանում հավասար քանակությամբ «նուտեր»: Այս արարողությունը վերջացնելուց հետո «մայրերը» գնում են իրենց խմբերի (նստերի) մոտ*: Խորհուրդներ են տալիս, խորհուրդներ լսում, ծանրութեթև անում իրենց կարողությունները, պայմանավորվում, թե ով ինչ

---

* Բայց ո՞ր խումբը պետք է սկսի խաղը: Այս նպատակին է ծառայում «քյաս կյալը» («տակելը»):

Երկու մայրերից մեկը մի մանրաքար է թաքցնում ափերից մեկի մեջ և բռունցքված ձեռքերը մեկնում մյուս՝ գուշակող մորը: «Տակողը»՝ գտնողը սկսում է՝ խաղը: Գտնելու համար գուշակող մայրը հոտոտում է բռունցքները, ծանր ու թեթև է անում, ականջին է դնում՝ «լսում» դեպի երկինք պահելով նայում է բռունցքին, մասամբ՝ գուշակելու, մասամբ էլ դիմացինին շփոթության մեջ գցելու և թաքույցը գտնելու համար:

ձևերով կարող է ավելի լավ դրսևորել իրեն, արդյունավետ մասնակցել խաղ–մրցությանը: Մոտ մեկ ժամ կողմերը վարժվում են, ապա՝ մայրերը հանդիպում են իրար, շտկում մրցության ծրագիրը: Իսկ խմբերից յուրաքանչյուրը մի գծի վրա «հիծիլ է կապում» և սպասում, թե «մայրերը» ինչից կսկսեն խաղը:

Այս նախահիմք արարողությունը կրկնվում է շատ ու շատ խաղեր սկսելուց առաջ:

Մրցությունը բաղկացած է լինում մոտավորապես հետևյալ խաղաձևերից:

Հիծիլ կապել մի գծի վրա, ուղիղ շարքի կանգնել՝ ձիերի գլուխները բարձր:

Ձին խաղացնել՝ ծի պար ածել: Սա լինում է անհատական և խմբովին:

Երկու կողմերի «յորղա» ձիերն առանձնացնում են և մրցում իրար հետ՝ ով շուտ կհասնի նպատակակետին:

«Յորթ–յորթ քշիլ». ծանրաքայլ վարգի տեսակ:

Ծառս անել. քմակե վնսերեն յրա վեննը կցնել:

Ծին քշիլիս փորեն տակավը անց կենալ, նորը նստել:

Զլավը պեց թողած ծին քշիլ:

Ծին առանց զանգու քշիլ:

Ծին քշիլ՝ թամբեն յրա մին վնձանե նստած:

Թամբեն ծլպատակ նստել՝ քշիլ:

Թամբեն՝ փորեն յրա պառանց ընգած քշիլ:

Ծին քշիլիս թամբեն յրա վեննը կենալ նստել:

Ծին ճուխտըլափակ քշիլ:

Ծիյավ փիրվազ անել, սեյր անել:

Իրար ձեռքից քաշկիճակ խլել և շուտ նպատակակետին հասնել:

Մենամարտել փայտե թրերով, մահակներով:

Արագ թամբել կամ արձակել թամբերը:

Ձիարշավի ժամանակ նաև արգելքներ են հաղթահարել.

Դնդաղեն կլխավը լոք տալ:

Քյնդիրին կլխավը լոք տալ (բարձրությամբ):

Քացի տալ (հեծյալի ցանկությամբ ձին պետք է աքացի տա մատնանշած ուղղությամբ) և այլն:

«Հիշտեղ ծի յըն խըղցրալ, ընդըղեն ասալ ըն հծըլատեղ, դոփան, տաշտակ, թափա (տափ)»: Ձին խաղին նախապատրաստելու, ջրելու, հանգստացնելու վայրը կոչվել է ախոռ (ախուռ):

Հծրլատեղ ա ըլալ Մուղանա տփերումը, Սարեն ֆմակեն, Ավդուտա տշտակումը, Կյումեն ֆմակեն, Տասնակումը, Կղարծվա յալումը: Ախուրը Աշանա ցաֆոտումն ա ըլին, մնել Ըրչըֆարա կարեն:

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Ալ եզնը,
Ջալ եզնը,
Հինչֆան պեռնին՝
Տար եզնը: *(Գդալ)*

2. Ալալը-բալալը,
Տար խաղ ըրա,
Պեր կախ ըրա: *(Թառ, երաժշտ. գործիքը)*

3. — Ալ շաքու, շալ շաքու,
Հի՞նչ տեղա յըս կյամ:
— Տովան ըմ կյամ:
Պա խե՞ թրչված չըս:
— Մաշան ըմ կյամ: *(Թուխպ, մառախուղ)*

4. Անձոր ճեղաց
Անկրակ պեղարն: *(Մեղրահաց)*

5. Առաշդ կտրում ա, ֆամակդ արուն անում: *(Մկրատ)*

6. Ասում ըմ՝ եկ, եկ, կյամ չի,
Ասում ըմ՝ կյամ'էր, կյամ'էր, կյամ ա: *(Ճրթունքներ)*

7. Ես կերե, իմ կերածս էլ տու կերեր,
Հöլա փան-փան էլ ըրեր: *(Մեղր)*

8. Ես ֆյընիմ, ինֆը մնա: *(Անուն)*

9. Ես ֆու տակեդ,
Տու իմ տակես,
Տստուշդ իմ ծակես: *(Երկանք)*

10. Էն ճինչն ա՝ ծիֆ տամ կրնանա: *(Սխախոտ)*

11. Էն ճինչն ա՝ կարիմ ըրկնանա: *(Հոր)*

12. Էն ճինչ պտուղ ա՝ ճինչքան խակ ա, էնքան քաղցր ա:
*(Երեխա)*

13. Էրկան աղեգ,
Պտոկը ծաղեգ: *(Հյուս, ծամ)*

14. Էրկան շմալ՝ շոխկը չօնե: *(Ձայն)*

15. Էրկու ախպեր՝ ո́ւրո́ւր տեսնում չըն: *(Աչքեր)*

16. Էրկու խոխա,
Մին չոխա: *(Հաճար-հացահատիկ)*

17. Էրկու կլո̈խ, օթ վեննը,
Տ'եր տախտակ, տվեր քար,
Ինքը քեցավ քաշաքաշ: *(Կամներ և եզներ)*

18. Ընգուճադ փոճիմ՝ պլըզի:
Տրք.
Անգուճդ ճլո̈րիմ՝ խլըշիս: *(Լամպ)*

19. Ըշխարքես ծաքյան մինչև մհենգ՝ երեսուն օրը թամամ չօնե: *(Լուսնյակ)*

20. Ըռաշիդ շոքիմ, ծակդ պենամ: *(Սնդուկ)*

21. Ըստեղ պուպուզ, ընդեղ պուպուզ,
Շան տղա, պա ճիշտե՞ղ պուպուզ: *(Ավել)*
Տրք.
Ըստեղ պուպուզ, ընդեղ պուպուզ,
Տռանը քմակեն պուպուզ:

22. Թուրուն օճիմ կուլ-կրակ,
Մաշը լիզյը կրակ: *(Նուռ)*
Տրք.
Թուրուն օճիմ պողավ լիզյը:

23. Իմն ա՝ օրիշ ա ուտում: *(Ծառ-պտուղ)*

24. Ինքը գյոլումը,
Հա̈քյին շոլումը: *(Ճերեփ)*
Տրք.
Կլոխը գյոլումը, ճաքյին շոլումը:

25. Ինքը սև, հղեն սիպտակ: *(Օձ)*

26. Լպզտիմ՝ ծակդ կոխիմ: *(Ասեղ-թել)*

27. Ձին քյընից, թամքը մնաց: *(Գետ-կամուրջ)*

28. Ձմեռն ա՝ կյարունքը պատեն,
Ամեռն ա՝ կյարունքը պատեն: *(Գորգ)*

29. Կանանչ հինիմ, կյարմուր կյործիմ, սև կտրիմ: *(Մոշ)*

30. Կլխըվեր ըմ օնում լցնում ա, կլխըեր ըմ օնում՝ տրտա̈կում ա:

Տրբ.

Փրսըվեր ըս տնո̈ւմ՝ լցնում ա, պրտըեր ըս տնո̈ւմ՝ տըրտակում ա: *(Փափաղ)*

31. Կծե-քրտննքե: *(Բիբար)*

32. Կյարմուր օտիմ, սիպտակ ծրտիմ: *(Ցորեն-ջրաղաց)*

33. Կտրե-լա̈ց իլ: *(Սոխ)*

34. Հարը՝ դիք, մարը՝ կեռ, խոխան՝ պել: *(Խաղողի վազը)*

35. Հենց ախպեր մին ծօ̈րու կլխե պատ ըն տնում:
*Տրբ.*

36. Հենց քուր ըն՝ մին հվավ պտր ըն կյամ:
*(Գուլպայի ճաղերը)*

37. Հողված չի,
Աղված չի,
Դաղված չի,
Կոխած չի,
Թխած չի,
Էն հի՞նչն ա: *(Մեղր)*

38. Հակները փադ, մաշմուրթը մես: *(Օրորոց)*

39. Մին տափ ա՝ քրերավ լիգյը: *(Երկինք և աստղեր)*

40. Մին պտրհան օնիմ՝ պրնձավ լիգյը: *(Բերան)*

41. Յոր ըս օնում՝ լաց ա ընո̈ւմ, վեր ըս տնում՝ սուս ա անում: *(Թառ)*

42. Ծոշ տա շմալ, կոչ կյա կծեգ: *(Դդում)*

43. Ծունչ օնե, արո̈ւն չօնե: *(Քամի)*

44. Ձաթուն ճո̈ւր տամ, դանան օղչի: *(Ձմերուկ, դդում)*

45. Ձորս ախպեր՝ մին փփաղու տակե: *(Սեղան)*

46. Ձորս խոխա մին գյոլու քարավ րն տամ: *(Կովի կուրծքը՝ կթելիս)*

47. Պապը սարեն,
Կյեվաթը կտարեն,
Կյլվազանը վեռեն,
Ճոտերը փորեն: *(Խաշխաշ)*

48. Սաղ աշխարքը շոռ ա կյամ, կյամ մղակումը պպզում: *(Ձեռնափայտ)*

49. Սեղ օնիմ, ասեղ օնիմ,
Իսկ տու լաշեդ ղաշև օնի՞ս: *(Եղինջ)*

50. Սև հավը ծկլթաց,
Ծո̈ւն վեռումը պլթաց: *(Հրացան)*

51. Վեղե լո̈ւլա,
Մսե գյո̈ւլլա: *(Մուկը և իրա բույնը)*

52. Վեռեղ հարիմ՝ արուն անիս: *(Մկրատ)*

53. Տասը եզնը, տասեն ճակատն էլ թավ ալ *(Մատները)*

54. Տու ինձ պահե տնըմաշի,
Ես քեզ պահիմ մրթըմաշի: *(Կինը՝ տղամարդուն)*

55. Ուռթանան՝ չորս վննանե, կեսօրեն՝ էրկու վննանե,
Րուգյունը՝ իրեք վննանե: *(Մարդը)*

56. Ուռթանա քշերավ լոք տամ, եր ընիմ քա մոր օսերը: *(Կուժ)*

57. Փաղի քոռշ, մոե մքոռշ,
Քացի տամ քոռշեն,
Քոնը տանե մքոռշեն: *(Օրորոց, երեխա)*

58. Փեշկադ փռնիմ,

Քշտադ պքիմ,
Օխտը փքիմ: *(Ծղինչ)*

59. Քյընում ա կյալիս,
Տատիկի փորին
Բարև ա տալիս: *(Խնոցի)*

60. Քշերը վեր փռիմ,
Ցիրեկը հվաքիմ: *(Աստղեր)*

61. Քոլա-քյեթուկ՝ շենու փշխան: *(Գյուղամիջի գերան)*

## ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1. Ակուփ ապեր,
Տու ընձ էտե
Մին խուփ կապե,
Մին տեփ կապե,
Մին կեփ կապե.
Անումդ աընիմ
Խուփըկապե,
Տփըկապե,
Կյփըկապե
Ակուփ ապեր:

2. Բախադ սիրիմ Բաղդասար,
Բախտդ մնաց Բախտասար:

3. Դերին ծöրումը դերին նöրուն նöյլը ծոռ:

4. Իքտան, բտքտան, քäքöլադ ծիք տան:

5. Ծաեն ճոտեն ճիտը ծոռ:

6. Մուկունը քցիմ, ծöւկունն ոտիմ,
Ծöւկունը քցիմ, ծöւկունն ոտիմ:

7. Սերուն ա, սերում ըմ:

8. Վերն օզում ըս՝ շտրդը քու,
Զարդն ըս օզում, շարդը քու,
Զարդը լäվ ա՝ շարդը քու:

9. Տնձըծառեն էրկու ծանդր-ծանդր սանձ,
Տործառեն էրկու մանդր-մանդր տանձ:

Ա, ա-ա—կեղտ, կղկղանք
Աճիկ—աչիկ, աչք
Անիկ—աղջիկ
Ամա—կեր
Ամ—կեր, ուտում եմ, ուտելի է
Ամ-ամ, ըմ—ջուն
Ատտ—ինձ տուր
Բա՛—այծ, ոչխար
Բաքայ-քնել, քնում եմ
Բաքու, բաքուլ—ռտնտման
Բիժի—նորթ
Բո, բոլ, բոլ տ—բավտկան է
Բու, բուա—ջուր
Բուքու—թշնամի է, վտանգավոր է
Դա, դա-դա—ձի, էջ
Դադա—ծանոթ, անծանոթ քեռիներին
Դը, դը-դը—մեքենտ
Զզա, զիզա—գեղեցիկ, ուշագրավ առարկա
Ի—ինձ տուր
Լո, լոլո—խնձոր
Ծածառ—կանգնել է, կանգնում եմ և այլն
Ծիծի—կուրծք, ծիծ
Ծիպա—նավ, թռչուն
Ծուկ—ես քեզ տեսա, գտա
Կա (տա)—տառ, վերցրու
Կակա—շաքար, կոնֆետ
Կակու (տատու)—կատու
Կիծի—կծիր, կեր
Կիտի—կտրիր, պոկիր
Կոլտլալա—կորել է, չկա
Կուկու—երեխա, տիկնիկ
Հա—այո
Հե—ա. ձայնարկություն, բ. այծ, ոչխար
Հո—կով, անասուն
Հիտի—ինձ գրկիր
Հո՞լ ա—ո՞ւր է, որտե՞ղ է

Հոպ, հոպա—ա. արդեն, վերջացրինք, բ. գրկիր ինձ
Ճունու, ծպա—հավ, ճուտ
Մամա—ա. մայրիկ, բ. խմիր, կեր
Ման, մանր—մատ
Մեն, մենր—ոտք
Միմի—խմիր
Նա-նա-նա—հայհոյում է, բռունցքը խփելով մյուս բռունցքին
Նե, նե—այ, տեսնում ես, նա է (մատով ցույց է տալիս)
Նենի կուկու—քնիր փոքրիկ
Նոն, նոնր—նուռ
Չուշու—հագուստ
Պապա—հայրիկ
Պիթի—թխվածք, գաթա
Պիծի—փոքր, փոքրիկ
Պտա (պծա-պծա)—վերջացավ
Պու—ընկույզ, պոպոք
Տաաա—հաց
Տե—դա է, այ դա է
Տիզա—լույս, արև, լուսնյակ
Տիտի—նստիր
Տիտիկ—աթոռ
Տոտո—տոտան, օրորոց
Ցուցու (շուշու)—հագուստ
Փափա—կերակուր
Փինի—բռնիր, պահիր
Փու—այրում է, վառում է, վտանգավոր է
Քխա—վատ է, ուտելի չէ
Արտասանում է նաև գրեթե բոլոր բնաձայները.
բա—կով, ոչխար, մա—գառ, հորթ, միաու—կատու և այլն:

## ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբալ, Ազնեվ, Ալուբան (Արուբեն, Արաբանի), Ակազի, Անանի (աչագեղ), Առան, Առուշ, Ասպի, Ասքանազ, Արախնեն, Ատտի, Ափար, Բաղաս, Բալի, Բաղանի, Բադի, Բաշանի, Բոզի, Բոլի, Բութան, Բուղդի, Գադի, Գափան, Գորգի, Դադի, Դոդի, Դոխի, Եզնամ, Եթար, Երգի, Զանդի, Զոնբի, Էրմի, Թանդալ, Լադի,

Լոլի, Խալդի, Խաշար, Խաչանի, Խարբ, Խեչում, Խլդան, Ծալա-
պան, Ծöկան, Կածակի, Կայանտ, Կանդöլ, Կապան, Կյակյուշ,
Կեռան, Կիկան, Կուտուշ, Հայասի, Հնազտնդ, Հորդի, Ղա-
յամ, Ղոնշա, Ղուդա, Ճամանի, Ճիվլի, Մաֆաղաթ, Մաթեգ,
Մակու, Մոլի, Մոավ, Մուխրի, Մանթաշ, Յանդի, Նանա, Նա-
նար, Նանիկ, Նանուշ, Շադանա, Շադի, Շալդի, Շաշուն, Շա-
փախտոր, Շամի, Շինդի, Շուղի, Շեգի, Չափանի, Պուտի, Ջոլի,
Սանթի, Սայի*, Սանամ, Սավեգ (Սյավեկ), Սարում, Սողամեր,
Սորի, Սորփի, Սուպուր, Վանդի, Վառի, Վարսեն, Տոպի, Տո-
տալ, Փարի, Փթուլ, Քաթան, Քանթի, Քթուլ, Կավարտ, Նազենի,
Նախշուն, Նասստպան, Օշափ, Օսի, Ճունուփ:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀՆՉՅՈՒՆԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Աբրահամ—Ափի
Ալեֆսան—Ալի, Հասան
Անդրանիկ—Անդուն, Անդո
Անթառամ—Թառի
Աշոտ—Շոթա, Շողա, Շöտի
Աստղիկ—Ասթխի
Աստվածատուր—Ծատոր
Ավետիս—Վիտիս
Արիստակես—Գեցի
Արշավիր—Աշո
Արտավազդ—Արտո
Բագրատ—Բագի
Բալասան—Բալի
Բաղդասար—Բադի, Բաղի
Գաբրիել—Կյափի, Գափան
Գևորգ—Կյեվի
Գուրգեն—Գոգի
Դանիել—Տանի
Դավութ—Դավի

Եղիշե**—Եղի, Եղո
Եփրեմ—Փիրի, Եփրի
Թանկազին—Թանզի
Թևան—Թևի
Խաչատուր—Խաչի
Խոսրով—Խոսի
Կարապետ—Կաբի
Կիրակոս—Կիկո, Կիկոս
Կրիֆոր—Կուֆի, Կուֆան
Հակոբ—Ակու
Հմայակ—Հումի
Համբարձում—Փացի
Հայկանուշ—Հայկի
Հայրապետ—Հաբի
Հարություն—Աթուն, Թöնի
Հեղինե—Հեղի
Հերսիկ—Հեցո
Հովակիմ—Ակի
Հովհաննես—Վանի, Վանես

---

* Եսայի անվան կրճատ ձևն է (Տ. Խ):

** Եղիշե անունը բարբառում արտասանվում է Եղիշա (Տ. Խ):

Հոփսիմե—Սիմա
Հուռում—Հուռի
Մաթեոս—Մաթի
Մարտիրոս—Մատի
Մարկոս—Մակի
Միքայել—Մուքի, Մուքան
Մնացական—Ցական
Մովսես—Մոսի
Մուսայել—Մուսա
Ներսես—Նեսի
Շափախտոր—Շափի
Պապական—Պատի
Պետրոս—Պետի
Պողոս—Պուղի
Ջավահիր—Ջավի
Ջումշուդ—Ջումի
Սաթենիկ—Սաթի
Սամսոն—Սամուր
Սանջան—Սեջան
Սարգիս—Սաքի
Սողոմոն—Սուղի
Սոնա—Սոնի
Ստեփան—Սեփո
Սեւորդի—Սեւի
Վարդանուշ—Վարթի
Վարսենիկ—Վարսի
Վազգեն—Վազի
Տիգրան—Տիկո
Ջառնիշան—Ջառի
Նազենի—Նազի

## ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ՊՏՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

*Թթենի (Թութե)*.— Ունի հետևյալ տեսակները. բաղանի, խարթութե, ճաղար թութե, եղնջենե, սիպտակ թութե, սև թութե:

*Բուրմա թոթ*.— Մեծահասա թութ, որ լինում է երիտասարդ շիվերի վրա:

*Դերու շոն*.— Հոծ ճյուղերով ու տերևներով տալ՝ թթի ծառի վրա:

*Խնձորե*.— Խնձորենու տեսակները.— Բզլզյենե, ըմոնենե, խուռովենե, ծմոնենե, կթենե (իր աարաաեսակներով), կենչենե, կատենե, կրկժենե, հմըղենե, մեղուե, շորվանի, քլըխնձոր, քշըծվենե:

*Թուզի (Թզնի)*.— Ըշունքենե (ըրկովենե), սև պլըթենե, սև կատենե, սիպտակ մծըպլիթ, սիպտակ կատենե, քրըթուզի (իր աարատեսակներով), շնըթուզի (վայրի— անօգտագործելի) և այլն:

*Խաղողենու տեսակները*.— Բզլզյենե (սև, սպիտակ, կարմիր), բնդղենե, ըծենե (սև ըծենե, սիպտակ ըծենե, կյարմուր ըծենե), ըմրոնենե, ըշենե, թավրիզենե, լկենե,

լկոռ, խունգեններ, ծծեններ. ըծեննու նմանակը՝ սև, սպիտակ, կարմիր, խնդողը (իր տասնյակ տեսակներով), կմրրեններ, կնճեններ, կոռվեններ (սև, սպիտակ, կարմիր), կտվեններ, մծրգյուղեններ (սև, սպիտակ), մղրխաղու, յայլաղեններ, շրեններ (մծրգյուղա, պծրգյուղա), չմնչեններ, ոընգեններ, սիպտկեններ (մծրգյուղա, պծրգյուղա), վրնդեններ, ուղտաշկ և այլն:

*Կծոխուր*

*Հլոճի*

*Խոռնիգ*

*Նունուն* (ճաղար, մալաս, շահ, վայրի)

*Ճմթլուկն* (իր տարատեսակներով), նույնը՝ *չթաղուկ*

*Տանձենու տեսակները*.— աղամեններ, բղուվեններ, բմոնեններ, բշունքեններ, լոռնեններ, խլեններ, խրխնչեններ, ծմոնեններ, կյրմրեններ, կտռեններ, կուլեններ, ղուլանի, մալանչեններ, մղրակեններ, մղրտանձի, մուղանա, մուխրտանձի, շfrեններ, չիրատանձի, պմրկեններ, սայի (ծսայի), frըտանձի, frըփեններ, fուլըտանձի և այլն:

## ՀԱՑԱԲՈՒՅՍԵՐ

Առանի, գիրգանի, զարդա, բշունfկյարի, կյոնըկյարի, սվըկյարի, սվաfետ (ցոrեն), հաճար, կոrեկ, կտավատ, սիսեռը (վխներ սիսեռը՝ տափլակ սիսեռը, պուլուր սիսեռը և այլն):

## ՎԱՅՐԻ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ ՈՒ ԹՓԵՐ

Բանդի, բցըխանձի, գկոռ, թեղե, թղուշե, թfեոնե, լկրթնե, խնդրըղնածառ, ծփեններ, կաղնե, կենե, հացե (բղըհացե, ռուսու հացե), հճարկե, հոռե (հվրնհոռե, հրըհոռե, քաղու հոռե), հվըկտըկոռե, հնունե, ղրմխե, ճապկե, ճրըճապկե, ճխեվլի, ճոըճաfյի, մհըurե, շլnrե, շմշոռե, չճարի, պեխե, պոշնե, ջղանե, սզնե, սղուզե, տնջրե, տապեններ, տrfչանի, ցrդնի, ուլունե, ունապե, օխտըfլվանե և այլն:

## ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ

Անմոռուկ, բա̈նգի (խափպուկ), բմբուլ, գխտոր, գուզլագ (աղվեսագի), երիցուկ, էշու կաթնուկ, էշու կտծո̈ւկ, էվուլ, ըլբստրըկախոտ, ըլըկյեգ, ըղվըսաքոլ, ըղվըսճաքյի, ըվուլո̈կ, ըրկընատոր, թալ, իշափլավ, լաշտրակ, խազա̈գ, խինդեղնը, խընձաղա, խնձործաղեգ, խնչլոզ, խրարու խոտ (վայրի գարի), ծըծոկ, ծղկեվուլ, ծմըկթափան, ծնեփակ, ծնըվեռեգ, ծռավարթ (մոլոշապարդ), ծտըճինչեխ, ծտըվեննը, գ̃աձո̈ւկ, գ̃ապար, գառնը, կծեծ, կծո̈ւզնը (կռատուկ), կյզըղոկ, կյրթնուկաքաք, կյնազոխ, կյունոկ, կյրթնուկկոռնը, կյուլու թես, կյումաշու պուլուլ, կնդըմնեշակ (նարգիզ), կոռթնը, կոուզնախոտ, կռուկանե, կըրմըզուկ, հանարախոտ, հոռթնը (ղոռթնը), ղլղան, նաման, նըռնըռոկ, նրըկուտեմնը, մայասոլի, մամուռ, մարդըվտնխոտ, մըզամուղ, մղրավարթ, մշհանուկ (մշըհանու-զըրզարդար, մշըհանուկ-լոբի), անթառամ, մոռե, մուխազ, նանա, շառու խոտ, շիրախոտ, շնըխյար, շնըկուտեմնը, շնըպուքյի, շշըխինդեղնը, շըրիշ, շռմըշուղ, շուշան, չլնգքուռն, չխարակ, կնձմնձո̈ւկ, յզնընակատ, յղըծո̈ւ, պենչար (անփոշ), պենչար (փշփոշուտ), պլանուկ, չշմանգյուլ, պըլփուրփուտ, պռվապորտ, պռութող, պուքյի, սամեթ, սիբեղնը, սիրի-սիրի, սիսեռնը (պլըսիսեռնը), սըխտոր, սմնդուկ, սմսմոկ, սոյնը (իր մի շարք տեսակներով), վուզնախոտ, վզըկտոց, սվախոտ, սնդրիկ, սպանաղ, տանդո̈ռնը, տեսնը, տղնըծաղեգ, տոմբալան, տփաթոթ (մոռու մի տեսակը), փթրաղ, փնջեվուլ, փշփշիկ խոտ, փշփոշուտ փո̈ւրփուտ, քաշու սխտոր, քըրմամուռ, տուրուն, քալուչ:

## ՄԻՋԱՏՆԵՐ

Այլերմաղե, բլբլո, բլդըբուղի, բով, բրբթո̈, դզզան, դոռան, ըլըկանև, ընգուճմտե, թթռմաղե, թիթեռբուչի, թիթեռմուկուն, լողուկ, լպրտոկ, լո̈ւ, խբրատու, խրխնջանուկ, ծկուտի, կետ, կոըհա̈քյի, կուտնըշափե, հզրվննանե, մլմլո, մղմող, մոռեխ, մոռեխածի, մուշըթսե, չխարակ, պեռնը, սլո̈կնը, վեթես (թռքըկըլոլե, ցխըկլոլե, քքըկլոլե), վոըճճո, քշրպղոճ, սև մոռեխ (ծըղրիդ):

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Աղվես, արջ, դալա, եղնը (մարալ), ըլքաստրակ, ըռնատ, լիսեմնը, խոզուկ, կյեզան, կյերթնուկ, կյուլ, կոզնի, կորե, մկըծեռնը, վրի կատու, տփրքշերե, ուղտակյուլ, քշերե:

*Սողուններ.*— Լոկ, ֆսլեզնը, քրըթանթռուշ, օխծ:

*Օձի տեսակները.*— գյուրզա, Երմար, թալխա, մուխրօխծը, նետօխծը, սև օխծը, քառ գյուրզա:

## ՎԱՅՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Արագիլ, ըլոր, ժեռ մոշահավ, լծե, ծիծեռնակ, կաքավ, կիվ-կիվ, կոկոռ, կովարար, կռունկ, հրթնքան փախած ախնիկ (սոխակի տեսակ, որ այս կանչով է փնտրում իր սիրածին), ձկնըկուլի, ղուզղուն, ղիրղի, նըրթ-նըրթ, նրածետ, նրäհավ, մոշահավ, մորեխածետ, յղըլիտր (ասում են նաև մեղվաքաղ՝ հենց թռչելու ժամանակ մեղուներ որսալու համար. նման է գուրգուր թռչունին, նրանից փոքրավուն), յուպուպ, յփլաղ ծառու, յփլաղ ծմակու (խոշոր), ներկարար, չքունխափի, չոլու կաքավ, չփրծակե, պապանըզտ, պրտական (երգող թռչուն, որ իբր ամբողջ օրը հայհոյում է պարտք ունեցող մարդուն. «Տոնդ քանդվի, պրտական...»), ռանահավ (հավ, որ ապրում է Առանի դաշտում), սալամնը, սարու կաքավ, սոխակ, սվաքաշ, վելել, վի, վույ-վույ, տեղեն ծետ (դեղնափորիկ. այս գեղեցկագույն թռչունին ասում են նաև «Տեղեն նտանուց»), տետրակ, տոռոն, տփածետ, տփըդռան, քաշ, քշրմուկուն (շղջիկ, ըլըկուշկուշ, թևը մաշկեն տակեն), քշեղակ:

## ՈՒՏԵՍՏ

Ղարաբաղում կերակուրները կոչում են սնդտմբերքի և բանջարի անուններով: Օրինակ, Ավելուկ նաև նշանակում էր ավելուկով նաշ:

Ավելուկ (ըվույöկ)
Բուղլամա — գոլորշու՝ շալքի մեջ եփած միս

Բուռնավ լոբի (երկուսն էլ կտնաշ)
Բուռնի (նաշ)

Բռնձի (շոր)—կաթնով, մեղրով եփած
Բռնձի (խորոված)
Դեռի լոբի
Դոլմա
Եղածու
Եղապատառ
Ձկոքթո
Թաթարյախնի
Թալ (եփած՝ համեմունքով, տապակած), մզուկ
Թանավ (թնրխաշու)
Թթո—խառ թութավ, թրթնջուկավ, սզնավ, քոլախնձորավ
Թթուվավ լոբի
Լոբի (լուբանաշ)
Լուբբխաշու
Խաշ
Խաշած ծու (սոխով, պղպեղով և այլ համեմունքով)
Խաշլամա (խաշած միս)
Խաշիլ
Խաշու
Խավեծ
Խնչլոզ
Խորոված— տավարի, ոչխարի, այծի, խոզի մսից, վայրի, ընտանի թռչունների, վայրի կենդանիների մսից, ձկան, կարտոֆիլի, պոմիդորի, սըմկի, ձներեկի և այլն:
Խորոված թոք
Ծնեփակ (խաշու, տապակած, ձվով), լշտրակավ (լոշտակ)
Ծտըխաշու
Ծուկուն (խաշած, խորոված, տապակած)
Կաթնավ ճաշ (կաթնավ)
Կանապ
Կարտոֆիլ (խաշած՝ համեմունքով, տապակած, խորոված և այլն)
Կթնըփրթուշ
Կլոլակ
Կնեխաշ (կնուճախաշ)
Կոռրեն
Կրկուտավ շորվա (մսով, անմիս)
Կրկուտավ ճաշ
Կուրկոսա
Հալվա
Հավ—փորը շինած
Հեռածած
Հունըթթո
Ճլմթոր
Ճմռո
Ճուռանոր
Մածուն
Մզնիրես
Մզնըփրթուշ (փրթուշ)
Մհաստրթթո (մհաստրթթո, բռնձում մաշին)
Մոշաթթո
Մոշանմոռ (մոշափրթուշ)
Նախկամ
Նիլա
Նփոթ
Ողորմա
Պոմիդորով լոբի
Պոմիդորով եղածու
Պուտ
Սիսեռնով ճաշ
Սիսեռնավ շորվա
Սպանաղ
Սովուզ
Տապակած կանանչ լոբի

Տապակած չոր լոբի
Տհալ
Ոտեմտիտեմ
Փթրոկ
Փլավ
Փո̈ւրփուռ
Քաշովի (պրնձավ նա̈շ)
Քաչալ խաշու
Քյլնգյոշ

*Տհալ*— Կենդանական յուղը (տավարի, խոզի) հալեցնում են, ածում կավե ամանի մեջ (կարաս, տոճ, խիծի և այլն) և կիսաեփ միսը մտցնում մեջը այնպես, որ երեսապատվի դեռևս տաք յուղով: Չափավոր աղ են ցանում և՛ յուղի, և՛ մսի վրա: Բերանը փակում են և պահում ձմեռվա համար: Ցուրտ եղանակին սառած յուղը իր մեջ անվնաս պահում է կիսաեփ միսը: Ձմռանը հանում և նրանից կերակուր են պատրաստում ըստ ցանկության:

*Կնեխաշ*— Լինում է մսով և անմիս: Հնում այն եփում էին կընունների մեջ, դրանից էլ անունը՝ կնեխաշ-կնունախաշ: Կնեխաշով կնունները թաղում էին վառած թոնրի մոխրի մեջ, եփում էին նաև մեծ կաթսաներում, վառարանի վրա, ձմռան երկար գիշերներին: Կնեխաշն ուտում են վաղ առավոտյան, ինչպես խաշը:

Անմիս կնեխաշի բաղադրության մեջ մտնում են սիսեռը, ցորենը (հաճարը), հատիկ լոբին, fիչ fանակությամբ էլ եգիպտացորեն (ըստ ճաշակի): Կրակի վրա պահվում է մինչև հալ եփվելը: Եթե թանձր է, նոսրացնում են և հանած լցոնն օգտագործում առանձին, չոր վիճակում: Իսկ հեղուկային մասը ուտում են որպես ջրալի կերակուր (խաշու): Անմիս կնեխաշը անյուղ կերակուրներից է:

Կնեխաշ մսով.— Պահպանվում է նույն բաղադրությունը, ավելանում է միսը՝ ոչ շատ մեծ ամբողջական կտորներով: Ոսկորը չի կտրտվում: Կնեխաշի համար հարմար է ոչխարի յուղոտ միսը (նաև ոչ մաղաշ տավարի), եթե յուղալի չէ, նրա մեջ գցում են դմակի կտորներ:

Վայելում են տաք վիճակում:

## ԹԽՎԱԾՔՆԵՐ

Տարածված են հետևյալ թխվածքները.

Բիշի (fյաթա), թերթերուկ, ժնգյալով հաց, կթնահունց (կըթ-

նաճուճց-մղրաճուճց), յղըլավաշ և զանազան բլիթներ (պլիթ):

*Թերթերուկ*.— Թխում են սովորաբար եկած խմորով: Խմորազանգվածը բաժանում են խնձորաչափ գնդերի, գրտնակով ֆիշ բացում, խմորին ֆսում հասը (խորիզ) և ոլորում՝ բըռնելով երկու ծայրերից, ապա նորից դարձնում գունդ: Այնուհետև բարակ բացում գրտնակով (նրբության աստիճանի) և դնում կրակի վրա գտնվող շաջին (տապակ): Մի կողմը թխելուց շրջում են մյուս երեսի վրա:

*Հասի պատրաստումը*.— Ձեթը լցնում են ամանի մեջ, ավելացնում շաֆարավազ և ֆիշ ալյուր. խառնելով ստացվում է ոչ պինդ, ձիթալի զանգված: Շաֆարավազի տեղ գործածում են նաև թանձր մեղրաջուր:

*Ժենգյալով հաց*.— Թխում են հիմնականում գարնանն ու աշնանը: Որակի առաջին հատկանիշը պատրաստուկի բազմատեսակությունն է: Միջուկի բաղադրության մեջ մտնում են կանաչեղենի բոլոր ուտելի տեսակները՝ բանջարանոցային թե վայրի. ճռճռոկ, պռվապորտ, սմսմոկ, եղինջ, մանուշակ, գինձ, սամիթ, շաղգամի, բողկի տերևներ, պտուտկուն, փուրփուտ, կնձմնձուկ, ռեհան, ֆավար, զառնականեջ, խազազ, սոխ, թրթնջուկ և այլն:

Այս բոլորը լվանում են, ընտրում փափուկ մատղաշ մասերը, հատուկ տախտակի վրա սուր դանակով մանր կըտրտում: Որպես համեմ օգտագործում են աղած պղպեղ, սմախ, վայրի մանրահատ նուռ (վերջիններին կարող է փոխարինել մանր կտրտած լավաշան) և խառնում պատրաստուկին: Կտավատի ձեթը ցողում են պատրաստուկի վրա, մի ֆանի անգամ խառնում են երկու ձեռքով: Խմորի զանգվածը բաժանում են միջին մեծության գնդերի: Գունդը գըրտնակով բացում են ու կանաչ մասսայից նրա վրա դնում 1—2 բուռ և եզրերը միացնում իրար: Նորից գրտնակով նրան տալիս են էլիպսի ձև և դնում կրակին խարկված շաջի վրա, հանախակի շրջում մինչև թխելը: Ճաշակում են տաֆ վիճակում, խմում են գինի:

*Աղանձ*.— Բառը բաղկացած է աղ և խանձ բաղադրիչներից: Ցորենը, սիսեռը (երկու տեսակն էլ), շաքանը, դդումի սերմը (գերադասելի է կեղևահանված) ընտրում են, մաֆրում, լվանում և բովում շաջի վրա: Բոված սերմերը շաղակոտով

ֆաշում են ամանի մեջ և խառնում չորացրած թութ ու ընկույզ:

Աղանձն անում են կիրակի օրերին, առանձնապես ձմռանը, որպես հանելի ժամանց-ուտեստ: Խմբային աշխատանքների ժամանակ աղանձն անպակաս է լինում:

*Թաժա հաց.*— Թոնրահաց, հրամցվում էր բոլոր պատահողներին՝ ծանոթ թե անծանոթ: Հաց չկտրելը վիրավորական էր հացատիրոջ համար: Թխողը մեկական թաժա հաց էր ուղարկում մոտ հարևաններին, բարեկամներին, այն տներին, որտեղ հյուր կա: Թաժա հաց էր ուղարկվում թաղի ծերերին, անկարողներին, հիվանդներին, հղի կանանց...: Հացը թխում էին մեծ թոնիրներում, ու միանգամից թխվում էր 25—32 հաց: Մի թոնիրը 30 հաց է, մի պատը՝ 8—10 հաց: Թոնիրը բաղկացած է լինում երեք պատ հացից:

Թոնրահացի տեսակներն են. կլորահաց, լավաշ, բաղարջ, հաթ (կորկահաց), խշխաշավ հաց, կթնահունց, մրղռահունց, բիշի, գաթա (թխվածքներ են), բլիթ:

*Ըղընրավ բրած հաց.*— Սոխը աղի մեջ թաթախում են, ֆռում հացի երկու երեսը, տաքացնում, նորից թեթևակի ֆռում: Հետո վառարանի վրա, բուխարու կրակին կամ թոնրի մեջ, ըստ հաշակի չորացնում և ուտում: «Սոխ ու հաց, սիրտը բաց», «Ըղընրավ հաց—կուշտըպնդի կաց»:

Սոխ էին ֆռում մագաղաթը, աշ տված կաշին, գրքի շապիկը: Ոտնամանի կաշին փայլեցնելու և ամրացնելու համար օգտագործում էին սոխաջուրը և կտավատի ձեթը:

*Կուրկուտ.*— Ղարաբաղցու սիրած կերակրատեսակներից մեկը: Ընտիր հաճարը (ցորենի տեսակներից մեկը) ջրում թրջում են, թեփահան անում, չորացնում, երկանքով աղում: Լվացած միսը կտրտում են և ձավարի հետ շերտ-ընդփոխ դարսում պղնձի մեջ, 1—3—4 հարաբերությամբ ջուր են լցնում կաթսան և դնում մարմանդ կրակի վրա: Սովորաբար կուրկուտը եփում են գիշերը, վառած-մարմանդած թոնրի մեջ: Հարսանիքի նախորդ գիշերը դնում են թոնրում, կաթսաները դարսում են իրար վրա, թոնրի երեսը փակում: Ըստ սովորության մեկը գիշերում է թոնրատանը և ուտեստը պաշտպանում հնարավոր պատահարներից:

*Խաշ ուտել.*— Տարածված սովորություններից մեկը: Խաշի ընկատմամբ ղարաբաղցին կայուն սկզբունքներ է մշակել:

ա. Խաշն ուտում են ընկերների, հարևանների, բարեկամների հետ միասին: («Տնցտոն խաշ չըն օտել»):

բ. Խաշն ուտում են վաղ առավոտյան («մթընմթեն»):

գ. Խաշի սեղանին պետք է լինեն հաց (լավաշ), մի ափսե՝ ոսկորների համար, աղ, սխտոր, քացախ, կամ սրանց պատրաստուկը և խաշը լայնկեկ կավամաններն մեջ: Այսքանը միայն: Ոչ ավել, ոչ պակաս:

դ. Խաշ ուտելիս խմում են երկու բաժակ օղի. 1) խաշ եփողի՝ պատրաստողի կենացը և 2) խաշ ուտողի կենացը: Վերջ:

*Աղ դնել, թթու դնել.*— Ղարաբաղցիները կավից պատրաստում էին տարբեր գործածության ամաններ՝ սափորներ, խիծի (խեցի), պուլիկ, փարչ սուրհնե, տոն, գավաթ, հոռնիկ (ջուրնիկ), կուժ, կուլա, ծաղկաման, թուխտուրաման (թըթխմորի ամտն), կարաս և այլն:

Աղ կամ թթու էին դնում տաքդեղ, կաղամբ, վարունգ, դդում (հիմնականում՝ դեռահասը), ճակնդեղը, սոխը (և՛ գլուխը, և՛ ցողունը), սխտորը, պոմիդորը (կանաչ և կարմիր), կանաչ լոբին, կապարը, տոպը, կրմզուկը, սիբեղնը, պուքի (պեքի), շուշանը, ձնեբեկը, տանձի, խնձորի մի շարք տեսակներ և այլն: Աղ դրածի վրա դնում են տարբեր համեմունքի բույսեր. անանուխ, սամիթ, խոռնը, դափնետերև, և այլն: Աղաջրին խառնում էին քիչ քացախ, թթաջուր և այլն:

Թթու էին դնում մեծ կարասներում ու տոներում:

Նման խոշոր կավե ամաններում էին պահվում նաև պանիրը, յուղը, տհալ միսը, մեղրը, գինին, օղին և այլն:

Մեղրը պահում էին նաև պնդուկի (տկողին) կամ ընկույզի միջուկի հետ խառը:

*Մեղրը սուղանալ կոտին.*— Թաղավարդ, Ջարդանաշեն, Սարգըսաշեն և այլ լեռնային գյուղերում պահպանվել է հին սովորությունը: Երբ մեղրը կտրում են, կանչում են բարեկամներին, հարևաններին՝ մեղրուտեքի: Մեղրը հրամցնում են ափսեներում կամ գավաթներում դրված՝ մեծ սինու մեջ: Սինու մեջ դնում էին մի քանի տասնյակ գլուխ մաքրած սոխ: Սոխով կարելի է տնեկացածի չափ մեղր ուտել՝ առանց վնաս տալուց վախենալու: Ղարաբաղում ընդունված

խոսք է. «Մեղրեն կլինեն ցորտ նոր չրն խմել, մեղրեն կըլ-
նեն տաք նոր կխորմին»։

*Խաշիլ.*— Ընտիր ցորենը աղանձում են (շատ գյուղերում աղանձելուց առաջ ցորենը կլպում են) շաչի վրա և երկանքով աղում (փոխինձ)։ Փոխինձը մաղում են և կուրկուտն առանձնացնում՝ խաշիլի համար։ Փոշին խաշիլ եփելու ընթացքում (ավարտին) շաղում են խաշիլին։

Խաշիլի բաղադրամասերն են՝ կուրկուտանաշը, թանը և դաղ արած յուղը՝ սոխով։ Նախ՝ ամանն են լցնում նաշը, ապա՝ 2—3 գդալ յուղ են ածում նաշի միջնամասում բացած փոսիկի մեջ։ Իսկ թանը լցնում են ամանի եզրակողը։ Ուտելու ժամանակ շարունակ յուղ ու թան են ավելացնում։ Ընդունված չէ յուղն ու թանը խառնել իրար։ Դրանք ուտելու ընթացքում տարբեր կողմերից պետք է ներծծվեն նաշի մեջ։ Ով չի կարողանում պահպանել խաշիլ ուտելու կարգը, նրա ամանը չէին երկրորդում։

Անա մի զրույց խաշիլի մասին։

Երկու ընկերներ մի ամանից խաշիլ էին ուտում։

Մեկն ասում է.—Ըս տարե հալա մին ծեր շըմ ծրալ։

Ասելու հետ՝ գդալով ակոսում է խաշիլը և յուղով լի փոսիկը քաշում իր կողմի վրա։

Ընկերը տեսնելով, որ յուղից իրեն բաժին չի հասնելու, գըդալը վերցնում է խառնում. — Վեչինչ, տարեն խռնըխառնե յա։

*Խաշիլի թան.*— Պատրաստում են չորաթանից, ջրում հարելու միջոցով։ Այդ թանից պատրաստում են «Քյլնգյոշ» կերակրատեսակը։

*Պուտ.*— Պատրաստում են մանրափոշի փոխինձից. հունցում են մեղրաջրի կամ բահմազի մեջ։ Անփոխարինելի միջոց է փորլուծության դեմ։

*Լոբի.*— Լոբին տարածված բույս է Ղարաբաղում և նրա բնակչի սիրած սննդամթերքներից է։ Այն ունի բազմաթիվ տեսակներ, հաճախ էլ միևնույն տեսակին տարբեր գյուղերում տրվել են տարբեր անուններ։ Լոբին աճում է անջրդի պայմաններում (աննրի, փյադա) և ջրարբի հողերում (նրռվի լոբի)։ Հայտնի են այս տեսակները. շլըպեղեզ, շուրեի, շալ, շալտիկ, վխնրաշկ, դաշխա, սև (սև պիծի, սև լղտր, սև մեծ, սև պուլուր, սև էրկան), կյարմուր, սիպտակ, լաղի,

կոռկ, ճխշավուր, թլավուր (ծլավուր), չլմլոտիգ, ըշըղաշկ, կյրժրոխ, ճաղար, չախմուր, տոռճան և այլն:

*Լոբի օտող Ղարաբաղցե.*— Լոբին ամենասիրված սննդամթերքներից մեկն է եղել ղարաբաղցու համար: Հայտնի են այսպիսի արտահայտություններ. «Օխտը շիրեփ լոբի քցի», «Ղարաբաղեն էն չալ լոբան օխտը ամտն թումփըցրե», «Կուրկուտը մին, լոբին՝ իրեք», «Հացեն կլխեն մին աման կեր, փորդ պնդի»: Լոբուց պատրաստել են բազմաթիվ կերակուրներ: Առանձնապես սիրված են եղել (հատիկ) լոբուց պատրաստված կերակուրները: Լոբին եղել է հարսանիքների, պատարագների երկրորդ կերակուրը:



Բանասաց Սոփան Հովսեփյան, Բերդաշեն



Բանասաց Սոնի Առստամյան, Բերդաշեն

Ղարաբաղցին լոբուն հավասար սիրում էր նաև թթու, կծու ուտեստները:

Մի անգամ ղարաբաղցին հյուրընկալվում է թիֆլիսեցուն: Նայում է սեղանին, սակայն տաքտեղ չի տեսնում, հարցնում է.

— Տուք տաքտեղ չը՞ք օտում:

— Վիչ:

— Պեխկ էլ չըք օտում:

— Վիչ:

— Խեղն, պա հինչ ը՞ք օտում:

Հնում Քյաթուկ գյուղը հայտնի է եղել իր կծու տաքտեղով:

«Լոխ öւրանց ապրանքեն թարիփ ըրեն, քյաթուկեցեն էլ տ-սից. այ իմ քաղցր տաքտեղ»:

*Կթնեղան-մզնեղան.*— Ե՞րբ է առաջին անգամ կաթը մածուն, յուղ ու պանիր դարձել. ոչ ոք չի կարող իմանալ: Մի բան պարզ է. կաթը միշտ էլ հայի հետ է եղել տարվա բոլոր եղանակներին՝ տանը թե դրսում: Առանձնապես ամռանը՝ մածնեքսակը կախված է եղել երկրագործ հայի ձիու թամբից: Շատ հաճախ հընձվորը կեսօրին, փայտե մեծ կյուշերի մեջ (գուշ), տարած մածնից գդալով հարել ու թարմ յըրպատառ է կերել, զովացուցիչ թան խմել: Տանը, գեղջկուհին՝ տոներում ու կարասների մեջ, կուտակել է կաթի ու մածնի սերուցքը, մածնի թթված մնացուկները և շաքարվա գլխին խնոցի է հարել.

Խնեցե, խնեցե,
Սոր հարվածքը հրեցե...
Եղը թանան հուկեցե...

Հարվածքը օգտագործվում էր նաև որպես ախորժաբեր դեղ՝ հիվանդների համար: Թթու մածունը կոչվում էր պժեն (պժան), որը մերանի դեր էր կատարում: Կաթնամթերքները և կաթից պատրաստված կերակրատեսակները կոչվում էր կաթեղ կամ կաթեղեն, դրանք են. հեռածած կաթնը (տաք կաթնը), կաթնավ շորվա, կաթնավ ճաշ, կաթնահունց (թխվածքի տեսակ), կթնըկորեկ (կաթով կորկանաշ), կաթնով, կաթնավ չայ, կթնըմեղր, կթնաշոռ, շորաքյաթ (շորակաթ), շոր, կթնըփրթöւշ և այլն: .

Մազնեղ-մազնեղեն (մզնեղան)—մածուն, մզնաշոռ, քամած մածուն, կարագ եղ, հալած եղ, թան, թանավ, հռածած, մզնըփըրթուշ, կթնըմածուն, պզտաթան, չորաթան, քյլնգյոշ, խաշիլ, թնըխաշու, յղորթի և այլն:

Ասում են առաջին անգամ հայ հնձվորը յուղ է պատրաստել հնձի գնալիս:

Հնձվորը էշը հեծած գնում էր հանդը: Նա փոքրիկ կճուճի մեջ կաթ էր տանում՝ հանգստին խմելու համար: Մինչև կհասներ արտին՝ մի ժամ ճանապարհ է կտրում: Ու երբ իջնում է էշից, արձակում սիրեկը ու բաց անում կճուճի բերանը, տեսնում է կաթը փոխված այլագույն հեղուկի, որի երեսին լողում են յուղի գնդիկները: Հնձվորն այստեղ է ճաշակում առաջին յըրպատառը:



Բանասաց Սոփան Սևիկյան, Աշան



Բանասաց Ռոստամ Սարգսյան, Աշան

Նույնանման մի զրույց էլ մեզ է հասել ծածնի մասին:

Կեսօրադեմին ծարավում է հնձվորը: Հեռու է աղբյուրը, իսկ կուլայի ջուրը արևը վաղուց է տաքացրել:

— Մեղավոր արև, ի՞նչ խմեմ հիմա ես, որ հնձվորիս ծարավը կոտրի:

Հիշում է, որ կեսօրվա համար կաթ է բերել, գուցե նա կոտրի ծարավը: Տեսնում է կաթի կենունում կաթի փոխարեն թանձր մածուկ է, ոչ միայն հանելի, և կորովաքեր, այլև հիանալի դարման շոգի դեմ: Արևը խնայել է հնձվորին, կաթը մածնի փոխարկել, որ նա չտապի ցորեն արարելիս:

Խուխեն՝ կաթնը,

Հենձողեն՝ մածունը:

Կաթը, շոռը, մածունը, հարվածքը, թանը, շմաթը, իրեսը (սերը), յուղը տարբեր հիվանդությունների բուժման միջոցներ են եղել՝ մարդու թե անասունների համար:

*Մոշ*.— Մոշը ամենասիրված պտուղներից է: Հին սովորությամբ, երիտասարդ թե ծեր, խմբերով գնում էին սարը՝ մոշ ուտելու: Մոշի տերևներից կլորավուն ամաններ էին պատրաստում և մեջը մոշ լցրած բերում հիվանդներին և անկարողներին: Նախ-

ռապանները, հովիվները, բոլոր հանդվորները գյուղապատկան տերիտորիայի տարբեր մասերում անդադրում էին հատուկ քարեր, որ կոչվում էր մուշըկյեվար, մոշեփրթուշ էին ուտում: Տափակ ու ափաձև քարերի վրա հացի հետ հունցում էին մոշը, մեջը դնում էին «դովլաթ»՝ 1—2 չհաս կարմիր մոշ և ուտում էին ձեռքով՝ մատները պուտ անելով: Չորացնում էին հասած և կիսահաս մոշը և ձմեռը պատրաստում էին մուշըթթու՝ ուտում ծեծած սխտորով: Մուշըթթուն մրսածության ամենալավ դեղերից է: Չորացրած մոշը աղանձի բաղադրամասերից է, հաշակում էին նաև առանձին՝ ընկույզով (մաշ բրած հղպորավ-հղպուրամաշ): Մոշից պատրաստում էին մուրաբա, հյութեր և ընտիր գինի (մուշըկյինի): Քաղում էին լավ հասած մոշը, լցնում կավե ամանների մեջ, դնում արևի տակ, պահում 7—10 օր և եփելուց հետո (արևաեփ) քամում են մի քանի անգամ, (գերադասելի է քսակով) և գինին պատրաստ է: Յուրաքանչյուր տուն ուներ ինքնաշեն աղաց, որով աղում էին չորացրած կարմիր մոշը, դարձնում սմախ, որ օգտագործում էին կերակուրների մեջ (հանուխ աղած տաքտեղի հետ) առանձնապես ձկնեղեն ուտեստներ պատրաստելու ժամանակ:

Ուշ աշնանը, չհաս կարմիր մոշը դնում էին թթու դրած կաղամբի, վարունգի, պոմիդորի, բանջարեղենի վրա, ուր հանելի թթվահամ տալուց բացի, մնում է թարմ վիճակում և ձմեռը օգտագործվում:

Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է մոշենու տերևները՝ թարմ վերքեր բուժելու համար:

*Թթապտուղ.*— Հնագույն ժամանակներից հայերը թթից օղի էին քաշում, որը համարվում էր ամենաընտիրը օղիների մեջ: Լինում էին երկքաշ, եռաքաշ օղիներ: Եռաքաշ և քառաքաշ օղիները օգտագործում էին որպես դեղ ռևմատիկ հիվանդություններ, վերքեր բուժելու համար: Բազմաքաշ օղին անփոխարինելի դեղ է նաև աղեստամոքսային խոցերի համար: Ըստ վաղընջական սովորության օղին խմում էին միայն վաղ առավոտյան, հաշից անմիջապես առաջ, ոչ ավելի, քան 15—20 գրամ: Օղու բաժակը ուներ այդքան տարողություն: Կեսօրին կամ երեկոյան օղի խմելու սովորություն չի եղել: «Առաղը մինը կխըմին, էն էլ մին կոյտում»:

Մինչև օղի թորելը թութը նախապատրաստում էին մեծ կարասներում կամ տակառներում, պահում էին 15—20 օր մինչև

հասնում էր: Օղին թորում էին հատուկ կառուցված օջախում (օղետուն, օղեգործարան):

Օջախի մի մասում քուռան էր, որի վրա դրված էր կափարիչով ամուր փակված թթակաթսան: Վերջինս խողովակով միա-



Բանասաց Խոսրով Սողոմոնյան, Բերդաշեն



Բանասաց Գևորգ Ղայամյան, Աշան

նում էր մշտահոս և մշտապաղ ջրով լի տակառի մեջ տեղադրըված բազմածալ (բազմածունկ) խողովակին՝ սառնարանին: Կաթսայից գոլորշին անցնում էր սառնարանին, վերածվում հեղուկի և ծորակով թափվում օղամանի մեջ: Մեկ ուրիշ խողովակով կաթսան միանում էր դրսի հետ, որով օղեզուրկ թթազանգվածը հոսում էր թեք առվակով և լցվում փոսի մեջ: Թթազանգվածը խտացնում էին և աղյուսաձև կտորներով չորացնում՝ ձըմռանը որպես անասնակեր օգտագործելու համար:

*Թթաթափ.*— Թթենին թափում էին 6—7 անգամ: Բարձրորակ օղին համարվում էր 1-ին, 2-րդ թափերից թորված օղին: Յուրաքանչյուր թափ պահվում էր առանձին ամանում: Վերջին թափը (6-րդ կամ 7-րդ) կոչվում էր չամչաթափ: Կիսաչոր թութը հարմար էր չորացնելու համար, որը և առանձնանում էր իր բարձր շաքարայնությամբ: Թթահավաքը տևում էր շուրջ երկու ամիս՝ մայիսի վերջերից մինչև հուլիսի վերջը:

Թուրք թափում էին կտավե մեծ շալերի վրա:

Մի շալ. թթանավարհն հրացնող մեկ խումբ: Յուրաքանչյուր շալ բաղկացած է հինգ հոգուց՝ չորս հոգի շալի չորս տուտը բռնող և մեկ թափող: Թափողն ունենում է նատուկ շինված աստիճանակ, որով բարձրանում է ծառը: Թրաթափը կատարվում է փայտե թակի միջոցով, որ կաշվե թոկակալով (թոկոդակ) ամրացվում է թափողի ձեռքին: Թափած թութը լցնում էին ուշատների մեջ (փայտե ականջավոր աման) և սայլերով տանում գործարան (հնձան):

*Թթաչամիչ.*— Հասած թութը փռում էին ուղտափշի լայն տերևների վրա և չորացնում: Վաղնջական այս սովորությունը պահպանվում էր մինչև վերջերս: Չորացրած թութը պահում էին պղնձե ամաններում (օշնակներում կամ կժերում), ձմռանը ուտում էին ընկույզով: Այն աղանձի բաղկացուցիչ մասերից մեկն էր:

Հազվագյուտ երևույթ չէր ձմեռը չոր թթից և բանմազից օղի թորելը:

*Բանմազ* (դոշաբ) *եփելը.*— Բանմազ եփում են վերջին թափերից, երբ քաղցրանում է թութը: Թափած թութը մաքրում են տերևներից ու նյուղակտորներից և լցնում պղնձե թեշտերի (տաշտ) մեջ, եփում, քամելով թթաջուրն անջատում թեփից (շիշ) և կրկին եփում այնքան ժամանակ, մինչև թանձրանում է, երևան գալիս «պլոզ պըլթթ»:

Արտադրությունը վերջանալուց հետո, բանմազը լցնում էին ամանների մեջ, քափը քաշում (վերին շերտը) և բաժանում հարևաններին:

Թթից պատրաստում էին հյութեր, մուրաբա և թուրմ: Խաղողի և թթապտղի թուրմը մուրաբաներ եփելու ժամանակ փոխարինում էր շաքարին:

Որպեսզի թթու դրած բանջարեղենը հոտավետ ու անուշահամ լինի, աղաջրին ավելացնում էին քիչ թարմ թթաջուր:

Թթով լվանում էին մետաղե, փայտե, կավե ամանները: Թութը ոչ միայն մաքրում էր, այլև ախտահանում:

*Թութ նստել.* — Ռևմատիկ հիվանդություններ և հոդացավ ունեցողները թութ էին նստում: Ոտքերի կամ ձեռքերի ցավոտ մասը մտցնում էին արևի տակ եփվող թթի մեջ և մնում 10—30

ռոպե: Թթով լի ցածրադիր կարասների և տակառների մոտ այդ նպատակով պատրաստում էին առանձին հարմարանք:

*Թթածաղիկ*.— Թթի նորահաս պտուղը, որ օգտագործում են ստամոքսաաղիքային ուղիները մաքրելու համար: Ստամոքսը բարձր թթվայնությունից ձերբազատելու ամենալավ միջոցն է:

*Թթատեսակները*.— Ղարաբաղում տարածված է շահ ու վայրի մի շարք թթատեսակներ. սպիտակ, բաղանի, սև, նաղար և այլն: Սակայն սպիտակ թթից հետո ամենագործածականն ու սիրվածը խարթութն է: Ղարաբաղցիները սպիտակ, բաղանի և խար թթատեսակները համարում են բնիկ արցախյան. «Թոթը հային ջանան պտկըված ա»:

*Խարթութ*.— Հանելի է իր քաղցրաթթվաշ համով: Սրանից պատրաստում էին գինի, քացախ, մուրաբա: Նրա հյութը կոչվում էր արքայական, որ մրսածության դեմ հոնախակի գործածվող միջոցներից է: Ինչպես խաղողի, այնպես էլ խարթթի թանձրավուն հյութի մեջ թաթախում էին ընկույզամեջը և կախում չորանալու համար (շրանուկ): Խարթութը չորացնում էին սպիտակ թթի նման և ձմեռը կերակուրների մեջ օգտագործում որպես համեմունք, նրանից թթվանաշ էին պատրաստում՝ մրսածների համար: Ամենալավ սմախը ստացվում է խարթթից:

*Ծեղել*.— Հին սովորությամբ թութը չորացնում էին հանդին՝ արևերես վայրերում, ուղտափշի լայնկեկ տերևների վրա: Նույն տերևներից պատրաստում էին փաթթոցներ (ծեղաման) և նրանցով թութ բերում տան մեծի ու փոքրի, հիվանդի ու անկարողի և նրանց համար, ովքեր թթաստաններից հեռու էին աշխատում: Դեռատի աղջիկները, հարսները տերևափաթեթներում թութ էին տանում հնձվորների, կալվորների համար՝ աշխատատեղ: Թութը նաշակում էին և՛ առավոտյան (անոթի վիճակում), և՛ կեսօրին, և՛ երեկոյան («Թոթը հիբը օտխս՝ փեյդա յա»): Թութ էին քաղում նաև կավե կամ մետաղյա (պղնձյա) ամանների մեջ և որպեսզի այն թարմ ու մաքուր մնա և գեղաթով լինի, ծեղում էին (շինում էին երեսածածկան): Ծեղելը կատարվում էր թթաշմալի (մատաղ ճյուղի) լայնալին տերևներով և ամրացնում տերևակորթուններով: Վերջում էտված տերևներով զարդարում էին ծեղը:

*Ընկույզ (ճղոպուր)*.— Ընկուզենու հետ կապված են մի շարք հավատալիքներ: Այսպես, վնասակար է ընկուզենու տակ հոգնած, քրտնած նստել, քնել չի կարելի: Ընկուզենի տնկողը կմա-



Մի խումբ բանասացներ, Բերդաշեն

հանա մինչև լիարժեք բերքի հասնելը. «Վեր եղպորե անզեցեր, բարեն հանել չըս»: Երազում ընկույզ տեսնողը կընկնի կովի մեջ: Սակայն կենցաղում ընկույզն ունեցել է իր գործնական մեծ նշանակությունը: Ընկուզենու, ուռենու տերևների եփուկով բուժում էին մաշկային հիվանդություններ. Ընկուզենու թարմ տերևները միջոց էին լվերը վերացնելու համար: Ընկույզի միջուկը չորացնում էին, ողողում խաղողի մածուկով և դարձնում կախան (կատարում էին նաև մինչև չորացնելը): Ընկույզը «պուպու» էին դարձնում, չորացնում և պահում ձմեռվա համար: Ընկույզի ամբողջական միջուկը կոչվում է ծուղրուղու: Ընկույզով «նուխտըկնդե» են խաղում: Հաղթողը յուրաքանչյուր երրորդ հաղթանակից հետո ստանում էր մի ծուղրուղու: Չորացրած ընկույզները դարձնում էին շրանուկ (անց էին կացնում թելով) և որպես խաղալիք կախում օրորոցից: Ընկույզի թարմ կեղևից (կաղաղ) ստացած գույնով լվանում էին մազերը, երանգավորում թարթիչներն ու ունքերը (կանայք): Կաղաղից ստանում էին Ղարաբաղում հայտնի «եղպորի» գույնը, ներկում էին կտավ ու թել, օգտագործում գորգագործության մեջ: Չորացած ընկույզի միջնորմը ծեծում էին, խառնում մեղրին՝ վերքեր դար-

մանելու համար: Նույն միջնորմը լուծում էին եռաքաշ թթողու մեջ և ստացված լուծույթով բուժում ստամոքսաղիքային խընցերը (հաշից առաջ պետք է խմել 15—20 գրամից ոչ ավելի): Ընկույզով պատրաստում էին տարբեր թխվածքներ:

ՊԱՏՎԻՐԱՆ ՀԱՅԻ ՆՍՏՈՂԻՆ.— Ուտեիս թայդի չրղնիս: Մանդրը թիքա, ծանր ծամե: Ծոմնը կեռքանը տակեն կրնի: Ծոմհով կեր՝ մատդ կենա: Հետդ պրծնող չկա: Փորեդ դարագ չանիս: Փորդ լցնիս ու՝ չինիս փչնրնվարտն, հցրտեղա թեռմատ եր կաց: Հանց եր կաց, վեր աշկդ էն ընի հացեն սուփրեն: Լփշիգ օտիս ուչ: Լավ ա ասին՝ խրեգ ա կերալ, հինչ ասին՝ շատ ա կերալ: Հացեդ թիքան թողել մեր սուփրեն, իվիլ թիքան փոր չի ծակել: Հաց ուտեիս խրեգ կխոսին: Ուտեիս՝ աշկդ ուրիշի ամանու չի պահիս: Ուտեիս ուրիշի աշկու եշիլ չըն: Ծմելու կոլ չի տաս: Հաց ուտեիս լավ թիքեքը թողե ղունաղեն հետե: Հաց ուտեիս տնատարը հիրան սեռուն կպահե: Հաց ուտեիս տնատարը նեյլի կսկսե, եռե պրծընե: Հաց ուտեիս փիս պենա խոսել չըն, հուրհուշու անա կյենզատ չըն անել: Հաց ուտեիս վեչ համոթ պենա կխոսին, վեչ հարամ պենա: Հացեն վախտը կոռ չըն անել: Կովապենը հացա եռ կանին: Հացեն վախտը նկատողութուն չըն անել: Հացեն վախտը խոռազը փիսլամիշ չըն անել: Հացեն վախտը ըմանենն մազը թաքնուն տհռ կօնին: Հացը գյափավգյուփավ կոտին: Հաց ուտեիս վեր պառավ ընի, ամեն հինչին լավն ու փափուկը կտնին ըռաշին: Հացը առաջ խուխեն կտոն: Առաչ խուխեն քուշտուցըռու, եռնան փորեդ դարդը քաշի: Խոխան հունչու ծերքը մեկնե, կտոն հըռան: Պիծինը կերած, մեծը մարսած:

«ՀՈՒՐ ԸՄ ՄԻՆ ԹԻՔԱ ՀԱՑ ՏՎԱԼ»:— Ասում են բարեբախտության դեպքերում: «Հու վեր քյուիրին հաց տա, նեղ օրա կըպըրծընե»: Հայերն այն կարծիքին էին, որ աղքատից, տնանկից, հյուրից հաց չխնայողը միշտ հաջողության մեջ կլինի և վախճանն էլ՝ բարի:

«ՔԱՇՈՒ-ՔԶԸԼԱԿՈՒ ՓԱՅ» — Ասում էին հաշը վերջացնելուց հետո:

Հայ գեղջուկը կեսօրին հաշում էր հանդին: Ճաշելուց հետո սփռոցի վրա մնացած կերակրի և հացի մնացորդները շպրտում էր և ասում. «Այս էլ թռչունների բաժին». «Էս էլ մեր անզոր բարեկամներին»:

# ԲԱՌԱՐԱՆ

Ադա — այ տղա (դիմելաձև)
Ախպտծակոտ — անասնագոմի՝ աղբը դուրս հանելու փոքրիկ պատուհան
Ախպահար — ախպատեղ. ուր աղբը ժողովում են՝ այնտեղից դաշտ տեղափոխելու համար
Ալամաթ — լավ, չնաշխարհիկ, գեղեցիկ
Ախուս — անխոս, լուռ, չխոսկան
Ածեգ — կերակուր. ծլեցրած ցորենը ծեծում են սանդի մեջ և ստացված մածուկը եփում, օգտագործում որպես ուտելիք:
Ակեն — ակնահաճո, գեղեցիկ
Ակնահավաք — հիվանդ թռչունների մի տեղ հավաքվելը, որ կոտորվելու նախանշան է
Ակնավառեշ — բոցկլիլ. դյուրավառ չորուկ բուսակոտորներ, որոնցով վառում են կրակը
Աղատ — սեր, ցանկություն, գորով
Աղնաղազ — աղունն աղտյլը
Անի — այ աղջիկ (դիմելաձև)
Ամա՞լ կյալ — ա. մեծանալ, աճել, բ. կազդուրվել
Ամլիկ — մինչև մի տարեկան գառ, ուլ, հորթ. փոխ.՝ անմեղունակ, անզոր, պարզամիտ
Այանե — սկզբնապես՝ այ նանե (դիմելաձև)
Անարխա — անթագավոր, անտեր (երկիր). փոխ.՝ տեր, հենարան, պաշտպան չունեցող
Անգի— անկեալ, հիվանդ. փխբ.՝ լղար, տկար, վտիտ
Անդոհ (անդոխտ) — սրտնեղություն, մտատանջության հիվանդություն, վիշա
Անի — շեն, բարեշեն, կերտված, բարեկարգ, հարուստ
Անկեզ — չզգած (բուրդ, բամբակ)

Անկուտուր — անկոտոր, անկոտրում, հաստակող
Աշնա (պարսկ.) — բարեկամ, ծանոթ
Աշունքանոտ — թռչունների, կենդանիների աշնանային ձագը. փոխ.՝ տկար, նվազ (նույնն՝ աշունքածեք)
Աշառ (պնայի) — բացող, բանալի
Ապելա — խեղճ, ողորմելի, պարզամիտ (աստվածաշնչային Աբելից)
Ապեր — եղբայր (այսպես դիմում են մեծ եղբորը)
Առես (առես, առեդ, առեն) — առիս, ինձ մոտ
Առք (արք) — առնելիք, նկ. տալիք. փոխ.՝ երաշխիք, վստահության իրավունք
Ասըլ — ազնվացեղ. փոխ.՝ հասկացող, խելոք
Ասլը — արմատ, ցեղ, ազգատոհմ
Ասմա — կախան խաղող, խաղողի մի շարք տեսակներ, որ պահում են ձմեռվա համար
Ասման (պարսկ.) — երկինք. փոխ.՝ հեռու վայր, հեռավոր անկյուն
Ասպ — ազբ, ազբն, շարժուն թելաշրջանակը, որով պատված է լինում ասպափայտը (ոստայնագործության մեջ)
Ավադ — ա. շեն, բարեկարգ, կենդանի (տուն, օջախ, բնակավայր), բ. փարթամ — ճյուղաշատ, ոստառատ, բերրի (ծառ, այգի, բանջարանոց), գ. ուժեղ, մարմնեղ, հսկա
Ավար — ծառաճյուղերի, խոտաբույսերի չորուկ մնացորդներ (կտորտանք)
Ավրաղ — ավրակ բառի աղավաղված ձևն է
Ատրա — հացաբույսերի փայտով ծեծելը (հատիկը հանելու համար). փոխ.՝ ոտքի տակ տալը, ոտքով տրորելը, ծեծելը
Արա — առն բառի ղարաբաղյան տարբերակը, գործածվում էր որպես դիմելաձև. փոխ.՝ հայ (այլազգիներից ոմանք հայերին կոչում են «արա», պատճառը բառի հաճախադեպ գործածությունն է հայերի կողմից)
Արակ — ա. երակ, բ. տրամադրություն
Արդու — գնդալյուր. օգտագործում են որպես անասնակեր (հիմնականում զարին են արդու անում)
Արիշ (Արեշ) — քաղաք Կուր գետի ձախ ափին: Մի ժամանակ հայաբնակ քաղաք, մտնում էր Աղվանքի մեջ:
Արխ — առու
Արշա — լույս, առավոտյան լույս

Արց — կողովի հիմնամասը. փոխ.՝ հիմք
Ափաթ — գեղեցիկ, շնորհալի, սիրուն
Աքա (աքեր) — (դիմելաձև) քույր բառն է, այ քույր կամ քույրիկ

Բաբազ — բիբ, աչքի բիբը
Բաբա կամ բաբավարդ — դեղին ծաղկող շրեշանման բույս. աճում է հին գերեզմանոցներում
Բադան — գոտկատեղ, մեջքի ստորին մասի պտույտը
Բանդ — բանդի ծառի կեղևից հանած կեղևակապ, որով զարդարում են երաժշտական գործիքները, զավազանը (ցուպ) և այլն
Բաղրյար տեռնալ — վախենալ, երկյուղել
Բանդաղ — կախան պտուղ (խաղող, նուռ, սերկևիլ և այլն):
Բանդան — մարդ, էակ, աներևույթ գոյություն: Ժողովրդական ըմբռնումով անձնավորված էակ, որ աիրություն է անում մարդկանց ճակատագրին և կարող է աստծու ավածից էլ զրկել մարդուն: Գոյություն ունի ներքևում, մարդկանց մեջ:
Բանդի — կարմրա-դեղնավուն կեղևով ծառ, որի կեղևից բանդեր (կապեր) են հանում
Բարա — բերան բառից. բանջարանոցի դուռ, բերան
Բարսող — պարսատիկ
Բեղըմ ա — պիտո է, պարտավոր է, պետք է
Բեն — ա. գրավական. երբ առնելիք պարտքի արժեքի մի մասը տրվում է վաղօրոք, բ. ապահովանք, առհավատչյա
Բիժի (բիժո) — կովի հորթը
Բլակ — բազուկ (մարմնի մաս)
Բլբուլ — պետք է լինի՝ բմբուլ. փոխ.՝ թեթև քաշ ունեցող իր, վտիտ մարդ
Բլըբանդի — հին պարանուն
Բխո — ձիու ոտքերը կապելու հարմարանք (երկաթե)
Բնո — զարմանքի բացականչություն. նույնը, ինչ պահո՞
Բողումնը — եղեգն բույսի յուրաքանչյուր երկու հանգուցամասը, երկու ծնկների արանքը: Եղեգան մի բողմնից շվի (փող) են պատրաստում:
Բոփ — ա. կոպիտ, վայրենի, բ. անտաշ, անողորկ քար

Բրքթո — ա. դյուրաշարժ միջատ, ասում են նաև՝ ճաղինչ պը-
ղոճ, բ. անհանգիստ մարդ
Բունա — հիմք, սկիզբ
Բուրմա — ա. մեծ, խոշոր (բուրմա թոթ), բ. խիտ, հոծ (բուր-
մա թուփ)

Գյաբա — կապա բառի բարբառային ձևը, գորգ
Գյադակ — գոմշաձագ
Գյան — գան
Գյավռակ — գավառական բառից. փոխ.՝ կոպիտ, անգեղ
Գյամփուլ — մեծ մուրճ. փոխ.՝ դանդաղաշարժ, գեր մարդ
Գյոզակ — գոզակ, անկ, ծոպավոր երեսկապան
Գյոկ (գեոկ) — անհայտ քաղաքանուն
Գյրավա — որսին խփելու հարմար պահը, ընդհանրապես՝ հար-
մար պահ
Գյուռ — ա. պարծենկոտ, ինքնահավան, անգործունյա (Նա-
ղաշ Հովնաթանն օգտագործում է քուռ ձևով), բ. հորդ, հոր-
դուն, առատ, աղմկալից (հարսանիք)
Գոդալ — կարճահասակ
Գուման (նաև՝ գյուման) — հույս
Գյունե — ա. լեռնալանջ, բ. արևահայաց, արեգունի վայր

Դաբան — ոտքի հետին մասը, կրունկ
Դազարլու — շատ
Դալու — ա. մեջք, թիկունք, բ. հենարան, ապավեն
Դöննա — աղբրի հուն, ակունք
Դայաղ — հենարան, հենակ
Դամար — երակ
Դանա — հորթ
Դöնգ — դրնգ բնաձայնային բառը, ձայն, աղմուկ նշանակու-
թյամբ
Դանդան — հանդարտ, դանդաղ, անշտապ
Դառհովսöլա — անհամբեր, տաքարյուն
Դöսաի (դաստինա) — իսկույն, անմիջապես
Դադրահոյ — հորովել, հոտաղի երգը վար ու ցանքի ժամանակ
Դարզի — դերձակ
Դբառաշ — դեպի առաջ
Դբետ — դեպի ետ

Դգանակ (դազգանակ) — ա. մանակ, զավազան. փոխ.՝ անբեփելի, անկոտրելի, կոպիտ, կոշտ բնավորությամբ մարդ
Դինգ — գործիք, որով հացահատիկը թեփհան էին անում, դոփան
Դիք — զառիվայր
Դնտառն — անասունների արգանդը
Դնգըլ — ա. դափ, ամբյա, բ. Թաքվի մոտ գտնվող սարերի անունը. փոխ.՝ մերկ, դատարկ
Դնգլե — մանակախաղի մի տեսակ
Դոզում — համբերություն, դոզում անել — համբերել
Դոնդիգ — տակառի վերևի և ներքևի տախտակամած մասերը
Դուզամ — մանրաքար, խիճ, որ լցնում են շարվող պատի մեջ
Դույուղ անել — կանչել, իմաց անել, տեղեկացնել

Եզնահավաք — արձակված եզներ ժողովելը. փոխ.՝ ունեցածի հաշիվ-հաշվառք կատարելը
Եխա — օձիք
Եխնել — հաղթել
Եխտ — կեղտ
Եխտոտ — կեղտոտ (Ն. Հովնաթանի մոտ՝ եղտոտ)
Եղ — յուղ (Հ. Երզնկացին էլ է օգտագործում եղ ձևը)
Եղամնը (եղըմնը) — եղյամ
Եշիլ — նայել, աշել, աշել
Եշնը — բորբոս, մգլածություն
Եշնիլ — բորբոսնել, մգլել
Եռնային — ա. երկնային, բ. սատված
Եսիր — գերի
Եսվակեն — մարդու երկրորդ կինը, ոչ առաջինը
Եսվառոր — թոնիրը մի անգամ վառելուց թխում են 20—25 հաց: Երբ քիչ խմորագնդեր են մնում, թխում են հացը հանելուց անմիջապես հետո՝ առանց թոնիրը կրկին վառելու: Դա կոչվում է եսվառոր
Երզի — ա. երեք, երեքը լինելը, եռակաություն, բ. տեղանուն: Այն վայրը, որտեղ գտնվում է Եռաբլուր (Եռամասունք) սրբավայրը Մուղանի դաշտավայրի ծդանով քաղաքի մոտ (Ուչթափալար): Կառուցվել է սրբերի մասունքների հիշատակին: Բլուրներից այժմ կանգուն են երկուսը: Մեկը վերջերս քանդել են հայկական հին սրբավայրերում գանձ

փնտրողները, գ. քաղաքանուն. Երգա, Հարգա. բանաստեղծ Ցրիկի հայրենի քաղաքը, դ. գավառանուն, ե. անձնանուն
Եր — վեր
Երե — բարձր
Երնային — երկնային, արարիչ, աստված

Ձամբուլ — զամբյուղ
Ձահման — սահման
Ձանգու — ասպանդակ
Ձäրդա — ա. դեղին, ոսկեգույն, բ. ցորենի տեսակ. փոխ.՝ գեղեցիկ
Ձոզակ — միջուկ, ծուծ
Ձոմ — սահմանաքար, սահմանանշան
Ձռավար — նախշավոր (նխշավար), վարք լրելը, գեղեցկացնելը. փոխ.՝ արած գործը գեղեցիկ, հմայիչ դարձնելը
Ձորզարդար — կրոնական արարողություն, ծառզարդար

Էյնը — միտք, հիշողություն
Էյսը (Էքսը) — հաջորդ օրը

Ըլոռնեզ — հիվանդություն
Ըխպրակեն — եղբոր կին
Ըղուվել — դառնանալ
Ըյլաշոն — ուրիշի շուն. իր տոքով մեկի դուռը եկած շուն. փոխ.՝ սեփականի, հարազատ ընտանիքի նկատմամբ անտարբեր մարդ
Ըյլրհատ — ալրահատ, ալյուրը հատած
Ընգունթիթև — հնազանդ, լսող
Ընրմատիր — հականե-անվանե
Ըշկրհանիչ — գեղեցիկ, հմայիչ, մարդկանց հայացքը իրեն քաշող
Ըշկրնպե — ակնթարթ
Ըշկյունա — բառացի՝ ուշագնացություն. փոխ.՝ լիաթոք, լիահունչ ծիծաղելը
Ըշկօնքավ — աչքրունքը գեղեցիկ, հմայիչ, սիրուն
Ըպրկլոխ — ապրելու ունակ, կազդուրվող
Ըռավալ — առավել. վարելահողի երկու ծայրերը, որոնք չեն

վարվում. վարսակզբի ու վարավերջի խոպանը. փոխ.՝ վերջ, ծայր, ավարտ

Ըռըխկալի — կափարիչ

Ըռըկյոնի — առօրյա, ցերեկով

Ըռըչկետան — առաջակապ. արտահագուստ, որով ծածկում են հագուստի առաջնամասը, գոգնոց

Ըռըչկառովան — ա. վազքի մրցաձև (ով ավելի շուտ), բ. ամենից շուտ, ամենաառաջինը

Ըսպափադ — հինած ոստայնի հորիզոնական հաստ փայտը, որին փաթաթված է ասսլը (ազբ)

Ըրաշաել — կառոաել, անձկալ

Ըրեփել — ա. եփել վերջացնել, բ. գործը վերջին հասցնել

Ըրըսկալի — երեսակալ, երեխայի երեսի ծածկոցը

Ըրըսկհատ — երես, դեմք, դեմքի կառուցվածքը

Ըրըսկման ընիլ — հեռանալ, թաքնվել

Ըրըսհան — վերերեսյա, մակերեսորեն

Ըրկըհուքյիլ — երկոքվել, հղիանալ

Ըրչեկապ (ըռչեկապ) — առաջակապ, արտահագուստ, որ կապում են հունձ անելու ժամանակ

Ըրփըվերի — որբևայրի

Ըրևազուկ — արևանցուկ. արևը անցնելու ժամանակը. փոխ.՝ հով, զովասուն

Թաթման — թաթպան, ձեռնոց

Թամբի — խաղ. ունի երկու տարատեսակ՝ կնդըթամբի, նուխ-տըթամբի

Թայդի — ա. շտապ, արագ, բ. վռազել, շտապել

Թարթափ — հայացք, թարթ, հայացքի ուժը, թափը, որից մարդ ընկրկել կարող է

Թափիզ տալ — ձին խթանել

Թաքառ — տակառ

Թեշտ — փայտե կամ պղնձե լայնանիստ շրջանաձև աման՝ լողանալու համար

Թեփուկ — եղջերաթաղանթ, որով պատված է լինում ձկան մաշկը

Թթո — կերակրատեսակ (թութ բառից)

Թլատու — գորգագործական գործիք

Թլըթափել — թևաթափ լինել

Թխուվել — հասունանալ, կարոտը վերջնագծին հասնել, փափագել

Թյդըերիշ — արագընթաց, արագավազ

Թնդուլ — ա. թոնդիր, թոնրաշեն (հմմ. որմնադիր), բ. անձնանուն

Թնըխարավ — կիսաեփ ձու

Թշնած — թոշնած, դեղին

Թշնածակ — շվիի վերին անցքը

Թոռնըսքյընում — խելապակաս, հիմար

Թոթխար — կիսատ, կիսատ գործ

Թոր — ձուկ բռնելու ցանց

Թորբա — ուսապարկ, ճամպարկ

Թո՞րը — դեպի ո՞ւր

Թոքի — չար, աներես, պնդաճակատ

Թոըմոշկել — մաշկը թառամել, կնճռոտվել

Թոսխել (թոսխոտել) — ջրարբի դառնալ, հողը ջրով հագենալուց փլվել. փոխ.՝ լացել, հեկեկալ, զգացմունքով լցվել

Թռույին — անձրևային

Թրա (թերա) — բանջարանոցի, մարգի մասերից մեկը (երեք թրա, չորս թրա)

Թրթամնել — թերթ՝ լեզու. վազելիս շան նման լեզուն հանել. փոխ.՝ հոգնել, շնչակտուր լինել

Թրթերիլ — դադարել, հանգստանալ

Թուխկըկու — գոտեմարտ, կոխի տեսակ

Թուխված — կարոտակեզ, կարոտաբաղձ

Թունքաթուն ընիլ — կորչել, չքվել, անէանալ

Թուտանուր — թորաշուր, անձրևաշուր

Թուտարև — անկայուն եղանակ, անկայուն բնավորությամբ մարդ, հեղհեղուկ

Թուրնըխանե — երկար փայտ՝ վառած թոնիրը խառնելու համար. փոխ.՝ երկարահասակ մարդ

Թուքման — թուրքմեն

Թքունառ — թաքուն փախցնող, գող (գայլը)

Թքուչի — գաղջ, գոլ

Ժախռ — վայրի, կոպիտ, կոշտ խոտատեսակներ

Ժենգալ — կանաչեղեն

Ժեռ — վայրի. ծառի, պաղի ոչ տնային տեսակը

Ժժրպապա — հին պարատեսակ, երբ պարում են նմանակելով, հանգեր անելով, ծամածություններով (ծիծաղ հարուցելու համար)
Ժեմ — ժամանակ, ժամ

Իլխա — ա. զինվորական խառնամբոխ, բ. ընդհանրապես խառնամբոխ
Ի — ինձ տուր
Իծքմորե (յոխա) — անթթխմոր, լավաշանման հաց
Իմացք (հկ.՝ անիմացք) — իմացողություն, հասկացողություն, շնորհք

Լաղլաղի — խառնակիչ, քսու
Լաղումնը — ակունք, հուն
Լայ — հաստություն
Լանգառ — լարախաղացի ձեռքի փայտե ձողը. փոխ.՝ բարակ, երկար մարդ
Լաշ — մաշկ
Լաշտրակ — լոշտակ
Լաստ — ա. շերտ, բ. խոտ հավաքելիս՝ խոտի առաջին կուտակը
Լավաշա — սալորի պաստեղ
Լեմ — լինդ, լեմեր — լնդերք
Լենուքով — ա. առատ, փարթամ, բ. ազատ, արձակ
Լխռահաշ — վայրահաչ
Լկերթնը — լկրթնե ծառի պտուղը
Լղարակ — չվարած հողաշերտ
Լմլամել — լնդերով ծամել (անատամ մարդը)
Լոլակ — օրորոցի մեջ դրվող փայտե խողովակ, որով երեխայի մեզը հոսում է միզամանը
Լոլի — նիհար, երկարահասակ մարդ
Լոլո (լոլոկ) — խնձոր՝ երեխայական թոթովանքով
Լոխ — բոլորը
Լոխտա — երեսակալ (ձիու, էշի)
Լոք — ցատկ
Լոք տալ — ցատկել
Լպատել — ա. ծեփել, լեպով ծածկել, բ. կեղտոտել

Կպուտիկ — գզրար, արհեստավոր՝ բուրդ, բամբակ գզելու վարպետ
Կուր — մենակ, մերկ, տկլոր
Կուսնավեղ — շիկահող: Օգտագործում էին շինարարական, կավագործական աշխատանքների համար:

Խազազ — սոխուկավոր անտառային ուտելի բույս՝ սոխազգի և սոխահամ
Խայան — կալի կիսածեծ կուտակը (առաջին կալսից հետո)
Խանանդա — ժողովրդական երգիչ
Խանձող (խանձողնը) — խանձված, կիսայրված փայտակտորը
Խաշար — ծակոտկեն
Խարտ — խայթ
Խարտել — խայթել
Խափպուկ — բանջի բույսը
Խեժնը — կովի դալը եփած
Խեն — յուղ, սեր
Խզակոթ — վիզ
Խզուկ — վարունգի, ձմերուկի և այլ դեռահաս պտուղը
Խլըպութնը — խորդուբորդ, անողորկ
Խծպ (Խծբ)—հապավում. խնամի, ծանոթ, բարեկամ
Խմանակ — նշան, հայտարար
Խնձոնահամ — խանձահոտ՝ խառնված ուտելիքին
Խնչլուզանե — խնչլոզ գետնից հանելու գործիք (ծայրը սրած փայտիկ)
Խշփաշիլ — կիսախորով անել, կիսաթխել
Խոզան — ա. հնձած արտ, բ. հացաբույսերի (և խոտի) վերգետնյա կտրվածք
Խոնզ — խունկ
Խոնչան — լայն գոտի, որ կապում էին ծանր աշխատանքների ժամանակ
Խոշակ — խորշակ. փուչ, դատարկ, լղար ցորեն
Խոռնը — ա. խմբված, փունջ, խուրձ, բ. բուսատեսակ, ուրց
Խորթնը — խուրձ
Խշըմելիկ — խաչհանգույց, խաչմերիկ
Խոնակ — նապաստակի ձագ
Խոընչխառան — վնասատու և թունախայթ միջատ

Խուտուրու — ա. խոտոր, ծուռ, շեղ, բ. անարդարացի, անիրավ
Խուզնավար — խոզանավար. հնձից հետո անմիջապես կատարվող վարը (ցելը)

Ծեղել — ա. քաղած թթով, մոշով լցված ամանի երեսը աերևներով ծածկել-ամրացնել, բ. ծածկել
Ծեղ — ծածկոց
Ծիվիչ — գութանի հողակարիչ մասը
Ծլոլ (ծուլուլ) — լորձունք
Ծծազիզ — ա. երբ երեխան մայրական կաթ չունելու պատճառով չի աճում, բ. տկար հորթ, երեխա, գ. անժամանակ ծաղկած բողբոջ
Ծկըթել — ա. կոտրել (ծկըթցնել), բ. ճարպկորեն գողանալ
Ծկուռի — կայծոռիկ
Ծնան — երկաթե ձող՝ երկու ծայրերով. մեկը՝ թոնրապատին հացը ամրացնելու, մյուսը՝ թխած հացը և հացածեղը (ծեղը) հանելու համար: Այժմ էլ գործածական է արցախյան գյուղերում:
Ծմակ — անտառ
Ծմթկան — նոր ծննդաբերած մայր
Ծմըթկյեվաթ — նորածնի հետ կապված ուրախ արարողությունը՝ քառասունքը լրանալուց հետո
Ծնըկլորակ — ձնագնդակ
Ծնըվեռեզ — խոտաբույս
Ծոյնը — ծունկ
Ծպուտ — թույլ, նվաղ ձայն (հիվանդի ձայնը)
Ծռաշաչ (շաչ) — գարնանամուտի քամի
Ծռըկատլի — դեղնավուն թռչուն, որ նույն դերն է կատարում, ինչ փայտփորիկը
Ծռըկուտկուտ — փայտփորիկ
Ծտըվեննեն — վաղ առավոտյան
Ծրտըվեռած — հիվանդ, մերձիման
Ծրքանո̈ր — աստվածային, բնատուր շնորհք
Ծո̈ւծո̈ւն — չոր մոշացախ. ա. օգտագործվում էր որպես ակնավառեչ, բ. որպես մոմ՝ թրծելով ձեթի մեջ:
Ծո̈ւկան — ձկնորս
Ծփածեն — ծափի ձայնը

Կաթնով — կաթնաճյութ ունեցող խոտաբույսերի ընդհանուր անունը:

Կաթուկ — ծառի հասած պտուղը, որ ընկնում է գետնին:

Կաժի — վտիտ, լղար

Կածուկ — փշաբույսերի ընդհանուր անունը

Կաղաղակ — արորի մաս

Կամբուր — կարմիր

Կանան — թշվառություն, ողբերգություն

«Կանչ» — «Սանարի» պարեղանակի հայկական հին անունը: Ցայգալույսի եղագ:

Կապառ (կապար) — բուսանուն

Կասf (կասկ) — գոտկատեղ

Կափսը — մարդու մարմնամասը

Կեմ — կապ. խուրձը կապելու խոտաբուսային հյուսվածք

Կենազոխ — գինազոխ բույսը

Կեռան — հասունացող ցորեն (ցորենի արտ). փոխ.՝ հասուն, գեղեցիկ (աղջիկ)

Կեռfել — երկանքը, ջաղացաքարը, սրանուցի քարը տաշելով, փորելով ելուստներ, ատամներ գոյացնել

Կեփ — երկնյուղ փոքրիկ փայտ, որի մի ծայրին ամրացնում են պարանը. ծառայում է պարանը հանգուցելու համար՝ էշը կամ ձին բարձելիս

Կզնվել (կեզ արմատից) — բարկանալ, տաքանալ

Կըխպել — շատ ուտել

Կթնըկորեկ — ա. կաթնով կորեկանաշ. փոխ.՝ համերաշխ, սիրով (ընտանիք)

Կիրկամոտ — շաբաթ օրը

Կիցf — ձեռքի երկու ափերի միակցումը

Կլախի (գլուխ բառից) — մեծագլուխ. փոխ.՝ էշ, ավանակ, հիմար

Կլըկասան — կալ և կասան բառերից

Կլլան — կուլ տվող, բերան

Կլխել — գլխին հասնել, վերջանալ

Կլխիեր — գլուխը վեր

Կլխըպանե — իրեն, իր գլուխը պահող, իր հոգսը քաշող

Կլխըպժեն — թթու մածուն, որ գլուխը լվանալիս քսում են մազերին

Կլխըվեր — գլուխը դեպի վար

Կլխըլվա — ամուսնանալուց մեկ շաբաթ հետո ծնողների աղջը-կատես գալու սովորությունը
Կծծավեա — միզահոտ: Արմատը՝ կծիծ, որ նշանակում է մեզ
Կծուզնը — կպչուն բույս
Կկզիլ — կրկնավոր բարդություն. արմատն է՝ կուզ
Կհալ — (արաբ.) ծույլ, դանդաղաշարժ
Կհոլ — ոչխարանոց, գետնափոր խրճիթ, գհուկ
Կնեպ — ձվի կեղևը
Կմատել — կեմը (կապը) կարել
Կմբրոկ — կարմրուկ. փոխ.՝ կարմրերես
Կյակյուշ — կնճռապատ, լղարերես
Կյնազոխ — տե՛ս կենազոխ
Կյշըկյրող — այլանդակ, ագեղ
Կյոտե — գոտի
Կյրահարփ — լավ պահած, գարեկեր ձի
Կյրաղենք — կույր աղիք
Կյրայլեր — գարու ալյուր
Կյրունքըռեխ — գարնանամուտ
Կյուզ — մեզ
Կյուզաման — միզաման
Կյուզել — միզել
Կյուլառնը — գայլի բերանից խլած անասունի միսը
Կյումակ — տեղյակ, տեղյակություն, իմացություն
Կյուշ — ա. գավաթ, բ. ջրակնը, գ. կիցք (երկու ափերի միացումը)
Կյուտակ — կուտակ, խոտի խուրձ (ավելի մեծ, քան լաստը)
Կյուրծավար — երեք փայտե գամերն են (մախառ), որ գրանըվում են մեկը լծի, երկուսը համնի և մասանի (արորի մասերը) միացման տեղում
Կնդատոր — նոր, ոչ խիտ
Կնդըկաթուկ — մեկ-մեկ, ոչ միասին
Կնջեմնը — պտղունց, նշույլ
Կոխտանչ — ոտնահար, ոտնակոխ եղած (տեղ)
Կոմբալ — գլխիկավոր, գնդավոր մահակ
Կոտեգ — շան ձագը (շնըկոտեգ)
Կորե — ա. կրիա, բ. հողի կորացած, ընկած, անկյունային մասը
Կշոր — կուշուր. թռչունների կուշ գալը

Կոզնոտ — զանգուր, խուճուճ (մազերը)
Կոնդեկ — բարակ փայտից պատրաստված շրջանակ, որ անց են կացնում տավարի վիզը և կապում ախոռին. փոխ.՝ ծեր, կորացած մարդ
Կոտրպրտանք — վերջին երեխան
Կոքըվենցած — պատրաստ հարսանիք գնալու (ուտելու և պարելու)
Կսնակել — կեսը կտրել, կիսել
Կտուրթակե — գլորան, տան կտուրի հողը ծեծելու-ամրացնելու գործիք
Կրնունք — ա. խոտի մնացորդը (անասունի ուտելուց հետո), բ. կերակրի մնացուկ
Կուլըկապ — արոտի բաց թողած ձիու՝ գլխի (վզի) և ոտքի կապելը
Կուպար — ձյան վրայի կոխտանչ ճանապարհը (ընդհանրապես՝ ոտքի կոխան դարձած չորացած ճանապարհը)
Կուպրուն — ոչխարի, այծի, հորթի մորթուց պատրաստած, ներսից կուպրապատ աման՝ օղի պահելու համար
Կուռներ — սայլի առեղներ
Կուռնըփռնուկ — իրար ձեռք բռնած, թևանցուկ. փոխ.՝ միասին, համերաշխ
Կուտան — շան չափահաս թուլա

Հալավ — կարմիր կամ ներմակ կտորից կարված ներքնաշոր
Համբուլ — գութանի առաջին լուծը, խուրիկ
Համին — նույն, միևնույն
Համոթք — էգ անասունի սեռական օրգանը
Հայ — միամիտ, հավատավոր
Հայանալ — մի քիչ, չափավոր խմել (եկ հյանանք)
Հայավարի — համեստ, պարկեշտ
Հայու ռանգավ — ցորնագույն, հայերանգ, հայտգույն
Հանդավար — ա. հանդ ու հանդաստան (իրեն պատկանող), բ. տունը՝ շրջակայքով
Հանե — այ, այն է
Հաշըթ — ա. գործիք, բ. անհրաժեշտ, պետքական
Հաս — ա. հասուն, հասած, ամուսնահասակ, բ. թխվածքի միջուկը
Հասե — այ, այս է

Հա̈սի (պզի) — հարսիկ (ասում են ազգի հարսներին)
Հատե — այ, այդ է (դա է)
Հա̈տրա — շատախոս, անիմաստ խոսող
Հտրակաշ — ա. միասին քաշող երկու եզները, բ. կիսովի վարուցանքի ընկեր
Հարթահո̈ւրթ — պարծենկոտությունը, զրախոսությունը
Հափուռ — ափ և բուռ
Հաքյի — պոչ, ագի
Հաքու — հորաքույր
Հբրեցե — Հաբրի՝ տեղանուն
Հեղե — ցորենը կիսահասուն, կաթնային վիճակում
Հեռալ — ցավել, մրմնջալ
Հի — ծիծաղ, ուրախություն (հիանալ բառի արմատը)
Հի՞բ (հիբի՞) — ե՞րբ
Հիդդա, հիդդի — միջատ, որ բույն է դնում հողի մեջ
Հիծիլ — հեծյալ, հեծելազոր, հեծյալ շարք
Հնդվեր — հանդվոր
Հո — տավարին քշելու ձայնարկությունը
Հովուր — հավուր, օր, պահ
Հորենք — հորելու գործիք
Հոշնիլ — կարմրել՝ շոգից, տապից, ամոթից, հիվանդագին ջերմությունից
Հստըկուպետ — ամրակազմ
Հվուր — ջերմություն
Հրթննքար — հարսանքավոր
Հուլեռնը — կլորավուն (պուլուր) սիսեռ, ոլոռ
Հուս — խորոված միս, պոմիդորի, պղպեղի, բադրիջանի, անխորով խառը հյութը
Հո̈ւրթ — երդ, ծխնելույզ
Հուքյակալ — հոգետռ
Հօթք — օդ, շունչ
Հև — հիվանդություն

Ղաշխա — աշխետ, աստղանակատ, լուսանակատ
Ղաշև — անասուններին մաքրելու, քորելու գործիք
Ղասնըղ (ղասնեղ) — գնդասեղ, քորոց
Ղեղան — շեղաչք, աղեղաչք. փոխ.՝ թեք, ծուռ, ոչ ուղիղ
Ղլավ — կտրող գործիքների՝ սրելուց (հեսանելուց) հետո ա-

ռաշացած բարակ, նուրբ ծայրը: Գործիքը (դանակ, կացին և այլն) լավ սրելով՝ այն չեղոքանում է
Ղլդան — աստղափուշ
Ղնջուր — փշուր
Ղշրհայքա — նախշազարդ հայքա (ոչ ամենօրյա գործածական)
Ղոքի — ձորանովիտ, ձորակ, ձորատափ
Ղոթմա — բարդոց: Չորս-հինգ ղոթմա խոտը մի սայլաբաժին է
Ղողել — ողողել, թրջել
Ղորթ — ճշմարիտ, իրական
Ղորփեր — հորեղբայր
Ղոոթնը — կոոթնը. խոտաբույս, որով ծածկում են հնձանի հատակը՝ խաղողահյութը մաքրելու համար
Ղրմրցուքի — ողորմած հոգի, մահացած
Ղուլաշ — գրկաչափ
Ղուլփ — պարանի ոչ մեծ իրար հանգուցված կտոր, որով էշի վրա ամրացնում են երկու տակառների ունկերը (բարձելիս)
Ղուրփրակեն — հորեղբոր կին

Ճատտի (ճաթալի) — հին պարանուն. երգիծական պար: Պարում էին այլակերպված, ցնցոտիներով, նմանակելով ուրիշներին (պարողի իսկությունը հայտնի չպետք է լինի): Պարում էին նաև խմբով, որը վերանում էր ներկայացման՝ մարդկանց աշխուժացնելու նպատակով:
Ճելլի — շուտ, արագ, անմիջապես
Ճիլ — ցիղ, երակ
Ճիտ — ա. վիզ, բ. գիրկ
Ճխլած — կերակուրը բրդելուց քանձրացած (ճխլած փրթուշ, լոքի)
Ճխտել — ջուխտ-ջուխտ ուտել. փոխ.՝ անհագորեն ուտել
Ճղապան — սայլի երկու կողմի ճաղերը իրար միացնող զուգահեռ փայտերը
Ճմփել — կուշտ ուտել
Ճնգլըմ — թաց, չոնգուր (վերջինս բառի ստարանուն ձևն է)
Ճոնդ — ծայր (թելի, պարանի և այլ)
Ճոռի, ճոռնիզ — ջուրնիկ, ջրամաև. փոխ.՝ կարճահասակ, թըզուկ

Ճպռռ (ճեպուռ, ըշկըճեպուռ) — աչքի (նաև լամպի) կեղտը
Ճռավանդ — գերանամեջ մասը. տանիքի երկու գերանի արանքը
Ճրթթաթախ — թրջված, ջրողող
Ճրըկոտեմնը — ջրկոտեմ, առվակոտեմ
Ճուխտել — ամրանանալ

Մաղար — մինուճար
Մաթ — զարմանք, ապշություն, զմայլվելը
Մա̈թ — պտղահյութ, պտղածոր
Մաթառք — քմահաճույք, ցանկություն
Մալաս — ա. սկզբնական նշանակությամբ թթու, տհաս, դեռահաս պտուղ, բ. նռան տեսակ, թթվաշ ու քաղցրահամ
Մախառ — սայլի լծակները միացնող փայտե գամ
Մախմուր — ա. թավիշ, թավշյա, բ. փափուկ, նուրբ
Մակառ — հարսանիքի ժամանակ փեսայի հետ հարսնացուին բերելու գնացող երիտասարդների խմբի անդամ
Մամային — դատարկաձեռն, ձեռնունայն
Մայա — պանրի մակարդ. փոխ.՝ խորամանկ, ճարպիկ, խառնակիչ
Մանի — ա. բարեկամություն, բարեկամական կապ, բ. մանվածք, գ. հյուսվածք, երգ, տաղ
Մաշառ — սղոց (տե՛ս մշրել)
Մասան — արորի մասերից մեկը («Ամեն փադա մասան չընի, ամեն մարթ էլ Հասան չընի»)
Մաստ — ա. կուշտ պահող, բ. դժվարամարս, դժվարածամ կերակուր, որն ուտելուց հետո մարդը երկար ժամանակ ուտելու ախորժակ չի ունենում:
Մաստ (լայմաստ) — պինդ, ուժեղ, առողջ, դիմացկուն
Մաստակ — ա. չնչին բաժին, որից մարդ խռովում է, բ. ծամոն
Մաստան — ա. տուն պահող, կշտացնող (կով), բ. կովանուն
Մարա — մայր բառից. սահմանային քար
Մարաք — ա. հատուկ ձևի շինություն, բ. հարդանոց (շինված կալի մոտ)
Մարդիմազար — ա. չարաճճի, բ. չար, խառնակիչ, անհանգիստ
Մարյաթ — արժեք, գին



24—777

Մդղար — ա. երախտիք, լավություն, բ. գին, արժեք
Մելիք — բուսանուն
Մետակ — մեկտակ, միահատ (շոր). փոխ.՝ միայնակ, անօգնական (տղա)
Մժղալ — բարակ անձրև մաղել
Միլ — ա. տարածուն, ընդարձակ, երկար, բ. գերան
Միլլիմիրի — թափառական. փոխ.՝ անտեր, անտիրական
Միկա — մի կաթ, մի քիչ
Մին փարա — ոմանք
Մլաք — մլուկ, փայտոջիլ
Մլլալ — տարածվել
Մլնչկլոլե — գործիք, որով ոլորում են մալանչը
Մծրհան — մեծավարի, մեծավայել, մեծի հարգով, մեծի նըման
Մկլավետ — խանձահոտ, խնձոնահոտ
Մհասիլ — (պարսկ.) հարկահավաք. փոխ.՝ խստապահանջ, դաժան
Մհենգ — հիմիկ, հիմա, այժմ
Մնեն — խնճված բան, թնջուկ
Մնանա — փշրանք, կտորտանք, մնացուկ
Մննանուց — մատնոց
Մշրել — նշմարել, մաշառով հետք անել, նշմարելի դարձնել
Մոլ — խիտ, թանձր ծուխ («Ամեն ըրիլիք մոլ չանում»)
Մոլի — սուտասան
Մորեխածետ — տարմահավ
Մորեխածի — մորեխի տեսակ (պցրվենըր մորեխ), գարեխցիկ
Մոքուր — մորաքույր
Մչի — մի գործ ընկերովի կատարելը
Մռամոշ — մոշի տեսակ
Մռոզ — մռայլ
Մսացուկ — զոհ, մորթելու անասուն, տավար
Մսմառ — մայր մեխ, մեծ մեխ
Մտկհալավ — ներքնաշոր
Մտոկ — ուշեղ, ուշադիր, մտապահող, խելոք
Մրմնջոն — մրմնջյուն, ցավ
Մրոքուր — մորաքոր, կարմիր քոր
Մուխազ — մեխակ
Մուն-մուն — դժգոհ, անշնորհակալ, դժկամ

Մուղան — ա. գյուղատնտեսական գործիք, դարմանմղիչ, բ. լեռների արանքը մտած տարածություն, գ. Մուղանա դաշտը

Մունունկյզի — աչքի հիվանդություն

Մուշընպատ — հողագործի նիպոտ

Յաբա — փայտե երկնյուղ եղան

Յաղ — օտար, անհարազատ

Յալ — ա. լեռնապարի ալիքվող մասը, ալիքաձև գծագրությունը, բ. ձիու, էշի վզի ալիքվող մազերը, գ. ալիք, ալիքում

«Յալի» — հայտնի պարախմբի ընդհանուր անունը, որ կոչվում է նաև «սովորության պար», այսինքն՝ հայկական ազգային պար. փոխ.՝ խմբային պար

Յաղի — առասպելական կենդանի, մարդագող

Յասար — ա. ծույլ, անգործունյա, բ. թույլ, անզոր

Յաստան — մարգ, հովիտ

Յավա — ա. դյուրաշարժ, արագավազ (անասուն), բ. անկշիռ, անարժեք (խոսք)

Յդըքամակ — անմարդամոտ, հարազատներին մերժող

Յօն (ի օն) — ճանապարհ, ելք

Յորթ — վազք (երթ բառի արցախյան ձևն է)

Յրա — ի վերայ, վրա

Յփլաղ — բու

Նանե — տատ, տատիկ, հոր մայրը

Նաշար — մեղավոր

Նափոաշ — զորգատիպ գործվածք, որով ծածկում-փաթաթում են աղջկա բաժինք-օժիտը՝ չար աչքից և ընդհանրապես արտաքին պատահարներից պաշտպանելու համար

Ներխ — ա. ներք հնագույն բառի աղավաղված ձևն է, բ. խաշիլով լցված ամանի միջնափոսը՝ յուղը առանձնացնելու համար

Ներխատրեց — տրգելված տեղը, վայրը ոտք դնելը. փոխ.՝ անկարգություն, անկարգ, անվայել

Նի — ներս

Նխշընգյար — նախշանկար, գեղեցիկ (գորգ)

Նոթե — անճաշ, անուտի

Նոռնեզ — ա. նռան գույնի, կարմիր, բ. անուն
Նութրկոլա — նավթանրաց. փոխ.՝ մռայլ, անհրապույր

Ճալք — գոլորշի
Ճախկա — բույսերի հիվանդություն, արևատապ
Ճահնի (շահենի, շահական) — խաղողի տեսակ
Ճահ — ա. փարթամ, բ. ոչ վայրի, մշակովի ընտիր տեսակ (ծառ, պտուղ, օրինակ՝ խնձորվենի)
Ճաղհարել — ծառերի առավոտյան շաղը թափել՝ ճյուղերը շարժելով. փոխ.՝ մարդուն նույն կարգի թափահարել-սպառնալ, կռվել-անպատվել
Ճառավ տալ — զրպարտել
Ճարանուկ — կախան պտղի շարքը, լյուս, գնգեղ
Ճաքի — թեքություն, պակաս կողմ
Ճեղուն — շեղ, ոչ ուղիղ, զառիվայր
Ճենբաշեն — գյուղեգյուղ
Ճեշմա — ընտիր
Ճերան — ջրահարս. փոխ.՝ գեղեցկուհի
Ճիթ — հյութ, պտղաջուրը
Ճիրա — խաղողահյութ
Ճիրախոտ — վայրի հացաբույս
Ճլöր — սալորի վայրի տեսակը
Ճղոմքուր — շողոմ, քաղցրախոս
Ճմալ — շիվ, ճիպոտ
Ճմբել (շմբշմբորել) — կարել, կոպիտ կարել, կապկպորել
Ճնըպուքյի — խոտաբույս
Ճ̃ողուլ — ա. ուղիղ, հարթ, բ. շինարարական գործիք
Ճջաքար — հրաբխային քար
Ճռութկան — ջրորդան
Ճրենե — գինեխաղող. խաղողի հայտնի տեսակ Արցախում
Ճրնթու — նույնը, ինչ՝ շիթ, շիրա, հյութ

Ձաթան — աստղածաղկի սերմը
Ձաթել — կապել, իրար միացնել
Ձալ — աշխետ, չալպուտուրիկ
Ձալիզ — նախշած ճիպոտ, վերևից՝ բռնակով, ձեռնափայտ
Ձանգ — բոտ (ճանկ)
Ձանի — անշեն, անբարեկարգ, ավերակ

Չարեք — քառորդ

Չափար — ցանկապատած տեղ, ցաքով պատած հողամաս (բանջարանոց, այգի): Չափարը լինում է երկու տեսակ՝ հյուսկեն, շիվահյուս և փշաքույսերով

Չդրհադի — նախապես՝ առանց չադրա. փոխ.՝ մերկ, ակլոր

Չին — մանգաղ, հնձի գործիք

Չլըպեղեգ — խատուտիկ, չալ, նախշուն

